

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ**

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ

**85-ԱՄՅԱԿԻՆ ԼՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԼՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

ԵՐԵՎԱՆ 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

معهد التاريخ التابع لأكاديمية العلوم لجمهورية أرمينيا

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ
(ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ)

ARMENIA AND THE ARAB WORLD: HISTORY AND
CONTEMPORARY ISSUES
(A COLLECTION OF THE REPORTS OF THE INTERNATIONAL
YOUTH CONFERENCE)

أرمينيا والعالم العربي - تاريخ والقضايا المعاصرة
مجموعة أوراق بحثية من الندوة الدولية للشباب

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ

104



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

104

ԵՐԵՎԱՆ, YEREVAN, یريفان
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2014



ՀՏԴ 93799:06

ԳՄԴ 63.3

Հ 247

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ:**

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Բ. Բարխուդարյան, Ա. Ա. Խա-
ռատյան, Ա. Ա. Մելքոնյան, Է. Լ. Դանիելյան, Ա. Ս. Եղիազարյան,
Վ. Ա. Տեր-Ղևոնդյան, Հ. Կ. Սուքիասյան, Ն. Ս. Երանոսյան:

Հ 247 Հայաստանը և արաբական աշխարհը. պատմություն և արդի
խնդիրներ (երիտասարդական միջազգային գիտաժողովի զե-
կուցումների ժողովածու). – Եր.:

Պատմ. ինստիտուտ. 2014. – 216 էջ:

*Ժողովածուում ընդգրկված են 2013 թ. նոյեմբերի 1-3-ը Երևանում և
Ծաղկաձորում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Երիտասարդ գի-
տաշխատողների խորհրդի կազմակերպած «Հայաստանը և արաբական
աշխարհը. պատմություն և արդի խնդիրներ» երիտասարդական միջազ-
գային գիտաժողովի զեկուցումները: Գիտաժողովը նվիրված էր անվանի
պատմաբան-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի ծննդյան 85-ամյակին:*

ՀՏԴ 93799:06

ԳՄԴ 63.3

ISBN 978-99941-73-91-4 © ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2014

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայտնի իրողություն է, որ երիտասարդ գիտնականների ուժերը համախմբելու, նրանց աշխատանքները համակարգելու, դրանք խթանելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար երիտասարդական գիտաժողովներ անցկացնել: Գիտաժողովների ընթացքում ձեռք բերված փորձն ու գիտական կապերը լայն հնարավորություն կարող են բացել նրանց հետագա գործունեության համար:

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող սույն ժողովածուն ՀՀ նախագահի հովանու ներքո գործող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ֆինանսական օժանդակությամբ 2013 թ. նոյեմբերի 1-3-ը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի կազմակերպած «Հայաստանը և արաբական աշխարհը. պատմություն և արդի խնդիրներ» խորագրով երիտասարդական միջազգային գիտաժողովի զեկուցումներն են: Գիտաժողովը նվիրված էր անվանի պատմաբան-արևելագետ, Պատմության ինստիտուտի երկարամյա աշխատակից, 1981-1988 թթ. Արևելագիտության ինստիտուտի Ադբյուրազիտական և բնագրագիտական բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Արամ Տեր-Ղևոնդյանի ծննդյան 85-ամյակին:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան շուրջ երկու տասնյակ երիտասարդ հետազոտողներ ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտներից, Մաշտոցի անվան Մատենադարանից, Հայաստանի ազգային գրադարանից, ԵՊՀ-ից, ՀՊՄՀ-ից, Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանից, Կենտրոնական եվրոպական համալսարանից:

Գիտաժողովի նպատակն էր երիտասարդ գիտնականների հետազոտությունների միջոցով ներկայացնել Հայաստանի և արաբական երկրների բազմադարյան կապերի պատմությունը, անդրադառնալ արդի խնդիրներին: Զեկուցումներում անդրադարձ կա-

տարվեց միջնադարում հայ-արաբական առնչություններին, Հայոց միջնադարյան պատմության ուսումնասիրման գործում արաբական աղբյուրների նշանակությանը, արաբական երկրների հայ համայնքների պատմությանը, Երևանի Մատենադարանում պահվող արաբալեզու ձեռագրերին, Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբական երկրների դիրքորոշմանը, XIX-XX դդ. արաբալեզու և հայկական մամուլում դրանց անդրադարձներին, ժամանակակից աշխարհում արաբական պետությունների ունեցած դերակատարությանն ու առկա խնդիրներին, ՀՀ հետ նրանց հարաբերություններին: Ժողովածուի մեջ ընդգրկվել են նաև արաբական աշխարհի արդի որոշ երևույթներին վերաբերող հոդվածներ:

Գիտաժողովն ունեցավ գիտական բեղուն ընթացք, լսվեցին հետաքրքիր ու արդիական զեկուցումներ, տեղի ունեցավ աշխույժ հարց ու պատասխան, արդյունավետ գիտական քննարկում: Գիտաժողովի ընթացքը լուսաբանվեց մեկ տասնյակից ավելի լրատվամիջոցների կողմից:

ՀԱՍՈՍ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ,
Գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ*

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

(ծննդյան 85-ամյակի առթիվ)

ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների երկարամյա աշխատակից, մեծավաստակ պատմաբան-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանը ծնվել է Կահիրեում 1928 թ. հուլիսի 24-ին Մառաշից Եգիպտոս գաղթած հայերի ընտանիքում: Նրա ծնողներն էին ոսկերիչ-արծաթագործ Նահապետ Տեր-Ղևոնդյանը (կրտսեր որդին էր Մառաշի Սուրբ Քառասուն Մանկանց եկեղեցու ավագ քահանա Տեր Ղևոնդի) և Լուսաբեր Տեր-Ղևոնդյանը (օրիորդական ազգանունը՝ Չորբաջյան), որը սերում էր Մառաշի նշանավոր Չորբաջյան գերդաստանից: Արամն ընտանիքի կրտսեր զավակն էր:

Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում: 1948-ին ընտանիքի հետ ներգաղթել է Հայաստան: Այստեղ ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան բաժինը, ընդ որում, քանի որ փայլուն տիրապետում էր արաբերենին, հետևել է իրանական բաժնի դասընթացներին՝ ձեռք բերելով ևս մեկ արևելյան լեզվի իմացություն: Ուսման ընթացքում բախտորոշ եղավ նրա ծանոթությունը մեծանուն հայագետ, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի հետ, որն ուղղություն տվեց և խրախուսեց երիտասարդ Արամին:

1955 թ. ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի նպատակային ասպիրանտուրա՝ սովորելով Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտում: Այստեղ նրան վիճակվեց որպես ղեկավար ունենալ մեկ այլ մեծության՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելուն: Նա միշտ շեշտում էր, որ այս երկու անձերը մեծ դեր խաղացին իր կյանքում: Հ. Օրբելու ղեկավարությամբ Ա. Տեր-Ղևոնդյանը հասունացավ

իբրև գիտնական և դարձավ լենինգրադյան դասական արևելագիտական դպրոցի արժանավոր սաներից մեկը: Թեկնածուական աշխատանքը՝ «Դվինի ամիրայությունը Հայաստանում (IX-XI դդ.)» պաշտպանեց 1958 թ., իսկ նույն աշխատանքի ընդարձակ տարբերակի հրապարակումը 1965 թ. «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» վերտառությամբ՝ ստացավ միջազգային արձագանք գիտական շրջանակներում: Ճանաչված բյուզանդագետ Նինա Գարսոյանի կողմից այն թարգմանվեց անգլերենի և լույս տեսավ Լիսաբոնում¹, իսկ հետագայում թարգմանվեց նաև արաբերենի (Հալեպ, 2003, թարգմանիչ՝ Ալեքսանդր Քեշիշյան) և լայն տարածում գտավ նաև արաբական աշխարհում:

Ա. Տեր-Ղևոնդյանը 1958-1981 թթ. Պատմության ինստիտուտում բեղուն գործունեություն ծավալեց աղբյուրագիտության-բնագրագիտության, պատմագրական և պատմաբանասիրական ուղղություններով: Ազաթանգեղոսի «Պատմության» արաբական խմբագրության լիակատար բնագրի հայտնաբերումն ու նրա, մինչ այդ անհայտ, հատվածի ուսումնասիրությունն ու գիտական հրատարակությունը² նրան տարավ դեպի այդ կարևոր սկզբնաղբյուրի առավել բազմակողմանի հետազոտմանը, որի արդյունավետ հետևանքները եղան նախ «Պատմության» և ապա, գրաբար բնագրին զուգահեռ, ամբողջական աշխարհաբար թարգմանությունների հրատարակությունները (1977, 1983)³: Ավելի ուշ նա կատարեց նաև իր պատմագիտական

¹ Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:

² Ter-Ghewondyan A., The Arab Emirates in Bagratid Armenia, Translated by Nina Garsoian, Lisbon, 1976.

³ Տեր-Ղևոնդյան Ա., Ազաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը (արաբերեն բնագիր և ուսումնասիրություն), Երևան, 1968:

⁴ Ազաթանգեղոս, Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմանություն ներածականով ու ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1977:

հետազոտությունների հետ սերտորեն առնչվող, VIII դարի պատմիչ Ղևոնդի «Պատմության» աշխարհաբար թարգմանությունը (1982 թ.)⁵:

Արամ Տեր-Ղևոնդյանի հիմնադրան հետազոտությունների բնագավառը VII–XII դարերի Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության հարցերն են եղել: Այդ շրջանի հայկական, առավել ևս արաբական սկզբնաղբյուրների համակողմանի համեմատական ուսումնասիրությունները հիմք հանդիսացան ոչ միայն արժեքավոր հրապարակումների, ինչպիսին էր XIII դարի արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի՝ Հայաստանում արաբական նվաճումների ու տիրապետության, Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորություններին վերաբերող ընդարձակ հատվածների հայերեն թարգմանությունն ու գիտական ուսումնասիրությամբ և հարուստ ծանոթագրություններով օժտված հրատարակությունը⁶, այլև ծնունդ տվեցին բազմաթիվ այլ մեծ ու փոքր ուսումնասիրությունների, աղբյուրագիտական և բանասիրական ուշագրավ նորություններ պարունակող հոդվածների ու հաղորդումների:

Այս ասպարեզում նրա վերջին տարիների աշխատանքի արգասիքն էր IX–X դդ. արաբ պատմիչների ու աշխարհագրագետների՝ Հայաստանին ու հարակից երկրներին վերաբերող հաղորդումների թարգմանության հրատարակումը, որն ամփոփվեց մեկ հատորի մեջ և լույս տեսավ հետմահու՝ 2005 թ.⁷: Այդ մեծարժեք գրքում թարգմանաբար ներկայացված են հատվածներ արաբ հեղինակների 19 մատենագրական երկերից, որոնք հարուստ տեղեկություններ են պա-

⁵ Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982:

⁶ Իբն ալ-Ասիր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, Թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:

⁷ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ Թ–Ժ դարեր, Ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005:

րունակում Հայաստանի և հարևան երկրների VII–X դդ. ինչպես քաղաքական պատմության, այնպես էլ տնտեսության, վարչախրապական դրության ու մշակույթի վերաբերյալ:

Լայն ու բազմաբովանդակ է եղել Արամ Տեր-Ղևոնդյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Քաջ տիրապետելով արևելյան ու եվրոպական մի քանի լեզուների՝ նա կարճ ժամանակում ոչ միայն կարողացավ հայկական աղբյուրների հետ համադրությամբ խորագնիին ուսումնասիրության ենթարկել արաբական աղբյուրների հարուստ տվյալները, այլև քննադատաբար յուրացնել արևմտյան արևելագիտական և հայագիտական գրականությունը: Այդ նպատակասլաց հետազոտությունների արգասիքը հանդիսացան մեր պատմության որոշ հանգուցային հարցերի լուսաբանմանը նվիրված հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն հոդվածները: Նրա մի շարք հոդվածներ հրապարակվեցին Սոսկվայի և Լենինգրադի գիտական պարբերականներում, ինչպես նաև Փարիզի «Revue des Etudes Armeniennes» հեղինակավոր հանդեսում:

Արաբական խալիֆայության և Բագրատունյաց Հայաստանի պատմաաշխարհագրական, վարչական և սոցիալ-տնտեսական խնդիրների վերաբերյալ մի քանի տասնյակ ուսումնասիրությունների հրապարակումը լայն ճանաչում բերեց Ա. Տեր-Ղևոնդյանին որպես հմուտ պատմաբան-աղբյուրագետ: Այն միաժամանակ հիմք հանդիսացավ «Հայաստանը և Արաբական խալիֆայությունը» ռուսերեն ծավալուն մի մենագրության⁸, որը լույս տեսավ 1977 թ.՝ հեղինակին՝ բերելով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Հետագայում նա ձեռնարկեց գրելու մեկ այլ ծավալուն մենագրություն՝ «Հայաստանը և արաբական աշխարհը» վերտառությամբ, սակայն հասցրեց շարադրել միայն դրա առաջին հինգ գլուխները,

⁸ Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, Ереван, 1977.

որոնք մի գրքով լույս տեսան 1996 թ.՝ «Հայաստանը VI–VIII դարերում» խորագրով⁹։ Այստեղ տարբեր սկզբնաղբյուրների հիման վրա շարադրված է Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը արաբական նվաճումներին նախորդած ժամանակաշրջանում, պարսկաբյուզանդական մրցակցությունը, հայ ժողովրդի ազատագրական պայքարը և երկրի նվաճումը արաբների կողմից։ Նկարագրված է նաև Հայաստանի տնտեսական և քաղաքական ծանր կացությունը և խալիֆայության քաղաքականությունը։

Իր գլխավոր գիտահետազոտական պրպտումներին գուգահեռ Արամ Տեր-Ղևոնդյանը կատարել է նաև հայ և արաբ մատենագրական, բնագրագիտական ու վիմագրական բնույթի բազմաթիվ ուշագրավ ուսումնասիրություններ և հրապարակումներ։ Նրա մի շարք հոդվածներ նվիրված են հայ և քրիստոնյա արաբական մատենագրական առնչություններին, արաբական մատենագրության մեջ հայ ժողովրդի ծագման, սովորույթների, առասպելների ու լեգենդների արձագանքների հրապարակմանն ու գիտական քննությանը¹⁰։

Նա քաջատեղյակ էր հայրենի և արտասահմանյան հայագիտության և արևելագիտության ընթացքին։ Միշտ հետևելով հրատարակչական նորույթներին ու գիտական մամուլին՝ նա հաճախ հանդես էր գալիս արժեքավոր գրախոսություններով և քննադատական հոդվածներով։ Անհրաժեշտության դեպքում հակահարված էր տալիս աղբյուրական կեղծարարություններին¹¹։

Ա. Տեր-Ղևոնդյանը նշանակալի ավանդ ունի «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակի ստեղծման գործում։ Նրա գրչին են պատկանում 2-րդ և 3-րդ հատորների այն բաժինները, որոնք վերաբերում են VII–IX դդ. քաղաքական և սոցիալ-

⁹ Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI–VIII դարերում (արաբական նվաճումներին նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջանում), Երևան, 1996։

¹⁰ Տեր-Ղևոնդյան Ա., Հոդվածների ժողովածու, Երևան, 2003։

¹¹ Ганалаян А., Хачикян Л., Тер-Гевондян А., Об очередных «размышлениях» 3. М. Буниятова, «Вестник общественных наук», 1978, N 5, с. 95-104.

տնտեսական պատմությանը, մինչև XII դարը ներառյալ Հայաստանի տարածքում արաբական և այլ մահմեդական իշխանությունների համակարգին, արաբական երկրներում հայկական գաղթօջախներին ու հայ-արաբական քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերին: Նշանակալի է նաև նրա մասնակցությունը «Հայկական սովետական հանրազնության» պատրաստման աշխատանքներում, որտեղ մի քանի տասնյակ հոդվածների հեղինակ է:

Մեծ հետաքրքրությամբ էին լսվում նրա զեկուցումներն ու գիտական հաղորդումները, ինչպես մեր հանրապետության, այնպես էլ միութենական ու միջազգային գիտաժողովներում (Փարիզ, Ղամասկոս և այլն): Նրա յուրաքանչյուր զեկուցում Մոսկվայում պարբերաբար կայացող «Բարտոլոյան ընթերցումներում» պարունակում էր գիտական ինքնատիպ մի նորույթ և լսվում էր համակ ուշադրությամբ:

1981 թվականից ի վեր Արամ Տեր-Ղևոնդյանը զվսավորում էր ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Աղբյուրագիտական և բնագրագիտական բաժինը, որտեղ կենտրոնացված էին արևելյան երեք լեզուներով՝ արաբերեն, պարսկերեն և թուրքերեն պատմագրական, մատենագրական, վիմագրական հուշարձանների ուսումնասիրության, հրապարակման և թարգմանչական աշխատանքները:

Արդյունավետ ու բեղմնավոր էր նաև Արամ Տեր-Ղևոնդյանի ուսումնամանկավարժական գործունեությունը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում, որտեղ նա դասավանդում էր «Արաբական երկրների հին և միջին դարերի պատմություն», «Արաբական բանասիրության ներածություն» առարկաները և մասնագիտական հատուկ դասընթացներ, դեկավարում և գրախոսում շրջանավարտների ավարտաճառերը, օգնում, խրախուսում և ուղղություն էր տալիս գիտական աշխատանքի հակումներ դրսևորող ուսանողներին, որոնց թվում է եղել նաև ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Բարձր գնահատելով նրա ավանդը արաբագիտության բնագավառում՝ Հալեպի համալսարանի ղեկավարությունը Ա. Տեր-Ղևոնդյանին ընտրել էր Գիտության պատմության ինստիտուտի պատվավոր անդամ, իսկ 1986 թ. ընտրվել է նաև Հռոմի «Տիբերինա» ակադեմիայի անդամ: 2005 թ. նրա հիշատակը հավերժացնելու համար Գալուստ Դյուլբենկյան հաստատության ֆինանսավորմամբ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում հիմնվեց «Արամ Տեր-Ղևոնդյան գիտական սրահ», որտեղ կա արևելագիտական հարուստ գրադարան և անհրաժեշտ սարքավորումներ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու և գիտաժողովներ կազմակերպելու համար:

Նա երբեք չի եղել որևէ կուսակցության կամ կազմակերպության անդամ: Եղել է անկախական գաղափարների կրող: Համոզված կողմնակիցն է եղել գաղթականության շղթան կտրելու և հայրենի հողում վերջնականապես հաստատվելու: Երդվյալ հակառակորդ էր արտագաղթի, ասում էր օտարամոլությունը, ստրկամտությունն ու գավառամտությունը: Միշտ երազել է ազատ ու անկախ հայկական պետականության մասին: Արամ Տեր-Ղևոնդյանը հանկարծամահ է եղել 59 տարեկանում 1988 թ. փետրվարի 10-ին՝ այդպես էլ չտեսնելով ազգային շարժման նոր զարթոնքը:

Վաստակաշատ գիտնական Արամ Տեր-Ղևոնդյանի աշխատություններն իրենց մնայուն տեղն ունեն հայկական արևելագիտության ոսկե ֆոնդում և դեռ երկար կծառայեն հայ հետազոտողների նորանոր սերունդներին:

ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՄԱՍԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ
 ՀԱՂՈՐԴՄԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ
 ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ XIX
 ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ
 ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Աստվածաշնչում Արարատի՝ Նոյան տապանի հանգրվանելու վայրի կապակցությամբ հիշատակությունը դարեր շարունակ եղել է աստվածաբանների, պատմիչների և հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Արարատ անունը հիշատակվում է Սուրբ գրքի եբրայերեն բնագրում որպես *Արարատի լեռներ*¹, *Արարատի երկիր*², *Արարատյան թագավորություն*³: Եբրայերեն բնագրում և Յոթանասնիցում (մ.թ.ա.

¹ The interlinear Bible Hebrew-Greek-English, Massachusetts, 1986, Gen. VIII 4. Համաձայն աստվածաշնչի Ժ. Օպերտի՝ «Նիսվեի արձանագրություններում Urarta-ն բառացի արտահայտում է Արարատ անունը, որը բիբլիական տեքստերում նշանակում է Հայաստան» («Urarta, ce qui exprime à la lettre le nom Ararat qui signifie l'Arménie dans les textes bibliques») (Oppert J., Expédition scientifique en Mésopotamie, Paris, 1863, liv. I, ch. I, com. 2, p. 18): XIX դարում գերակայում էր այն տեսակետը, որ ասորական սեպագրերում Urarta կամ Urartu-ն նույնական է բիբլիական Արարատին՝ Հայաստանին (Layard H., Discoveries in the ruins of Ninveh and Babylon, London, 1853, p. 403, Sayce A. H., The Cuneiform Inscriptions of Van, deciphered and translated - The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland (JRAS), New Series, Vol. 14, No. 4, Oct., London, 1882, p. 377, 388, 389): Հայաստանի հիշատակությունը «Armina/Arminiya=Uraštu» անվանաձևով վկայված է նաև հետազայում արեմենյան արքաներ Դարեհ I-ի՝ Բեհիսթունի և Քսերքսես II-ի՝ Պերսեպոլիսի սեպագիր եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և բաբելոնյան՝ ուշ աքքադերենով) արձանագրություններում (Lecoq P., Les inscriptions de la Perse achéménide, Gallimard, 1997, p. 89-92, 139, 246, 272):

² 2 Kings XIX 37, Isaiah XXXVII 27.

³ Jeremiah LI 27.

III դ.) հիշատակված Արարատի լեռներ արտահայտությունը Վուլգատայում (IV դ. վերջ - V դ. սկիզբ)՝ ներկայացված է որպես *Հայաստանի լեռներ*⁴: Աստվածաշնչի գրաբար թարգմանության Տովբիթի գրքում Յոթանասնիցի *εἰς τὰ ὄρε Ἀραράτ*⁵, արտահայտությունը թարգմանված է «ի լերինս Հայոց»⁶:

Միքայել Չամչանցը մանրամասն քննելով Սուրբ գրքի եբրայերեն բնագրի և թարգմանությունների խնդրո առարկա տեղեկությունները և դրանց վերաբերյալ հին ու միջնադարյան սկզբնաղբյուրներում եղած տարբեր մեկնությունները, նշել է. «աշխարհն Արարատեան փոխանակի յոմանս Արարատ կոչի, և յոմանս Արմենիա, և յոմանս Կորդուաց...»⁷: Հետագայում Հ. Ինգլիզյանը, հետազոտելով այս խնդիրը, գրել է, որ Ծննդոց գրքի եբրայերեն բնագրի և Յոթանասնիցի՝ վերոհիշյալ արտահայտությունը հայերեն թարգմանվել է «ի լերինս Արարատայ», իսկ ասորերեն Պեշիտտա⁸ կոչվող թարգմանությունում, ունի՝ «al tu-rai qardū...»⁹:

Հովսեփոս Փլավիոսը հիշատակում է Բերոսոս Քաղդեացու (մ.թ.ա. 330-250 թթ.) և Նիկողայոս Դամասկոսցու (մ.թ.ա. I – մ.թ. I դ.) հաղորդումները Նոյան տապանի հանգրվանելու վայրի մասին: Բերոսոսը, պատմելով ջրհեղեղի ժամանակ տեղի ունեցած դեպքերի մասին, գրել է. «Ասվում է, թե մինչև հիմա էլ նավի մի մասը գտնվում

⁴ «Requievitque arca mense septimo, vigesimo septimo die mensis super montes Armeniae» (Biblia Sacra Vulgatae, editionis juxta exemplaria ex typographia apostolica Vaticana, Romae 1592 & 1593 inter se collata et ad normam correctionum romanarum exacta auctoritate Summi Pontificis Pii IX, editit Valentinus Loch, Typis AC Sumtibus Georgii Josephi Manz, 1863, t. I, Gen. 8. 4.).

⁵ The Septuagint Version of the Old Testament, with an English translation and with various readings and critical notes, London, Тѡβѣт I, 21.

⁶ Գիրք Աստվածաշունչը Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860, Թովբիթ Ա 24:

⁷ Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 150:

⁸ Հին Կտակարանի թարգմանությունն է, որն օգտործել են ասորի քրիստոնյաները (Васильчева Ю., Пятикнижие сирйской Пешитты и экзегетические традиции армейских таргумов, "Вестник ПСТГУ, Богословский сборник", N 11, Москва, 2003, с. 116):

⁹ Ինգլիզեան Վ., Հայաստան Սուրբ Գրքի մեջ, Վիեննա, 1947, էջ 5: Հմմտ.՝ Васильчева Ю., ук. соч., с. 90, 115.

է Հայաստանում, Կորդվաց լեռների մոտ»¹⁰: Ըստ Նիկողայոս Դամասկոսցու՝ «Մինիաս (երկրից)»¹¹ վերև Հայաստանում կա մի խոշոր լեռ Բարիս անունով, որտեղ, պատմության համաձայն, շատերը ապաստանելով փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը տապանի վրա տարվելով, իջել է գագաթին և տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանվել են»¹²:

Հակոբ Մծբնացու մասին Փավստոս Բուզանդի (V դ.) երկում հետևյալ տեղեկությունն է հաղորդվում. «Այր ընտրեալ յԱստուծոյ, յիրմէ քաղաքէ անտի գալ հասանել ի լերինս Հայոց, ի լեռոնն Սարաբադայ ի սահմանս Այրայրատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց»¹³: Մկրտիչ Էմինը Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկի

¹⁰ Հին հունական աղբյուրներ Ա, Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասիոս, Հրեական հնախտություն, Գիրք առաջին, Թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 55: Հմմտ. Եսեքի Պամփիլեայ Կեսարացույ Ժամանակակեր, Վենետիկ, 1818, էջ 36-37:

¹¹ Մ. Մ. Կրկյաշարյանն այս առնչությամբ ծանոթագրել է. «Մինիաս երկիրը Աստվածաշնչում «Մինի» ձևով (ասորական սեպագիր արձանագրություններում՝ «Ման-նա») հիշատակվում է միշտ Արարատի հետ կապակցված» (Հին հունական աղբյուրներ Ա, էջ 102, ծան. 120):

¹² Նույն տեղում, էջ 55: Մ. Չամչյանը (նշվ. աշխ., էջ 150) Բարիս լեռը նույնացրել է Մասիսի հետ: Իսկ Սեն-Մարտենն այն ենթադրաբար տեղադրել է Հայաստանի կենտրոնում՝ Բագրևանդ գավառում՝ կապելով Փավստոս Բուզանդի հիշատակած (Փաստոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 255) Վարազ լեռան հետ (Saint-Martin M. J., Mémoire historique et géographique sur l'Arménie, t. I, Paris, 1818, p. 265): Մարկվարտն այն նույնացրել է Նեխ-Մասիք-Սիփանի (Markwart Jos., Südarmenien, und die Tigrisquellen: nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, S. 78): Հետագայում հետազոտողներն իրենց մեկնություններում վերադարձան Բարիս-Մասիս նույնացման տեսակետին (Murad Fr., Ararat und Masis: Studien zur armenischen altertumskunde und litteratur, Heidelberg, 1901, S. 47-51, Մովսիսյան Ա., Մբրազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2004, էջ 68-73): Զրիեղեղի մասին հին և միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկությունները մանրամասն քննել է նաև Ա. Մուշեղյանը՝ հաստատելով Արարատ-Մասիսը տապանի իջման լեռ լինելու տեսակետը (Մուշեղյան Ա., «Ռբր լեռան վրա է իջել Նոյան տապանը (ըստ ասորա-բաբելական, հունա-հռոմեական, ասորական և հայկական աղբյուրների)», «Պատմաբանասիրական հանդես», 2003, N 1 (162), էջ 3-39):

¹³ Փաստոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց, էջ 33:

Ֆրանսերեն թարգմանության մեկնությունում «Սարարադ» անվանաձևի կապակցությամբ նշել է, որ հավանաբար «գրիչների կողմից արված ուղղագրական սխալ է»¹⁴: Ֆր. Մուրադը, անդրադառնալով Արարադ(տ) ընթերցմանը, հնարավոր է համարել, որ «Սարարադ»-ը *ի լերինս Արարադայ* բառերի սխալ տարանջատման հետևանք է¹⁵: Ստ. Մալխասյանը նույնպես «Սարարադ» ձևը կասկածելի է համարել՝ առաջ եկած երկու կից բառերի սխալ տրոհումից, քանի որ «հին ժամանակ երկաթագիրներում բառերն իրար կից էին գրում՝ ԻԼԵՐԻՆՍԱՐԱՐԱԴԱՅ տրոհել են «ի լերին սարարատայ» փոխանակ «ի լերինս Արարատայ»»¹⁶: Մովսես Խորենացու քննական բնագրի հրատարակությունից երևում է, որ *Արարադ* ընթերցման հետ մեկտեղ ձեռագրական տարընթերցումներում առկա է *Արարատ* անվանաձևը¹⁷: Ինչ վերաբերում է Կորդուքի հիշատակմանը, ապա այն կարելի է ենթադրել Փավստոս Բուզանդի երկում հետազայում կատարված ներմուծում:

Հայաստանի և նրա բարձրագույն գագաթ Արարատի մասին Եղիշեն գրել է. «Արարատու լեռոն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ»¹⁸: Կարելի է տեսնել, որ V դարում արդեն հայտնի էր Արարատ լեռնանվան մեկնության կապակցությամբ առաջացած խնդիրը, որի պատասխանը տվել է Եղիշեն:

Ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը, քննելով Արարատը տապանակիր լեռ լինելու խնդիրը, նշել է. «Յոթանասնից» թարգմանութ-

¹⁴ Collection des historiens anciens et modernes de l'Arménie par V. Langlois, Première période - historiens Grecs et Syriens traduits anciennement en arménien, t. I, Paris, 1867, p. 218, com. 2.

¹⁵ Fr. Murad, op. cit., S. 83-84.

¹⁶ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. և ծան. Ստ. Մալխասյանի, Երևան, 1987, էջ 423, ծան. 32:

¹⁷ Մովսես Խորենացի, էջ 33, տարընթերցում 5, էջ 34, տարընթերցում 13:

¹⁸ Խաչիկյան Լ., Եղիշեի «Արարածոց մեկնութիւն», Երևան, 1992, էջ 245: Այս մասին տես նաև՝ Դանիելյան Է. Լ., Հայաստանն Աստվածաշնչում և Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» երկը. – Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005, էջ 151-157):

յունում, Հովսեպոսի «Հրեական հնախոսություն»-ում, Վուլգատայում և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունում պահպանվել է Արարատ անվանումը: Այն կա՝մ թարգմանվում է *Հայաստանի լեռներ*, կա՝մ էլ *հայերի երկիր* (*les mots de Montagnes d'Arménie ou de Terre des Arméniens*)¹⁹: Մեն-Մարտենը գրել է. «Ատրերենով Սուրբ Գրքի բոլոր թարգմանիչները և մեկնիչները, երբ չեն պահպանել Արարատ սկզբնական արտահայտությունը, այն փոխարինել են քրդերի լեռներ»²⁰ արտահայտությամբ: Այս օրինակին են հետևել Աստվածաշնչի արաբերեն թարգմանիչները»²¹:

Հայկական Կորդուքը, Մովսես Խորենացու (V դար) հաղորդմամբ, Հայկի թոռան՝ Կաղմոսի բնակության («տունն Կաղմեայ») երկրամասն էր²²: Մեծ Հայքի Կորճայք աշխարհի Կորդուք գավառանունը ոչ մի կապ չունի քրդերի հետ: Դեռևս մ.թ.ա. V դ. Քսենոփոնն իր «Անաբասիս» երկում, նկարագրելով Հայաստանով անցած նահանջող հունական զորքի ճանապարհը, հիշատակել է Կորդուք գավառի բնակիչներին, ըստ բնակության վայրի՝ Καρδυχοί (կորդուքցիներ) անվանաձևով²³:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հին Կտակարանի աադյերեն Պելիտտա և հետագայում՝ արաբերեն թարգմանություններում *Կար-*

¹⁹ Saint-Martin M. J., op. cit., p. 261.

²⁰ Մեն-Մարտենը հիշատակել է *քրդերի լեռներ* արտահայտությունը՝ հետևելով իր ժամանակ գոյություն ունեցող սխալ կարծիքին: «Քրդերի» հետ կապված խառնաշփոթը առաջացել է նրանց ցեղանունը սխալ կերպով հայկական *Կորդուք* գավառանվան հետ կապելու հետևանքով (Saint-Martin M. J., op. cit., p. 176): Այնինչ Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության վարած գավթողական քաղաքականության մեջ քրդական տարրի օգտագործման մասին գրելիս Ն. Ադոնցը նշել է, որ քրդական ցեղերի զաղթը սկսվել է XVI դարի երկրորդ տասնամյակից (Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, էջ 64-65):

²¹ Saint-Martin M. J., op. cit., p. 176.

²² Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1991, էջ 34:

²³ Xenophon, Anabasis, books IV-V, with an English translation by Carleton L. Brownson and O. J. Todd, London, 1957, IV. I.11, III 24-27, V.5.17.

դու կամ Քարդու անվանումը գործածվել է Արարատ անվան փոխարեն:

Արարատը Կորդուքի հետ նույնացումը մերժելով՝ Սեն-Մարտենը նշել է, որ երկու տիպի թարգմանությունների արդյունքում ստեղծվել են երկու տարբեր կարծիքներ՝ ջրհեղեղից հետո տապանի կանգ առնելու վայրը տեղորոշելիս: Ըստ Սեն-Մարտենի՝ Միջագետքի և Ասորիքի հյուսիսում տապանի հանգրվանելու տեսակետը հիմնականում ընդունվել է «արևելյան քրիստոնյաների՝ ասորիների ու արաբների կողմից»²⁴: Նա գրել է. «Այս առաջին ավանդությունը Արևելքում բավականին հին էր, քանզի Հովսեպոսի և Եվսեբիոսի վկայությամբ այն գոյություն ուներ Աբյուղենոս և քաղղեացի Բերոսոս պատմիչների ժամանակ»²⁵:

Սեն-Մարտենը ճիշտ է համարել այն ավանդությունը, համաձայն որի, Արարատ լեռը Հայաստանի կենտրոնում է՝ գրելով, որ այն «հավանաբար ի սկզբանե գալիս է Յոթանասնից տարբերակից»:
Նա նշել է, որ «Աստվածաշնչի հայերեն թարգմանիչները միշտ հետևել են Յոթանասնիցի տարբերակին և ընդունել այն տեսակետը, ըստ որի իրենց հայրենիքը մարդկության բնօրրանն է»²⁶:

Արամ Տեր-Ղևոնդյանի կողմից կատարված արաբական սկզբնաղբյուրների թարգմանություններում, մասնավորապես VIII-IX դդ. արաբ պատմիչ ալ-Վակիդիի «Ասորիքի նվաճումը» աշխատությունում հաղորդվում է. «Իսկ Վահրն ասել է, թե մեզ պատմել են, որ տապանը... մեկ ամիս կանգնեց Արարադ (Ջուղի) լեռան վրա, որը լեռ է Ջազիրա երկրում...»²⁷: Նման կարծիք են հայտնել նաև IX դարի

²⁴ Saint-Martin M. J., op. cit, p. 261.

²⁵ Ibid.

²⁶ Ibid., p. 264-266.

²⁷ Արաբական աղբյուրներ Գ. արաբ մատենագիրներ Թ. Շ. Կարբեյ, մերածությունը և բնագրից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 128:

արաբ մատենագիր ալ-Դինավարին, Իբն Կուտայբան, ինչպես նաև ալ-Յակուբին²⁸:

Հետագայում արաբ հեղինակները շարունակեցին տապանի հետ կապված իրենց մեկնություններում շահարկել Ջուղի լեռան անվանումը: XIII դ. արաբ հեղինակ Իբն ալ-Ասիրն իր «Լիակաստար պատմություն» աշխատությունում նշել է. «Եվ ծփաց [Նոյի] տապանը երկրի վրա... մինչև որ հասավ ալ-Ջուղի, որը լեռ է Կարդիում, Մոսուլի երկրում, և այնտեղ կանգ առավ»²⁹: XII–XIII դդ. արաբ աշխարհագիր Յակուտ Աբու Աբդալլահ Շահաբադդինը (1178-1229) գրում է. «Նոյի տաճարը (ըստ արաբական ավանդության – Ա. Դ.) մինչև հիմա մնում է Ջուղի լեռան վրա»³⁰:

2. Նալբանդյանը, անդրադառնալով այս խնդրին, նշել է. «Ո՛չ Աստվածաշնչում և ո՛չ էլ հայկական հին ավանդություններում չկա թե Նոյի տապանը Մասիսի կամ Արարատ լեռան վրա իջած լինի»³¹: Մեջբերելով Փավստոս Բուզանդի և Թովմա Արծրունու տեղեկությունները տապանի վերաբերյալ, ինչպես նաև հիմնվելով «Իսլամի հանրագիտարան»-ում եղած տեղեկության վրա՝ նա գրում է. «Շփոթություն ստեղծվեց ավելի ուշ: Տրված լինելով, որ այս երկրամասում ամենաբարձր լեռը Մասիսն է, իսկ Վանա հարավակողմը տալրածվող Ուրարտու երկրի անունը Հայաստանի լեռան և շուրջը տալրած-

²⁸ Նույն տեղում, էջ 202, 206, 332:

²⁹ Արաբական աղբյուրներ Բ, Իբն Ալ-Ասիր, թարգմանություն բնագրից առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 37:

³⁰ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համավի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ, կազմ. Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 50:

³¹ Նույն տեղում, էջ 154, ծան. 136: Մ. Տիերին, անհիմն կերպով հարցը դիտարկելով քաղաքական հանգամանքների տեսանկյունից, Նոյան տապանի նստելու տեղը համարել է Ջուղին և եզրակացրել, որ Արարատ-Մասիս ավանդական նույնացումը կատարվել է ավելի ուշ՝ պայմանավորված Հայաստանի քաղաքական բաժանվածությամբ և Էջմիածնի ազդեցությամբ (Thierry M., Le lieu d'échouage de l'arche de Noé dans la tradition arménienne. – Syria, 1995, vol. 72, issue 1-2, p. 143-158): Մ. Տիերիի նման կարծիքի քննադատությունը տես նաև՝ Զ. Յարությանի վրդ. Պզտիկեան, Հայ ժողովրդի ազատության պայքարը (ԺԹ-Ի դդ.), Երևան, 2004, էջ 82:

վող նահանգին փոխանցվելով Այրարատ կոչվեց այդ Նահանգը, ինչպես նաև Շննդոց գրքի VIII-4-ի անճիշտ մեկնաբանությունը զուգահեյակեցին Ջաբալջուտին նույնացնելու Արարատ լեռան հետ»³²: Հետագոտողի ուշադրությունից վրիպել է, որ «Իսլամի հանրագիտարան»-ի ֆրանսերեն հրատարակությունում, միահյուսելով տարբեր կարծիքները, եզրակացվում է նաև, որ ասորեստանյան արձանագրություններում հիշատակված Արարատը «Վանա լճի հարավում գտնվող երկրամաս էր: ... Մասիսը (Մեծ Արարատ), ինչպես նաև Ջաբալ Ջուդին, երկու գագաթներն էլ, որպես տապանի ավանդական իջնելու վայր, կարող էին լինել, համաձայն բիբլիական վարկածի, Արարատի լեռները»³³:

Ջուդին, որպես տապանակիր լեռ հիշատակվում է նաև Ղուրանում³⁴: Ղուրանի XVIII-XIX դդ. ֆրանսերեն թարգմանությունների մեկնաբանություններում հեղինակները, հիմնվելով Հնգամատյանի տեղեկությունների վրա, տապանակիր լեռ են համարել Արարատը³⁵:

Ճորջ Սեյլը, որը 1734 թ. հրատարակեց Ղուրանի անգլերեն թարգմանությունը, Ջուդի լեռան մասին իր մեկնաբանությունում գրել է, որ այդ անվանումը հավանաբար աղճատված է՝ չնայած աբաբները մշտապես գրել են *Ջոդդի* կամ *Ջիոդդի* անվանաձևերով³⁶: 1865 թ. Մ. Կասիմիրսկու Ղուրանի ֆրանսերեն թարգմանության մեկնաբանությունում նույնպես նշվում է, որ Ջուդի անվանումը հա-

³² Արալական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 154, ծան. 136:

³³ Encyclopédie de l'Islam établie avec le concours des principaux orientalistes B. Lewis, Ch. Pellat et J. Schacht, t. II, C-G, Paris, 1965, p. 589.

³⁴ Ղուրան, թարգմանեց արաբերենից հայերենի Աբր. Ամիրխանեանց, Վառնա, 1909, Սուրա XI. 46, էջ 205:

³⁵ Le Coran, traduit de l'arabe, accompagné de notes, et précédé d'un abrégé de la vie de Mahomet par M. Savary, Paris, 1782, t. I, p. 230, Le Koran, traduction nouvelle faite sur le texte arabe par M. Kasimirski, Paris, 1865, p. 175.

³⁶ The Koran: commonly called The Alcoran of Mohammed, translated into immediately from the original arabic; with explanatory notes, by George Sale, Philadelphia, 1850, p. 179.

մապատասխանում է *Ջորդիին*, Կորդուքի լեռներին, որը կարող է միայն աղավաղում լինել³⁷:

1979 թ. Շեյխ Սի Համգա Բուբակյոդի Ղուրանի ֆրանսերենով թարգմանությունում Ջուդի լեռան մասին հետևյալ մեկնաբանությունն է արված. «Հրաբխային մեծ հայկական գագաթներից մեկի անվանում է, որը հայտնի է Արարատ անվանմամբ և որի ամենաբարձր կետը հասնում է 5157 մ»³⁸: Կարելի է տեսնել, որ այստեղ Ջուդին սխալ կերպով նույնացվել է Արարատ-Մասիսի (իրական բարձրությունն է 5165 մ) հետ:

Ա. Տեր-Ղևոնդյանը նշել է, որ Մասիս լեռը քաջ հայտնի էր արաբ հեղինակներին, որոնք Մեծ Մասիսն իրենց աղբյուրներում հիշատակել են Հաբիս, իսկ Փոքրը՝ Հուայրաս անվանումով: Նա Մովսես Խորենացու երկում հիշատակված Մասիս լեռան մասին զրույցը համադրել է հետագա արաբական աղբյուրներում Հուայրասի վերաբերյալ տեղեկություններին՝ գրելով. «Մասիս լեռան մասին հայկական զրույցը անցնելով արաբական միջավայրը լրացուել է նոր նիւթերով ... որի հիմքը հայկական է, բայց ժամանակի ընթացքում արաբական գունավորում է ստացել»: Մասիս լեռան, որպես տապանակիր լեռ լինելու մասին Ա. Տեր-Ղևոնդյանը նշել է, որ «Փաւստոս Բիւզանդի մօտ յիշուած Սարարատը (Արարատը) Հարաւային Հայաստանի Կորդուք գաւառի լեռներից է, որն արաբների մօտ Ջուտի է կոչվում»³⁹:

1947 թ. Մեոյալ ծովի հյուսիսարևմտյան կողմում գտնվող Կումրանի քարայրներից մեկում հայտնաբերվեցին կավե ամաններում

³⁷ Le Koran, traduction nouvelle faite sur le texte arabe par M. Kasimirski, Paris, 1865, p. 175.

³⁸ Le Koran, texte, traduction française et commentaire d'après la tradition, les différentes écoles de lecture, d'exégèse, de jurisprudence et de théologie, les interprétations mystiques, les tendances schismatiques et les doctrines hérétiques de l'Islam, et à la lumière des théories scientifiques, philosophiques et politiques modernes par le Cheikh Si Hamza Boubakeur, Fayard, 1979, t. I, p. 705.

³⁹ Տեր-Ղևոնդյան Ա., Մասիս լեռան մասին արաբական զրույցը. – Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 226, 229:

թաքցված մագաղաթյա ձեռագրեր⁴⁰, որոնք նոր լույս սփռեցին խնդրո առարկա հարցի վրա: Արամեերեն բնագրի 10-րդ սյունակի 12-րդ տողում հաղորդվում է, որ տապանը «նստեց Արարատի լեռներից մեկի վրա» (... l'arche se posa sur l'une des montagnes d'Ararat)⁴¹: Ֆրանսիացի կումրանագետ Ն. Լինյեն, որը հետազոտել է սույն ձեռագիրը, հնարավոր է համարել, որ «այս աշխատությունը եբրայերեն մի բնագրի թարգմանություն է, կամ ավելի հին մի ձեռագրի հարմարեցում»⁴²: Գ. Աբգարյանը, ուսումնասիրելով այս խնդիրը, եզրակացրել է. «Քարդուի ներմուծումը պարունակող արամեերեն Աստվածաշնչի այսօր մեզ հայտնի տեքստն անհամեմատ ավելի նոր է, քան Կումրանի ձեռագիրը, որում ներմուծումը դեռ չի կատարված և Նոյի տապանն իջնում է Արարատյան լեռներում»⁴³:

Այսպիսով, տապանակիր լեռան մասին սկզբնաղբյուրային տեղեկությունների շուրջ արաբական մեկնությունները եղել են ֆրանսիական հայագիտության և հայ արաբագիտության քննական վերլուծությունների շրջանակում: Ֆրանսիացի հայագետ Մեն-Մարտենը, մերժելով Արարատը Կորդուքի հետ նույնացումը, կարևորել է այն հանգամանքը, որ երկու տիպի թարգմանությունների արդյունքում ստեղծվել են երկու տարբեր կարծիքներ՝ տապանի կանգ առնելու վայրը տեղորոշելիս: Համաձայն եվրոպացի որոշ հետազոտող-

⁴⁰ Այդ ձեռագրերը (մեծ մասը մագաղաթյա է, իսկ մի քանիսը՝ պապիրուսից, իսկ մեկը փորագրված է պղնձի վրա) թվագրվում են մ.թ.ա. III դ. – մինչև մ.թ. 70 թ.: Դրանց մեծ մասը եբրայերեն է, մի մասը արամեերեն և մի քանիսը՝ հունարեն (մանրամասն տե՛ս <http://www.deadseascrolls.org.il/featured-scrolls>):

⁴¹ Les textes du Qumran traduits et annotés par J. Carmignac, E. Cothenet et H. Lignée, Paris, 1963, p. 225. Joseph A. Fitzmyer, The Genesis Apocryphon of Qumran Cave 1 (1Q20): A Commentary, Roma, 2004, p. 83.

⁴² Les textes du Qumran ..., p. 215.

⁴³ Աբգարյան Գ., Աբգարյան Վ., Արարատը Կումրանի ձեռագրերում. - Աստվածաշնչական Հայաստան, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2005, էջ 112-113: Հին Կտակարանի արամեերեն հետազա թարգմանությունների (Օնկելոսի և Պաղիստինյան թարգմանների) և Պեշիտտայի տեքստերում ներմուծված Կարդու անվանը, ինչպես նաև Բերոսոսի և Փավիոսի երկերում խնդրո առարկա հարցին վերաբերող մեկնությունների քննությունը տե՛ս Васильева Ю., укр. соч., с. 90, 115.

ների, արաբական աղբյուրներում տապանակիր լեռան Ջուդի անվանումը կարող է միայն Կորդուքի աղավաղված անվանաձևը լինել:

Հետազոտությունները, հատկապես Կումրանի ձեռագրերի հայտնագործությունից հետո, փաստեցին, որ արամեերեն վաղագույն թարգմանությունում եղել է Արարատ անվանումը, իսկ Քարդուի մասին հիշատակությունը Հին Կտակարանի արամեերեն հետագա (Օսկելոսի և Պաղեստինյան թարգմաններում) և ասորերեն (Պեշիտտա) թարգմանություններում (որն այնուհետև ազդեցություն է ունեցել ավելի ուշ արաբական թարգմանության վրա) պետք է ներմուծման հետևանք համարել:

Առավել կարևոր է Եղիշեի մեկնությամբ՝ Արարատ-Մասիսը, Արարատյան լեռների (Հայկական լեռնաշխարհ) բարձրագույն գագաթի՝ ավանդաբար, որպես տապանակիր լեռ լինելու պատկերացումը:

ALISA DUMIKYAN

Institute of History NAS RA

THE ANALYSIS OF THE ARAB INTERPRETATIONS OF THE BIBLE INFORMATION ABOUT THE MOUNTAIN ARARAT IN THE 19th CENTURY FRENCH AND MODERN ARMENOLOGICAL STUDIES

SUMMARY

The reference of Ararat in the Bible, as the resting place of Noah's Ark in the course of centuries has been in the centre of attention of theologians, historians and researchers.

The name *Kardu* was used in Old Syriac and later Arabic translations of the Old Testament instead of the name Ararat.

Some European researchers of the 18th-19th centuries referring to this problem noted that in the Arab sources the mountain name Judi Mount (on

which as if rested the Ark) could only be a distorted form of the name Korduk (a region in the province of Korchaik of Great Armenia).

French Armenologist Saint-Martin, rejecting the identification of Ararat with Korduk, considered important the fact of the emergence of two different opinions (as a result of two types of translations of the Old Testament) while localizing the place where rested the Ark. According to Saint-Martin, the place of resting the Ark in the north of Mesopotamia and Syria was mainly accepted by "eastern Christians - Syrians and Arabs". Saint - Martin considered to be correct the tradition, according to which Ararat is in the centre of Armenia.

The Qumran scrolls discovery in 1947 made it clear that the earliest Aramaic translation contains the name Ararat. As far as it concerns the name Karduk it was interpolated in subsequent Aramaic (the Targum Onkelos and the Palestinian Targum) and the Old Syriac (Peshita) the Bible's translations, which later influenced the Arabic translation and some texts.

Armenian famous historian Eghishe's (V century) interpretation is important about Ararat-Masis [the highest peak of the Araratian mountains (the Armenian Highland)], as the resting place of the Noah's Ark.

أليسا دوميكيان

معهد التاريخ التابع لأكاديمية العلوم لجمهورية أرمينيا

تحليل تفاسير عربية لتسمية جبل أرارات في الكتاب المقدس في دراسات الباحثين

الفرنسيين

للقرن التاسع عشر وفي الدراسات الأرمنية الحديثة

ملخص

ما دام ذكر جبل أرارات في الكتاب المقدس هو المكان الذي استقرت عليه سفينة نوح موضعاً لاهتمام علماء الدين والمؤرخين والباحثين خلال عصور مضت. واستخدم مصطلح "قاردو" أو "كاردو" في نسختي العهد القديم باللغة العربية واللغة السريانية القديمة بدلاً لأرارات. و إشارة الى هذه المسألة أكد بعض الباحثين الأوروبيين في القرنين 18- 19، ان تسمية "جودي" للجبل الذي استقرت عليه السفينة ليست سوى تحريف لكلمة "كوردوك".

وأشار سانت مارتن الباحث الفرنسي في الدراسات الأرمنية إلى أن قد ظهر رأيان مختلفان في تحديد مكان استقرار السفينة اثر ترجمة العهد القديم باللغتين مع الرفض للطابق التام لجبل أرات مع كوردوك.

قد أكدت أقدم المخطوطات الآرامية المكتشفة في قمران في سنة 1947 وجود تسمية أرات فيها.

يرى مارتن أن بيان المكان لاستقرار السفينة قد تم أساساً من قبل السريان والعرب المسيحيين في شمال بلاد السريان والبلاد ما بين النهرين. فأكدت الدراسات التي أجريت بعد اكتشاف مخطوطات "قمران" أن اسم أرات يذكر في أقدم الترجمات باللغة الآرامية، أما اسم كاردو فانه تشكل اثر تحريف نص الترجمة الآرامية والسريانية للعهد القديم والتي أثرت على الترجمة العربية وبعض النصوص فيما بعد.

تتبعني أهمية كبيرة لتفسير المؤرخ الأرمني الشهير للقرن الخامس يغيشيه في أن أرات - ماسيس (هو أعلى قمة في الهضبة الأرمنية) وهو المكان الذي استقرت عليه سفينة نوح.

ՏԱՃԻԿԱՆՎԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Տաճիկ եզրը հայ մատենագրության մեջ «արաբ» նշանակող հիմնական անվանումներից է՝ ի թիվս *սառակիկնու*, *Բամայելի որդիք* և *հազարաղի* բառերի: Այս անվան իմաստը, սակայն, չի սահմանափակվում միայն «արաբ» նշանակությամբ և հայ դասական մատենագրության մեջ այն ունի իմաստային ավելի լայն ընդգրկում:

Տաճիկ անվան ծագումը կապվում է արաբական طي «*Տաի*», ասոր. *Տաիյայե*¹ ցեղանվան հետ՝ իր. -čik վերջածանցի կցմամբ², հմմտ. պիլվ. *tāčik*, **tāzīg*³ > հյ. տաճիկ, նաև՝ պրսկ. *tāzī*⁴ «արաբական» (նաև՝ «արաբ»), սուդ. *t'zyk*, *tāzīk*⁵ «արաբ», խոր. սակ. *ttāšiki*, *ttāšikvā*՝ «արաբներ»⁶: -čik վերջածանցը, որպես ցեղանուն կազմող ցուցիչ, հանդիպում է նաև այլ կազմություններում, հմմտ. հյ. *սազճիկ* *sagčik* = նոր պրսկ. *sagzi* < հին պրսկ. *Saka*՝ «սակ», «սկյուր» և *ռաճիկ*, *rāčik* = նոր պրսկ. *rāzi* «Ռեյ զավառի բնակիչ»⁷: *Տաի*՝ ցեղանունից տաճիկ անվան առաջացումը, կարծես թե, վկայվում է նաև հայ թարգմանչական

¹ Marquart J., *Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i*, Berlin, 1901, p. 163.

² Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, Երևան, 2003, էջ 86-87:

³ Հմմտ. միջ. պրսկ. *tāzīk/tāzīg*՝ վկայված է Դենկարդում (տե՛ս Perry J., *Tajik i*, <http://www.iranicaonline.org/articles/tajik-i-the-ethnonym-origins-and-application>, նաև՝ Mackenzie D. N., *A concise Pahlavi dictionary*, London, 1971, p. 83):

⁴ Վերջին -k-ի անկումը պայմանավորված է միջին իրանական լեզվադարաշրջանից նորին անցման առանձնահատկությամբ: Միջ. պրսկ. պիլվ. ճ-ն (հյ.՝ ճ) նոր պրսկ.՝ ում օրինաչափորեն տալիս է z. հմմտ. հյ. տաճիկ < պիլվ. *tāčik* > նոր պրսկ. *tāzi*, հյ. ոռճիկ < պիլվ. *rōčih*, **rōčik* (օրական ուտելիք) > նոր պրսկ. *rōzi*, հյ. դահլիճ < պիլվ. *dahlīč* > նոր պրսկ. *dahliz*, *dīhliz*, հյ. վաճառ < պիլվ. *vāčār* > նոր պրսկ. *bāzār*, և այլն:

⁵ Лившиц В. А., Юридические документы и письма, Москва, 1962, стр. 87.

⁶ Bailey H. W., *Turks in Khotanese texts*, Opera Minora, vol. 2, Shiraz, Iran, 1981, pp. 94-95.

⁷ Հյուբշման Հ., նշվ. աշխ., էջ 87:

մատենագրության մեջ, հմմտ. «*Բսկ Արաբացիքն որ մինչեւ ցայն վայր Տաճիկք կոչէին յանուն զլիսաւորին իւրեանց որոյ անուն էր Տայաւ...*»⁸:

Նախախլամական շրջանում՝ Սասանյանների տիրապետության օրոք (224-651 թթ.), *Տահ'* էր կոչվում Պարսկաստանին աշխարհագրորեն ամենամոտ գտնվող բեդուինական ցեղերից մեկը⁹: Դեռևս III դարում ասորի մի հեղինակի մոտ *սառակինոսի*¹⁰ զուգահեռ գործածվում է *Տահ'* ձևը՝ ցույց տալու համար բոլոր բեդուիններին ընդհանրապես¹¹: Հյուսիս-կենտրոնական Նաջդի Տահ' բեդուինները¹²

⁸ Միխայել Ասորի, Ժամանակագրություն, Յերուսաղեմ, 1870, էջ 407-408:

Տաճիկ անվան այլ ստուգաբանություններ են՝ հին իր.՝ *tāč-* արմատից, պրսկ. *tāxtan* (ներկայի հիմք՝ *tāz-*) «վազել»՝ իբրև «վագող, սասպատակող», որից «տաճիկ ձի»՝ «արագավազ ձի»։ Թագել՝ «վազել» իմաստով գործածված է նաև հայերենում, հմմտ.՝ «Տեսաներ ինձ մի, որ յոժ թագելով էլաներ ի վեր» (Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 790), այստեղից էլ թուրք. *tāzi*՝ «որսի շուն», որ գործածված է նաև հայերենում, հմմտ. «Քանզի թագին այն փոքր թխու նման նշան ունի» (Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Ս., Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 230)։ Մարկվարտը Պարսկաստանի արևելյան սահմանի վրայի իրանախոս *տաջիկներին* տարբերում է «արաբ» նշանակությամբ *տաճիկ* ձևից։ Առաջիններին ծագած է համարում *tat* է նվագողական -*čik* բառերից, իսկ *տաճիկ* ձևը հանգեցնում է *tak*- «վազել» արմատին։ Որոշ ուսումնասիրողների մեկնաբանությամբ՝ այս բառի ծագումը կապվում է *tāj* «թագ» բառի հետ՝ «թագին հպատակող ստրուկ ցեղ» նշանակությամբ (ամփոփ տե՛ս Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 365-366, Թեղդիկ, Ամենուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, 1923, էջ 354-356, Dehkhodā A., Loyal-nāme, Tehran, 1373 (1993-94), j. 4, s. 5477)։

⁹ Бартольд В. В., Сочинения, т. II (1), Москва, 1963, стр. 455-456.

¹⁰ *Սառակինոս* ձևը զալիս է հին հունական և հռոմեական մատենագրությունից (Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 138, ծան. 14)։ Հնդ որում, հույները սառակինոս, բացի «արաբ» նշանակությունից, գործածել են նաև անհավատ, հերետիկոս իմաստով՝ այդպես անվանելով նաև այն քրիստոնյաներին, ովքեր վանական կենցաղում չէին հետևում իրենց սահմանած կարգ ու կանոնին. հմմտ. «...*գոյ յանցուցեալսն սարակինոսս անուանէր վասն ոչ զգէաս ունելոյ*» (Խաչիկ Արշարունի, Մատենագիրք Հայոց (այսուհետ՝ ՄՀ), հ. Ժ, Անթիլիաս, 2009, էջ 683)։

¹¹ Бартольд В. В., նշվ. աշխ., էջ 456:

¹² Տայի'ները, ինչպես նաև հյուսիս-կենտրոնական Արաբիայի մի շարք այլ խոշոր ցեղեր, իրականում սերում են Արաբական թերակղզու հարավային շրջաններից՝ Եմենից, Հադրամաութից և դրանց հարակից վայրերից։ Հենց այս շրջաններն են համարվում, այսպես կոչված, «գտարյուն արաբների» (գրականության մեջ հայտնի՝ «*ʿāribah*» տերմինով, ի տարբերություն «*musta'ribah*»-ի, որ արաբականացված

սերտ շփումների մեջ էին ինչպես Բյուզանդիայի, այնպես էլ Սասանյան Իրանի հետ: Նրանց անունը պատմության մեջ հայտնի է դառնում՝ կապված Սասանյան Խոսրով II Փարվիզի (591–628 թթ.)՝ արաբական Լահմիների դինաստիան վերացնելու և Հիբայում Տաի՝ առաջնորդին որպես իր տեղապահ նշանակելու իրադարձությունների հետ: Արաբական ցեղերի մեջ տաի՝ներն ամենահզորն էին և սրանց անունով էլ իրանախոսները բոլոր արաբներին ընդհանուր կերպով սկսեցին անվանել *տաճիկներ*¹³: Այսպիսով, *տաճիկ* բառն ի սկզբանե հանդես է գալիս «արաբ» նշանակությամբ, որը վկայվում է նաև հայ մատենագրության մեջ, հմմտ. *գաւրք Տաճկացի*¹⁴, *իշխանն Տաճկաց, գաւրն Տաճկաց*¹⁵, *իշխանին Տաճկաց*¹⁶, *գպետութենէն Տաճկաց*¹⁷, *գաւրաւարին Տաճկաց, որ ոստիկան էր Հայոց...*¹⁸, *արիւնարբու ազգն Տաճկաց*¹⁹ և այլն:

Հայ մատենագիրները *տաճիկ* անունը տարածում են ոչ միայն արաբների, այլև այն վայրերի վրա, որտեղ նրանք կազմում էին բնակչության մեծամասնությունը՝ Ասորիք, Փյունիկե: V դարի հայ մատենագիրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ հին ժամանակներից այս անունով էր կոչվում Ասորիքի և Եփրատի միջև

արաբներն են) նախահայրենիքը (մանրամասն տե՛ս Hitti Ph. K., *History of the Arabs*, New York, 2002, pp. 31-32, 65):

¹³ Կոզլան Հ. Ս., Մակաբայեցոց Բ. գրքին հայերեն թարգմանությունը, «Հանդես ամսօրեայ», 1922, թիւ 10-11, էջ 542, հմմտ.՝ Бартольд В. В., նշվ. աշխ., էջ 456. Այս երևույթն առկա է նաև շատ այլ ցեղանունների պարագայում: Ժամանակակից Իրանի հյուսիսարևմտյան հատվածներում բնակվում են էթնիկ-ղավանական յուրահատուկ կերպարով ցեղեր, որոնք արևմտյան գրականության մեջ հայտնի են ընդհանուր *գուրան* (*գորան*) անվամբ՝ չնայած վերջինս դրանց ճյուղերից մեկի, իհարկե ամենամեծի՝ *գուրան* ցեղամիավորման (կոնֆեդերացիայի) անվանումն է լոկ (տե՛ս Ասատրյան Գ., Գուրաններ, «Իրան նամե», 1995, թիւ 1 (11), էջ 21):

¹⁴ Ագաթանգեղոս, ՄՀ, հ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 1318:

¹⁵ Ղեւոնդ, ՄՀ, հ. Զ, Անթիլիաս, 2007, էջ 741, 749:

¹⁶ Արտավազդ Երաշխատր, ՄՀ, հ. Զ, էջ 883:

¹⁷ Թովմա Արծրունի, ՄՀ, հ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 142:

¹⁸ Յովհաննես Դրասխանակերտցի, ՄՀ, հ. ԺԱ, էջ 607:

¹⁹ Մովսես Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, Երևան, 2011, էջ 350:

գտնված եռանկյունին, որը հույներն անվանում էին Arabia hē erēmos, իսկ հայերը՝ *Տաճկաստան*, հմմտ. *զանապատն Տաճկաստանի*²⁰, Ագաթանգեղոսը Տրդատ Մեծի համար ասում է. «... եւ ոչ սակաւ մղեալ պատերազմունս յայնկոյս Եփրատ գետոյ ի կողմանս Տաճկաց...: Զի զՅունաց աշխարհն եւ զՀռոմոնց քաջ գիտեմ, եւ զմեր Պարթեւաց կողմանսն, վասն զի բնութիւն իսկ է մեր, եւ զԱսորեստան եւ զՏաճկաստան եւ զԱտրպատական»²¹: Մատենագիրները *Տաճկաստան* անունը գործածել են նաև Փյունիկեի համար, հմմտ. «*Զայս լուաք յարանց գերելոց ի Խուժաստան Տաճկաստանէ...*»²²: Եղիշեն ևս հիշատակում է *Տաճկաստանը*²³, որը, սակայն, ինչպես ցույց է տալիս Ս. Կանայանցը, չի վերաբերում ո՛չ Փյունիկեին և ո՛չ էլ Արաբիային, այլ՝ Հյուսիսային Միջագետքին՝ մինչև Տիգրիս, որին ասորիները կոչում են *Beθ 'Arawāye*, որտեղ Մծբինն էր, և սա, անշուշտ, այն երկիրն է, որ հայ մատենագրության մեջ հայտնի է *Արուաստան*²⁴ անունով²⁵: *Տաճիկ*՝ քանանացի նշանակությամբ գործածված է Զգոնի ճառերի հայերեն թարգմանության մեջ, որտեղ քանանացի կինը կոչվում է «*Տաճիկ-Ասորի*»²⁶, մինչդեռ ասորերեն սկզբնաղբյուրի մեջ՝ *քանանուհի*²⁷: Ընդհանուր առմամբ *տաճկաստանեայք* կամ *տաճկաստանք* են

²⁰ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, ՄՀ, հ. Բ, էջ 1968: Մինչդեռ, ի տարբերություն Խորենացու Պատմության, նրա «Աշխարհացոյցում» *Տաճկաստան* է կոչվում Ապառաժ Արաբիայի «հիկզ փոքր աշխարհներից» մեկը Եգիպտոսի մոտ (Կանայեանց Ս., Գդաց աշխարհ = դասն աշխարհ, «Արարատ», 1913, էջ 495, ծան. 1):

²¹ Ագաթանգեղոս, ՄՀ, հ. Բ, էջ 1401-1402:

²² Մեբեոս, ՄՀ, հ. Դ, Անթիլիաս, 2005, էջ 532:

²³ Եղիշե, ՄՀ, հ. Ա, Անթիլիաս, 2003, էջ 529:

²⁴ *Արվաստանը* (Արուաստան) Արաբիա անվան պարսկահայկական ձևն է: Հյ. Արուաստան կազմված է՝ *Արու* = ասոր. *'Araw* + պրսկ. ա-ստան ձևությունից = «Արաբստան» (տե՛ս Հյուբշման Հ., Հին Հայոց տեղոյ անունները, թարգմ. Հ. Բ. Պիլեգիկճեան, Վիեննա, 1907, էջ 180):

²⁵ Կանայեանց Ս., նշվ. աշխ., էջ 493-495:

²⁶ Գիրք, որ կոչի Զգոն արաբեալ Ս. Յակովբայ, Կ.Պոլիս, 1824, էջ 43:

²⁷ Կոզեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 542:

անվանվում արաբների, ասորիների, փյունիկեցիների և քանանացիների երկրների բնակիչները²⁸:

Կապված արաբների նվաճողական արշավանքների հետ՝ տաճիկ եզրը ձեռք է բերում նաև բացասական իմաստ՝ նշանակելով «ասպատակիչ», «զավթիչ», «ավերող», «թալանչի», ինչպես նաև «այլազգի», «այլադավան», «խուժադուժ ցեղերին պատկանող»: Այս համատեքստում տեսնում ենք դրա գործածությունը *պարսիկ* անվան հետ, հմմտ. «խուժքն Պարսից եւ դուժքն Տաճկաց ... որք ի ծայր եզերաց տիեզերաց»²⁹: Նմանատիպ կիրառություն ենք տեսնում պարսկալեզու մատենագիրներ էրն Էսֆանդիարի (XIII դ.), Ռաշիդ-ադ-Ղինի (XVII դ.) և այլոց մոտ, հմմտ. *tork-o tāzik/tājik* բառակապակցությունը, որ հանգավորվում է՝ *dur-o tazdik* «հեռու և մոտիկ»³⁰: Տաճիկ ձեռք գործածվում է նաև որպես ածական՝ «արագավազ» նշանակությամբ՝ ձիու և ուղտի համար³¹, հմմտ. «քայց միայն Մերուժանն ի տաճիկ ձի նստեալ փախչէր», տաճիկ ուղտուք³², երիվարս տաճիկս³³, հմմտ. նաև՝ *արաբական ձի, արաբ ձի*: VII դարում, երբ արաբները ակտեցին տարածել իսլամը, այս համատեքստում տաճիկ անունը ձեռք բերեց նաև նշանակություն՝ «մուսուլման», «իսլամի հետևորդ»³⁴, այստեղից էլ՝ տաճկացնել՝ «մուսուլման դարձնել» դարձ-

²⁸ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. II, Վենետիկ, 1837, էջ 842:

²⁹ Խաչիկ Արշարունի, ՄՀ, հ. Ժ, էջ 681:

³⁰ Perry J., *Tajik i*, <http://www.iranicaonline.org/articles/tajik-i-the-ethnonym-origins-and-application>.

³¹ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 365:

³² Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 363, 368:

³³ Սեբեոս, ՄՀ, հ. Դ, էջ 503:

³⁴ Հայ մատենագրության մեջ շատ տարածված երևույթ է՝ ցեղանվան տակ հասկանալ դավանական պատկանելություն, հմմտ. «Լիպարիտոս այս ... վրացի ազգաւ» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 109): Այստեղ խոսքը վերաբերում է ազգությամբ հայ նշանավոր գորավար Լիպարիտին, ով վրացադավան էր (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1973, ծան. 193, էջ 322, Երեմյան Ս. Ս., Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, «Երևանի պետական համալսարանի Ն. Մարի անվան կաթինետի աշխատություններ», № 2, Երևան, 1947, էջ 103-149):

վածքը, հմտո՝ «Եւ ի գալստեանն այսոքիկ հրէայք եւ հեթանոսք, քրիստոնեայք եւ տաճիկք»³⁵, «Եւ սարկաւագ մի տաճկացունցին, եւ գոռոմոց տանուտէրն ... կախեցին»³⁶:

XI դարում սելջուկների՝ դեպի Արևմուտք արշավանքներից և Միջագետքի տեղացի արաբների հետ նրանց խառնվելուց հետո հայերն այս անունը տարածեցին նաև թուրքերի վրա, հմտո. «Ազգ, որ կոչմամբ՝ Թուրք անուանեալ, ի քսան և չորս՝ ցեղս որոշեալ: Իշխանութիւն՝ Տաճկաց առեալ, թեպէտ յաղանդ՝ նոցին խմորեալ»³⁷, «Միաբանեցան Թուրքն և Տաճիկն, և զազգապետն իւրեանց եղին ի Բաղդատ և յայլիֆայ անուանեցին, այսինքն է՝ յետնամնաց Մահմետի»³⁸: Ավելի ուշ տաճիկ անունը սկսում է կիրառվել ոչ միայն թուրք, այլև թուրք-մուսուլման իմաստով՝ ընդգծելով իսլամի հետևորդ նշանակությունը: Այսպես՝ Գրիգոր Տաթևացին «Հարցմանց Գիրք» (1397 թ.) երկի «Ընդդէմ տաճկաց» մասում, որը, ի թիվս «Ընդդէմ հրեից» և «Ընդդէմ քրիստոնեական եկեղեցւոյ դաւանաբանական ներքին տարբերութեանց» հատվածների, գրել է քրիստոնեական կրոնը ջատագովելու նպատակով, քննադատում է մուսուլմանական կրոնը³⁹: Թերևս սելջուկների ժամանակաշրջանից սկսած տաճիկը ստացավ նաև ածականական կիրառություն՝ «չարչարող» իմաստով: Իսկ այսօր տաճկանալ բայը արևմտահայերենում ունի «զազազել», «զայրանալ» իմաստը⁴⁰:

XI դարում Մահմուդ Քաշղարին արդեն իր աշխատության մեջ *tajik* (թեժիք) բացասւում է որպես «պարսիկ»⁴¹: Յուսուֆ Բալասաղունին (XI դ.) ևս կիրառում է *թեժիք* ձևը Խորասանի պարսիկների վե-

³⁵ Գրիգոր Մագիստրոս, ՄԶ, հ. ԺԶ, Երևան, 2012, էջ 238:

³⁶ Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915, էջ 193:

³⁷ Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, Փարիզ, 1859, էջ 189:

³⁸ Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 59:

³⁹ Կիլիսեւեան Բ. եպս., Իսլամը հայ մատենագրութեան մէջ, Վիեննա, 1930:

⁴⁰ Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991, էջ 281:

⁴¹ Kâşgarlı Mahmûd, Divânü Lugâti't-Türk, İstanbul, 2005, s. 523.

րաբերյալ⁴²: *Թեջիկներն*, ըստ միջինասիական թյուրքերի, ոչ այնքան արաբագրիներ էին, որքան իսլամական մշակույթի ներկայացուցիչներ, որոնց շրջանում թվային գերակշռությունն արդեն Թուրքեստանին մոտ գտնվող արևմտյան իրանցիներին էր, քանի որ Միջին Ասիա տեղափոխվող մուսուլմանական զորքերի մեջ արաբների թիվն այնքան էլ մեծ չէր՝ համեմատած իրանցիների: Երբ թյուրքական ցեղերը գրավեցին իսլամադավան բնակչությամբ տարածքներ և ավելի մոտիկից սկսեցին ճանաչել պարսիկներին ու արաբներին, պահպանեցին «*տաջիկ*» բառը միայն պարսկախոս բնակչության համար⁴³՝ զանազանելով տաջիկներին, իմա՝ իրանցիներին արաբներից, չնայած պարսիկները, և նրանց օրինակով՝ նաև թյուրքալեզու ժողովուրդները, ի սկզբանե այդ անունով հենց արաբներին էին կոչում⁴⁴: Հետագայում՝ արդեն XI-XIII դդ., պարսիկ հեղինակները կիրառում են այս անունը (պրսկ. արտասանությամբ՝ *tāzīk*) «պարսիկ» նշանակությամբ ընդհանրապես: Պարսկալեզու գրականության մեջ *տաջիկ* (*tājīk*) ձևով այս բառն առաջին անգամ կիրառվում է պոեզիայում (XIII դարի երկրորդ կեսից հետո)⁴⁵:

Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ XI դարից հետո (պրսկ.՝ *թազիք*) և XIII դարի վերջերից (պրսկ.՝ *թաջիք*) ձևավորվում է *տաճիկ* եզրի արտասանական տարատեսակը՝ *տաջիկ* (ժամանակակից միջինասիական իրանախոս ազգաբնակչության ներկայիս ինքնանվանումը⁴⁶), որը, ամենայն հավանականությամբ, հանգում է պարթևա-

⁴² Бартольд В. В., ևշվ. աշխ., էջ 456.

⁴³ Bahār, Sabkšenāsi, j. 3, Tehran, 1381 (2002), s. 57.

⁴⁴ Այն, որ նախկինում թյուրքերը «*տաջիկ*» կոչել են արաբներին, փաստում է *արաբ* անվանման չինական ձևը՝ *դաշի* (Бартольд В. В., ևշվ. աշխ., էջ 456):

⁴⁵ Schaeder H. H., "Türkische Namen der Iranier", Die Welt des Islams, Sonderband: Festschrift Friedrich Giese, Berlin, 1941 p. 26, Perry J., Tajik i, <http://www.iranicaonline.org/articles/tajik-i-the-ethnonym-origins-and-application>, Bosworth C. E., Tādjik, The encyclopaedia of Islam, v. X, Leiden, 2000, p. 62.

⁴⁶ Ինչպես նկատելի է, *տաջիկ* եզրն ի սկզբանե հանդես չի եկել իբրև ինքնանվանում, չնայած այսօր այն ընդունվում է որպես այդպիսին:

սողդական համարժեք ձևին: *Tāčik-ը* պարթևերենում պետք է օրինաչափորեն տար **tāžik* (հմմտ. պիլվ. *vičār*– «իրականացնել, գործարք կատարել», պրթ. *wižār*– «գործարք կատարել», *wižār* «գործարք» > հյ. *վճար* և այլն), որը վկայվել է սողդերենում (*tāžik*) և այնտեղից անցել թյուրքերեն ու պարսկա-տաջիկական գրականություն⁴⁷: Այն ներկայիս «տաջիկ» (ռուս. *таджик*) նշանակությամբ մուտք է գործում հայերեն ըստ էության XX դարի առաջին քառորդից հետո⁴⁸՝ կապված միջինասիական շրջանների խորհրդայնացման և այդ տարածքները *Տաջիկստան* անվամբ կոչելու հետ, երբ 1924 թ. ստեղծվեց Տաջիկստանի ինքնավար հանրապետությունը Խորհրդային Ուզբեկստանի կազմում: 1929 թ. այն դարձավ միութենական հանրապետություն, որը 1991 թ. ԽՍՀՄ փլուզումից հետո անկախություն ձեռք բերեց: Այդ ժամանակներից էլ *տաջիկ* եզրը պաշտոնապես կիրառվում է որպես այդ շրջանների ազգաբնակչության էթնոնիմ: *Տաջիկ* անունից ածանցված *Տաջիկստան* տեղանունն ինքնին վկայում է կազմության ոչ հայկական լինելը, որը հայերեն է մուտք գործել խորհրդային անվանակարգության (նոմենկլատուրա) շրջանակներում՝ ռուսերենի միջոցով, հմմտ. ռուս. *Таджикистан*, անգլ. *Tajikistan*: Իրանական *-stān* տեղանվանակերտ ածանցը շատ կենսունակ է նաև հայերենում և կցվելով ցեղանուններին՝ կազմում է երկրանուններ: Ուստի գուտ հայկական կազմության դեպքում հայերեն շեշտադրական օրենքներին համապատասխան այն պետք է լիներ *Տաջիկստան*, ինչպես որ ավելի հին նման կազմություններում է՝ *տաճիկ* – Տաճկաստան, *պարսիկ* – Պարսկաստան, *հնդիկ* – Հնդկաստան՝ ա հոդակապի մի-

⁴⁷ /-j-/ և /-ž-/ հնչյունների հերթագայությունը սովորական երևույթ է պարսկա-տաջիկական խոսվածքներում (տե՛ս *Лявониц В. А.*, նշվ. աշխ., էջ 88):

⁴⁸ «ՆԶԲ»-ն չունի *տաջիկ* բառահոդված (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837): Հիշատակարաններում ունենք *տաջիկ* ձևի գործածություն՝ բնականաբար «տաճիկ, թուրք» իմաստով, հմմտ. «Այլ տաջիկը թակել էին և իջուցել զբարինս...» (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, Երևան, 1967, էջ 447), նաև՝ Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Ս., Միջին հայերենի բառարան, էջ 749:

ջոցով և միջբաղաձայնային *խ*-ի սղմամբ⁴⁹: Տվյալ պարագայում, սակայն, այս կանոնը չի գործում և մատնանշում է կազմության փոխառված լինելը⁵⁰:

Մինչև XIX դարավերջ XX դարասկիզբ *տաճիկ* բառն արևմտահայերենում պահպանում է իր կենսունակությունը «օսմանցի թուրք/մուսուլման» նշանակությամբ: Հետաքրքիր է այս կապակցությամբ 1915 թ. Մեծ եղեռնի օրերին Սիրիայի Համա քաղաքն աքսորված Ծաղիյի անունով քեսաբցի մի տարեց կնոջ վերագրվող երգ-անեծքը (բերթովա)՝ ուղղված թուրք զինվորներին, ովքեր ստիպում էին նրան մի երգ երգել: Վերջինիս երգում կային հետևյալ տողերը՝ «... Մենք տաճիկ չենք դառնա, ... Մեր լույս հավատը չենք մոռանա և ձեր

⁴⁹ Հմմտ. *տաճկերեն, տաճկահայ, տաճկաբան, տաճկախոս, տաճկահայատակ, տաճկասեր* և այլն (Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 366):

⁵⁰ Հայերենում *Տաճկաստան* և *Տաջիկստան* անվանումները միմյանց հարաբերվում են հավանաբար այնպես, ինչպես *Ատրպատական* և *Ադրբեջան* անվանումները: Վերջին երկուսը միևնույն տեղանվան արտասանական տարատեսակներն են: Հայերենում բառային ավելի հին միավոր է *Ատրպատական* անունը (Իրանի հյուսիսարևմտյան հատվածում գտնվող նահանգի անվանումը), որ հանգում է միջ. իր. *Āturpātākān* ձևին և կազմված է Մարաստանի սատրապ Ատրպատի (միջ. իր. *Āturpāt* բառացիորեն նշանակում է «կրակի կողմից պաշտպանված») անունից և մինչև օրս հայերենում գործածվող իրանական ծագման «*-ական*» ածանցով: Երկրորդ ձևը *Ադրբեջան*, նույնպես հանգում է *Āturpātākān* ձևին, սակայն, ենթարկվելով բնականոն հնչյունական զարգացումների, արդեն միջինից նոր իրանական լեզվադարաշրջանին անցման ժամանակահատվածում սկսում է հնչել *Ādarbāyghān* և հետագայում փոխառվելով արաբերենում, այդ լեզվում /g/ հնչյունի բացակայության և /j/-ի առկայության պայմաններում, դառնում *Ādarbāyjan*: Արաբականացված *Ādarbāyjan* ձևն էլ ուշ նոր պարսկերենում աստամային /δ/-ի /z/-ի փոխվելու արդյունքում սկսում է հնչել *Āzarbāyjan* և մուտք է գործում նաև թյուրքական բարբառներ: Հայերենում *Ադրբեջան* ձևով այս անվանումը լայն տարածում է գտնում պայմանավորված Հայաստանին արևելքից սահմանակցող 1918 թ. ստեղծված պետության անվանակարգմամբ, որը Իրանի *Ադրբեջան* նահանգի անվամբ: Կոչելու քաղաքական դրդապատճառները հայտնի են և բավականին լավ են ուսումնասիրված:

*Մուհամեդի ետևից չենք գնա*⁵¹: Թուրք զինվորները, չհասկանալով երգի իմաստը, հաճախ էին ցանկանում լսել այս երգ-անեծքը:

Ներկայումս ժամանակակից արևելահայերենում *տաճիկ* եզրն արդեն հնացած միավոր է: Այն հաճախ կարող է հանդիպել գեղարվեստական գրականության մեջ՝ պոեզիայում, արձակ գործերում և այլն՝ իբրև ոճավորման (ստիլիզացիա) արտահայտություն՝ ի տարբերություն արդեն *տաջիկ* ձևի, որը կենսունակ է՝ պայմանավորված վերոնշյալ միջինասիական պետության առկայությամբ:

HAYKAZ GEVORGYAN

Yerevan State University

SEMANTICS OF THE WORD TĀČĪK IN THE ARMENIAN HISTORICAL SOURCES

SUMMARY

Along with the forms “Saracen, the sons of Ishmael and Hagarians”, the word “Tāčik” is one of the main forms for designating “Arabs” in the Armenian chronicles, though, the latter signifies a broader meaning in classical Armenian historiography. This article represents different semantics of the word Tāčik attested in Armenian annals. The author also considers the ethnonym of a Central Asian Iranian-speaking people – Tajik, as an articulatory variety of the form Tāčik.

⁵¹ Այս երգը գրի է առնված Միհրան Միևապյանի կողմից Քեուաբի շրջանում (Միևապյան Մ., *Նմոյշներ Քեսապի ժողովրդ. երգերէն*, «Հասկ հայագիտական տարեգիրք», Անթիլիաս – Լիբանան, 1983-1984, էջ 360):

معاني مُصطلح *Tācīk* في المدونات التاريخية الأرمنية

ملخص

إن المُصطلحات *Tācīk* و ساراقيينوس و أبناء اسماعيل و الهاجريون التي تُكرت في المدونات الأرمنية التاريخية جاءت بمعنى "العربي"، لكن كلمة *Tācīk* في تلك المدونات لم تقتصر على ذلك المعنى فقط، بل كان لها معانٍ أوسع. تتطرق هذه المقالة تطور معنى هذا المصطلح كما جاء في المصادر الأرمنية. كذلك يرى الكاتب أن لفظة *Tajik* التي أُطلقت على الشعوب الإيرانية في آسيا الوسطى هي تطور لفظي لشكل *Tācīk*.

ՏՄՅՔ ԱՆՈՒՆ ԸՍՏ ԱՐԱԲԱԿԱՆ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Մեծ Հայքի Տայք նահանգի (աշխարհ)¹ անունը, որոշ պատմական տեղեկությունների հետ մեկտեղ, օտարալեզու աղբյուրագիտական գրականության մեջ հանդիպում է տարբեր անվանումներով²: Այս տեսակետից չափազանց կարևոր արժեք են ներկայացնում նաև IX-XIII դդ. արաբական աղբյուրները: Վերջիններում երկրամասը կոչվում է ՍիրաջԹայր (*سراج طير*), որը նույնական է «ՇիրակՏայք»-ին: Արաբ հեղինակներից Բալազուրին⁴ (IX դ.) իր երկում⁵ արաբների կողմից Հայաստանի նվաճումը նկարագրելիս գրում է. «Ասել են, թե... Շիրակը (Սիրաջ *سراج*), Տայքը (Թայր *طير*) և Բագրևանդը (Բադրա-

¹ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 84-85, 110:

² Քսենոփոն, Անաբասիս, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 94, 101: Պրոկոպիոս Կեսարացի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Շ. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 158, 242-243: Կոստանդին Սիրանաձին, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Շ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151: Garitte G., La Narratio de rebus Armeniae, édition critique et commentaire. Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 132, Subsidia tome 4, Louvain, Imprimerie Orientaliste L. Durbecq, 1952, p. 42. Карталис Цховребя, История Грузии, Тбилиси, 2008, с. 14, 112, 147-152, 154 և այլն:

³ Բ. Խալաթյանցը կարծում է, որ «անկասկած երկու անունն զատելու է միմեանցից եւ ուղղելու՝ (Շիրակ եւ Տայք) արտագրողը ընդունած է արաբական բառի տեղ, որ «թոչուն» կը նշանակե «թոչունի լապտեր» (մանրամասն տե՛ս Արաբ մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց եւ թարգմանեց Բագրատ Խալաթեանց, Վիեննա, 1919, էջ 27, ծանոթ. 3):

⁴ Ալբուղջական անունը՝ Ահմադ իբն Յախյա իբն Ջափր իբն Դաուդ ալ-Բալազուրի:

⁵ Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, Գ, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 224:

վանդ (بخروند) կոչվում էին Երրորդ Հայաստան (Արմինիա)»⁶: Այնուհետև ավելացնում է. «Ասում են նաև, թե... Շիրակը, Տայքը, Բագրևանդը, Դվինն ու Վասպուրականը կոչվում էին Երկրորդ Հայաստան»⁷: Հեղինակը նաև հայտնում է այդ տարածքների պատկանելության մասին. «Վիրքը և Աղվանքը խազարների ձեռքում էին, իսկ Հայաստանի մնացած մասերը՝ հոռոմների ձեռքում և կառավարում էր Արմանիակուսի տերը»⁸: «Արմանիակուս»-ը համապատասխանում է քյուզանդական Արմենիակների բանակաթեմին⁹: Բալազուրին մեկ անգամ ևս նշում է Շիրակ-Տայք անունը. «Նա (Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիմ կամ կրճատ Հաբիբը – Լ. Ն.) մարդ ուղարկեց Շիրակ-Տայք ու Բագրևանդ ու եկավ նրանց պատրիկը և նա հաշտություն կնքեց այդ [զավառների] համար, այն պայմանով, որ հարկ վճարեն, մահմեդականներին խորհուրդներ տան, հյուրընկալեն և օգնեն թշնամիների դեմ»¹⁰: Բալազուրիի տեղեկությունները չափազանց կարևոր են և վստահելի, քանզի դրանք, ինչպես ինքն է նշում, լսել է հետևյալ անձանցից. «Ինձ պատմել են Մուհամմադ իբն Իսմաիլը Պարտավի (Բարդաա) բնակիչներից և ուրիշներ, լսելով Աբու Բարա Անբասա իբն Բահր ալ-Արմանիից, ինչպես նաև պատմել են Մուհամմադ իբն Բիշր ալ-Կալին (Կարնեցի), լսելով նրա (Կարնո քաղաքի) ծերունիներից (շեյխերից) և Բարմաք իբն Աբդալլահ ալ-Դաբիլին (Դվնեցի), Մուհամմադ իբն ալ-Մուխայիս ալ-Խիլաթին (Խլաթեցի) և ուրիշներ, Հայաստանի վիճակին լավատեղյակ մարդկանցից: Սրանց հետ զրուցել եմ և մաս-մաս իրար կցել նրանց խոսքերը»¹¹: Այսինքն՝ արաբ հեղինակին տեղեկություններ են հայտնել մարդիկ, ովքեր քաջածանոթ էին այդ բնակավայրերին, կամ մոտ էին դրանց, հետևաբար՝ հայտ-

⁶ Նույն տեղում, էջ 265:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 319 (Ա. Տեր-Ղևոնդյանի ծանոթ. 103):

¹⁰ Նույն տեղում, էջ 271:

¹¹ Նույն տեղում, էջ 265:

նել են այն ամենը, ինչ լսել են տեղացիներից, ուստի պետք է կարծել, որ նրանց հիշատակած անվանումներն այդ ժամանակաշրջանում օգտագործվել են տվյալ երկրամասերի համար: Ըստ այդմ, կարելի է ընդունել, որ *Տայք* անվանումն ընդունված էր այդ միջավայրում: Բացի այդ, Բալագուրին նաև շեշտում է Վիրքի անունը՝ Ջուրզան, որը կոչվում է Երկրորդ Արմինիա¹², այսինքն՝ տարբերակում է այդ երկրամասը Տայքից:

Արաբ հեղինակներից Իբն Խորդադեհը (820-912) նա, անդրադառնալով Հայաստանի նվաճմանը, գրում է. «Երրորդ Հայաստանն է՝ Վասպուրական, Դվին, Շիրակ Տայք (Միրաջ Թայր - *مراجه طير*), Բագրևանդ և Նախճավան»¹³: IX դ. մեկ այլ հեղինակ՝ Իբն ալ-Ֆակիհը (մահ. 903-ից հետո) նույնպես անդրադառնալով Հայաստանին, գրում է «Երկրորդ Հայաստանում են Վասպուրականը, Դվինը, Շիրակը, Տայքը, Բագրևանդը, Նախճավանը»¹⁴: Տայքն ու Շիրակը միասին են հիշվում նաև IX-X դդ. մեկ այլ արաբ հեղինակի՝ Կուդամա իբն Ջաաֆարի աշխատությունում¹⁵: Այս հեղինակները, հնարավոր է, իրենց տեղեկությունները քաղել են Բալագուրիից, քանի որ նրանք բոլորը նույնությամբ թվարկում են այդ երկրամասերը և բոլորը Տայքը հիշում են Շիրակի հետ: Սակայն կան նաև արաբ որոշ հեղինակներ, որոնցից է Իբն Ռուստան, ով նկարագրում է Հայաստանի նահանգները, որտեղ Շիրակը դարձյալ կոչվում է՝ *Միրաջ* ձևով, սակայն առանց *Թայրի* կամ *Տայքի*¹⁶:

Տայքի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել նաև մեկ այլ արաբ հեղինակի՝ XI դարում ապրած Յահյա Անտիոքացու աշ-

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, էջ 448:

¹⁴ Նույն տեղում, էջ 494:

¹⁵ Նույն տեղում, էջ 551:

¹⁶ Նույն տեղում, էջ 515:

խաստությունում¹⁷, որտեղ խոսվում է Վասիլ II (976-1025) կայսեր դեմ Վարդ Սկլերոսի և Վարդ Փոկասի ղեկավարած ապստամբությունների և այդ ապստամբություններում Տայքի կուրապաղատ Դավթի մասնակցության մասին: Հեղինակը Դավթ Վուրապաղատին հիշատակում է որպես «ալ-Թայ [այսինքն՝ ալ-Տայ-Լ.Ն.] քաղաքի կառավարիչ»¹⁸ (ملك الجرزان صاحب مدينة التي)¹⁹: Ի տարբերություն արաբ այլ հեղինակների՝ Յահյա Անտիոքացին երկրամասն անվանում է «ալ-Թայ» (الطاي) ձևով, որը կարող է նշանակել «տայեցիներ»՝ Տայքի բնակիչներ: Այսինքն՝ կարելի է հասկանալ և՛ «ալ-Տայ քաղաք», և՛ «տայեցիների քաղաք» իմաստներով: Բ. Ռոզենն այն թարգմանել է «в городе ал-Тай»²⁰ ձևով, որն առավել ընդունելի է, քանզի, դատելով պատմիչի տեղեկություններից, կարելի է հասկանալ, որ նա տվյալ դեպքում նկատի է ունեցել ոչ թե Էթնիկական անվանումը, այլ երկրանունը՝ Տայք անունով քաղաք հայտնի չէ, ուստի խոսքը, անկասկած, վերաբերվում է Տայք նահանգին: Այնուամենայնիվ, այստեղ կարևոր է մեկ այլ հանգամանք՝ Յահյա Անտիոքացին ևս պահպանում է երկրանվան «Տայ» արմատը, այսինքն, պատմիչի մոտ արտացոլված անվանաձևը բխում է հայկական անվան «Տայք» կամ «Տայոց» ձևից, ինչպես մյուս արաբ հեղինակների մոտ է: Ուստի կարելի է պնդել, որ Յահյա Անտիոքացու ձեռքին եղել են այնպիսի աղբյուրներ, որտեղ այդ երկրամասը շարունակում էր կոչվել հայկական ձևով:

XIII դ. արաբ հեղինակ Յակուտ ալ-Համավին ևս Տայքը հիշում է Հայաստանի կազմում. «Երրորդը կազմում են Բասֆուրջանը, Դաբի-

¹⁷ Розен В., Император Василий Болгаробойца. Извлечения из Летописи Яхьи Антиохийского. Приложение к XLIV-му тому «Записок», Императорской Академии наук, N 1, СПб, 1883.

¹⁸ Նույն տեղում, էջ 27, 41:

¹⁹ من تاريخ الذيل الذي صنّفه يحيى بن سعيد بن يحيى الانطاكي تبعاً لتاريخ سعيد بن بطريق، ص. 25, 39.

²⁰ Розен В., նշվ. աշխ., էջ 24, 41:

լը, Սիրաջը, Թայրը, Բադրավանդը և Աննաշավան»²¹: Նա նաև նշում է, որ «Սիրաջ Թայր-Գավառ է Երրորդ Արմինիայում: Ոմանք ասում են՝ Երկրորդում»²²: Պատմիչի խոսքերից կարելի է եզրակացնել, որ նա ևս իր տեղեկությունները քաղել է նախորդ դարերի արաբ հեղինակներից: Այս պարագայում առավել կարևոր է այն, որ XIII դ. ապրած հեղինակը ևս Տայքը համարել է հայկական երկրամաս և նշել Շիրակի հետ մեկտեղ:

Տայքը Շիրակի հետ հիշում է նաև XII-XIII դդ. արաբ հեղինակ Իբն ալ-Ասիրը²³:

Այսպիսով՝ ըստ IX-XIII դդ. արաբ հեղինակների՝ Տայքը ոչ միայն Հայաստանի մաս էր, այլև Շիրակի հետ կազմում էր ընդհանուր երկրամաս՝ որպես Հայոց պետականության կենտրոններից մեկը: IX-XI դդ. արաբ հեղինակները, ելնելով Շիրակում և Տայքում Բագրատունյաց իշխանների կառավարելու հանգամանքից, այն համարում էին մեկ ընդհանուր երկրամաս, իսկ XII-XIII դդ. արաբ մատենագիրները, հետևելով նախորդներին, երկրամասը կոչում էին նույն անունով: Թեև Տայքում IX-X դդ. աստիճանաբար տարածում էր գտնում քաղկեդոնական դավանանքը: Այդուհանդերձ, արաբ հեղինակների մոտ Տայքը շարունակում էր մնալ հայկական նահանգ կամ երկրամաս՝ անկախ դավանանքային տարբերություններից: Ընդ որում, արաբ հեղինակներն օգտագործում են երկրամասի հայկական անվանումը՝ «Թայր» ձևով, որը «Տայք»-ի արաբերեն արտասանությունն է: Ի դեպ, արաբերենում -ր(ـ) և -զ(ـ) գրերը տարբերվում են միմյանցից կետով, որի բացակայությունը կարող է ձեռագրերի արտագրման հետևանք լինել, ուստի Տայքը կարող է ընթերցվել արաբերեն նաև

²¹ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Ցակոտ ալ-Համալի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ, կազմեց Հ. Թ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 16:

²² Նույն տեղում, էջ 78:

²³ Իբն ալ-Ասիր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 55:

«Թայգ» ձևով, որն առավել ևս հաստատում է երկրամասի բնիկ հայկական անվան հետ կապը, քանզի հայերենում Տայք տեղանվան գրաբարյան հայցական հոլով աձևը «Տայս»-ն է, որից էլ կարող է առաջացած լինել արաբերենի «Թայգ»-ը կամ «Թայր»-ը:

Այսպիսով, արաբական սկզբնաղբյուրներում *Տայք* անունը շարունակվում էր հիշատակվել բուն հայկական ձևով:

LIANA NAZARYAN

Institute of History NAS RA

THE NAME *TAIK* ACCORDING TO ARABIC SOURCES

SUMMARY

The toponym *Taik* in the Arabic sources is known as *SiradjTair*, that is to say *Shirak Taik*, which had been conditioned by the fact of the Armenian Bagratid princes' authority in both Shirak and Taik. In the Arabic version of the Armenian provincial name *Taik* is the root *Tai*, which has been underlined clearly. The importance of the Arabic sources depends on the fact that the authors have compiled their data from both the local inhabitants and more trustworthy people, who certified the toponym Taik as Armenian. Thus the name of Taik, in Arabic sources continued to be mentioned in Armenian original form.

اسم "طايك" وفقاً للمصادر العربية

ملخص

يأتي اسم "طايك" في المصادر العربية باسم "سراج طير" أي "شيراك طايك"، مشتقاً بحكم المماليك البقراونيين في شيراك وطايك. ويظهر بوضوح الأصل الأرمني "طاي" من كلمة "طايك" في التسمية العربية للمنطقة بشكل "تي" أو "تير". تميّز المصادر العربية من حيث الأهمية فضلاً للمعلومات الموثقة التي تشهد للأصل الأرمني لأسم المنطقة. وعلى الرغم من التحوّلات العرقية والدينية والثقافية التي وقعت بسبب كثرة العناصر الجورجية والخلقيدونية في طايك، فقد تمّ استدعاء اسم البلدة مرة أخرى في النسخة الأرمنية.

ԱՐԱԲԵՐԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՆՍՈՒՇՆԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

Արաբների մեծամասնությունը VII դարում ընդունեց իսլամը և այն տարածեց Խալիֆայության հպատակ երկրների մեծ մասում, սակայն քրիստոնեությունը ևս իր ուրույն տեղը պահպանեց արաբական երկրներում: Դեռ IV-V դարերի ընթացքում մի շարք արաբական ցեղեր թե՛ Ասորիքում ու Միջագետքում և թե՛ Սրաբիայի որոշ մասերում ընդունել էին քրիստոնեությունը: Արաբական մշակույթի տարածումը տեղի ունեցավ երկու փուլով: Այստեղ կարող ենք խոսել «քրիստոնեության արաբացում» երևույթի մասին¹: Իրավագետ Էդմոն Բաբբատը «արաբացումը» բաժանում է երկու մասի՝ լեզվական և ծիսական: Ըստ Բաբբատի՝ լեզվական արաբացմանը նպաստեց VIII դարում Հոփհաննես Դամասկեցու աշակերտների միջուցով հունարեն կրոնական գրքերի թարգմանությունը արաբերենի: Լեզվական արաբացմանն անդրադարձել է նաև պատմաբան Ֆիլիպ Հիթթին: Ըստ նրա՝ արաբացմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ արաբերենն ավելի մոտ է սեմական նախալեզվին, քան մյուս սեմական լեզուները:

Ինչ վերաբերում է ծեսերի արաբացմանը, ապա այն սկսվեց XI դարում, որի նպատակն էր քրիստոնեական աստվածաբանության դիրքերից հակադարձել մահմեդականներին, ինչպես նաև ամրապնդել քրիստոնեական հավատքն արաբախոս քրիստոնյաների մեջ:

¹ إدمون رباط، المسيحيون في الشرق قبل الإسلام، انظر 'المسيحيون العرب'، بيروت 1981، ص 21-23.

Առաջին «արաբացված» եկեղեցիներից է Անտիոքում և Երուսաղեմում Մելքիտ եկեղեցին, որտեղ «արաբացան» որոշ ծիսակատարություններ՝ չնայած Մելքիտ եկեղեցին կարողացավ պահպանել հունական եկեղեցու մի շարք ավանդույթներ: Նույն կերպ վարվեցին մարոնիները Լեոնալիբանանում՝ պահպանելով ասորական որոշ ծեսեր, և դպտիները Եգիպտոսում:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի շուրջ երկու հազար արաբերեն ձեռագրերի շարքում պահպանվում են քրիստոնեական մատենագրության շուրջ 60 նմուշներ²: Հիշյալ ձեռագրերը Մատենադարանը նվեր է ստացել սիրիահայերից: Նվիրատուններից են՝ Վարուժան Սալաթյանը, Հովհաննես Պասմաճյանը, Միհրան Մինասյանը, Արշակ Տանաքոզյանը և Հրաչ Ավետիսյանը:

Այս ձեռագրերը գրվել են XVII-XIX դարերում: Մատենադարանի արաբերեն քրիստոնեական ձեռագրերն առանձնապես աչքի չեն ընկնում մանրանկարներով, զարդանախշերով և լուսանցազարդերով: Դրա փոխարեն առանձնանում են գրչության կոկիկությամբ, բաժինների ու ենթաբաժինների մատչելի դասավորությամբ: Արաբերեն քրիստոնեական ձեռագրերի գիրը կոչվում է «խաթ քանաալի» (եկեղեցական գիր): Այս ձեռագրերը հիմնականում գրվել են Սիրիայում, Լիբանանում, մասամբ՝ Եգիպտոսում:

Բովանդակային առումով ձեռագրերից վեցը ունեն աստվածաբանական և բարոյախրատական ուղղվածություն: Թիվ 1046 ձեռագիրը հիմնականում պարունակում է կրոնական բնույթի բանաստեղծություններ և աղոթքներ: Դրանց հեղինակը և գրիչը Անտոնիոս իբն Շամմաս Ֆարաջալլահ Ազար աս-Սիրիանին է: Բանաստեղծությունները գրված են խոսակցական արաբերենով: Նշենք, որ հեղինակ-

² Բացի Մատենադարանում պահվող հիշյալ ձեռագրերից, աշխարհի տարբեր գրադարաններում և գիտական հաստատություններում պահվում են բազում արաբերեն քրիստոնեական ձեռագրեր, որոնց հեղինակները կամ գրիչները ծագումով հայեր են: Գոյություն ունեն նաև արաբերեն քրիստոնեական ձեռագրեր, որոնց հեղինակները գրել են Հայաստանի և հայերի մասին:

գրիչն աշխատության 27ա էջում մեջքերել է «աւետիս»³ կոչվող շարականի արաբերեն թարգմանությունը՝ հիշատակելով, որ այն հայկական է: 15 տողանի շարականը պահպանել է հայերեն տարբերակի ընդհանուր իմաստը, սակայն արաբերենը, լիովին չի համընկնում հայերեն բնագրի տեքստի հետ: Ավելացնենք, որ այս շարականը նվիրված է Քրիստոսի Հայտնության տոնին (Epiphany):

*Այսօր տօն է սուրբ ծննդեան, աւետիս
 Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետիս
 Մյսօր հրեշտակք յերկնից իջան. աւետիս
 Մյսօր սուրբ կոյսն անապական, աւետիս
 Մնաւ երբ զանմահ արքայն, աւետիս⁴:*

Մատենադարանի արաբատառ հավաքածուի բանաստեղծություններ բովանդակող ձեռագրերից հիշատակության արժանի են նաև թիվ 1741-ը, գրիչը՝ Իլիաս իբն Միխաիլ 1850 թ. (Հալեպում), 2387-ը գրիչը՝ Բաֆաիլ Նա'իմ Քիլդան 1877թ. (Կապուցիկյան հայրերի վարժարան) և 2388-ը: Սրանք XVIII դարում արաբական աշխարհում հայտնի բանաստեղծ Նիկողոս Սայեդի (1692-1756), «Դիվան ալ-Խուրի»-ի 3 օրինակներն են:

Մատենադարանում պահվում են նաև Մարոնի եկեղեցու Հալեպի համայնքի հոչակավոր առաջնորդ Գերմանոս Ֆարիատի (1725-1732 թթ.) բանաստեղծությունների երկու դիվաններ՝ թիվ 2083-ը և 2389-ը: Ֆարիատը երկու բանաստեղծություն է նվիրել ընկերոջը՝ հայազգի նշանավոր մատենագիր, բանաստեղծ, աստվածաբան, լեզվաբան Մկրտիչ ալ-Քասիհ ալ-Արմանիին: 1719 թ. Դամասկոսում Ֆարիատը բանաստեղծություն է գրում ի պատասխան Հալեպում բնակվող ալ-Քասիհի նամակի: Բանաստեղծության մեջ նա գովում է ընկե-

³ Տաղարան Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ, Յօրթագիւղ, տպ. Պօղոսի Արապեան Ապուշէխեցոյ, 1840, էջ 205-207:

⁴ Մատենադարանի թիվ 1046 ձեռագիր թ. 27ա « ینتدي بعون الله تعالى وحسن توفيقه فنكتب منجحة » 27ա « ٠مليلاد المسيح | وهي ترتب اخواتنا الأرمن تقال يوم عيد الغطس »:

րոշը և թվարկում նրա արժանիքները: 12 տողանի բանաստեղծությունը գրված է թիվ 2083 ձեռագրի 68ա-բ էջերում: 143բ-144 ա էջերում կարդում ենք ևս մի բանաստեղծություն նվիրված Մկրտիչ ալ-Քասիհին: 24 տողից բաղկացած բանաստեղծությունը Ֆարհատը գրել է Տրիպոլիում 1720 թ.: Բանաստեղծությունը շնորհակալական նվեր է ալ-Քասիհին՝ աստվածաբանական գիրք գրելու և Ավետարանի խրթին հատվածները ճիշտ մեկնելու համար⁵:

Թիվ 335 ձեռագիրը վերաբերում է Ղպտի եկեղեցուն: Գիրքը կոչվում է «Սուրբ մյուռոնի ամփոփ պատմությունը դպտիների մոտ և նրա պատրաստման եղանակը»: Ձեռագրում նշված են Սուրբ Մյուռոնի 5 բաղադրատոմսեր և դրանց պատրաստման եղանակը: Այն գրի է առնվել Կահիրեում՝ դպտիների պատրիարքարանում 1899 թ.:

Հիշատակության է արժանի XVIII դարում արաբատառ տպագրության հիմնադիրներից հայտնի աստվածաբան Աբդալլահ Զախերի ինքնագիր թիվ 1757 ձեռագիրը «Աթ-Թաֆնիդ լիլ-Մաջմա ալ-Անիդ» վերնագրով: Ենթադրվում է, որ այն հեղինակի ինքնագիր օրինակն է: Ձեռագիրն ունի նախաբան ու վերջաբան և բաժանված է երեք մասի: Հեղինակը I և II գլուխներում մերժում է 1722 թ. Կ.Պոլսում տեղի ունեցած ուղղափառ մելքիսեների ժողովի որոշումները: III մասում նա աստվածաբանական հարցեր է արծարծում: Այս մասը բաժանված է 4 ենթագլուխների: Աշխատությունն ատայժմ անտիպ է:

Այս նույն երկի ևս երկու օրինակ պահպանվել է Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարանի Արևելյան գրադարանում՝ BO 0724 (1816 թ.), BO 0725 (1763 թ.) գույքահամարներով: Կա նաև մի օրինակ՝ AT 06 (1835 թ.) գույքահամարով «The Center for digitization & preservation»-ում⁶, ինչպես նաև Հալեայի Մարոնի գրադարանի թիվ 233, 1158, 1306

⁵ Մկրտիչ ալ-Քասիիը Հայ կաթոլիկ եկեղեցու զավակ է, որի մասին հիշատակում է Միհրան Մինասյանն իր «Արաբերենով Ստեղծագործած Հալեպահայ Գրողներ» հոդվածում («Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, հտ. 2, Հալեպ, 2000, էջ 297-317):

⁶ Zouk Mosbah, Louaise, Lebanon, http://www.ndu.edu.lb/research/cdp/collections/ndl_mon_mc.html.

գույքահամարները, Սուրբ Հովհաննես վանքի գրադարանի (Շուեյր, Լիբանան) թիվ 3,3 կրկնված գույքահամարները, Պոդոս առաքյալի անվան գրադարանի (Հարիսա, Լիբանան) թիվ 151 գույքահամարի ձեռագրերը: Եվս մեկ նման ձեռագիր պահպանվում է «հալեպցի վա-սիլյան» վարդապետների մոտ՝ Սարբայում, Լիբանան⁷:

Մատենադարանի հավաքածուի մեջ պահվում են նաև 9 աստ-վածաբանական բնույթի ձեռագրեր, որոնցից հիշատակության է ար-ժանի թիվ 1155-ը՝ «Գիրք աստվածաբան ուսուցչաց»: Գրչության վայրն է Հալեպը, 1784 թ.: Գրիչն Ալֆետրիոս քահանան է:

Ձեռագրերից ևս 14-ը աղոթագրքեր են, որոնցից նշենք թիվ 1162-ը: Ձեռագիրը թվագրվում է 1674 թվականով և հնագույններից մեկն է Մատենադարանի արաբերեն քրիստոնեական մատենագրության նմուշներից: Այն ստեղծվել է Մելքիտ եկեղեցու միջավայրում: Գրիչն է Աբդունուր իբն ալ-Շամմաս Իլիաս ալՀալաբի ալ-Մալքին: Բնագի-րը ընդգրկել է «Արշալույսի աղոթքը», ինչպես նաև հատվածներ Հին Կտակարանից և եկեղեցական երգեր: Թիվ 1996 ձեռագրի 70ա-74բ էջերում գետեղված են հայերեն աղոթքներ:

Միհրան Մինասյանի կողմից Մատենադարանին նվիրաբերված ձեռագրերից են կարդինալ Օրսիի⁸ «Եկեղեցական Պատմություն» ձե-ռագրի 17 հաստափոր հատորները: Ձեռագրի հատորներից օրինակ պահպանվել է Հալեպի հույն-կաթոլիկ արքեպիսկոպոսարանի գրա-դարանում⁹: Ձեռագիրն իտալերենից արաբերեն է թարգմանել Ան-թուան վարդապետ Սաբբադը Հալեպում: Գրի է առնվել Հալեպում XVIII դարավերջում Մատենադարանի ձեռագրի նմուշներն ընդօրի-նակվել են թարգմանիչ վարդապետ Սաբբադի բնագրից:

⁷ انظر كتاب "عبد الله زاهر مبتكر المطبعة العربية د. جوزيف إلياس كحلة، مركز الإنماء الحضاري، الطبعة الأولى 2002، حلب، ص 86.

⁸ Cardinal Giuseppe Agostino Orsi (1693-1761).

⁹ [http://www.e-corp.us.org/eng/ref/101583/158_\[114\]](http://www.e-corp.us.org/eng/ref/101583/158_[114]).

Եվս 3 ձեռագիր վերաբերում են քրիստոնեության պատմությանը: Դրանցից մեկն է «Թեոդորա կայսրուհու վարքը» (թիվ 2082): Այս երկում պատմվում է կայսրուհու կյանքը մինչև Հուստինիանոս Ա բյուզանդական կայսեր (527-565) հետ ամուսնանալը 522 թ. և դրանից հետո նրա կյանքում տեղի ունեցած փոփոխությունները: Թեոդորա կայսրուհին աջակցում էր արևելյան եկեղեցիներին՝ հատկապես Հակոբիկ եկեղեցուն: Այս ձեռագիրը Մատենադարանը նվեր է ստացել Հովհաննես Պասմաճյանից 1984 թ.: Գրիչն է Անթուն Իլիաս Դահիրը (1872 թ.):

Մատենադարանում պահվում են սրբերի վարքերին ու գործերին նվիրված 2 այլ ձեռագրեր ևս: Թիվ 1753-ը բովանդակում է «Տեղեկություններ ու պատմություններ սրբերի մասին» աշխատությունը: Գրիչն է Յուսիֆ իբն Ուսթա Յուհաննա իբն ալ-Հաջ Ասլան իբն Ուսթա Յանին՝ 1637 թ. և հնագույն է Մատենադարանի արաբերեն քրիստոնեական մատենագրության նմուշներից: Նվիրատուն է Վարուժան Մալաթյանը:

Մատենադարանի հավաքածուի մեջ կան նաև արաբերեն երկու Ավետարաններ և քրիստոնեական աղանդների ու դավանանքի մասին 3 ձեռագրեր: Դրանցից հիշատակության է արժանի թիվ 1154 ձեռագիրը, որը բովանդակում է «Այն աղանդները որոնք եկեղեցուց դուրս եկան» վերնագրով աշխատությունը: Գրչության վայրն է Հալեպը՝ 1832 թ.: Աշխատությունը բաղկացած է 3 մասերից՝ I. Մտորումներ Ավետարանի մասին, II. Քրիստոնեական «աղանդները և հայ դավանանքը», որտեղ հեղինակը քննադատում է Քաղկեդոնական ժողովի նկատմամբ հայերի դիրքորոշումը, III մասն աղոթագիրք է: Ձեռագրում 36ա էջին հեղինակը փորձում է քննադատել Հայ Առաքելական եկեղեցու գաղափարախոսությունը՝ համարելով, որ այն հեռացել է Ս. Գրիգոր Լուսավորչի ուսմունքից¹⁰: Ձեռագրի 37բ էջում բեր-

¹⁰ Ս. Գրիգոր Լուսավորչի ճառը խաչելության մասին:

ված է Ս. Ներսես Կլայեցու (Շնորհալու) օրինակը՝ որպես Քաղկեդոնական որոշումներն ընդունող հոգևորականի: Մեջքերումներ են կատարված «Շարական»-ից և «Հիսուս Որդի» պոեմի՝ Սուրբ Երրորդությանը նվիրված հատվածներից:

Մարտնի եկեղեցու պատմությանն է վերաբերում թիվ 1977 ձեռագիրը՝ գրված XIX դարում: Բնագրում 7բ թերթի լուսանցքում 4 տողանի տեղեկություն կա Քաղկեդոնի տիեզերական ժողովի հանդեպ հայերի դիրքորոշման մասին:

Ինչպես նկատեցինք, Մատենադարանում արաբերեն քրիստոնեական ձեռագրերը վերաբերում են մելքիտ, մարոնի, դպտի և մասամբ՝ հայ կաթոլիկ եկեղեցիներին¹¹ և օգտագործվել են արաբախոս քրիստոնյաների կողմից:

Ամփոփելով՝ նշենք, որ Մատենադարանում պահվող արաբերեն ձեռագրերի մի մեծ խումբ բովանդակում է քրիստոնեական տարբեր դավանանքների վերաբերող գործեր: Այս ձեռագրերն արտացոլում են քրիստոնեության այն բոլոր շերտերն ու դավանաբանական առանձնահատկությունները, որոնք առկա էին արաբախոս Արևելքում: Ուստի՝ դրանք կարևոր աղբյուրներ են արաբախոս քրիստոնեական համայնքների պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Այդ ձեռագրերում կան նաև տեղեկություններ հայերի մասին: Դրանք ունեն թե՛ դրական և թե՛ բացասական երանգներ, բայց այդ վերաբերմունքի հիմքը դավանաբանական է, այն չունի ազգային կամ մշակութային հիմք: Աշխատություններից մի քանիսը ստեղծվել ու օգտագործվել են հայ կաթոլիկների միջավայրում և, հետևաբար, արժեքավոր նյութ կարող են հանդիսանալ հայ կաթոլիկների պատմության ուսումնասիրության համար:

**ARABIC CHRISTIAN MANUSCRIPTS IN THE
MASHTOTS ANCIENT MANUSCRIPTS INSTITUTE
MATENADARAN, YEREVAN**

SUMMARY

There are about 2000 Arabic manuscripts preserved in Matenadaran. Among them close to 60 are of Christian origin. Most of the Arabic Christian manuscripts are from Syria, Lebanon and some from Egypt. These manuscripts represent various fields of Arabic Christian literature as Theology, Prayer books or History. Among them "The History of the Universal Church" (17 books) of Cardinal Orsi, translated by Father Anton Sabbagh from Aleppo in XVIII century. There are also copies of the "Divans" (works) of El-Khoury Nicholas Sayegh and Father Germanos Farhat. The authors and scribes of these manuscripts were followers of different Eastern Churches (Melkite, Coptic, Maronite et c.).

موفسيس خيتشو

معهد ماشتوتس للمخطوطات القديمة بيريغان (الماتيناداران)

المخطوطات العربية المسيحية في معهد ماشتوتس للمخطوطات القديمة
بيريغان (الماتيناداران)

ملخص

تضم الماتنادران حوالي 2000 مخطوطة باللغة العربية. بينها ما يقرب من 60 مخطوطة عربية مسيحية. معظم المخطوطات العربية المسيحية جاءت من سورية ولبنان وبعضها من مصر. وتشمل هذه المخطوطات مجالات الأدب العربي المسيحي وكتب اللاهوت، والصلاة، والتاريخ. من بينها كتاب "التاريخ الكنسي" (17 جزء) للكاردينال أورسيو ترجمة الأب أنطون صباغ بحلب بالقرن الثامن عشر. هناك أيضا نسخة من ديوان الخوري نيقولاوس صايغ، والأب جرمانيوس فرحات.

نذكر أن مؤلفي ونساح هذه المخطوطات من أتباع مختلف الكنائس الشرقية (ملكيتين وأقباط ومارونيين وآخرون).

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՐԲԱՎԱՅՐԸ ԴՎԻՆՈՒՄ VII-X ԴԴ.

Ընդհանուր սուրբ տարածքները (անգլ.՝ *shared sacred spaces*, ֆրանս.՝ *des lieux sacrés mixtes/partagés*) միջնադարում բավականին լայն տարածում ունեին Մերձավոր Արևելքում, Արևելյան Միջերկրականի երկրներում, Բալկաններում: Այս թեմայով հետազոտությունները հիմնականում վերջին տարիներին են կատարվել՝ դառնալով Արևելքի սոցիալական կյանքի, ինչպես նաև կրոնների պատմության համատեքստում ուսումնասիրման կարևոր բաղկացուցիչ:

Սրբավայրերի առկայությամբ և դրանց հարուստ պատմությամբ առանձնանում է միջնադարյան Հայաստանի կարևորագույն քաղաքներից մեկը՝ Դվինը: Դվինի կենտրոնական թաղամասը տարբեր ժամանակներում ընդգրկել է կրոնական շինություններ, որոնք կարևոր են միջնադարյան Հայաստանի կրոնական և սոցիալական կյանքի վերաբերյալ դատողություններ կատարելու համար:

Թերևս Դվինի ամենակարևոր շինությունը Սբ. Գրիգոր կաթողիկե եկեղեցին է: Այժմ եկեղեցին հիմնովին կործանված է: Ժամանակի ընթացքում այն զգալի փոփոխությունների է ենթարկվել, սակայն, դրանով հանդերձ, մնացել է որպես Դվինի գլխավոր սրբատեղի: Այժմ էլ՝ ավերված վիճակում, հնավայրի մոտակա գյուղերի բնակիչները տաճարի տարածքն օգտագործում են որպես սրբավայր, այդտեղ մոմեր վառում և աղոթում:

Հայտնի է, որ սկզբնական շրջանում Դվինում եղել է եռանավ բազիլիկ տաճար: 451 թ. այն վերափոխվում է, ավելի ստույգ, ինչպես նշում է Թովմա Արծրունին, Շավասպ Արծրունին և «մարգպան» Վնդոն փորձում են Հայաստան «վերադարձնել» զրադաշ-

տականությունը¹: Նրանք Դվինում որմզդական մեհյան են կառուցում: Սակայն նրանց այս նախաձեռնությունը ճնշվում է հայ նախարարների կողմից: Նրանք սպանում են ըմբոստներին և «քանդում մեհյանը, տեղը հարթեցնում և նույն քարերով կառուցում Դվինի Ս. Գրիգոր եկեղեցին»²: Հենց այդ ժամանակ այստեղ է տեղափոխվում Գյուտ կաթողիկոսը (461 թ.): 572 թ. եկեղեցին վերանորոգվում է Վարդան և Վահան Մամիկոնյանների կողմից՝ Սմբատ Բագրատունու մարզպանության ժամանակ³: 607 թ. եկեղեցին վերակառուցվում է՝ վերածվելով գմբեթակիր եռախորան տաճարի, որի շինարարությունն ավարտվում է Կոմիտաս կաթողիկոսի օրոք⁴:

893 թ. երկրաշարժն ավերիչ էր Դվինի շատ շինությունների, այդ թվում՝ Կաթողիկե եկեղեցու համար: Այս շինությունների կործանումը դառը հետք է թողել նաև պատմիչների մոտ: Օրինակ՝ Թովմա Արծրունին հաղորդում է, որ Դվինի «սրբատեղիները, աղոթքի տները նույնպես ազդվեցին շարժից, ճեղքվեցին, պատերը խախտվեցին»⁵: Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ աղետալի երկրաշարժից ավերվում է կաթողիկոսարանի աստվածաշեն եկեղեցին և այլ վկայարաններ⁶:

Ամենայն հավանականությամբ Դվինի կաթողիկե եկեղեցու տեղում հեթանոսական տաճար է եղել: Այդ մասին վկայում է արևելյան արքիդի մնացորդը, որը, ըստ հնագետների, չի պատկա-

¹ Khachaturian A., *Architecture arménienne du IVe au VIe siècle*, Paris, Klincksieck, 1971, p. 54, Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 98:

² Թովմա Արծրունի, էջ 98-99:

³ Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան, 1996, էջ 73:

⁴ Ղաֆադարյան Կ., Դվինի կաթողիկե եկեղեցին, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ ԳԱ, 1951, N 9, էջ 80:

⁵ Թովմա Արծրունի, էջ 238-239:

⁶ Դրասխանակերտցի, էջ 165:

նում եկեղեցու սկզբնական շինությանը⁷: Բացի այդ, Դվինի կաթողիկեի վերաբերյալ գոյություն ունի ավանդություն, ըստ որի՝ այն եղել է հեթանոսական մեհյան: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հետագայում՝ 5-րդ դարի կեսերին, Շավասպ Արծրունին և Վնդոն, երբ փորձեցին Հայաստանում տարածել զրադաշտական կրոնը, հենց այս եկեղեցին փորձեցին վերածել մեհյանի⁸:

Այսպիսով, ակնհայտ է, որ եկեղեցու տարածքը եղել է մի «հարթակ», որն իր վրա է վերցրել քաղաքական-կրոնական փոփոխությունների արձագանքը: Կրոնական փոփոխությունների մի մասը (հեթանոսությունից քրիստոնեություն, ապա զրադաշտականություն և ապա՝ կրկին քրիստոնեություն անցումը), որին դավանում էին իշխող ուժերը, անմիջականորեն արտացոլվում էին եկեղեցու կառուցվածքային առանձնահատկությունների վրա:

Հաջորդ սրբավայրը Հովհաննես Դրասխանակերտցու մոտ նշվող Յիզբուզիտի վկայարանն է⁹: Ըստ Դրասխանակերտցու՝ նա ազգությամբ պարսիկ էր՝ Սաժոխ անունով, քրիստոնեություն էր ընդունել, որից հետո մահապատժի ենթարկվել: Ըստ պատմիչի՝ նրա պատվին վկայարան է կառուցվել¹⁰ «կաթողիկոսարանի արևելյան մասում»¹¹: Այս վկայարանի տեղադրությունը հստակ հայտնի չէ: Ըստ Ղաֆադարյանի և առավել տարածված կարծիքի՝ այն տեղադրված էր Դվինի Սբ. Գրիգոր եկեղեցու հյուսիսարևմտյան մասում գտնվող միանավ եկեղեցում¹²: Գիտնականնե-

⁷ D'Onforio M., The churches of Dvin, Rome, 1973, p. 81.

⁸ Թովմա Արծրունի, էջ 98, Դրասխանակերտցի, էջ 62-63:

⁹ Դրասխանակերտցի, էջ 67, Գալուստյան Շնորհ Արք., Հայագիի Սրբեր, Երևան, 1997, էջ 227-228:

¹⁰ Այս կառույցի ստեղծման ժամանակն անորոշ է: Տոկարսկին կարծում է, որ այն կառուցվել է 7-րդ դարից առաջ (Токарский Н., Архитектура Древней Армении, Ереван, 1946, с. 41):

¹¹ Դրասխանակերտցի, էջ 67:

¹² Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 106:

րից ոմանք նշում են, որ հնարավոր է դրա արևմտյան մասում փոքր ստորգետնյա խուց է եղել, ուր պահվել է Յիզբուզիտի մասունքը: Այն նմանեցնում են Էջմիածնի Սբ. Հովսիսիմեի, Արուճի եկեղեցու, Օձունի եկեղեցու հյուսիսային մասում գտնվող նույն ժամանակաշրջանի վկայարաններին¹³: Սակայն հնագետներն առավել հակված են այն կարծիքին, որ վերը նշված վարկածն իրականությանը չի համապատասխանում, քանի որ միանավ եկեղեցին արդեն կանգուն էր Յիզբուզիտին մահապատժի ենթարկելուց առաջ¹⁴: Այժմ ավելի շատ շրջանառվում է այն վարկածը, որ Յիզբուզիտի վկայարանը գտնվել է ոչ թե միանավ եկեղեցում, այլ Սբ. Գրիգոր եկեղեցու հյուսիսարևելյան մասում, կամ էլ եկեղեցու խորանի հետևում: Սակայն պեղումների ժամանակ որևէ մասունքի կամ վկայարանի առկայությունն ապացուցող գտածո չի հայտնաբերվել:

Դվինի կենտրոնական թաղամասում, բացի Յիզբուզիտից, թաղվել է նաև մեկ այլ նահատակ: Դրասխանակերտցին հայտնում է Դավիթ Դվինցու մասին, ով կրկին ազգությամբ պարսիկ էր՝ Սուրհան անունով և ազնվական ծագում ուներ: Նա քրիստոնեություն է ընդունում և բնակություն է հաստատում Դվինի մոտ գտնվող գյուղերից մեկում¹⁵: Աբդալլահ ոստիկանը նրան մահապատժի է ենթարկում (հավանաբար 702 թ.), այն բանից հետո, երբ նա հրաժարվում է կատարել ոստիկանի պահանջը և վերադառնալ իր նախկին հավատքին, այն է՝ կրկին ընդունել իսլամը¹⁶: Ինչպես նշում է Դրասխանակերտցին, «եպիսկոպոսները և քահանաները նրան թաղում են» Դվինի կենտրոնական թաղամասում՝ Յիզբուզի-

¹³ D'Onforio M., Ibid, p. 113.

¹⁴ Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 109:

¹⁵ Դրասխանակերտցի, էջ 94-95:

¹⁶ Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996, էջ 121:

տի վկայարանի մոտ¹⁷: Այս փաստը խոսում է այն մասին, որ Յիզբուզիտի վկայարանը պաշտելի վայր էր նույնիսկ արաբական տիրապետության ժամանակ՝ ի հեճուկս խալիֆայության վարած հակաքրիստոնեական քաղաքականության: Այն, որ Դավիթ Դվինցուն թաղել են Յիզբուզիտի վկայարանի մոտ, թույլ է տալիս ենթադրել, որ վկայարանի տարածքը դիտվել է որպես սուրբ տարածք և պարունակել է քաղաքի սրբերի մասունքները:

Հնարավոր է, որ Յիզբուզիտի վկայարան են հաճախել նաև քաղաքի մուսուլման բնակիչները, քանի որ հայտնի է, որ վաղ իսլամական ժամանակաշրջանում մուսուլմանները հաճախ այցելում էին քրիստոնեական սրբավայրեր¹⁸ և որոշ դեպքերում նաև ընդունում էին քրիստոնեական սրբերի պաշտամունքը:

Սյուս շինությունը կաթողիկոսական պալատն է: Այն իրենից ներկայացնում էր երկու կողմի վրա ձգվող տարբեր սենյակներով կառույց՝ մեջտեղից անցնող միջանցքով, որը, ըստ տարբեր մասնագետների, կարող էր թե՛ բաց լինել և թե՛ փակ¹⁹: Կառուցման ժամանակաշրջանի վերաբերյալ ևս տարբեր վարկածներ կան. նշվում են 5-րդ²⁰ և 7-րդ դարերը²¹: Սա Դվինի կենտրոնական թաղամասի այն շինություններից է, որը, թեև վնասվել է, բայց չի ավերվել երկրաշարժի ժամանակ²²: Ըստ որոշ ուսումնասիրողների՝ դրանից հետո Ներսես կաթողիկոսը տեղափոխվել է Զվարթ-

¹⁷ Դրասխանակերտցի, էջ 96-99:

¹⁸ Depret I., Dye G., *Partage du Sacré: Transferts, dévotions mixtes, rivalités interconfessionnelle*, Fernelont, E. M. E., 2012, p. 114.

¹⁹ Ըստ Տոկարսկու՝ պալատի սյունազարդ հատվածը ներքին բակ է եղել (Токарский Н., *Архитектура Древней Армении*, с. 43): Վ. Հարությունյանը կարծում է, որ այն ունեցել է ներքին սյուների վրա հենվող երդիկավոր երեք զմբեթ (Հարությունյան Վ., Դվինի 5-7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 81):

²⁰ Մնացականյան Ս., Դվինի պալատի կառուցման ժամանակի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, N 2, էջ 231-323:

նոց²³: Սակայն դա հաստատապես հնարավոր չէ պնդել, քանի որ Դրասխանակերտցու մոտ տեղեկություններ կան այն մասին, որ այդ թվականից հետո էլ այնտեղ կաթողիկոսարան է եղել: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ կաթողիկոսական պալատի ամբողջական ավերումը տեղի է ունեցել 13-րդ դարում՝ ամբողջ քաղաքի հետ՝ մոնղոլների արշավանքի ժամանակ²⁴:

Ըստ ուսումնասիրողների՝ հենց այստեղ է եղել տեղակայված մզկիթը²⁵, որի մասին հայտնում են արաբ պատմիչները: Այսպես, մեզ հասել են երեք մուսուլմանական աղբյուրներ, երեքն էլ 10-րդ դարից, որոնք տեղեկություն են հայտնում Դվինի մասին: Դրանք աշխարհագիրներ են՝ ալ-Մուկադդասին²⁶, Իբն Հաուկալը²⁷ և ալ-Իստախրին²⁸: Երեքն էլ նմանատիպ տեղեկություններ են հաղորդում: Նախ, որ քաղաքում քրիստոնյաները մեծամասնություն են կազմում, և երկրորդ, որ «քաղաքի մայր մզկիթը քրիստոնեական տաճարի կողքին էր»: Ըստ գիտնականների՝ սա մատնանշում է այն փաստը, որ կաթողիկոսարանը մզկիթի է վերածվել 10-րդ դարում²⁹: Սակայն, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլինի համարել, որ առնվազն 10-րդ դարում մզկիթը կանգուն էր, այլ ոչ թե նոր պիտի կառուցվեր: Այն մասին, որ 10-րդ դարից առաջ Դվինում եղել է մզկիթ, մեզ հայտնում է արաբ պատմիչ ալ-Բալազուրին: Նա նշում է, որ Աբդ ալ-Ազիզ ոստիկանը, որը կառավարում էր 704-717 թթ.,

²³ Նույն տեղում, էջ 120:

²⁴ Նույն տեղում, էջ 122:

²⁵ Հարությունյան Վ., Հայ ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 27, Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 120:

²⁶ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 16, Արաբական աղբյուրներ, արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներած. և բնագրից թարգմ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 653:

²⁷ Նույն տեղում, էջ 630:

²⁸ Նույն տեղում, էջ 574:

²⁹ Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 120:

վերանորոգում է Դվինի թաղամասերը և մեծացնում է քաղաքի մզկիթը³⁰:

Մյուս կողմից՝ հատկանշական է, որ Դվինում մուսուլմանական տիրապետության ողջ ընթացքում մզկիթ չի կառուցվել: Սակայն նշված տեսակետը, թե կաթողիկոսարանն է հանդիսացել որպես մզկիթ, մեզ հավանական չի թվում, քանի որ մինչև 9-րդ դարը այն ծառայում էր որպես կաթողիկոսի նստավայր: Իսկ մզկիթն արդեն այդ ժամանակ պետք է գոյություն ունենար: Այսինքն՝ մզկիթը կամ նախնական շրջանում մուսուլմանական աղոթատեղին պետք է լինել կենտրոնական թաղամասի այլ հատվածում: Այս առումով, կարծում ենք, որ դեռևս հստակորեն հնարավոր չէ ասել մզկիթի տեղակայման վայրի մասին, քանի որ այն մեծ մասամբ կախված է հնագիտական պեղումների արդյունքներից: Թեև մզկիթի կոնկրետ տեղակայման վայրը պարզ չէ, սակայն ակնհայտ է, որ այն գտնվել է կենտրոնական թաղամասի շինություններից մեկում:

Դվինի քիչ հետազոտված շինություններից է 5-րդ դարի կաթողիկոսական պալատը, որտեղ ատրուշան է գտնվել³¹: 789 թ. Արմինիայի ոստիկանի հիմնական նստավայրը Դվինից տեղափոխվում է Պարտավ (Բարդա)³²: Քանի որ Դվինն այս թվականից հետո դարձավ պակաս կարևոր քաղաք տրամաբանական կլինի համարել, որ մզկիթը կառուցվել է մինչև այս թվականը, երբ Դվինը հանդիսանում էր Արմինիա ոստիկանության կենտրոնական քաղաքը: Այսպես՝ 789 թ. կարող ենք ընդունել որպես մզկիթի կառուցման հավանական վերջնաժամկետ:

Հետաքրքրական է Դվինի ընդհանուր սուրբ տաքածքի հետ ամենաշատ նմանություններ ունեցող և մոտավորապես նույն ժա-

³⁰ كتاب فتوح البلدان، البلاذري، بيروت 1987، 288:

³¹ Ղաֆստարյան Կ., Քալանթարյան Ա., Դվին II, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 2002, էջ 62-67:

³² Տեր-Ղևոնդյան Ա., Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 12:

մանակահատվածի Դամասկոսի ընդհանուր սրբավայրը: Սա նաև համարվում է «դասական» օրինակ:

Երբ արաբները գրավեցին Դամասկոսը, քաղաքի բնակիչներին արաբական զորքերի հրամանատարների կողմից անվտանգության երաշխիք՝ *աման*³³ տրվեց՝ որպես ապահովություն իրենց ունեցվածքի, տների և եկեղեցիների: Այնուամենայնիվ, եկեղեցու *թեմենոս*³⁴ հարավային մասում կառուցվեց մուսուլմանական աղոթատեղի՝ *մուսալլա*³⁵: Այս վիճակում Հովհաննես Մկրտչի եկեղեցին գոյատևեց մինչև 705 թ., երբ ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքի կողմից եկեղեցու *թեմենոսը* քանդվեց և տեղում կառուցվեց Օմայան մզկիթը³⁶:

Մի քանի սկզբնաղբյուրներ մատնանշում են, որ Դամասկոսում միևնույն տարածքում միաժամանակ քրիտոնեական և մուսուլմանական սրբավայր է գոյություն ունեցել:

Դրանցից առաջինը լատին արքեպիսկոպոս Արքուֆի վկայությունն է³⁷: Դամասկոսը նրա՝ դեպի Սուրբ հող ուխտագնացության ճանապարհին էր: Քաղաքի նկարագրության մեջ նա ասում է, որ դա «մի մեծ թագավորական քաղաք է, ուր եկեղեցու պես մի բան է կառուցված անհավատ սարակինոսների համար»³⁸: Հնարա-

³³ Levy-Ruibin Milka, Shurūt 'Umar and its Alternatives: Legal Debate on the Status of the *Dhimmi*, *Jerusalem Studies in Arabic and Islam*, N 30, 2005, p. 170-204, ابن عساکر تاریخ دمشق, تحقیق عمر بن غرامة العمرو بیروت 1995, 117-118:

³⁴ Մեկուսացված, պարսպապատ տարածք: Հին հունարեն *temein* բառից է, որ նշանակում է կտրված, անջատված: Թեմենոսը նվիրված էր աստծուն և այն ամենն ինչ դրա սահմաններից ներս է, «սուրբ» էր համարվում (տե՛ս Mikalson Jonathan, *Ancient Greek Religion*, Oxford, Wiley-Blackwell, 2010, p. 7):

³⁵ أحمد بن أبي يعقوب اليعقوبي، تاریخ اليعقوبي، بیروت 1999، ص. 238.

³⁶ Օմայանների քաղաքական կառույցների մասին մանրամասն տե՛ս Bacharach J., *Marwanid Umayyad Building Activities: Speculations on Patronage*, *Muqarnas*, N 13, 1996, p. 27-44, Bloom J., *On the Transmission of Designs in Early Islamic Architecture*, *Muqarnas*, N 10, 1993, p. 21-28.

³⁷ Adomnan, *De locis Sanctis 2. XXVIII, 220*, մեջբերված է՝ Hoyland R., *Seeing Islam as Others Saw it: A Survey and Evaluation of Christian, Jewish, and Zoroastrian Writings on Early Islam*, Princeton, Princeton University Press, 1997, p. 223-224.

³⁸ Նույն տեղում:

վոր է, որ եկեղեցի՝ ecclesia, այստեղ նշանակում է ուղղակի սրբատեղի, կրոնական շինություն: Ամենաստույգ տեղեկությունը թեմենոսի երկու մասի բաժանված լինելու մասին հաղորդում է Իբն Ասաքիրը՝ իր «Դամասկոսի պատմության» մեջ: Նա վկայում է, որ «Դամասկոսի մզկիթն օտար եկեղեցու տեղում էր: Մուսուլմաններն աղոթում էին մի կողմում, իսկ քրիստոնյաները՝ մյուս: Իրավիճակն այսպիսին էր արաբական նվաճումից սկսած մինչև ալ-Վալիդ խալիֆան³⁹:

Մզկիթի և եկեղեցու՝ իրար կողք կամ իրար մեջ գտնվելու մասին է խոսում նաև 8-րդ դարի պատմիչ Իբն ալ-Ֆայդ ալ-Ղասսանին⁴⁰: Այս մասին վկայում են պատմիչներ ալ-Յակուբին⁴¹ և ատ-Տաբարին⁴²:

Ասիրաժեշտ է հաշվի առնել մի հանգամանք: Աղբյուրներում նշված «քանիսա» (كنيسة) արաբերեն բառը, եկեղեցուց բացի, կարող է նշանակել ցանկացած սուրբ տարածք⁴³: Նույնպես արաբերեն «մասջիդ»(مسجد) բառը կարող է մզկիթից բացի ավելի լայն իմաստ ձեռք բերել՝ նշանակելով կրկին սուրբ տարածք: Այսինքն՝ «մասջիդ» ասելով արաբ պատմիչները կարող էին նկատի ունենալ մու-

³⁹ ابن عساکر 253,

⁴⁰ ابن عساکر، کتاب الاخبار وحکایات، دمشق، 1994، ص. 252.

⁴¹ Հաղորդվում է, որ ալ-Վալիդը քրիստոնյաների ձեռքից վերցրեց եկեղեցու [kanisa] ձախակողմյան հատվածը և այն ընդգրկեց մզկիթի մեջ, քանի որ գոյություն ունեին երկու հատվածներ՝ արևելյան՝ մուսուլմանական հատվածը և արևմտյան՝ քրիստոնեական հատվածը: Սա կապված է նրա հետ, որ արաբական զորքերի հրամանատարներից Ուբեյդա Իբն ալ-Ջարրահը մտավ Դամասկոս և կանգ առավ եկեղեցու մեջտեղում: Նրա և Դամասկոսի բնակիչների միջև համաձայնություն՝ առաջ կնքվեց: Մինչդեռ խալիֆ Իբն ալ-Վալիդ զորավարը քաղաքը բռնի ուժով գրավեց և կանգ առավ եկեղեցու արևելյան հատվածում: Այսպես, մուսուլմաններն իրենց վերահսկողությունը հաստատեցին սրբավայրի արևելյան հատվածում և այնտեղ աղոթատեղի կառուցեցին, իսկ արևմտյան հատվածը, որտեղ խաղաղության պայմանագիր էր կնքվել, մնաց քրիստոնյաներին (236, أحمد بن أبي يعقوب اليعقوبي):

⁴² Ինչպես հաղորդում է ատ-Տաբարին «դրանում, այնտեղ» (فيه) եկեղեցի կար (الطبري) (1960-1969), أبو جعفر محمد ابن جرير، تاريخ الرسول والملوك، محمد أبو الفضل إبراهيم، القاهرة 499:

⁴³ Encyclopedia of Islam, տե՛ս 'u Kanisa, G. Troupeau.

սալլան՝ աղոթատեղին, իսկ «քանիսա» ասելով՝ եկեղեցու շուրջը գտնվող պարիսպը:

Հաջորդ օրինակը Ռուսաֆան (Սերգիոպոլիսն) է: Այն գտնվում է Սիրիայում՝ Եփրատից հարավ-արևմուտք: Այստեղ տարածված էր սուրբ Սերգիոսի պաշտամունքը, ով հռոմեացի զինվորական էր⁴⁴: Սկզբնական շրջանում տեղանքը նույնացվել է արաբական հեթանոսական Ազիզ աստվածության հետ, սակայն այն Սերգիոսի պաշտամունքի հետ կապելու քրիստոնեության քաղաքականությունը սրբավայրն առավել հայտնի դարձրեց: Այստեղ կատարվող ուխտագնացություններն ավելի աշխուժացան: Ռուսաֆայի օազիսը կարևոր առևտրային կենտրոնի վերածվեց: Իսլամի տարածումից հետո գործող եկեղեցու կողքին մզկիթ է կառուցվում: Կառուցման նախաձեռնողը Հիշամ խալիֆան (724-743) էր: Այս պատճառով Ռուսաֆան հաճախ անվանում են Ռուսաֆա ալ-Հիշամ⁴⁵: Եկեղեցու և մզկիթի՝ իրար կողք-կողքի գործելու կապակցությամբ նույնիսկ կարծիք է ձևավորվել, որ մզկիթի կառուցումն ամենևին էլ եկեղեցու հետ հակամարտելու նպատակ չուներ: Ավելին, կա կարծիք, որ նույնիսկ մուսուլմանները կարող էին մասնակցել սրբի պաշտամունքային ծեսերին. այս դեպքում Սուրբ Սարգիսը կարող էր մուսուլմանական պաշտամունքի մաս կազմել՝ կոչվելով Մար Սարջիս⁴⁶:

Մյուսը Երուսաղեմի օրինակն է: Այն իրենից ներկայացում է խորհրդանշական ընդհանուր սրբատեղիի օրինակ: Երուսաղեմում սուրբ տարածքին բնորոշ տարրերից միայն մի քանիսն են առկա: Սրբավայրը մի քանի անգամ վերափոխումների է ենթարկվել՝ դրանով արտացոլելով մի կրոնից մյուսին անցումը:

⁴⁴ Woods D., The Emperor Julian and the Passion of Sergius and Bacchus, *Journal of Early Christian Studies*, 5, N 3, 1997, p. 4-5.

⁴⁵ Fowden E. K., *The Barbarian Plain, Saint Sergius between Rome and Iran*, Berkeley: University of California Press, 1999, p. 181:

⁴⁶ Idem, *Sharing Holy Places, Common Knowledge*, N 8, 1, 2002, p. 135:

Նշենք, որ Երուսաղեմում որպես մուսուլմանների, քրիստոնյաների և հրեաների ընդհանուր սրբավայր համարվում է ներկայիս Օմարի մզկիթի տարածքը: Հրեական այն զադափարը, որ այստեղ Աստծո մշտական ներկայությունն է, գերակշռում էր դեռ քրիստոնեությունից առաջ⁴⁷: Քրիստոնեության տարածումից հետո Երուսաղեմի սուրբ տարածքը սկսեց նույնացվել Քրիստոսի անվան հետ: Վերջին հետազոտությունները փաստում են, որ Բյուզանդիայի Հերակլիոս կայսրը նախատեսում էր Երուսաղեմի սուրբ տարածքում քրիստոնեական տաճար կառուցել⁴⁸: Այդ սուրբ տարածքը շարունակեց գործել մուսուլմանական կրոնի ներքո: 690-ականներին Աբդ ալ-Մալիք խալիֆան սկսեց մզկիթի կառուցումը⁴⁹: Այն հետզհետե սկսեց կապվել Մուհամմադի կյանքի և գործունեության հետ⁵⁰:

Երուսաղեմի սուրբ տարածքը, անխոս, ամենաուսումնասիրվածն է բոլոր ներկայացված սուրբ տարածքներից: Սակայն այս տարածքը մեզ համար առավել նպատակահարմար է նշել և վկայակոչել իր խորհրդանշական դերի համար, ինչպես նաև որպես գործող կրոնն արտացոլող տարածք, այն կրոնի, որը տվյալ պահին տիրապետող է:

⁴⁷ Fowden, Ibid, p. 139-140.

⁴⁸ Peters Francis, Who Built the Dome of the Rock?, Gracco-Arabica: First International Congress on Greek and Arabic Studies 2, 1983, p. 128.

⁴⁹ Elad A., Medieval Jerusalem and Islamic Worship: Holy Places, Ceremonies, Pilgrimage, Leiden: Brill, 1995, p. 51.

⁵⁰ Van Iss J., Abd al-Malik and the Dome of the Rock: An Analysis of Some Texts, "Bayt al-Maqdis. 'Abd al-Malik's Jerusalem, խմբ. J. Johns, J. Raby, Oxford: Oxford University Press, 1992, p. 90-91, Idem, Vision and Ascension: Sūrat al-Najm and its Relationship with Muhammad's Mi'raj, Journal of Qur'anic Studies, 1, N 1, 1999, p. 56, Idem, Le Mi'raj et la vision de Dieu dans les premières spéculations théologique en Islam, Le voyage initiatique en terre d'Islam. Ascensions célestes et itinéraires spirituels, Mohammad Ali Amir-Moezzi, Louvain, Pecters, 1996, p. 54-56. Երուսաղեմի սրբավայրի կապը Մուհամմադ մարգարեի հետ հաճախ քննարկվում է նաև վախճանաբանության տեսանկյունից (տե՛ս Busee H., Jerusalem in the Story of Muhammad's Night Journey and Ascension, Journal Studies in Arabic and Islam, 1991, p. 1-40):

Կարող ենք պայմանականորեն առանձնացնել ընդհանուր սրբավայրերին հատուկ հատկանիշներ, որոնք բնորոշ են միայն մեկ կամ միանգամից մի քանի սրբավայրերի:

Սուրբ տարածքները հաճախ ունենում են տարբեր կրոնական կառույցներ (հեթանոսական տաճար, եկեղեցի, մզկիթ, սինագոգ) կամ դրանց հերթագայում (հեթանոսական տաճարից եկեղեցի, եկեղեցուց՝ մզկիթ և այլն): Սուրբ տարածքները հաճախ ընդգրկում են սրբերի մաստունքներ, վկայարաններ կամ դամբարաններ, որտեղ ուխտագնացություն է կազմակերպվում: Այն հաճախ անջատված է քաղաքի այլ թաղամասերից, այստեղ գերիշխում է տարածքի տրանսֆորմացիայի (վերափոխման) գաղափարը:

Ինչ վերաբերում է ընդհանուր սուրբ տարածքներին, ապա բերված օրինակների հիման վրա կարելի է առանձնացնել ընդհանուր սրբավայրերին հատուկ հատկանիշներ, որոնք հաշվի առնելով՝ հնարավոր է դուրս բերել ընդհանուր սրբավայրերի «մոդելը».

- Միևնույն կառույցում տարբեր կրոնների պաշտամունք,
- Միևնույն համալիրում տարբեր հոգևոր կառույցների առկայություն,
- Տարբեր կրոնների հետևորդների կողմից սրբերի դամբարանների հաճախում,
- Սրբին «նոր» կրոնի պաշտամունքային արժեքների մեջ ընդգրկելը,
- Սուրբ վայրում տոնախմբությունների կազմակերպում,
- Մեծ քաղաքներից հեռու լինելը,
- Ուխտագնացության վայր դառնալը և մեծ առևտրատնտեսական նշանակություն ունենալը:

Այժմ վերադառնալու Դվինի կրոնական շինություններին և դիտարկենք այն որպես ընդհանուր սուրբ տարածքի օրինակ: Ակնհայտ է, որ վերը նշված պայմանական հատկությունների մեծ մասը համապատասխանում է Դվինի օրինակին:

Այստեղ կարևոր է նշել մեկ փաստ: Խոսելով Դվինի մզկիթի մասին՝ Իբն Հաուկալը նշում է, որ այն եկեղեցու կողքին է, ինչպես որ Եմեսայում է (Հոմս)⁵¹: Ինչպես հայտնի է, Եմեսայում մզկիթը և եկեղեցին նույն շինության երկու մասն էին կազմում⁵²:

Այն, որ Դվինը եղել է բազմազգ քրիստոնյա մեծամասնությամբ, վկայում է նույնիսկ 6-րդ դարում Դվին այցելած Պրոկոպիոս Կեսարացին: Նա հայտնում է, որ «Դուբիոսի մերձակա գյուղերում բնակվում են առևտրի համար ժամանած մարդիկ», որ Հնդկաստանից, Իբերիայից, «Պարսից ենթակա բոլոր երկրներից, որոշ չափով հռոմեական երկրներից ապրանքներ բերողները հենց այստեղ են առևտուր անում»⁵³: Շնորհիվ առևտրական և արհեստագործական քաղաք լինելուն՝ Դվինը շարունակում է բազմազգ մնալ նաև արաբական արշավանքներից հետո: Այստեղ կային այլազգիներ, առաջին հերթին՝ արաբներ: Կային նաև որոշ թվով քրդեր, ասորիներ և հրեաներ⁵⁴: Դվինում հավանաբար եղել է «խալամացման գործընթաց»⁵⁵:

Սովորաբար ընդհանուր սուրբ տարածքները ստեղծվում են բազմազգ և բազմակրոն միջավայրում: Դվինն այս տեսակետից պարարտ հող էր՝ հաշվի առնելով քաղաքի խառը և բազմադավան բնակչությունը: Ընդհանուր սրբավայրերը, անկախ քաղաքական իշխող ուժերից, status quo են հանդիսանում քաղաքի բազմաշերտ բնակիչների համար և վերացնում փոքրամասնության և մեծամասնության միջև եղած սոցիալական և քաղաքական տարբերու-

⁵¹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 16, էջ 630:

⁵² Kennedy H., *From Polis to Madina: Urban change in late antique and early Islamic Syria, Past and Present*, 1985, 106, p. 15.

⁵³ Պրոկոպիոս Կեսարացի, Բյուզանդական աղբյուրներ 1, Երևան, 1967, էջ 142:

⁵⁴ Տեր-Ղևոնդյան Ա., Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 225-226:

⁵⁵ Զարյան Ա., Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմությունից, Երևան, 1986, էջ 103:

յունները⁵⁶: Ընդհանուր սուրբ տարածքը մի հարթակ էր, որը, անկախ տվյալ պահին քաղաքական տիրոջ ուժերից, հանդիսանում էր տարածք, ուր տարբեր կրոնական ուղղությունների ներկայացուցիչներն իրենց պաշտամունքային արարողություններն էին կատարում: Սրա հետ մեկտեղ, սուրբ տարածքը, ինչպես Դվինում, այնպես էլ այլ վայրերում տիրապետող ուժերի՝ իրենց վերահսկողությունը տարածելու կամ ամրապնդելու միջոց էր:

Փաստորեն, Դվինի կենտրոնական թաղամասում առկա է սրբավայրերի նշված պայմանական առանձնահատկությունների մի մասը: Այն ներառում է միևնույն ժամանակահատվածում երկու տարբեր կրոնական շինությունների առկայություն, սրբերի վկայարաններ, տարբեր կրոնական շինությունների վերափոխություններ, քաղաքի հիմնական մասից անջատ լինելու փաստը և, հնարավոր է, ուխտագնացությունների վայր լինելը: Միաժամանակ ընդգծենք, որ քրիստոնեական շերտը միշտ գերակշռող է եղել, իսկ իսլամականը կրել է ժամանակավոր բնույթ:

Հաշվի առնելով վերը նշվածը և համեմատելով Դվինը նույն ժամանակաշրջանի այլ բնակավայրերի հետ՝ կարելի է եզրակացնել, որ Դվինի սուրբ տարածքն ընդհանուր սրբավայրի մի յուրատեսակ օրինակ է:

⁵⁶ Dionigi A., Couroucli M., *Sharing Sacred Spaces in the Mediterranean: Christians, Muslims, and Jews at Shrines and Sanctuaries*, 2012, p. 3.

THE SACRED SPACE OF DVIN IN 7-10TH CENTURY

SUMMARY

The article discusses the central quarter of medieval Armenian city of Dvin and presents it as a shared sacred space based on the fact that throughout 7-10th cc. in Dvin a mosque and a church functioned next to each other.

This means that the believers of both religions would perform their religious rituals together in peace, which shows a certain level of coexistence and peaceful living in a particular space in the city. However the example of Dvin is not the only one in the region. The article brings up other examples of a similar sharing of a sacred spaces in Damascus, Rusafa and Jerusalem and puts Dvin in the map of the settlements with shared sacred space.

أشخين دافتيان فيكسوف

المعبد العام في مدينة دibil في قرون 7-10

ملخص

تتطرق المقالة للحى السكنى المركزى فى مدينة دibil الأرمينية فى العصور الوسطى والذى يمثل المنطقة المقدسة المشتركة من حيث وجود كنيسة ومسجد فى نفس المنطقة. ولكن المنطقة المقدسة المشتركة فى المدينة الأرمينية دibil لم تكن الوحيدة فى الشرق الأوسط كما تذكر فى المقالة. تأتي المقالة بأمثلة أخرى حول وجود معابد مشتركة أخرى فى دمشق والرصافة والقدس وتضع مدينة دibil على الخريطة كمنطقة سكنية التى تتعايش فيها الأديان بسلام جنباً إلى جنب.

**ՀԱՄՇԵՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ԾՆՈՒՆԴ**

VII դարի 30-ական թվականներից սկսած արաբները համեմատաբար կարճ ժամանակում դարձան երբեմնի հզոր Բյուզանդիայի ու Պարսկաստանի ամենավտանգավոր ախոյանը: Նրանք կործանեցին Մասանյան պետությունը և, պարտության մատնելով Բյուզանդիային, 640 թ. առաջին անգամ արշավեցին Հայաստան: Նրանք զրավեցին Դվինը, զգալի թվով բնակիչների կոտորեցին և գերեվարեցին: Չնայած հայկական փոքրաթիվ ուժերի դիմադրությանը՝ հաջորդ արշավանքների ժամանակ ևս արաբները մեծ ավերածություններ պատճառեցին երկրին: Բյուզանդիան օգնության ձեռք չմեկնեց Հայաստանին: Արաբները, նվաճելով Հայաստանը, Վիրքը և Ադվանքը, 701 թ. ստեղծեցին վարչական մեկ միավոր՝ Արմինիա անունով՝ արաբ ոստիկանի ղեկավարությամբ¹: Խալիֆայությունը հրաժարվեց ճանաչել հայ նախարարների ժառանգական իրավունքները, սկսեց կրոնական ու ազգային հալածանքներ, ծանրացրեց հարկերը: Արաբական խալիֆայության կողմից Հայաստանում կատարվող անօրինությունները VIII դարում հասցեցրին մի շարք ապստամբությունների: Հայության հակաարաբական պայքարի արդյունքում ձևավորվեց Հայոց պատմության մեջ իր կենսունակությամբ նշանավորված Համամաշեն-Համշենի հայկական իշխանությունը:

¹ Եղիազարյան Ա., Արաբական Խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2010:

Համամաշեն-Համշենի իշխանության հիմնադրման ժամանակի ճշտումը կարևոր է համշենագիտության և հայագիտության համար, քանի որ հետազոտողներն այդ հարցին անդադրաշարժառիչ անուշադրության են մատնել հայկական սկզբնաղբյուրների մի շարք արժեքավոր տեղեկություններ: Անդադրաշարժառիչ Համշենի ու համանուն իշխանության խնդիրներին հաճախակի է խախտվում Հովհան Մամիկոնյանի և Ղևոնդի աշխատություններում հիշատակված Համամ իշխանի վերաբերյալ տեղեկությունների ժամանակագրական հաջորդականությունը:

Համշենի հայոց իշխանության պատմության լուսաբանման համար աղբյուրագիտական մեծ արժեք է ներկայացնում VII դ. պատմիչ Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությունը²: Համշենի հայկական հիմնավորց իշխանության հիմնադրման մասին հավաստի և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իրադարձությունների ժամանակակիցն ու ականատեսը՝ VIII դարի պատմիչ Ղևոնդը³: Նրա վկայության համաձայն Արաբական խալիֆայության Հյուսիսային փոխարքայության⁴ կառավարիչ Ուլբեղլան կամ Ուբայդալլահը (788-791)⁵ Արմինիա ոստիկանության արաբ ամիրա (ոստիկան) նշանակեց Սուլեյմանին (788-790): Վերջինս հայ նախարարական տների և ժողովրդի նկատմամբ դաժան հալածանքների քաղաքականություն շարունակեց վարել: 789 թ. Ուբայդալլահն այցելեց

² Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832, էջ 56-58:

³ Ավրգյան Հ., Տեղեկագիր Համշենի և համշենահայերի մասին համառոտ պատմական ակնարկ, «Ձայն Համշենական», 2004, N 1, օգոստոս:

⁴ Հյուսիսային փոխարքայության մեջ մտնում էին Հայաստանը, Վիրքը, Աղվանքը և Կուր գետի ստորին հոսանքի ու Դերբենդի (Դարբանդի) միջև տարածվող մերձկասպյան երկրները (տե՛ս Тер-Гевондян А., Армения и Арабский Халифат, Ереван, 1977, с. 151-155):

⁵ Փոխարքաների ու ոստիկանների թվականները մեջբերված են հիմք ընդունելով Ա. Տեր-Ղևոնդյանի կազմած ցուցակը (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 276):

Հայաստան, որի հետևանքով անտանելի իրավիճակ ստեղծվեց երկրում:

Հայ պատմագրության մեջ կարծիք է եղել, թե հայերը Խաղտիքում հաստատվել են միայն VIII դարում, երբ արաբական հալածանքներից խուսափելով 789-790 թթ. Շապուհ Ամատունի իշխանի և նրա որդի Համամի գլխավորությամբ 12.000 զաղթականներ Արտագ, Արագածոտն, Կոտայք գավառներից տեղափոխվել են բյուզանդահայատակ Խաղտիք⁶: Այնինչ, իրականում Խաղտիքը, հաճախ կազմելով Տայք աշխարհի մասը, հին ժամանակներից եղել է հայաբնակ: Այդ իսկ պատճառով այստեղ ապրող առաջին բնակիչներին հույներն անվանել են արմենոխալիբներ, այսինքն՝ Խաղտիք-Խալիբ երկրի հայ բնակիչներ: Հարկ ենք համարում նշել, որ Ք.ա. IX-III դարերում՝ Արարատյան թագավորության և Երվանդականների ժամանակներում հայերը կազմել են ողջ Հայաստանի՝ ներառյալ նրա հյուսիսարևմտյան նահանգի բնակչությունը:

Համշենի հայոց իշխանության հիմնադրման հարցին մանրակրկիտ անդրադարձել է ակադեմիկոս Լ. Խաչիկյանը: Քննության առնելով Ղևոնդի հաղորդած տվյալները և համեմատելով Հովհան Մամիկոնյանի տեղեկությունների հետ, նա եզրակացնում է, որ Համամ Ամատունու քաղաքը սկզբում կրում էր Տամբար (Տամբուր) անվանումը, որը պարսկական բանակի (Հ. Խաչիկյանի կարծիքով՝ արաբական) աջակցությամբ կործանեց վրաց իշխան Վաշդեսանը: Լ. Խաչիկյանը գրում է. «որից հետո իշխան Համամը ավերված Տամբուրի տեղում նոր քաղաք կառուցեց ու իր անունով կոչեց Համամաշեն»: Իսկ Հովհան Մամիկոնյանի հաղորդած տեղեկությունը նա համա-

⁶ Ղևոնդ, Պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 132: Խաղտիքը կամ ճանիքը զբաղեցնում էր լեռնային այն շրջանը, որը տեղակայված էր ճորոխ գետի, Սև ծովի առափնյա շրջանի և Պարթևարյան լեռների միջև: Նրա սահմանները հարավում և արևելքում հասնում էր Բարձր Հայքին, արևելքում՝ Տայքին (տե՛ս Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 36):

րում է խառնաշփոթ մի ավանդույթ, որում, մեր կարծիքով, արտացոլված են իրական դեպքեր: Հիմք ընդունելով պատմիչ Ղևոնդի հաղորդած տեղեկությունները՝ Համշենի հայոց իշխանության հիմնադրման ժամանակը համարում է 789-790 թթ., իսկ դրա հիմնադիրներին՝ Ամատունյաց նախարարական տան պայազատներին: Ամատունիների իշխանությունը գտնվում էր Այրարատ նահանգում, ուստի՝ նրանց հետ Համշեն ներգաղթածների մեծամասնությունը Այրարատ աշխարհից պետք է լիներ⁷:

Բյուզանդական կայսրությունում նրանց ընդունեցին բավական ջերմ, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նման մեծ խումբը զգալիորեն կուժեղացներ հիշյալ շրջանի բյուզանդական գորքերին, որոնք գտնվում էին Արմինիա ոստիկանության սահմանին: Միանշանակ այս Համամն է, որ վերակառուցել է Բյուզանդիայի կայսր Կոստանդին VI-ի հատկացրած ավերակի վերածված Տամբարը (Տամբուր) և այն իր անունով անվանել Համամաշեն կամ Համշեն: Նրա իսկ բնակիչները ստացել են համամաշենցիներ, համշենցիներ անվանումները⁸:

Նշյալ հարցի առնչությամբ Հովհան Մամիկոնյանի հաղորդած վկայությունից հարց է ծագում. ինչպե՞ս կարող էր Համամ Ամատունին վերակառուցել հիմնահատակ ավերված Տամբուր քաղաքն ու իր անունով վերանվանել Համամաշեն, եթե նույն Հովհան Մամիկոնյան-

⁷ Խաչիկյան Լ., Էջեր համշինահայ պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, N 2, էջ 115-118: Ի դեպ, Գ. Սիմոնյանն անհամաձայնություն է հայտնել Լ. Խաչիկյանի կարծիքին՝ այն պատճառաբանությամբ, որ «հիշյալ զավառների բարբառներին հատուկ չեն Համշենի բարբառի քերականական հատկանիշները» (Սիմոնյան Գ., Մաշտոցի անվան ծագման շուրջը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, N 5, էջ 67):

⁸ Մելքոնյան Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, հոդվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 353-354, նաև՝ նույնի՝ Հայ բնակչության էթնոկրոնական դիմախեղման գործընթացներն Արևմտյան Հայաստանում 16-19-րդ դարերում, «Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու», թիվ 5, Երևան, 2005, էջ 47-60:

նի համաձայն նա դրանից առաջ մահապատժի էր ենթարկվել վրաց իշխան Վաշդեանի հրամանով: Լ. Խաչիկյանը, Հովհան Մամիկոնյանի հաղորդած տվյալները համարում է ժամանակավորեպ ու խառնաշփոթ: Մեր կարծիքով՝ պատմիչի վկայությունը ճշգրիտ է ու իր մեջ ներառում է ժամանակագրական ստույգ տվյալներ: Ուսումնասիրելով այս տվյալները՝ գալիս ենք այն համոզման, որ գոյություն է ունեցել երկու Համամ, մեկը՝ Ամատունի, իսկ մյուսը, ամենայն հավանականությամբ, Մամիկոնյան: Վրաց իշխան Վաշդեանի հրամանով մահապատժի է ենթարկվել Համամ Մամիկոնյանը, որին էլ պատկանել է Տամբուր քաղաքը, իսկ այդ քաղաքը վերակառուցել և իր անունով է անվանակոչել Համամ Ամատունին:

Այսպիսով, վերոնշյալ սկզբնաղբյուրներում մի Համամը հիշատակված է VII դ. սկզբին (Համամ Մամիկոնյան), իսկ մյուսը՝ VIII դ. վերջին (Համամ Ամատունի): Հովհան Մամիկոնյանի աշխատությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կարևոր մի հանգամանքի նս: Ա. Եղիազարյանի կարծիքով, անկախ այն բանից, թե երբ է գրվել այն Հովհան Մամիկոնյանի աշխատանքը, «Զայս յետոյ շինեաց Համամ՝ զիւր անուն դնելով Համամաշէն» հատվածը բնագրում ներմուծվել է հետագա ինչ-որ գրիչի կողմից, որը, հստակաբար, Համամ Ամատունու ժամանակակիցն է եղել կամ էլ ապրել է նրանից հետո: Նա ցանկացել է ներկայացնել Տամբուր ավերված քաղաքի հետագա ճակատագիրը⁹:

Ուսումնասիրելով Հովհան Մամիկոնյանի հաղորդած տվյալները գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

ա. Համամը, հավանաբար Մամիկոնյանների նախարարական տոհմից է սերվել, որի վատ ապացույցն է, վերջինիս բարյացակամ վերաբերմունքը Տարոնի Տիրան Մամիկոնյան իշխանի հանդեպ: Տամբուր-Համամաշէն-Համշենի հայոց հինավուրց իշխանությունն անմի-

⁹ Եղիազարյան Ա., Համամաշէն-Համշենի հիմնադրման ժամանակի շուրջ, «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. VI, Երևան, 2009, էջ 218-228:

ջական սահմանակից էր Տայքի Մամիկոնյանների տիրույթներին: Այս ամենին զուգահեռ՝ Համշենահայոց հիշողության մեջ պահպանվել է այն փաստը, որ հնում Տամբուրում իշխել են Մամիկոնյանները: Այդ նախարարական տանը պատկանող բազմաթիվ մեծարժեք իրեր և մասունքներ պահվում էր Համշենի նշանավոր գյուղերից մեկի՝ Եղնովիսի Խաչքար-Խաչեքար վանքում¹⁰:

բ. Մամիկոնյան նախարարական տանը պատկանող Ճանիքի և Տայքի տիրույթները սահմանակցում էին Պարխարյան (Լազիստանի, Պոնտական) լեոնաշղթայի ջրբաժանով¹¹:

գ. Համամ Մամիկոնյանին պատկանող քաղաքը կրում էր Տամբուր անվանումը:

դ. Վրաց իշխան Վաշղեանի հրամանով մահապատժի է ենթարկվում Համամ Մամիկոնյանը, իսկ նրա քաղաքը ենթարկվում է ավերածության, որի պատճառով այն զրեթե մեկուկես դարից ավել ամայանում է:

ե. Մեր կարծիքով՝ Համամ Մամիկոնյանի մահապատիժը ու նրա քաղաքի ավերումը իրագործվել է Բյուզանդիայի Հերակլ կայսեր Պարսկաստանի վրա կատարած վերջին արշավանքի և Խոսրով II Փարվեզի մահվան ժամանակահատվածում՝ 628 թ.:

¹⁰ Եղիշե, Վարդանանց պատմությունը, թարգմ., ներած. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1958, էջ 115: Ղ. Ալիշանն այս առթով գրում է. «Համշեն, որ է Պաշ Համշեն կայ ի ստորոտս Տեմիրտաղ լեռին, յորում մենաստան հին ուր պահելին նշխարք Վարդանանց, ի զագաթան նորին աւանդի պահել վարչամակին Քրիստոսի, իվասն որոյ լեռն Վարչամակ կոչեցաւ և ի ռամկաց Վարսամպէկ» (Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 39):

¹¹ Տե՛ս Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, 174-176: Այն հանգամանքը, որ Մամիկոնյանների իշխանության ազդեցությունը տարածվում էր նաև հին Խաղտիքի վրա, մատնանշում են V դ. պատմիչ Եղիշեի հաղորդած վկայությունները (Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, թարգ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1989, էջ 190, 252-256):

գ. Ինչ վերաբերվում է «Զայս յետոյ շինեաց Համամ՝ զիւր անուն ղնելով Համամաշէն» ձևակերպմանը, ապա այն միանշանակ վերաբերվում է 789 թ. իրադարձություններին¹²:

Հարկ է նշել, որ թուրք կեղծարարներն իրենց աշխատություններում խեղաթյուրում են պատմական իրադարձություններն ու երևույթները, միակողմանի ներկայացնում պատմական փաստերը և իրողություններ՝ հոգուտ Հայոց ցեղասպանությունը գործած Թուրքիայի շահերի: Այդ քաղաքականությունից գերծ չմնաց նաև Համշենի պատմությունը: Թուրք հեղինակներ Ա. Սաքաօղլուն¹³, Մ. Քըրզըօղլուն¹⁴ Համշեն տեղանվան մեջ փորձում են «գտնել» օղուզ-չաղաթայական բաղադրիչներ: Նրանց վառ երևակայության արդյունքում համշենահայերն ու Համշենի իշխանության հիմնադիր Համամ Ամատունին իբրև թե սերում են թուրքական «Քայան Ուջուն» ցեղից¹⁵: Թուրքական հորջորջմամբ տարածքը ստացավ «Հեմշին», իսկ բնակիչները՝ «հեմշիլներ» անվանումը: Սակայն նման բարբաջանքներով թուրք կեղծարարներն անգոր են հերքելու պատմական ճշմարտությունը:

¹² Եղիազարյան Ա., Համամաշեն-Համշենի հիմնադրման ժամանակի մասին, «Զայն Համշենական», 2007, N 1-2, հունվար-փետրվար:

¹³ Sakaoğlu A., Dünden Bugüne Hemsin, İstanbul, 1990.

¹⁴ Kırzioğlu M., Yerli Kaynaklara Göre Hemsin, İstanbul, 1966.

¹⁵ Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, N IV, Երևան, 2006, էջ 208-209:

**THE ARMENIAN PRINCIPALITY OF HAMSHEN THE
OFFSPRING OF THE LIBERATION STRUGGLE
AGAINST THE ARAB KHALIPHATE**

SUMMARY

The medieval Armenian principality of Hamshen-Hamamashen arose as the result of the Anti-Arab liberation struggle.

During following centuries Hamshen Armenians underwent the Islamization and genocide by Turkey.

هوفيك أفانيسوف

جامعة ميسروب ماشدوتس (ستيباناكيرت)

مملكة هامشين الارمنية - ولادة الحركات التحررية الارمنية ضد الخلافة العربية

ملخص

ولدت مملكة هامشين- هاماماشين الارمنية القديمة اثر حركات تحررية وطنية ارمنية ضد الخلافة العربية فاستمرت في التاريخ خلال 7 عصور فاصبحت واحدة من المملكات الحية الارمنية. فقد مرت سنوات طويلة على الكفاح الارمني ضد الخلافة العربية والتي تعرض فيها الارمن الى الابادة والتعصب الديني. والذين نجوا من الابادة انتشروا في بقاء العالم مكونين بذلك جزءا من الجاليات الارمنية. الارمن الهمشيونيون الذين اعتنقوا الاسلام قد تمكنوا من العيش الى الان. فالارمن الساكنين في جمهورية ارمنيا وجافاخك وسواحل البحر الاسود لم ينسوا ابدأ التاريخ الذي صاغه اجدادهم.

ՄԼԵՀ ԻՇԽԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԲ-ԺԵ ԴԱՐԵՐԻ ԱՐԱԲ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Մլեհ իշխանը (1170-1175 թթ.) Կիլիկյան Հայաստանի այն պետական այրերից է, ով, չնայած Հայոց պետականության ամրապնդման գործում ունեցած անտրանալի վաստակին, հայ պատմագրության ու պատմագիտության մեջ հույժ հակասական, հաճախ նույնիսկ ծայրահեղ բացասական բնութագրումների է արժանացել: Հետևապես, այդ հակասականության ակունքները հայտնաբերելու, Մլեհ զորավարի ու իշխանի կյանքի ու գործունեության մանրամասների վրա լույս սփռելու տեսանկյունից սխալ է գոհանալ սոսկ հայկական աղբյուրների հայտնած տեղեկություններով, մանավանդ որ հարցի բազմակողմանի քննության համար բավական նյութ կա նաև միջնադարի այլալեզու՝ այդ թվում արաբական աղբյուրներում:

Ուսումնասիրության եզրաքարը ԺԲ-ԺԵ դարերի մոտ երկու տասնյակ արաբագիր մատենագիրների թողած հարուստ պատմագրական ժառանգությունն է: Մասնավորաբար փորձ է արված հայագիտական շրջանառության մեջ մտցնել քիչ հայտնի կամ ցարդ անհայտ սկզբնաղբյուրներից քաղված աղբյուրագիտական թարմ նյութ՝ լրացնելու, ամբողջացնելու ու տեղ-տեղ էլ վերանայելու Կիլիկիայի Հայոց իշխանին միջնադարի հայ, լատին, բյուզանդական և ասորի ժամանակագիրների, ինչպես նաև արդի հետազոտողների տված գնահատականը, շտկել հայագիտության ու համաշխարհային պատմագրության մեջ նրա գործունեության ու ժամանակի պատմական անցքերի առնչությամբ տեղ գտած սխալ մոտեցումները:

Ա) Մլեհի մասին ժամանակագրական առումով առաջին հիշատակությունը արաբական մատենագրության մեջ գտնում ենք Հարիմի ճակատամարտի նկարագրություններում: Հայտնի է, որ 1158 թ. Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք կատարած արշավանքից հետո Բյուզանդիայի կայսր Մանուել Կոմնենոսը, համարձակություն չունենալով առճակատման գնալ Նուր ադ-Դինի դեմ, հաշտության դաշն կնքեց նրա հետ՝ նախընտրելով սպասել առավել նպաստավոր պահի: 1160-ական թվականների սկզբներին Կոստանդնուպոլիսը ճիզեր գործադրեց տարածաշրջանի լատին պետությունների ու նաև Հայոց իշխանապետության հետ հակազանգիական ճակատ կազմելու ուղղությամբ: Ի վերջո, 1164 թ. դաշնակիցները՝ Դաշտային Կիլիկիայի բյուզանդացի կառավարիչ Կոստանդին Կալոմանը, Հայոց իշխան Թորոսը՝ Մլեհի ուղեկցությամբ, Անտիոքի պրինց Բոհեմունդ Գ-ն (1163-1201 թթ.), Տրիպոլիի կոմս Ռայմունդ Գ-ն (1152-1187 թթ.) և մի քանի այլ խաչակիր ասպետներ իրենց միացյալ ուժերը շարժեցին Նուր ադ-Դինի դեմ¹:

¹ Ճակատամարտից շատ չանցած՝ Ֆրանսիայի թագավոր Լուի Է-ին (1137-1180 թթ.) հղած իր նամակում Տաճարականների պրեցեպտոր Ժոֆրուա Ֆուշեն գրում է. «Այդ ժամանակ Մատաթիայի լավ որդու պես պրինց Բոհեմունդը, ով եռանդուն կերպով կառավարում էր Անտիոքի իր նոր իշխանապետությունը, առաջարկեց օգնության գնալ իր եղբայրներին ու ենթականերին Տրիպոլիի կոմսի և Թորոս (Torosio) իշխանի, Մամիստրայի դուկի, ինչպես նաև մեծ թվով հրավիրյալ եղբայրների հետ միասին» (տե՛ս Recueil des historiens des Gaules et de la France, tome 16, ed. Martin Bouquet et al., Victor Palme, Paris, 1878, p. 60): «Չորս արքա մեկի դեմ», - այս առիթով էլ գրում է Ռաբբի Հովսեփը (մահ. 1578 թ.) (տե՛ս The Chronicles of Rabbi Joseph ben Joshua ben Meir, The Sphardi, tr. from the Hebrew by C.H. F. Bialloblotzky, vol. 1, p. 153): Զանգին, սակայն, միայնակ չէր «անհավատների» դեմ պայքարում. Hiṣn al-akrād-ի մոտ կրած պարտությունից հետո օգնության նրա կոչին արձագանքել ու նրա շուրջն էին համախմբվել Ասորիքի մուսուլման տիրակալները (տե՛ս ibn al-Aṭīr, al-Kāmil fī al-Tārīḥ, bitaḥqīq Muḥammad Yūsuf ad-Daqqāq, ց. 9, Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 2003, ց. 9, ց. 467-468, Sibṭ ibn al-Gawzī, Mirāt al-zamān fī tārīḥ al-aʿyān (ed. with introduction by J. R. Jewett, The University of Chicago Press, Chicago, 1907), ց. 8, ց. 152-153, ibn Wāṣil, Mufarriḡ al-kurūb fī aḥbār banī Ayyūb, ց. 1, bitaḥqīq Ḡamāl al-Dīn al-Ṣayyāl, al-Qāhira, 1953, ց. 143-144, ibn al-ʿAdīm, Zubdat al-ḥalab min tārīḥ Ḥalab, ց. 2, bitaḥqīq Ḥalīl Maṣṣūr, Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 1996, ց. 318):

Հակառակորդների վճռական բախումը տեղի ունեցավ 1164 թ. օգոստոսի 11-ին Անտիոքից ոչ հեռու գտնվող Հարիմ բերդաքաղաքի² մոտ ու ողբերգական ելք ունեցավ հիշյալ քրիստոնյա առաջնորդների համար, քանզի նրանք՝ բացառությամբ Թորոսի ու Մլեհի, շրջապատման մեջ ընկնելով, գերեվարվեցին: Ընդամին, ուսումնասիրողները չեն բացառում, որ Հայոց իշխանն ու Մլեհն ընդհանրապես մասնակցած չլինեն ճակատամարտին կամ սպասողական դիրք բռնած լինեն³: Ոմանք էլ սա ներկայացրել են որպես փախուստ մարտի դաշտից⁴: Այսօրինակ ենթադրությունների հիմք է դարձել Անանուն Եղեսացու վկայությունն այն մասին, որ Թորոսը ճակատամարտից առաջ դաշնակիցներին հորդորել էր սահմանափակվել ձեռք բերած հաջողություններով և առժամանակ խուսափել Ջանգիի հետ բախումից՝ սպասելով Եգիպտոսից Երուսաղեմի թագավոր Ամորի Ա-ի վերադարձին: Հայոց իշխանի խորհուրդը, սակայն, դաշնակիցների կողմից չէր ընդունվել⁵: Ասորի Անանունի վկայությանը հար և

² Yāqūt al-Ḥamāwī, Mu'ğam al-buldān, ց. 2, Dār Šādir, Bayrūt, 1977, ց. 205, 'Izz al-Dīn ibn Šaddād, al-A'lāq al-ḥaṭīra fī zikr umarā' al-šām wa al-ġazīra, bitahqīq Yahyā Zakariyā 'Abbāra, ց. 1.2, Dimašq, 1991, ց. 55-72 և Abū al-Fidā', Taqwīm al-buldān (Géographie d'Aboulféda, ed. M. Reinaud et W. Mac Guckin de Slane, Paris, 1840), ց. 258-259

³ Runciman S., A History of the Crusades, vol. II, Cambridge University Press, Cambridge, 1987, p. 369: Հաջորդ էջում, սակայն, Ս. Ռանսիմենը, ինքն իրեն հակասելով, գրում է, թե Ամորի Ա-ն բանակցությունների մեջ է մտել Լուր աղ-Դինի հետ Թորոսին և Բոհեմունդին ազատ արձակելու համար, և իբր վերջինս մեծ գլխագնի դիմաց համաձայնել է: Նա ծանոթագրում է Միքայել Ասորու «Ժամանակագրությունը» և վերջինիս հայերեն տարբերակներից մեկը, որոնցում, հարկավ, նման տեղեկություններ չեն գտնվում (տե՛ս նաև՝ Տեր-Ղևոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ., Երևան, 1994, էջ 57, Mutaḥian C., L'Arménie du Levant (XIe-XIVe siècle), Les Belles Lettres, Paris, 2013, p. 81):

⁴ Maḥdī Sa'īd 'Umrān, Ma'rakat Harim: al-Tahāluf al-Bīzanṭī-al-Šalībī-al-Armanī ḡidda Nūr al-Dīn Zankī, 1164/559 // Mağallat al-Mu'arriḥ al-'Arabī, ց. 8, 1978, Bağdād, ց. 97, Muḥammad Mu'nis Aḥmad 'Awad, Fī al-širā' al-Islāmī-al-Šalībī, al-Qāhira, 1998, ց. 176.

⁵ Ասորի մատենագիրը, այնուամենայնիվ, վրիպում է և Թորոսի հետ գերությունից փրկված է համարում նաև Տրիպոլիի կոմսին (տե՛ս Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 122-123): Միքայել Ասորի պատրիարքի «Ժամանակագրության» հայերեն տարբերակները հաղորդում են, որ այս հորդորը ստացվել էր Երուսաղեմի

նման հաղորդում ենք գտնում նաև Երուսաղեմի թագավորության պաշտոնական պատմիչ Գիյոմ Տյուրացու մոտ. «Այդ ճգնաժամային պահին Թորոս Հայր, գիտակցելով, որ թուրքերն [աստիճանաբար] տիրում են նախաձեռնությանը, իսկ քրիստոնյաները, ընդհակառակը, տեղի են տալիս, վճռեց փրկել ինքն իրեն փախուստով, և դուրս գալ ճակատամարտի բռնից»⁶:

Ե՛վ Եդեսացին և Տյուրացին, սակայն, Մլեհի մասին լռում են: Ինչ վերաբերում է արաբական աղբյուրներին, ապա նրանցում հայերի փախուստը հաստատող ուղղակի ապացույցներ չկան: Ընդհակառակը, որոշ արաբ մատենագիրների հաղորդումներ էլ ճիշտ հակառակ եզրակացության հիմքեր են տալիս: Դեպքերի ժամանակակից իբն ալ-Ասաքիրը (մահ. 1175 թ.), օրինակ, Նուր ադ-Դինի տարած հաղթանակի մասին հետևյալ կերպ է արտահայտվում. «...նա ջախջախեց ֆրանկներին, հույներին և հայերին և սայրով ու շեղբով նրանց ըմպել տվեց մահվան գավաթներից, սրի մատնեց, մինչև իսկ նրանցից ոչ ոք, զարմանքից ապշահար, չհաջողեց ձողոպրել»⁷:

Այնուամենայնիվ, արաբեկի տարած հաղթանակի պատկերը չխամրեցնելու նկատառումով բոլոր արաբ պատմիչները չէ, որ արձանագրել են Թորոսի ու Մլեհի գերությունից փրկվելու փաստը:

թագավորից. «Եւ նախ քան զգալն նորա առավ չերիմն յանգիտութենէ զօրաց Ֆռանգաց որ ոչ լուան նմա իմաստնական խրատին զոր գրեաց առ նոսա՝ զի մի՛ ելցեն ընդդէմ Թուրքաց մինչեւ ի զալն նորա» (տե՛ս Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, Յերուսաղեմ, 1871, էջ 451) նաև՝ նույնի, Յերուսաղեմ, 1870, էջ 452: Հմմտ.՝ Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche (1166-1199), ed. et trad. franç par J.-B. Chabot, tome III, Paris, 1905, p. 324-325, The Chronography of [Gregory Abu'l-Faraj] (1225-1286), the son of Aaron, the Hebrew Physician commonly known as] Bar Hebraeus, ed. and tr. by E. A. W. Budge, vol. 1, London, 1932, p. 288):

⁶ William of Tyre, A History of deeds done beyond the sea, tr. and annot. by E. A. Babcock and A. C. Krey, vol. 2, Columbia University Press, New York, 1943 p. 308: Հմմտ.՝ Ioannes Kinnamos, Deeds of John and Manuel Comnenus (Epitome), tr. by Charles Brand, Columbia University Press, New York, 1976, p. 164.

⁷ Ibn Asākir, Tārīḥ madīnat Dimašq, bitaḥqīq 'Umar ibn ʿĀrāma al-'Amrāwī, 1997, ց. 57, ց. 122. Հմմտ.՝ Abū Šāma, Kitāb al-Rawḍatayn fī aḥbār al-dawlatayn, al-Nūriyya wa al-Šalāḥiyya, bitaḥqīq Ibrāhīm Šams al-Dīn, Dār al-Kutub al-'Ilmiyya, Bayrūt, ց. 1, ց. 362.

Նուր աղ-Դինի ու հետագայում նաև Սալահ աղ-Դինի արքունական դպիր (al-kātib) Իմադ աղ-Դին ալ-Իսֆահանսիի (մահ. 1201 թ.) al-Barq al-Šāmī («Ասորիքյան կայծակ») երկի համառոտագրության մեջ, որին անդրադառնալու առիթ դեռ կունենանք, կարդում ենք. «Այս տարին Նուր աղ-Դինն օգտագործեց Ասորիքը ֆրանկներից մաքրելու համար ու ելավ նրանց դեմ: Նրանք հավաքվեցին Հարիմի մոտ և բոլորով միասին ջախջախվեցին: Այլահը նրան հնարավորություն շնորհեց՝ վրեժխնդիր լինել նրանցից: Նա կոտորեց նրանց ու գերեվարեց. գերի ընկան Անտիոքի պրինսը, Տրիպոլիի կոմսը, իբն Ջուսլինը և Ռումի դուկը: Եվ դա [տեղի ունեցավ] 559 թվականի ռամադան ամսի 21-ին»⁸: Նույն հեղինակի մեկ այլ երկում էլ իրադարձության հետևյալ վերաշարադրանքն ենք գտնում. «...[ֆրանկները] ջախջախվեցին Հարիմի մոտ և մեկ ճակատամարտի ժամանակ 20 հազար զոհ տվեցին, իսկ ով փրկվեց, գերի ընկավ. գերեվարվեցին կոմսը, պրինսն ու նրանց բոլոր արքաները: Սա [հիրավի] ակնհայտ նվաճում էր ու փառավոր հաղթանակ»⁹: Իբն ալ-Ասիրը (մահ. 1231 թ.), Իբն ալ-Ջաուզին (մահ. 1231 թ.) և հաջորդ արաբագիր պատմիչները թեև նույնպես

⁸ Imād al-Dīn al-Isfahānī, Sanā al-barq al-Šāmī (Iḥtišār al-Bundārī), bitaḥqīq Fatḥiyya al-Nabrāwī, al-Qāhira, 1979, §. 19: Հմմտ.՝ Abū Šāma, Kitāb al-Rawḍatayn, §. 1, §. 362, al-Ḍahabī, Tārīḥ al-Islām wa wafāyāt al-mašāhīr wa al-a'lām, §. 39, bitaḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmuri, Dār al-Kitāb al-'Arabī, Bayrūt, 1996, §. 193: Աբու Շամայի մեկ այլ խմբագրության հեղինակը գերեվարվածներից իբն Ջուսլինին թյուրիմացաբար նույնացնում է Թորոսի հետ (տե՛ս Abū Šāma, Kitāb al-Rawḍatayn, bitaḥqīq Muḥammad Ḥilmī Muḥammad Aḥmad, §. 1.2 (al-ṭab'a al-tāniya), Dār al-Kutub al-Miṣriyya, al-Qāhira, 1998, §. 339): Միևնույն ժամանակ նաև Եղեմիայի կոմս Ժուսլին Բ-ի որդին է՝ Ժուսլին Գ-ն («Կառ.» 1134-1194 թթ.), որ կոմսության տապալումից հետո ձևականորեն կրում էր «Եղեմիայի կոմս» տիտղոսը: Գերության մեջ անցկացրել է ավելի քան տասը տարի և ազատ է արձակվել միայն Նուր աղ-Դինի մահվանից հետո փրկագնի դիմաց (տե՛ս Nicholson R. L., Joscelyn III and the Fall of the Crusader States: 1134-1199, E. J. Brill, Leiden, 1973, pp. 37-58):

⁹ Imād al-Dīn al-Isfahānī, Ḥarīdat al-qasr wa ḡarīdat al-'aṣr, §. 13, bitaḥqīq Šukrī Fayṣal, §. 290: Հմմտ.՝ Abū Šāma, Kitāb al-Rawḍatayn, §. 1, §. 362.

թվարկում են գերեվարվածներին, բայց կրկին չեն նշում Թորոսի կամ Մլեհի անունը¹⁰:

Այդ մասին եզակի ու արժեքավոր վկայություններ ենք գտնում միայն արաբ պատմագիր Իբն ալ-Ադիմի մոտ: Վերջինս, խոսելով թշնամական կողմերի՝ մարտից առաջ տեսած պատրաստությունների մասին, գրում է. «Երբ [բոլոր օգնական] զորքերը հավաքվեցին, Նուր ադ-Դինն իջավ Հարիմ ու շուրջկալեց այն, ապա բաբաններն ուղղելով բերդի կողմ՝ առաջ շարժվեց դեպի այն: Եվ [նրա դեմ] դուրս եկան պրինց Բիմունդը, կոմսը՝ Տրիպոլիի տերը, իբն Ջուսլինը, դուկը՝ մի մեծ զորավար հոռոմներից և իբն Լավունը՝ Հայոց «արքան», ինչպես նաև հավաքեցին Սահիլում մնացած բոլոր ֆրանկներին և շարժվեցին Նուր ադ-Դինի դեմ»¹¹: Ապա, նկարագրելով կողմերի զորաշարժն ու մարտական գործողությունների ընթացքը, պատմիչն առավել հետաքրքրական տեղեկություններ է հայտնում ճակատամարտի ելքի մասին: Նա մասնավորապես գրում է. «Մուսուլմաններն արդար գտնվեցին գերիների նկատմամբ»¹². նրանք գերի վերցրին Անտիոքի տիրոջը, Տրիպոլիի տիրոջը, դուկին՝ հոռոմների զորավարին, իբն Ջուսլինին: Անվսաս մնաց միայն Մալիի իբն Լավունը, և ասում էին, որ Յարուկիյա թուրքմեններն են նրան ազատ արձակել, որպեսզի փախչի, քանզի նա նրանց մորեղբայրն էր: Իսկ սպանվածների թիվը գերազանցում էր տասը հազարը»¹³: Ինչպես տեսնում ենք, արաբ պատմիչը վկայություն ունի միայն Մլեհի մասին: Մենք, սակայն, հակված ենք սրա պատճառը համարել ոչ այնքան այն, որ Թորոսը

¹⁰ Ibn al-Aṭīr, al-Kāmil fi al-Tārīḥ, bitaḥqīq Muḥammad Yūsuf al-Daqqāq, ց. 9, Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 2003, ց. 9, ք. 469, ibn al-Gawzī, Mirāt al-zamān, ց. 8, ք. 153, ibn Wāṣil, Mufarrig al-kurūb, ց. 1, ք. 145, ibn Kaṭīr, al-Bidāya wa al-nihāya, ց. 16, bitaḥqīq ʿAbd Allāh ibn ʿAbd al-Muḥsin al-Turkī, Dār Haḡar, al-Qāhira, 1998, ք. 410.

¹¹ Ibn al-ʿAdīm, Zubdat al-ḡalab, ց. 2, ք. 319.

¹² Եթե համեմատենք Իբն ալ-Ասիրի արաբերեն բնագրի հետ (ʿadala al-muslimūna min al-qatī ilā al-asr, ibn al-Aṭīr, al-Kāmil, ց. 9, ք. 469), ապա հասկանալի է ճիշտ կլինի թարգմանել «մուսուլմաններն անցան գերեվարության»:

¹³ Ibn al-ʿAdīm, Zubdat al-ḡalab, ց. 2, ք. 346.

մինչև ճակատամարտի ավարտն իսկապես լքել էր դաշնակիցներին ու առավել ևս՝ եղբորը, այլ այն, որ նա ու հայկական զորքի մի մասն, ի վերջո, Մլեհի շնորհիվ էին փրկվել գերությունից:

Մլեհի՝ Յարուկիների օգնությամբ գերությունից ազատվելու այս պատումն, ըստ էության, իմացել է տակավին Ղևոնդ Ալիշանը: «Միայն Մլեհ օգնութեամբ Եիրիւք Թիրքսէնից,- գրում է գիտնականն առանց իր աղբյուրը նշելու,- իր գնդին և քանի մ'ասպետաց հետ յաջողեցաւ պրծիլ»¹⁴: Հարց է ծագում. որտեղի՞ց է Ալիշանը քաղել այս տեղեկությունը, եթե Իբն ալ-Ադիմի հաղորդման մնացյալ մասը, ինչպես երևում է, նրան հայտնի չէ:

Մատենագրի այս վկայությանն անդրադարձած հաջորդ հետազոտողը Վ. Տեր-Ղևոնդյանն է, ով արաբերեն բնագրի *li'annah kâna hâlsuhum* հատվածը թարգմանում է «քանի որ նա իրենց ընկերն էր»՝ հավելելով. «Աղբյուրը չի հաղորդում, թե երբ և ինչ հանգամանքներում է ընկերացել վերոհիշյալ Յարուկի կամ Ուրյուք ցեղի հետ»: Այնինչ արաբերեն *hâl* բառի ամենաստույգ թարգմանությունը «մորեղբայրն» է¹⁵, և եթե այդպես է, սպա մեր համոզմամբ ժամանակագիրն այստեղ սովորական «ընկերության» մասին չէ, որ խոսում է, այլ ակնարկում է, Յարուկի թուրքմեններին ու Մլեհին կապող խնամիական հարաբերությունների մասին: Ահավասիկ, հնարավոր է, արդյոք, որ Մլեհը դրացիություն հաստատած լինի թուրքմենական այս ցեղախմբի հետ, ավելին՝ այդ կապը ամրացրած լինի մեզ անհայտ քրոջը Յարուկի¹⁶ երևելիներից մեկին կնության տալով: Առաջին հայացքից սա

¹⁴ Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 313:

¹⁵ Al-Zabīdī, *Tāğ al-ʿArūs min ḡawāhir al-Qāmūs*, ց. 28, *bitahqīq* Muḥammad al-Ṭanāhī, al-Kuwayt, 1993, ց. 443, *ibn Manẓūr*, *Lisān al-ʿArab*, ց. 2, *Dār al-Maʿārif*, al-Qāhira, ց. 1293.

¹⁶ Յարուկի ցեղախմբի մասին տե՛ս *ibn Ḥallikān*, *Wafāyāt al-aʿyān wa anbāʾ abnāʾ al-zamān*, ց. 6, *bitahqīq* Iḥsān ʿAbbās, *Dār Šādir*, Bayrūt, 1977, ց. 117: *Zūfūn*. ʿYāqūt al-Ḥamāwī, *Muʿḡam al-buldān*, ց. 5, ց. 325, *Bahāʾ ad-Dīn ibn Šaddād*, al-Nawādir al-sultāniyya wa al-mahāsīn al-Yūsufiyya, *bitahqīq* Ġamāl ad-Dīn Šayyāl, al-ṭabʿa al-tāniya, al-Qāhira, 1994, ց. 79, *Abū al-Fidāʾ*, al-Muḥṭaṣar, ց. 3, ց. 48, al-ʿUmārī, *Masālik al-abšār fī mamālik al-amšār*, *bitahqīq* Kāmil Salmān al-Ġubūrī, *Dār al-Kutub al-ʿIlmiyya*, Bayrūt, 2010, ց. 27, ց. 50):

խիստ տարօրինակ ու անհավանական դիտարկում է, մանավանդ որ միջնադարի որևէ այլ սկզբնաղբյուր նման տեղեկություն չի հաղորդում: Հատկանշական է, որ հայագիտությանը հայտնի տվյալներով Լևոն Ա իշխանապետը, հինգ որդիներից բացի, իսկապես, նաև դուստրեր է ունեցել, ովքեր Ռուդտ-Քոլլենբերգի պնդմամբ չորսն են եղել, Ժ. Դեդեյանի համոզմամբ ավելին՝ հինգ-վեցը¹⁷: Այս տվյալները, սակայն, ոչ մի կերպ չեն օգնում մեզ Լևոն իշխանապետի այս դստեր ինքնությունը որոշելու հարցում:

Բ) Բոլորովին վերջերս Իբն ալ-Ադիմի նշված հաղորդման վրա վերստին ուշադրություն է հրավիրել Մեղա Դադոյանն իր «Հայերը միջնադարյան իսլամական աշխարհում» գրքի երկրորդ հատորում: Խնդրո առարկա դրվագը ներկայացնելիս նա իմ քառը «մորեղբայր» է թարգմանում, բայց հետագա շարադրանքում զարմանալիորեն սխալ է մեկնաբանում արաբ պատմիչի վկայությունը՝ հանգելով մի քանի չհիմնավորված եզրակացությունների: «Հետևապես, թվում է, որ Մլեհն ամուսնացած է եղել Նավիկի/Յարուկի կնոջ հետ,- գրում է հայագետը՝ շարունակելով,- և [գերությունից] ազատվելուց հետո չի վերադարձել տուն: Համենայն դեպս, եղբոր հետ նրա հարաբերություններն այնքան էլ հարթ չէին: Նա միացել է Նուր ադ-Դին Ջանգիին, ընդունել է իսլամ և նշանակվել Կուրիսի կառավարիչ»¹⁸: Այսպիսով, հե-

¹⁷ Rüd̄t-Collenberg W. H., The Rupenides, Hethumides and Lusignans: The structure of the Armeno-Cilician dynasties, Paris, 1963, Table I (Rup.), էջ 51, Déd̄yan G., Les arm̄niens entre grecs, musulmans et crois̄s, Fundaç̄o Calouste Gulbenkian, Lisbonne, 2003, vol. 1, p. 527: Հաստատապես հայտնի է, օրինակ, որ Լևոն Ա-ի դստերից մեկը Գող Վասիլի որդեգիր Վասիլ Տղայի կինն է եղել (տե՛ս Մատթեոս Ուտհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 337): Գիյոմ Տյուրացու մոտ էլ «Մլեհի ու Թորոսի քրոջ որդի» է անվանված նաև հայոց թագաժառանգի խնամակալ Թումասը (տե՛ս William of Tyre, A History of deeds, vol. 2, p. 386 - 387):

¹⁸ Dadoyan S. B., The Armenians in the Medieval Islamic World, vol. 2: Armenian Realpolitik in the Islamic world and Diverging Paradigms-Case of Cilicia, Transaction Publishers, New Jersey, 2013, p. 163: Այստեղ նա որպես աղբյուր հղում է Իբն ալ-Ադիմի «Նելեայի պատմությունը», բայց նրա մատնանշած տեղում մասնավորապես ու այս սկզբնաղբյուրում ընդհանրապես նման տեղեկություններ չկան: Այլուր նա օգ-

տագոտողը, անտեսելով *hāi* բառի նշանակությունը, նախ սխալ մեկնություն է տալիս Մլեհի ու թուրքմենների հնարավոր խնամփական հարաբերության մասին արաբ մատենագրի հայտնած տեղեկությանը, հետո նաև հանգում է Մլեհի հավատափոխության մտքին: Ապա Դադոյանը համոզմունք է հայտնում, թե իբր «Մլեհի կրոնափոխության ու Նավիկի կնոջը կնության առնելու մասին հաղորդումները սովորական երևույթ են միջնադարի արաբ մատենագիրների մոտ»¹⁹: Թվում է, թե ուսումնասիրողն այստեղ իր պնդումը հաստատող ծանրակշիռ փաստարկներ պիտի ներկայացնի: Բայց Դադոյանը չի նշում միջնադարի արաբ իրեն հայտնի այդ մատենագիրներին, ապա գոնե նրանցից մեկ-երկուսին, ովքեր իր այս տեսակետի ճշմարտացիությունն ապացուցող վկայություններ են ավանդել:

Դադոյանն առաջին հետազոտողը չէ, ով հակված է Մլեհի հավատարացության մտքին: Հայ, ասորի և լատին պատմիչների երկերում նրան ուղղված մեղադրանքները, նախատինքն ու լուտանքներն այնքան շատ են, որ մի շարք հետազոտողներ, այլ բացատրություն չգտնելով, հանգել են կրոնադարձության գաղափարին: Վերջին հարյուրամյակի ընթացքում նման ենթադրություններ են արվել ինչպես հայագիտական շրջանակներում, այնպես էլ համաշխարհային պատմագրության մեջ²⁰: Մինչդեռ Մլեհի՝ իսլամ ընդունելու մասին

տագործում է նույն հեղինակի մեկ այլ վկայություն ևս, բայց ծանոթագրություններում սխալ է նշում էջը (գրված է՝ 320, պետք է լինի՝ 337) (տե՛ս Անդ, էջ 165): Հասկանալի է, որ հակված մեր մյուս անհամաձայնությունը կապված է Կուրուսի Qawras տառադարձման հետ, քանզի արաբական աղբյուրներում տեղանունը նույնպես հախճախում է Qūris (Qūris) կամ Qūrus ձևով (տե՛ս Yāqūt al-Hamāwī, Mu'ğam al-buldān, ց. 4, ց. 312, ինչպես նաև ibn al-Aṣīr, Kitāb al-lubāb fi tahḍīb al-ansāb, ց. 3, ց. 63, ibn al-'Adīm, Buḡyat al-ṭalab fi tāriḥ Ḥalab, ց. 1, bitahqīq Suhayl Zakkār, Dār al-Fikr, Bayrūt, 1988, ց. 263-264, ibn Šaddād, al-A'lāq al-ḥaṭīra, ց. 1.2, ց. 438-441, Abū al-Fidā', Taqwīm al-buldān, ց. 231):

¹⁹ Dadoyan, *The Armenians*, p. 163: Հմմտ. նույնի, *The Armenian Intermezzo in Bilād al-Sham between Fourth/Tenth and Sixth/Twelfth Centuries // Syrian Christians under Islam: The First thousands years*, ed. by David Thomas, Brill, Leiden-Boston-Köln, 2001, p. 182).

²⁰ Sk' u, *օրինակ*, Brémond Ed., *Notes historiques et géographiques sur L'Arménie*, 1918, p. 110, J. de Morgan, *Histoire du peuple Arménien*, Paris, 1919, p. 180, *The Cambridge*

ծանրակշիռ փաստեր ու ապացույցներ միջնադարյան սկզբնաղբյուրներում չենք գտնում²¹: Ավելին, արաբ պատմիչների հաղորդումներն իրականում ճիշտ հակառակն են ապացուցում: Քանի որ սույն աշխատանքում ժողոված են Սլեհի մասին ԺԲ-ԺԵ դդ. արաբագիր մատենագիրների հայտնած բոլոր վկայությունները, ինքնաբերաբար այս աշխատանքի առանցքային նպատակներից մեկն է դարձել Սլեհի հավատափոխության անսկիզբ վարկածի սնանկությունը ցուցանելը և այն գիտական շրջանառությունից վերջնականապես դուրս մղելը:

Գ) Հայագիտության մեջ տարածված կարծիքի համաձայն՝ եղբոր դեմ խարդավանք կազմակերպելուց և Կիլիկիայից վտարվելուց հետո Սլեհն անմիջապես փութացել է աթաբեկ Նուր ադ-Դինի մոտ՝

Medieval History, planned by J. B. Bury, vol. IV, Cambridge University Press, 1923, p. 171, S. Runciman, A History of the Crusades, vol. II, p. 389, N. Elisseeff, *Nūr ad-Dīn, Un grand prince musulman de Syrie au temps des croisades (511-69H./1118-1174)*, tome II, Institut Français de Damas, 1967, p. 656, Cl. Cahen, *The Armenians under the Turks and the Mongols* // *Armīniya, The Encyclopaedia of Islam*, vol. 1 (A-B), Leiden, E. J. Brill, 1986, p. 639, J. G. Ghazarian, *The Armenian Kingdom in Cilicia During the Crusades: The Integration of Cilician Armenians with the Latins, 1080-1393*, Curzon Press, 2000, pp. 121-122 և այլն: Հարցի արևելությամբ տե՛ս նաև՝ Տեր-Պետրոսյան Լ., *Խաչակիրները և հայերը*, հտ. Բ, Երևան, 2007, էջ 146-147, ծան. 88:

²¹ Սլեհի հավատափոխության մասին կցկտուր պնդումներ կան լոկ մեկ-երկու լատինական աղբյուրներում, որոնք, սակայն, խիստ բնական են թվում նրա որդեգրած հակաֆրանկ ու հակաբյուզանդական քաղաքականության ծիրում: Գիյոմ Տյուրացու պատմության մեջ, օրինակ, կարդում ենք. «Նա այսպես ասած հավատալուց (*infidelis*) դառնալով (ինն ֆրանսերեն խմբագրության մեջ «քրիստոնյա լինելով հանդերձ»), մի կողմ դրեց Աստծո օրենքը, և քրիստոնյաներին այնքան վտասներ պատճառեց, որքան որ կարող էր»: Քիչ անց, սակայն, հեղինակը, ինքն իրեն հերքելով, գրում է. «...չնայած որ դա խիստ վտանգավոր երևույթ (նախադեպ) իրավ, զրեթե քաղաքացիական պատերազմ կղիտվեր քրիստոնյաների համար ելնել մեկի դեմ, ով նույն հավատն էր դավանում» (տե՛ս *Recueil des historiens des croisades, Historiens occidentaux*, Publié par les soins de l'Académie des Inscriptions et des Belles-Lettres, tome 1, Paris, 1844, p. 991, ինչպես նաև՝ William of Tyre, *A History of Deeds*, vol. 2, p. 387: Մեզ հայտնի հեղինակներից Սլեհին «մուսուլման» (*Milo Sarracenus*) է անվանում նաև ԺԳ դարի լատին պատմագիր Առնոլդ Լյուբեկցին (մահ. 1212 թ.): (տե՛ս *Arnoldi Chronica Slavorum, ex recensione I. M. Lappenbergii, Impensis Bibliopolii Hahniani, Hannoverae*, 1868, p. 23, ինչպես նաև՝ Joranson E., *The Palestine pilgrimage of Henry the Lion* // *Medieval and Historiographical Essays: In Honor of James Westfall Thompson*, ed. by James Cate Lia and E. N. Anderson, Chicago, 1938, p. 196, ծան. 177):

նրա բարեգործությունն ու հովանավորությունը աղերսելու: Համենայն դեպս, հայ և ասորի պատմիչների վկայությունները նման ենթադրության համար հիմքեր իսկապես տալիս են: Միքայել Ասորի պատրիարքի «Ժամանակագրության» հայերեն խմբագրություններից մեկում, օրինակ, կարդում ենք. «Իսկ պարոն Թորոսի եղբայր մի էր Մլեհ անուն չարաբարոյ և վայրենամիտ, որ ոչ հաւատալիք նմա Թորոս և ոչինչ. վասն որոյ զչարեալ նորա չոգաւ առ Նորատիւն»²²:

Ինչ վերաբերում է արաբ մատենագիրներին, ապա վերջիններիս վկայությունները գալիս են ապացուցելու, որ Մլեհը Կիլիկիայից արտաքսվելուց հետո, հակառակ հայ մատենագիրների ու ժամանակակից հետազոտողների պնդումների, անմիջապես չի շտապել Նուր ադ-Դինի արքունիք: Իբն ալ-Ասիրը, օրինակ, «Հայոց արքա՝ կիլիկիացի տեր՝ Մալիկ իբն Լայունին» (*Malik ibn Layūn malik al-arman ṣāhib al-Durūb*) ծառայության վերցնելու Նուր ադ-Դինի որոշումը դիտելով ֆրանկների հետ գործելու նրա խելամտության ու քաղաքական շրջահայացության արտահայտություններից մեկը, հավելում է, թե «...նա (աթաբեկը) խորամանկում էր և սիրաշահում նրան, մինչև որ կարողացավ իր մոտ ծառայության վերցնել նրան (Մլեհին) թե՛ արշավանքների և թե՛ դադարի ժամանակ, ու նրա միջոցով մարտնչում էր ֆրանկների դեմ»²³:

Այնպես որ, մեր կարծիքով, իր վտարանդության սկզբնական շրջանը Մլեհն անցկացրել է ոչ Նուր ադ-Դինի արքունիքում, այլ հնարավոր է, օրինակ, ապաստանելով Յարուկիների մոտ, ովքեր, իրենք իսկ աթաբեկ Զանգիի ենթականերից լինելով, գուցե և իրենց

²² Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, 1870, էջ 455 և նույնի՝ 1871, էջ 454, ինչպես նաև՝ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանոթութեամբք Կ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 99 և նույնի, աշխատասիրութեամբ Հ. Սերովբե Վ. Ազըլեանի, Վենետիկ, 1956, էջ 187: Հմմտ.՝ Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիիքները, հտ. Բ, էջ 136-137:

²³ Ibn al-Aṭir, al-Tārīḥ al-Bāhir fī al-dawla al-Atabikiyya (bi al-Mawṣil), bitaḥqīq ‘Abd al-Qādir Aḥmad Tulaymāt, Dār al-Kutub al-Ḥadīṭa, al-Qāhira, 1963, §. 169: Հմմտ.՝ Abū Šāma, al-Rawdatayn, ց. 1, §. 104: Տե՛ս նաև՝ Իբն ալ-Ասիր, էջ 362:

նունը կամ հատակ տեղագրությունը: Նրանցից Իբն ալ-Ասիրը խոսում է Սլեհին Ասորիքում տրված «որոշ տիրույթներ»-ի (*šayʿan min al-iqtāʿ*) մասին, որոնց մեկ այլ տեղում էլ «շքնաղ կալվածք» (*wa aqtaʿahu iqtāʿan saniyyan*) է անվանում²⁷: Իբն ալ-Ադիմը դրանք անվանում է «կալվածքներ իսլամի երկրներից» (*iqtāʿan min bilād al-Islām*)²⁸, ազ-Զահաբին նշում է «Միսը» (*wa aqtaʿahu Sīs*, մեկ այլ տեղում էլ՝ *mamālik Sīs*)²⁹, իսկ Իբն Խալդունը նույնպես գրում է «Շամի երկրում շնորհված կալվածքի մասին» (*aqtaʿahu bibilād al-šām*)³⁰:

Դ) Սլեհի՝ Նուր ադ-Դինի տրամադրած օժանդակ գորքով Կիլիկիա արշավելու, հայոց գահաժառանգ Ռուբենի խնամակալ Թումասին երկրից արտաքսելու և շուտով նաև միանձնյա իշխանության հասնելու դեպքերի մասին արաբ մատենագիրները գրեթե տեղեկություններ չեն հաղորդում: Միայն Աբու Շաման է, որ Իմադ ադ-Դին ալ-Իսֆահանիին հղելով գրում է. «Մենք արդեն հիշատակել ենք հայոց երկրի առաջնորդ (*muqaddim bilād al-arman*) Մալիհ [ի]բն Լաունի, Նուր ադ-Դինի մոտ նրա ապաստանելու և վերջինիս ուժով հայերի ու հոռոմների վրա հարձակվելու մասին»³¹:

Ե) Սլեհի իշխանապետության օրոք ձեռք բերված մեծագույն նվաճումը, անշուշտ, բյուզանդացիների նկատմամբ տարած վճռական հաղթանակն էր ու ցածրադիր Կիլիկիայի երեք խոշոր քաղաքների՝ Ադանայի, Տարսոնի և Մամեստիայի (Մսիսի) ազատագրումը: Այս անցքերի մասին տեղեկություններ հաղորդող ժամանակագրական առումով առաջին արաբական սկզբնաղբյուրը Իմադ ալ-Բաթի-

²⁷ Ibn al-Aṭīr, al-Kāmil, ց. 10, ք. 46:

²⁸ Ibn al-ʿAdīm, Zubdat al-halab, ք. 356: Հմմտ.՝ Ibn Šaddād, al-Aʿlāq al-ḥaṭīra, ց. 1.2, ք. 149.

²⁹ Al-Ḍahabī, al-ʿIbar fī ḥabar man ḡabara, ց. 3, bitaḥqīq Abū Hāḡir Muḥammad al-Saʿīd ibn Basyūnī Zaḡlūl, Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 1985, ք. 53, Siyar aʿlām al-nubalā, ց. 21, bitaḥqīq Baššār ʿAwwād Maʿrūf, Muʿassasat al-Risāla, Bayrūt, 1996, ք. 72 և Duwal al-Islām, ց. 2, bitaḥqīq Ḥasan Ismāʿīl Marwa, Dār Šādir, Bayrūt, 1999, ք. 73.

³⁰ Ibn Ḥaldūn, al-Tārīḡ (Diwān al-mubtadaʿ wa al-ḡabar fī tāriḡ al-ʿArab wa al-Barbar), ց. 5, bitaḥqīq Ḥalīl Šihāda, Dār al-Fikr, 2000, ք. 296.

³¹ Šī u Abū Šāma, Kitāb al-Rawḡatayn, ց. 2, ք. 174.

բի al-Barq aš-Šāmi-ն է: Մատենագրի վկայությունները, սակայն, միջնորդավորված են մեզ հասել, քանզի երկի բնագիրն ամբողջական տեսքով չի պահպանվել: Աշխատության մի մասը պահպանվել է ԺԳ դարի հեղինակ ալ-Բուհարիի համառոտագրությամբ (Sanā al-Barq al-Šāmi՝ «Ասորիքյան կայծակի փայլատակում» վերնագրով), որում Մլեհին վերաբերող հաղորդումը, ցավոք, տեղ չի գտել: Փոխարենը մեզ հետաքրքրող հատվածը մասնակի «սրբագրություններով» պահպանել են ավելի ուշ շրջանի արաբագիր մատենագիրները՝ Աբու Շաման (մահ. 1267 թ.), Իբն Աբդ ազ-Զահիրը (մահ. 1293 թ.), Իբն ադ-Դավադսիին (մահ. 1335 թ. հետո), Իբն ալ-Ջազարին (մահ. 1338 թ.), ազ-Զահաբին (մահ. 1348 թ), դպտի մատենագիր Սուֆադդալ Իբն ալ-Ֆադսիլը (մահ. ԺԴ դ. երկրորդ կես), Իբն ալ-Ֆուրաթը (մահ. 1405 թ.), ինչպես նաև ԺԵ դարի արաբ մատենագիր Իբն աշ-Շիհնան (մահ. 1485 թ.): Այս իրադարձությունների առնչությամբ իր «Լիակատար պատմության» մեջ վկայություններ է ավանդել նաև Իբն ալ-Ասիրը, ով, չնայած չի հիշատակում իր աղբյուրը, բայց շատ հավանական է, որ նրա պատումը նույնպես Իմադ ալ-Քաթիբի հաղորդման մոտավոր վերաշարադրանքն է³²: Վերոհիշյալ պատմիչների երկերում Իմադի հաղորդման առավել ընդարձակ և հավանաբար նաև բնագրին ստավել մոտ տարբերակներից մեկը տալիս է Իբն ադ-Դավադարին. «Իմադ ադ-Դինը, Աստված օրհնի նրան, «Կայծակում»՝ իր պատմության մեջ, որը նա «Ասորիքյան կայծակ» է անվանել, ասել է. «Այս երկիրը հոռոմների իշխողի (mutamallik ar-Rūm) հսկողության տակ էր, բայց Մալիի իբն Լաունը (ազ-Զահաբիի մոտ՝ «Մալիի իբն Լավուն Բրիառոկյան»՝ Malīh ibn Lāwun al-Naṣrānī³³ - Գ.Դ.) զրավեց այն: Եվ որովհետև ալ-Մալիք ալ-Ադիլ Նուր ադ-Դին աշ-Շահիդը հենվում էր նրա վրա և ինքն էլ ուժեղացնում նրան՝ սատարելով նպատակների

³² Ibn al-Aṭir, al-Kāmil, ց. 10, ց. 46: Հմմտ. ibn Wāsil, Mufarriğ al-kurūb fi aḥbār banī Ayyūb, ց. 1, bitaḥqīq Ġamāl ad-Dīn al-Šayyāl, al-Qāhira, 1953, ց. 235.

³³ Al-Dahabī, Duwal al-Islām, ց. 2, ց. 73, ինչպես նաև նույնի Tārīḥ al-Islām, ց. 37, ց. 45.

իրականացման գործում: Արդ, Նուր ադ-Դինը, Ալլահին օրհնի նրան, սրանով դիտավորություն ունեն անհավատ(ներ)ին իշխանություն տալ անօրինաց դեմ պայքարելու համար (sallaṭa al-kafarata ‘alā al-faḡarati), և [հետևաբար] գորեղացնում էր նրան դրակից ֆրանկներին դեմ: Երբ ամրապնդվեցին Մալիի իբն Լավունի դիրքերն [այս] երկրում, հոռոմների արքան նրա դեմ ուղարկեց Անդրոնիկոս անունով իր ազգականին (13-րդ դարի արաբական մի տարեգրության մեջ՝ «Այդ թվականին Կոլոմանը բախվեց Մալիի իբն Լավունի հետ, ու ջախջախվեց Կոլոմանը, և նրա զորքի մեծ մասը սպանվեց»³⁴ - Գ.Դ.) մեծամբոխ մի զորքով: Մալիին առճակատման դուրս եկավ նրա դեմ և ստորացուցիչ պարտության մատնեց (kassarahun kasratan šanʿatan)՝ գերելով նրանց հրամանատարներից երեսուն հոգու: Նրանց միջև այս բախումը տեղի է ունեցել 568 թ. ռաբի ալ-ախար ամսվա վերջերին (իբն Աբդ ազ-Զահիրի ու Իբն ալ-Ֆուրաթի մոտ՝ «568 թ. ռաբի ալ-ախար ամսվա վերջին՝ կիրակի օրը» - Գ.Դ.): Երբ Նուր ադ-Դին աշ-Շահիդը տեղեկացավ այդ մասին, նրան լավություն արեց և շնորհների արժանացրեց, ապա նամակ հղեց Բաղդադ՝ նրան խալիֆայի մոտ գովասանքի և շնորհակալության արժանացնելով: Մալիիը համարվում էր Նուր ադ-Դին աշ-Շահիդի վասալներից մեկը: Այս ժամանակներից ի վեր, այս թաքֆուրի (takfūr)³⁵ ուժն ավելացավ այս երկրում Նուր ադ-Դին աշ-Շահիդի փոխարեն»³⁶:

³⁴ Cl. Cahen, Une chronique syrienne du VI^e/XII^e siècle, le "Bustān al-Jāmi" // Bulletin d'études orientales, l'Institut français de Damas, tomes VII-VIII, Années 1937-1938, p. 140 և 'Imād ad-Dīn al-Isfahānī, al-Bustān al-ḡāmi' li-ḡamī' tawārīḥ ahl al-zamān, bitahqīq Muḥammad 'Alī al-Ta'ānī, Mu'assasat Ḥamāda, Irbid, 2003 թ. 405. Ուշագրավ է, որ այս երկը նույնպես վերագրվում է Իմադ ադ-Դինին: Հարցի առնչությամբ տե՛ս Անդ, էջ 13-23, ինչպես նաև՝ Nu'mān Muḥammad Ḡubrān wa Muḥammad 'Alī al-Ta'ānī, Idāfat ḥawla Kitāb al-Bustān al-ḡāmi' li-ḡamī' tawārīḥ ahl al-zamān wa nisbatuhu li al-'Imād al-Isfahānī (519-597 h./1123-1200 m.) // Maḡallat al-Mu'arriḥ al-Miṣrī, al-'adad 17, al-Qāhira, 1996.

³⁵ Օսգում է հայկական «թագավոր» բառից: Takfūr-ը տարածաշրջանի դիվանագիտական հարաբերությունների բառապաշար է թափանցել Կիլիկիայի հայոց թագավորության ստեղծումից հետո՝ վերագրվելով ոչ միայն Կիլիկիո Հայոց արքաներին,

Ձ) Արաբ պատմիչների մոտ մեր հայտնաբերած արժեքավոր վկայություններից վերջինը վերաբերում է 1173 թ. հայրապետական արժողի զբաղեցման շուրջ բոլորովան վեճին ու վերջինիս հարթման գործում Սլեհի և Նուր ադ-Դինի ունեցած դերակատարությանը: Բանն այն է, որ Հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին իր հաջորդ էր հայտարարել ավագ եղբորորդուն՝ Գրիգոր Տղային, սակայն «աւագ եղբոր որդին չէր մերձ մահու հորեղբորն, կրտսերն առեալ զմատանին նորա՝ քարոզեցաւ Կաթողիկոս»: Գրիգոր Տղան, իմանալով այդ մասին, վիճարկեց այս որոշումը և իր ոտնահարված իրավունքների վերականգնման համար դիմեց փեսային՝ հայոց իշխան Սլեհին: Վերջինս, որ այդ ժամանակ մասնակցում էր Իկոնիայի սուլթան Կիլիջ Արսլանի դեմ կազմակերպված արշավանքին, իր հերթին դիմում է արաբեկ Զանգին: Ի վերջո, հայրապետական արժողը զբաղեցրած Գրիգոր Ապիրատը Նուր ադ-Դինի միջամտությամբ հեռացվում է Հոռմկլայից, և նրա փոխարեն Հայոց կաթողիկոս է ձեռնադրվում Գրիգոր Տղան: Միքայել Ասորու տարեգրության հայերեն խմբագ-

այլև Բյուզանդիայի և Տրապիզոնի կայսերին, ինչպես նաև տարածաշրջանի այլ քրիստոնյա մանր տիրակալներին: Տիտղոսի մենք առանձին ուսումնասիրություն ենք կալիել՝ «Թագավոր/թաքֆուր տիտղոսը միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ» վերնագրով (անտիպ): Ուշագրավ է տիտղոսի կիրառումը Սլեհի վերաբերմամբ: Եվ թե սա հավելում չէ ուշ շրջանի արաբագիր մատենագիրների կողմից, ապա սա, հիրավի, տիտղոսի կիրառության առաջին դեպքն է մուսուլմանական մատենագրության մեջ, քանզի Իմադն իր այս երկն ավարտել է հայոց թագավորության հիմնադրման տարում՝ 1198 թ.:

³⁶ Ibn al-Dawādārī, Kanz al-durar wa ḡāmi' al-ḡurar, ց. 8, bitahqīq Ūlriḥ Hārmān, al-Qāhira, 1971, s. 180. Հմտ.՝ Abū Šāma, Kitāb al-Rawḡatayn, ց. 2, ց. 174, ibn 'Abd al-Zāhir, al-Rawḡ al-zāhir fī sirat al-Mālik al-Zāhir, bitahqīq 'Abd al-'Aziz al-Ḥuwaytīr, Riyāḡ, 1976, ց. 440, ibn al-Ġazarī, Hawadit al-zamān (պահպանված ազ-Ջահաբիի համառոտագրությամբ) // al-Muhtār min tāriḥ ibn al-Ġazarī, bitahqīq Ḥaḡir 'Abbās Muḥammad Ḥalīfat al-Munšadāwī, Dār al-Kitāb al-'Arabī, Bayrūt, 1988, ց. 276, al-Dahabī, Tāriḥ al-Islām, ց. 39, ց. 45-46, Mufaḡḡal ibn Abī al-Faḡā'il, al-Nahḡ al-saḡid wa durr al-farid fīmā ba'da tāriḥ ibn al-'Amid (Moufazzal ibn Abil-Faḡā'il, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet // Patrologia Orientalis, tome 14, Paris, 1919), ց. 230-231 [394-395], ibn al-Furāt, Tāriḥ al-duwal wa al-mulūk, ց. 7, bitahqīq Quṣṡanṡin Zurayḡ, Bayrūt, 1942, ց. 27-28, ibn al-Šihna, al-Durr al-muntaḡab fī tāriḥ mamlakat Ḥalab, bitahqīq 'Abd Allah Muḥammad Darwīš, Dimašḡ, 1984, ց. 182.

րություններից մեկում, օրինակ, այս իրադարձությունների առնչությամբ կարդում ենք. «Եւ նա զնաց դարձաւ առ փնսայն իւր առ պարոն Սլեհն. և Սլեհն էառ զնա և տարաւ առ Նորադինն, և նորին օգնութեամբն եմոյծ զնա 'ի Հռոմկլայն. և նստաւ յաթոռ հայրապետութեան հօրեղբօրն՝ Գրիգոր անուն»³⁷:

Հայագիտության մեջ տարածված կարծիք կա, թե, ինչպես, օրինակ, Լ. Տեր-Պետրոսյանն է գրում, այս անցքերի մասին խոսողը միայն ասորական աղբյուրներն ու նրանցից օգտված հայ հեղինակներն են³⁸: Մինչդեռ արաբական մի քանի աղբյուրներում այս տեղեկության առնչությամբ նույնպես ուշագրավ վկայություններ կան: Այդ մասին հաղորդող առաջին արաբագիր պատմիչը Իմադ ադ-Դինն է, ում վկայությունը կրկնում են նաև Աբու Շաման և Իբն Բասիրը: Իմադ ադ-Դինը, թվարկելով Նուր ադ-Դինի մոտ ծառայության մտած և նրա հետ Բկոնիայի սուլթան Կիլիջ Արսլանի դեմ արշավանքին մասնակցած գործիչներին, գրում է. «Եկավ [հիջրայի հինգ հարյուր] վաթսունինը թվականը, և Նուր ադ-Դինն արդեն գրավել էր Մարաշ, Բեհեսն, Արբիլ և Քեյսուն բերդամրոցները, իսկ Հայոց իշխող (mutamallik al-arman) Մալիհ [ի]բն Լավունը ծառայության մեջ էր նրա մոտ՝ ապաստանելով նրա հովանու ներքո: Նրա մոտ ծառայության էին անցել նաև Դայա ադ-Դին Մասուդ իբն Կիֆջակը..., որոնց նա ավելի մեծ շնորհների էր արժանացրել (sarrahahum bi al-‘aṭā’ al-ağḡal): Ապա նա ցույց տվեց, որ արշավում է Հռոմկլա, որ Եփրատի վրա է, և «հայոց փոխանորդը» (mustahlaf al-arman)³⁹ ընդունեց նրան անմեղությամբ (bi

³⁷ Միխայել Ասորի, Ժամանակագրություն, 1871, էջ 472 և նույնի՝ 1870, էջ 471-472: Հմտ.՝ Michel le Syrien, Chronique, tome III, pp. 353-354.

³⁸ Տեր-Պետրոսյան Լ., նշվ., աշխ., հտ. Բ, էջ 496-497:

³⁹ Միջնադարի արաբական աղբյուրներում հայոց կաթողիկոսի առավել տարածված անվանումը ḥalifat al-arman է, բայց նախկես, քիչ չեն նաև հենց հայերեն «կաթողիկոս» բառի տառադարձված՝ ընդ որում շատ հաճախ աղավաղված կիրառությունները (տե՛ս, օրինակ, Yāqūt al-Ḥamāwī, Mu‘ḡam al-buldān, ց. 4, ք. 391-392, al-Dimašqī, Nuḥbat al-dahr fī ‘aḡā’ib al-barr wa al-baḥr (Cosmographie de Chems-ed-Din Abou Abdallah Mohammed ed-Dimichqui, ed. M. A. F. Mehren, Saint-Petersbourg, 1866), ք. 206,

al-barā'a), իսկ նա (Նուր ադ-Դինը) էլ վերցրեց հինգ հազար դինար որ-
պես ջիզյա (զլխահարկ) և ենթակայության հավաստիք ու վերադար-
ձավ Հալեպ՝ ամեն ինչում հաջողած»⁴⁰:

Աբու Շամայի և Իբն Բասիրի մոտ Իմադի այս հաղորդումը մի
փոքր այլ կերպ է վերաշարադրված, բացի այդ, հինգ հազարի փոխա-
րեն հիսուն հազար է նշված վճարված ջիզյայի չափը, ինչը, հավանա-
բար, երկից երկ անցած գրչագրական սխալ է⁴¹:

Ճիշտ է, արաբ մատենագիրներն անուններ չեն նշում, բայց
նրանց այս վկայությունները բավական են՝ արձանագրելու այն
փաստը, որ Գրիգոր Տղայի հաստատումը կաթողիկոսական աթոռին
իրապես տեղի է ունեցել Սլեհի միջնորդության ու Նուր ադ-Դինի մի-
ջամտության շնորհիվ:

al-'Umārī, Kitāb al-Ta'rif bimuşṭalah al-šarīf, Maṭba'at al-'Āšima, al-Qāhira, 1894, §. 180, al-Qalqaşandī, Subh al-A'şā, §. 4, al-Maṭba'a al-Amīriyya, al-Qāhira, 1914, §. 119, al-Maqrīzī, Kitāb al-Sulūk li ma'rifat duwal al-mulūk, bitahqīq Muḥammad Muşṭafā Ziyāda, Maṭba'at al-ta'lif wa al-tarğama wa al-naşr, §. 4.1, §. 404).

⁴⁰ Imād al-Dīn, Sanā al-barq al-šāmī (Iḥtişār al-Bundārī), §. 71.

⁴¹ Abū Šāma, Kitāb al-Rawḍatayn, §. 2, §. 176, ibn Kaṭīr, al-Bidāya wa al-nihāya, §. 16, §. 471-472: ԺԳ դարի մեկ այլ արաբ պատմիչ Իբն Կաթիրը, ում չպետք է շփոթել Սալահ ադ-Դինի կենսագիր Բահա ադ-Դին իբն Շադդադի հետ, հավանաբար սխալ հասկանալով իր նախորդների վկայությունները, թյուր բացատրություն է տալիս Հռոմկա Նուր ադ-Դինի կատարած արշավանքի նպատակներին: Նա մասնավորապես գրում է. «... նրանից հետո էլ ոչ ոք չարշավեց Կիրճեր (lam yudrib) ընդհուպ մինչև (հիջրայի) 569 թ.: Այդ թվականին սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլ Նուր ադ-Դինն արշավեց Կիրճեր և պաշարման մեջ առավ հայոց երկիրը՝ այն նրանց ձեռքից խլելու նպատակով, սակայն նրա (հայոց երկրի) տերը 50 հազար դինար ընծայեց, որ Նուր ադ-Դինը [հոծարությամբ] ընդունեց՝ նրան ներման արժանացնելով» (տե՛ս ibn Šaddād, al-A'lāq al-ḥaṭīra, §. 1.2, §. 337):

**MALĪH IBN LĀWUN: THE CAREER OF THE ARMENIAN
PRINCE OF CILICIA IN THE ARABIC HISTORIOGRAPHY
OF THE 12TH-15TH CENTURIES**

SUMMARY

Prince Mleh (r. 1170-1175), one of the most charismatic political figures in the history of Cilician Armenia, despite his momentous role in strengthening the Armenian statehood in the region, was portrayed in the medieval Armenian historiography in a distinctly negative manner. Therefore, to find out the reasons of such attitude of Armenian chroniclers towards the baron and military leader and to shed light on some previously unfamiliar details of his life and career, the non-Armenian primary sources (including Arabic sources) are worthy of consideration.

The current study rests upon a wide range of works of Arabic-writing authors of the 13th-15th centuries. In particular, an attempt is made to introduce new and valuable historiographical material, regarding the activities of Prince Mleh, less known or completely unknown to modern scholars of Armenian Studies in order to supplement or to revise the accounts of the Armenian, Latin, Byzantine and Syrian historians and to correct some erroneous viewpoints of modern scholars concerning the baron's activities and the events of his time as well.

نشاط مليح ابن لاون أمير أرمينيا الصغرى في ضوء المصادر التاريخية العربية
(من القرن الثاني عشر وحتى القرن الخامس عشر الميلادي)

ملخص

كان مليح ابن لاون (١١٧٠-١١٧٥ م) من أبرز الزعماء العسكريين والسياسة في تاريخ أرمينيا الصغرى. نكن رغم اسهامه العظيم في ترسيخ جذور الدولة الأرمنية القوقازية وتوسيع حدودها استحققت خطته السياسية النقد اللاذع والنوم في المصادر الأرمنية. وان الهدف الاساسي لهذا البحث هو محاولة اكتشاف أسباب تفور المؤرخين الأرمن تجاه الأمير وتسلط الاضواء على تفاصيل حياته ومسالكه من خلال المصادر الأجنبية (اللاتينية، البيزنطية، السريانية)، لاسيما المصادر المكتوبة باللغة العربية. تستند الدراسة إلى مجموعة كبيرة من المصادر العربية التي تحتوي معلومات قيمة متعلقة بشخصية مليح الارمني وأحداث عصره معروفة قليلاً أو غير معروفة للباحثين في الدراسات الأرمنية بعد.

ԶԱՓԻ ՈՒ ԿՇՌԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(XIII-XIV ԴԴ.)

Միջնադարում մերձավորարևելյան և ընդհանրապես միջագետ-
յին առևտուրն առանձնանում էր բազմատեսակ և բազմանուն չափի
ու կշռի միավորներով: Չնայած Կիլիկյան Հայաստանի և այլ երկրնե-
րի չափման միավորների համակարգերում ընդգրկված էին բավա-
կան շատ նույնանուն տեսակներ, սակայն թվային արժեքով դրանք
շոշափելիորեն տարբերվում էին միմյանցից: Մասնավորապես՝ Կի-
լիկյան Հայաստանում ապրանքների մեծ տեսականի ընդգրկող
«րոտլ» (իտալ. ruotolo) անվանումով կշռի միավորը լայնորեն օգտա-
գործվում էր Եգիպտոսում, Խաչակրաց իշխանություններում, Ասորի-
քում և այլուր: Ընդ որում՝ Աքքայում, Տրիպոլիում, Բեյրութում, ինչ-
պես նաև Եգիպտոսի Դամիետայում ու Ալեքսանդրիայում ընդուն-
ված թոտլի չափերը տարբեր էին¹: Նմանօրինակ պատկեր ձևավոր-
վել էր նաև Եվրոպայում: Օրինակ, ջենովական, վենետիկյան, իսպա-
նական, սիցիլիական, ապուլական և այլ նույնանուն չափման միա-
վորները զգալիորեն տարբեր էին իրենց արժեքներով:

Որպեսզի չխճճվենք միջնադարում օգտագործված հարյուրավոր
միավորների մեջ, հարկ ենք համարում հիմնականում անդրադառ-
նալ մեր կողմից ուսումնասիրված սկզբնաղբյուրներում շրջանառվող

¹ Ashtor E., Levantine Weights and Standard Parcels: A Contribution to the Metrology of the Later Middle Ages // Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol. XLV, part 3, 1982, p. 472-474.

հայկական չափի ու կշռի տարատեսակներին և դրանց համեմատությունն օտարերկրյա միավորների հետ:

Կիլիկյան Հայաստանում տարածված չափի ու կշռի միավորների և միջազգային տարատեսակների միջև համեմատական վերլուծությունը հանգամանորեն ներկայացված է Ֆրանչեսկո Պեգոլոտտիի և Զիբալդոնե դե Կանալի վաճառականական ձեռնարկներում: Այս հեղինակները մանրամասնորեն ներկայացրել են կիլիկյան շուկաներում բազմատեսակ ապրանքների համար նախատեսված միավորները, դրանց արժեքային համեմատությունը եվրոպական և արևելյան շատ պետություններում ու քաղաքներում տարածված բազմա-նուն տարատեսակների հետ: Վերլուծելով այս և զանազան այլ աղբյուրները՝ Ղ. Ալիշանը հաջողությամբ ստացել է բազմաթիվ չափերի թվային արժեքները²: Հատկանշական է, որ Կիլիկյան Հայաստանում գործած իտալացի նոտարների կազմած տարատեսակ փաստաթղթերում ապրանքների առք ու վաճառքի համար օգտագործվել են եվրոպական, արևելյան, ինչպես և հայկական չափման միավորներ:

Ստորև ներկայացնում ենք Ֆ. Պեգոլոտտիի ձեռնարկի մի հատվածը՝ թարգմանված Ղ. Ալիշանի կողմից. «Պղպեղ և կոճապղպեղ և շաքար, և դարիսենիկ (դարչին, cannella) և խունկ և որդան փայտ (բրազիլ ծառի փայտ) և կնքախեժ (լայքա) և բամբակ, և ամենայն խոշոր ախայիսիքք, և երկաթ և պղինձ և անագ. այս ամենայն վաճառի՝ ի Հայս րոտլի. և է րոտլն 15 վաքիայ, և 33 րոտլն առնէ կենդինար մի Հայոց:

Մետաքս և ամենայն նուրբ համեմունք (և նիւթք) վաճառին անդ վաքիայիւ, 1/12 րոտլի վաքիայիւ, և որ կոչի վաքիայ հրապարակի (վաճառականաց)»³:

² Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 377:

³ Francesco Balducci Pegolotti, La Pratica della Mercatura, New York, 1970, (այսուհետ՝ Pegolotti) p. 59, նաև՝ Ալիշան Ղ., Սիսուան, էջ 373: Պտուկեան Զ., Կիլիկեան Հայաստանի վաճառականութիւնը, «Հանդես ամսօրեայ», 1961, № 1-12, էջ 751-754:

Կիլիկիայում օգտագործում էին թուղի երկու տարատեսակ՝ փոքր կամ նուրբ և մեծ: Ինչպես տեսնում ենք, այս միավորով կշռվող ապրանքներն իրենց բնույթով խիստ տարբեր են եղել. համեմունքների, ներկանյութերի, բամբակի, շաքարի, մեղրի հետ միասին մեծ թուղով վաճառում էին երկաթ, պղինձ, անագ, ինչպես նաև օճառ, զանազան բրդեղեն և այլն⁴: Հետաքրքրական է, որ Զիբալդոնե դե Կանալը հայտնում է, որ Կիլիկյան Հայաստանի գյուղերում կիրառվող թուղն ավելի մեծ էր, քան Այասինը⁵: Դուրս իր հերթին հանդիսանում էր կենդինար կամ կանտար (*cantaro*) կոչված միավորի ենթաչափը⁶: Դուրսի ենթաչափերն էին վաքիա (*opħa, occhie, ounce*) կամ ունկի մեծ և վաքիա փոքր միավորները: Փոքր կամ «հրապարակային» (*occhia della piazza*) վաքիա կշռով վաճառվում էին հումքային մետաքսը և նուրբ համեմունքները⁷:

Հավելենք, որ հումք մետաքսի չափման ամենատարածված եվրոպական միավորը ֆարդելլն (*fardello*) էր: Ըստ Պեգոլոտտիի՝ 1 ֆարդելլը հավասար էր 252 ջենովական լիբրայի կամ մոտ 80 կգ-ի⁸:

Ոսկու և արծաթի համար Կիլիկյան Հայաստանում գործածվում էր մարկ (*marc, marche*) միավորը՝ իր դրամակշիռ (*pesus*) կոչված են-

⁴ Pegolotti, p. 59. Տե՛ս նաև՝ Zibaldone da Canal, Manoscritto Mercantile del sec. XIV ed. A. Stussi, Venezia, 1967 (այսուհետ՝ Zibaldone), p. 61-63, Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice: "The Zibaldone da Canal", Binghamton, NY, 1994, p. 110-112, 163, Borlandi F., Chiarini G., El libro di mercatantie et usanze de' paesi, Torino, 1936, p. 58-59, Capmany y de Montpalau A. de, Memorias históricas sobre la marina, comercio y artes de la Antigua ciudad de Barcelona, V. II, Barcelona, 1963, p. 1061-1062.

⁵ Zibaldone, 61-62. Տե՛ս նաև՝ Dotson J. E., նշվ. աշխ., էջ 111:

⁶ Zibaldone, 61-62. Տե՛ս նաև՝ Ալիշան Ղ., Միսուան, էջ 377:

⁷ Langlois V., Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniens, Venise, 1863, p. 171. Տե՛ս նաև՝ Pegolotti, p. 59, Zibaldone, p. 61-62, Պոսուկեան Ջ., նշվ. աշխ., էջ 743:

⁸ Pegolotti, p. 300, նաև՝ Balleto L., Notai genovesi in Oltremare, atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279), Genova, 1989, B. N 17, Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье в XIII-XV вв.: проблемы торговли, Москва, 1990, с. 334.

թաչափով⁹: Իտալական մուրհակներում թանկարժեք մետաղների, համեմունքների և այլ ապրանքների չափման համար օգտագործվում էր միջնադարում մեծ տարածում ունեցող լիբրան (*libbra*), որը, իր հերթին, հանդիսանում էր միաժամանակ՝ կանտար (*cantaro*) և չենտինաիո (*centinaio, centanaria*)¹⁰ միավորների ենթաչափը: Առավել հայտնի էին ջենովական և վենետիկյան լիբրաները, որոնք կարող էին լինել նուրբ (*sottile*) և խոշոր (*grosso*)¹¹: Հիշատակվում է նաև լիբրայի հայկական տարատեսակը¹²:

Համեմունքների, բրազիլ փայտի, ինդիգոյի և նմանատիպ այլ ապրանքների առավել խոշոր քանակության դեպքում կիրառվում էր սպորտա (*sporta*) կշռի միավորը¹³: Ըստ Ղ. Ալիշանի՝ 1 սպորտան հավասար էր 40 հայկական մեծ բոտի¹⁴: Է. Աշթորի ներկայացրած սպորտայի տեսակները տատանվում են մոտավորապես 210-230 կգ-ի սահմաններում, իսկ Ղ. Ալիշանի բերած տվյալի համաձայն՝ հիշյալ տարատեսակի համար ստացվում է մոտ 253 կգ:

Առք ու վաճառքի նոտարական փաստաթղթերում և այլ բնույթի սկզբնաղբյուրներում հացահատիկը ներկայացված է հայկական և օտարերկրյա միավորներով: Մասնավորապես՝ Այասի և Աքքայի մոդ (*moggia*) կոչվող կշռի հետ հանդիպում են ապուլական, սիցիլական ու Սեբաստիայի սալմայի (*salma, գրիւ, քոռ*) տեսակները: Այասի 5 մոդ հացահատիկին համարժեք էր Աքքայի 3 մոդը, իսկ 100-ական ապուլական ու սիցիլական սալմաներին համապատասխանաբար՝

⁹ Pegolotti, p. 61-63. Տե՛ս նաև՝ Zibaldone, p. 62, Dotson J. E., նշվ. աշխ., էջ 111, Balletto L., Notai Genovesi in Oltremare, B. N 85, Borlandi F., Chiarini G., նշվ. աշխ., էջ 59, Capmany y de Montpalau A. de, նշվ. աշխ., էջ 1059.

¹⁰ Ջենովացիները համեմունքների համար օգտագործում էին չենտինաիո կոչվող կշռի միավորը (տե՛ս u Pegolotti, p. 215):

¹¹ Pegolotti, p. 61-63, 137-141, 214-216. Տե՛ս նաև՝ Balletto L., Notai Genovesi in Oltremare, B. N 20, N 52, N 82, N 74, N 120.

¹² Ալիշան Ղ., Միսուն, էջ 377: Տե՛ս նաև՝ Borlandi F., Chiarini G., նշվ. աշխ., էջ 59:

¹³ Ashtor E., Levantine Weights and Standard Parcels, pp. 475-476. Տե՛ս նաև՝ Balletto L., Notai Genovesi in Oltremare, B. N 73.

¹⁴ Ալիշան Ղ., Միսուն, էջ 370:

188 և 198 հայկական մոդը: Ամենայն հավանականությամբ, Կիլիկյան Հայաստանին հատկացված բաժնում Պեգոլոտոսին ցույց է տվել իտալական Ապուլիա երկրամասի Բարլետտա քաղաքի սալմայի տեսակը: Ձեռնարկի մեկ այլ էջում նույն երկրամասի Մանֆրեդոնիա քաղաքի սալմայի դիմաց նա նշում է 180 հայկական մոդը: Որպես մոդի ենթաչափ օգտագործվում էր մարզեպանը (*marzupanne*)¹⁵:

Կիլիկյան Հայաստանում կտորեղենի համար գործածվում էին և՛ կշոփ, և՛ երկարության չափման միավորներ: Մասնավորապես՝ մահուղը և կտավը վաճառում էին «կտորներով» (*pezze*) և բալլա (տուկ, *balla*) կշոփ միավորով¹⁶: Հայտնի էր կաննա (եղեգնաչափ, *canna*) երկարության չափը, որն ուներ իր հայկական, ինչպես և վենետիկյան ու ջենովական տեսակները: Ընդ որում՝ հայկական կաննան երկու տեսակի էր՝ նախատեսված մետաքսի և բրդյա ու բամբակյա կտորեղենի համար: Հիշատակվում է կտորեղենի երկարության չափման նս մեկ՝ վենետիկյան ու ջենովական ծագման բրաչչո (պրաքիա, *braccio*) միավորը¹⁷:

Փայտանյութի առք ու վաճառքն իրականացվում էր «պարզունակ» (իտալ. *pertica*, ձողաչափ) կոչվող միավորով, որի ենթաչափը «ֆիլախն» (լատ. *jancono*, պարզունակի 1/4 մասը) էր: Ի դեպ, Ղ. Ալիշանը հայտնում է, որ իր կողմից ուսումնասիրված աղբյուրներից «պարզունակի» չափը հնարավոր չէ հաշվել¹⁸:

¹⁵ Pegolotti, p. 59-63, 166. Տե՛ս նաև՝ Dotson J. E., նշվ. աշխ., էջ 111, Ալիշան Ղ., Միսուան, էջ 374, 377, 396, Capmany y de Montpalau A. de, նշվ. աշխ., էջ 983, 1061, Otten-Froux C., *Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie d'après les actes notariés (1270-1320) // L'Arménie et Byzance, publications de la Sorbonne*, 1996, p. 171-172.

¹⁶ Pegolotti, p. 61. Տե՛ս նաև՝ Balletto L., *Notai Genovesi in Oltremare*, B. N 14, N 47, N 49, N 53, N 80, N 134.

¹⁷ Pegolotti, p. 59-63. Տե՛ս նաև՝ Zibaldone, p. 38-39, Dotson J. E., նշվ. աշխ., էջ 111. Balletto L., *Notai Genovesi in Oltremare*, B. N 7, Ալիշան Ղ., Միսուան, էջ 377, Mola L., *The Silk Industry of Renaissance Venice*, Baltimore, 2000, p. IX.

¹⁸ Ալիշան Ղ., Միսուան. էջ 377:

Սկզբնաղբյուրներում գինին, ինչպես նաև ձեթը հանդիպում են վեգետա (փարչ, *veges, vegeta*) և բոտտա (պըտթե, *botta*) կշռի միավորներով, որոնք երկուսն էլ իտալական ծագում ունեն¹⁹:

Չափի ու կշռի միավորները միջնադարյան առևտրի ուսումնասիրության կարևոր բաժիններից է, առանց որի հնարավոր չէ պարզել որևէ ապրանքատեսակի գինը և այլ մանրամասներ: Կիլիկյան Հայաստանը XIII-XIV դդ. Արևելք-Արևմուտք առևտրի խոշոր կենտրոններից էր: Կիլիկիայի քաղաքներում կարելի էր գտնել ժամանակի միջազգային շուկայում տարածված գրեթե ողջ ապրանքատեսականին: Կիլիկիա ներմուծելով որևէ ապրանք՝ վենետիկցի, ջենովացի, Եվրոպայի այլ պետությունների, ինչպես նաև Արևելքի վաճառականները կիրառում էին միմյանցից բոլորովին տարբեր չափի ու կշռի միավորներ: Ավելին, դրանք զգալիորեն տարբեր էին (թե՛ անվանումներով և թե՛ չափով) նաև տեղական՝ հայերի կողմից օգտագործվող միավորներից: Դրանք միմյանցից զատելու և կանոնակարգված առևտուր կատարելու համար միջնադարում տարածված էին այսպես կոչված սռևտրական ձեռնարկները, որոնցում տրվում էին միջերկրածովյան, սևծովյան ավազանների պետություններում կիրառված չափի ու կշռի միավորների համեմատական թվային համարժեքները:

¹⁹ Նույն տեղում, էջ 13: Sté u luu՝ Langlois V., *Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniëns*, p. 194, Langlois V., *Essai historique et critique sur la constitution sociale et politique de l' Arménie*, Paris, 1860, p. 82.

Չափի ու կշռի միավորները Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական հարաբերություններում²⁰:

Անվանումը	Չափը
1 վաքիա (occhia) կամ ունկի մեծ, 1/12 մեծ թուղ	527,91 գր
1 վաքիա փոքր, 1/15 մեծ թուղ	422,333 գր
1 փոքր կամ նուրբ թուղ (ruotolo)	4,82 կգ
1 մեծ կամ խոշոր թուղ	6,335 կգ
1 հայկական կանտար (կամ կենդինար), 33 մեծ	209,055 կգ
1 հայկական լիբրա (11 վենետ. նուրբ լիբրան՝ 10 հայկ. լիբրա)	331,356 կամ 48,425 գր
1 վենետիկյան խոշոր լիբրա (libbra grosso)	348,5 գր
1 վենետիկյան նուրբ լիբրա (libbra sottile)	316,75 գր
1 վենետիկյան խոշոր կանտար (cantaro grosso), 150 վենետ. խոշոր լիբրա	52,268 կգ
1 վենետիկյան նուրբ կանտար (cantaro sottile), 150	47,513 կգ
1 ջենովական լիբրա, 1/20 հայկական խոշոր թուղ	մոտ 317 գր
1 ջենովական կանտար, 150 ջեն. լիբրա	47,55 կգ
1 ջենովական չենտինաիո (centinaio), 100 ջեն.	31,7 կգ
1 Ֆամագուստայի կանտար, 37 հայկական խոշոր	234,395 կգ
1 աքքայան կանտար (cantarium Acconis), 37 հայկական խոշոր թուղ	234,395 կգ
1 սպորտա (sporta) (ըստ Ղ. Ալիշանի՝ 40	253,4 կգ
1 հայկական մոդ (moggia)	մոտ 103,18

²⁰ Pegolotti, p. 30, 59-63, 65, 91, 113, 137-141, 166, 214-216, 300, Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 103, 110-114, 161-163, 199-200, Ashtor E., Levantine Weights and Standard Parcels, p. 471-488. Coureas N., Genoese Merchants and the Export of Grain from Cyprus of Cilician Armenia: 1300-1310 // «Հասկ» հայագիտական տարեգիրք, նոր շրջան, ԺԱ տարի, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 321, Ալիշան Ղ., Միստան, էջ 370, 373-377: նույնի՝ Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 58-59: Պատկեան Զ., նշվ. աշխ., էջ 751-756: Карпов С., նշվ. աշխ., էջ 334:

1 մարզպան (marzupanne) 1/10 կամ 1/12 հայկ. մոդ	12,94 լ
կիպրական մոդ	մոտ 25 կգ
1 աքքայան մոդ (5 հայկ. մոդին համարժեք էր 3	մոտ 215,7 լ
1 ապուլական Մանֆրեդոնիա քաղաքի սալմա (salma) (100 Մանֆրեդոնիայի սալմային	232,9 լ
1 ապուլական սալմա (salma) (100 ապուլական սալմային համարժեք էր 188 հայկ. մոդ)	մոտ 243,3 լ
1 սիցիլական սալմա (100 սիցիլական սալման՝ 198 կամ 200-205 հայկ. մոդ)	մոտ 256,2 լ
1 հումք մետաքսի ֆարդելլո (fardello)	մոտ 80 կգ
1 ջենովական բալլա (balla), 250 ջեն. յիբրա	79,25 կգ
1 հայկական կաննա (canna) բրդյա կտորեղենի	2,153 մ
1 հայկական կաննա մետաքսյա կտորեղենի	2,012 մ
1 վենետիկյան կաննա	2,3 մ
1 ջենովական կաննա	2,973 մ
1 վենետիկյան բրաչչո բրդյա կտորեղենի (braccio, 315 վենետ. բրաչչոն՝ 100 հայկական բրդյա կտորեղենի կաննա)	մոտ 0,683 մ
1 վենետիկյան բրաչչո մետաքսե կտորեղենի	0,638 մ
1 ջենովական բրաչչո	0,58 մ
1 հայկական մարկ (marc, marcha) (100 վենետիկյան մարկը՝ 106,5 հայկական մարկ)	226,25 գր
1 հայկական դրամակշիռ, 1/50 մարկ	4,525 գր
1 ջենովական բոտտա (botta)	482 լ
1 վենետիկյան բոտտա	մոտ 751 լ
1 ջենովական վեգետա (vegeta)	մոտ 525 լ

**MEASURE AND WEIGHT UNITS IN THE INTERNATIONAL
TRADE RELATIONS
OF CILICIAN ARMENIA (XIII-XIV CENTURIES)**

SUMMARY

Measure and weight units are important parts of the study of medieval trade, without which it is impossible to find any commodity price and other details. In 13-14 centuries Cilician Armenia was one of the centers of the concentration of East - West trade. In the markets of Cilician cities could be found almost every kind of goods spread in the international commerce. Merchants from Venice, Genoa, other European countries , as well as Eastern merchants who imported to Cilicia goods, used quite different measure and weight units. Moreover they were significantly different (both by their names and sizes) domparing with the local units used by Armenians. To have regulated trade in the Middle Ages were common in use the so-called trading manuals , where were given relative weight and measure units applied in the Mediterranean and Black Sea basin countries.

معهد التاريخ التابع لأكاديمية العلوم لجمهورية أرمينيا

مقاييس الوزن والحجم في العلاقات التجارية الدولية لأرمينيا القبلية خلال القرنين

14-13

ملخص

أن مقاييس الوزن والحجم جزء مهم في دراسة التجارة الجارية في العصور الوسطى يستحيل بدونها تعيين اسعار السلع الأساسية وتفاصيل أخرى. كانت أرمينيا القبلية مركزا للتجارة بين الشرق والغرب خلال القرنين 14-13. وكان من الممكن الحصول تقريبا على كل البضائع المنتشرة في التجارة الدولية في أسواق مدن قبلية. فقد كانوا التجار القادمون من فينيشيا، جنوا، ومن دول أروبية أخرى و الدول الشرقية يستخدمون وحدات مقاييس الحجم والوزن تختلف تماما من بعضها البعض. وعلاوة على ذلك فكانت تلك المقاييس تختلف اختلافا ملحوظا من المقاييس المحلية المستخدمة من قبل الأرمن (من حيث التسمية والحجم). فقد شاعت ما تسمى منشورات تجارية تحتوي التعيين الرقمي لمقاييس الوزن والحجم المنتشرة في دول حوضي البحر الأبيض المتوسط والبحر الأسود في العصور الوسطى وذلك بهدف تنظيم التجارة.

ՕՍՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ՏԵՂԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ (XVI-XVIII ԴԴ.)

1516 թ. օգոստոսի 24-ին Մարջ Դարիկում (Հալեպ քաղաքից դեպի հյուսիս)¹ օսմանյան և մամլուքյան բանակների միջև տեղի ունեցած ճակատամարտը վճռորոշ նշանակություն ունեցավ Սիրիայի և մյուս արաբական երկրների հետագա ճակատագրի համար: Օսմանյան բանակի կողմից Սիրիայի նվաճմանը հաջորդեց արաբական երկրների (բաղի Արաբիայի մի մասից, Սուդանից և Մարոկկոյից) անցումը Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Չմանրամասնելով այդ երկրների հետագա զարգացման ընթացքը՝ անդրադառնանք մեզ հետաքրքրող նյութին, փորձելով պարզաբանել Օսմանյան շրջանում՝ մասնավորապես 16-18-րդ դդ. պատմաաշխարհագրական Սիրիայի բնակչության, այդ թվում և հայ համայնքին վերաբերող մի քանի հարցեր: Դրանք են՝ ի՞նչ նշանակություն ունեք պատմական Սիրիայի նվաճումը Օսմանյան կայսրության համար, ի՞նչ արտոնություններ և սահմանափակումներ ուներ նրա բնակչությունը և, արդյո՞ք, սիրիահայությունը, լինելով արաբական երկրի,

¹ قلايب حتى، تاريخ سورية ولبنان وفلسطين، الجزء الثاني، بيروت، 1983، ص 306.

Այս ճակատամարտի և Օսմանյան բանակի կողմից Սիրիայի և արաբական մյուս երկրների գրավման մասին տե՛ս Uzuncarsili Ismail Hakkı, Osmanlı Tarihi İstanbul'un Fethihinden Kanuni Sultan Süleyman'ın Ölümüne Kadar, II Cilt, Türk Tarih Kurumu Basımevi, 8. Baskı, Ankara, 1998, s. 284-294 (այս հեղինակի մոտ ճակատամարտի թվականը գրված է 1519, ինչը, ամենայն հավանականությամբ վրիպակ է): Սիրիայի նվաճման մասին տե՛ս նաև՝ Այվազովսկի Գաբրիել Վ., Պատմութիւն Օսմանեան պետութեան, հ. Ա, Վենետիկ, 1841, էջ 323-324:

տվյալ դեպքում Միրիայի բնակիչ, ակամա դառնում էր վերջինիս նկատմամբ օսմանյան կառավարության վարած քաղաքականության հետևանքների անմիջական կրողը՝ դրական և բացասական իմաստով, թե՞, այնուամենայնիվ, կայսրությունը սիրիահայ գաղութը դիտարկում էր միայն որպես հայկական միլլեթի մի մաս, և նրանց նկատմամբ վարում ատանձին քաղաքականություն:

Պատմաաշխարհագրական Միրիա ասելով, բացի այսօրվա Միրիայից, նկատի ունենք ժամանակակից Պաղեստինի որոշ հատվածներ, ներկայիս Իսրայելի տարածքը և Հորդանանի մի մասը, ինչպես նաև Լիբանանի լեռնային մասը, որն ավելի շատ հայտնի էր Լեռնալիբանան անունով²: Ի դեպ, օսմանյան կառավարման առաջին տարիներին վերականգնվեց Միրիայի նախկին, պատմական անունը՝ «Մուրիյա», «Շամի» կամ «Շամի երկրի», փոխարեն³: Միրիան կարևորվում էր Օսմանյան կայսրության համար նախ և առաջ իր երկու քաղաքներով՝ Դամասկոսով և Հալեպով, որոնք մեծ հարկեր էին վճարում արքունի գանձարան. առաջինն ամենամյա ուխտագնացության մեկնող քարավանային կետ էր, իսկ երկրորդը՝ Հալեպը, առևտրային հանգույց Միրիայից հյուսիս գտնվող տարածքների և, իհարկե, Եվրոպայի հետ առևտրի համար: Հալեպի վաճառականության ոսկեդարում՝ 17-րդ դարում, օսմանյան կառավարությունն անհրաժեշտ է համարել Հալեպի բերդի մեջ սլահեղ ատանձին փողեռանոց⁴: Օսմանյան տուրան-խալիֆաները⁵, հանդիսանալով իրենց

² Չովիսնիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 2, Երևան, 2004, էջ 77:

³ Նույն տեղում, էջ 76:

⁴ Հալեպի արքունի փողեռանոցի վերակացուների մեջ նշանավոր էին քրիստոնյաները, իսլամավորապես հայերը: 1630-1660 թթ. գրեթե ամբողջությամբ նրանց ձեռքում էր գտնվում փողեռանոցի տեսչությունը: Նրանցից առավել նշանավորը Տ. Սարգիս քահանայի որդի Մուրադ Տեր Սարգիսն էր (Սյուրմեեան Արտավազդ արք., Պատմութիւն Հալեպի հայոց, հ. Բ, Հալեպ, Բէյրութ, 1946, էջ 530-531):

⁵ Մուլլիման Կանունիի և նրան հաջորդած տուրանների խալիֆա, փառիշահ, կայսերաց կայսեր և այլ տիտղոսներով իրենց հռչակելու մասին մանրամասն տե՛ս Colin Imber, Ebu's su'ud, The Islamic Legal Tradition, Stanford University Press, Stanford,

կայսրության տարածքում գտնվող մուսուլմանների կարևորագույն սրբավայրերի պահապանը⁶, կարևորում էին Միրիան նաև այն պատճառով, որ նրա մի մասն էին կազմում Երուսաղեմն ու Հեբրոնը (Պաղեստին): Եվ, վերջապես, Շամի երկիրը կապող օդակ էր օսմանյան տիրապետության տակ գտնվող մյուս արաբական շրջանների հետ:

Միրիան սկզբնական շրջանում բաժանվեց երեք վիլայաթի (նահանգ)՝ Դամասկոսի, Հալեպի և Տրիպոլիի: Վիլայաթների գլուխ կանգնած էին օսմանյան սուլթանների կողմից նշանակված վալիները (նահանգապետերը), որոնք օժտված էին անսահմանափակ իշխանությամբ և պատասխանատու էին միայն սուլթանի և Մեծ վեզիրի (սաղրազամ) առաջ: Միրիան իր վիլայաթների թվին համապատասխան բաժանվեց սանջաքների (գավառների): Դամասկոսի վիլայաթը բաժանվեց տասը սանջաքի, Հալեպի վիլայաթը բաղկացած էր ինը սանջաքից, որոնք գտնվում էին Հյուսիսային Միրիայում, իսկ Տրիպոլիի վիլայաթը՝ հինգ սանջաքից⁷: Հետագայում Միրիայի վարչատարածքային բաժանումը որոշ փոփոխությունների ենթարկվեց⁸:

Միրիայի կառավարման առանձնահատկություններից էր նաև այն, որ տեղանքի և միջոցների սղության պատճառով անհնարին էր ծովային, լեռնային և անապատային ճանապարհներով վերահսկո-

California, 1997, էջ 74-76, իսկ սուլթանների՝ նաև խալիֆա լինելու վիճահարույց հարցի վերաբերյալ՝ Бартольд В.В., Сочинения, т. VI, Работы по истории ислама и Арабского халифата, Москва, 1966, стр. 16-78, Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 45-54:

⁶ Իսլամական սրբավայրերի, հատկապես Մեքքայի և Մադինայի պահպանությունը սուլթաններին շնորհում էր «Երկու սրբավայրերի սպասավոր» տիտղոսը (տե՛ս Hourani Albert, A History of the Arab Peoples, New York, Boston, p. 222; Colin Imber, նշվ. աշխ., էջ 74, ինչպես նաև՝ Այվազովսքի Գաբրիել Վ., նշվ. աշխ., էջ 324): Այս տիտղոսը կարող էին կրել միայն խալիֆաները, իսկ դրա յուրացումը սուլթանների կողմից, փաստորեն, ևս մի «պատճառ» էր, որպեսզի վերջիններս իրենց կոչեին խալիֆա:

⁷ فليب حتى, նշվ. աշխ., էջ 801, նաև՝ Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 76:

⁸ 1660 թ. տեղի ունեցավ նոր բաժանում և ստեղծվեց չորրորդ՝ Սայդայի վիլայաթը (տե՛ս Սյուրմեեան Արտավազդ արք., նշվ. աշխ., էջ 997):

դության անմիջական սահմանումը, ինչի պատճառով օսմանյան իշխանությունները ճանաչեցին տեղական իշխանների օրինականությունը՝ պայմանով, որ նրանք հավաքեն և փոխանցեն եկամուտները, խոչընդոտներ չատեղծեն առևտրային ուղիների վրա և այն ճանապարհներին, որոնցով գորքերն են անցնում: Նույն սիրիական անապատի քոչվոր ցեղերի ղեկավարները և նրանք, որոնց բնակավայրերը գտնվում էին Մեքքա ուխտագնացության ճանապարհներին, նույնպես ձևականորեն ճանաչվում էին: Իսկ կայսերական և տեղական կառավարման միջև հավասարակշռությունը սովորաբար պահպանում էին խարդավանքների միջոցով, այսինքն՝ տեղի իշխանական ընտանիքներին միմյանց դեմ հանելով: Սակայն այդ մեթոդը երբեմն շատ վտանգավոր էր դառնում հենց օսմանյան իշխանությունների համար⁹:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչ արտոնություններ և սահմանափակումներ ունեին Սիրիայի բնակիչները, նախ նշենք, որ թուրքերը կայսրությունում հաստատեցին սոցիալական նոր կարգեր, որտեղ առաջին շարքերում մուսուլման թուրքն էր, այնուհետև նախապետությունը տրվում էր այլ ազգությունների մուսուլմաններին, այսինքն՝ հաշվի էր առնվում կրոնական պատկանելությունը: Հետևաբար, Սիրիայի արաբ մուսուլման բնակչությունն ուներ նույն արտոնություններն ու սահմանափակումները, ինչ կայսրության մուսուլման զանգվածն ընդհանուր առմամբ: Իսկ քրիստոնյաների հետ արաբները իրավահավասար էին միայն այն հարցում, որ երկուսն էլ Օսմանյան կայսրության հպատակներ էին, այսինքն՝ ռայաներ: «Ռայա» տերմինը բնութագրում էր Օսմանյան կայսրության, ինչպես նաև այլ իսլամական երկրների հպատակ ժողովուրդներին: «Ռայա» բառը նշանակում է հոտ, որի բացատրությունը տալիս է դեռևս նախաիսլամական հնդ-իրանական գրականությունը, և որը տեղ է գտել

⁹ Hourani A., նշվ. աշխ., էջ 226:

նան 15-16-րդ դդ. օսմանյան սուլթանների ֆերմաններում, ժամանակագրություններում, «հայելի» (հայելու օգնությամբ ընթերցվող) տիպի բազմաթիվ տրակտատներում¹⁰, որտեղ տերը (փաղիշահը) հաճախ համեմատվում էր հովվի, իսկ նրա հպատակները՝ հոտի հետ: Քանի որ Աստված վերջիններիս վստահել էր փաղիշահին, նա պարտավոր էր որպես հովիվ հոգ տանել նրանց մասին և ուղղորդել դեպի իրական հավատի ճանապարհը, իսկ հպատակները պարտավոր էին անվերապահորեն ենթարկվել իրենց հովվին:

Ամենակարևոր փաստը ռայաների կարգավիճակի որոշման հարցում նրանց հարկային պարտավորություններն էին¹¹: Օսմանյան կայսրությունում, բացի շարիաթով պարտադրված հարկերից՝ ջիզյա, խարաջ և ուշր, կային նաև հարկեր, որոնք, կարելի է ասել, թելադրվում էին ժամանակի պարտադրանքով:

Մուսուլմանների և քրիստոնյաների միջև օրենքով սահմանված տարբերակիչ հարկը ջիզյան էր՝ գլխահարկը, որը վճարում էին քրիստոնյաներն ու հրեաները, իսկ մուսուլմանները վճարում էին անձի ոչ կանոնավոր հարկեր¹²: Ոչ մուսուլմանները՝ թուրքերի հետ միասին, վճարում էին հինգ տեսակի հարկ՝ սուրսաթ (պատերազմական տուրք), ավարիզ (արտակարգ հարկ), ջեբ ալչեաի (գրպանի դրամ կամ պարտադիր նվեր սուլթանին), թիբն կամ թեբն (հարդի տուրք), օրդու (բանակի տուրք)¹³:

¹⁰ Мейер М. С., Новые явления в социально-политической жизни Османской империи во второй половине XVII-XVIII вв., Османская империя, система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, сборник статей, Москва, 1986, стр. 156.

¹¹ Կար նաև, այսպես կոչված, ռայա՝ հատուկ հանձնարարություններով: Դրանք այն հպատակներն էին, որոնց որոշակի ծառայության համար շնորհվել էին հարկային արտոնություններ: Նրանք ինքնատիպ խումբ էին կազմում՝ հասարակ հարկատու բնակչության և զինվորական խավի ներկայացուցիչների միջև (Мейер М.С., նշվ. աշխ., էջ 160):

¹² Hourani A., նշվ. աշխ., էջ 217:

¹³ Թոփուզյան Ն. Է., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 36:

Ընդհանրապես, բազմաթիվ էին տարբերակող հատկանիշները (հարկային, հողային, պաշտոնների զբաղեցման հնարավորության սահմանափակումներից սկսած մինչև քրիստոնյաների արտաքին տեսքի¹⁴՝ հագուստի, ոտնամանի, գլխաշորի, մազ-մորուքի սահմանափակումները հպատակ ժողովուրդների՝ մուսուլմանների-մուսուլման թուրքի, մուսուլման արաբի և քրիստոնյաների-հայերի միջև, որոնք արհեստականորեն սահմանել էր օսմանյան կառավարությունը, ինչպես Լևոն Վարդանն է իրավացիորեն նշում. «...ստեղծելու համար ստրկային հոգեբանություն ոչ-թուրքի և ոչ-մահմեդական քաղաքացու մոտ, որպեսզի սուլթանական և թուրքական տիրապետությունն էլ լինեի ավելի հեշտ և քրիստոնյան դառնար ինքն իր վրա կքած մարդ՝ իր կյանքն իսկ վերնից, սուլթանից իրեն տրված շնորհ նկատելով»¹⁵:

17-րդ դարից սկսած, երբ Օսմանյան կայսրությունն ավարտեց իր նվաճումները, արքունի գանձարանը սկսեց լցնվել հպատակ ժողովուրդների վճարած հարկերով: Յուրաքանչյուր վիլայաթի կառավարչի վրա սահմանված էր որոշակի տուրքի չափ: Այս երևույթը պատճառ էր հանդիսանում խաղաղ բնակչության կեղեքումների և թալանի համար, ինչն էլ կայսրության տարբեր մասերում ապստամբությունների էր հանգեցնում: Այս պայմաններում 18-րդ դարի վերջերից սկսած օսմանյան կառավարության առանձին ներկայացուցիչներ սկսեցին ուշադրություն հրավիրել ռայաների դժգոհությունների պատճառների վերացմանը, և ոչ թե այդ դժգոհությունների հետևանք հանդիսացող ապստամբությունների անողորմ ճնշմանը: Անգամ այն

¹⁴ Քրիստոնյաների արտաքին տեսքի հետ կապված սահմանափակումների մասին տե՛ս Լևոն Վարդան, Խորականությունը Օսմանյան կայսրության մեջ, «Հայկազեան հայագիտական հանդես», Բեյրութ, 1970, էջ 9-45, ինչպես նաև՝ Bruce Masters, Christians and Jews in the Ottoman Arab World, Cambridge University Press, 2001, p. 6, Judith Tucker, In the House of the Law; Gender and Islamic Law in Ottoman Syria and Palestine, Berkeley, CA, 1998.

¹⁵ Լևոն Վարդան, նշվ. աշխ., էջ 13:

Ժամանակ, երբ իշխանությունը գտնվում էր Մուսթաֆա փաշայի (Մեծ վեզիր) ձեռքում (1800-ականների սկզբին), ընդունվեց հրամանագիր, որ մուսուլմաններն այլևս չօգտագործեն «զյավուր» (անհավատ) բառը, որովհետև յուրաքանչյուր քրիստոնյա, ինչ դավանանքի էլ պատկաներ, հավատում էր միակ Աստծուն, որին հավատում են նաև մահմեդականները: Ձևականորեն այդ հրամանը չէր հակասում Ղուրանին, սակայն այն որևէ գործնական նշանակություն չունեցավ, և «զյավուր» բառի օգտագործումը շարունակվեց մինչև կայսրության կործանումը¹⁶: Ռայաների դժգոհությունները օսմանյան իշխանություններին միայն վերը նշված ժամանակաշրջանում չէ, որ անհանգստացնում էր: Դրանք միշտ էլ առկա են եղել: Դա բնական էր մի պետության համար, որն ուներ տարասեռ բնակչություն, որտեղ մի մեծ ճեղք գոյություն ուներ մուսուլմանների և քրիստոնյաների, երբեմն մուսուլման թուրքերի և մուսուլման արաբների, կամ քրիստոնյա տարբեր համայնքների միջև: Ահա այս ճեղքն ավելի մեծացնելու և հպատակներին ավելի դյուրին վերահսկելու նպատակով 15-րդ դարի երկրորդ կեսին ստեղծվեց Միլլեթների համակարգը¹⁷, որը խառնիված էր էթնո-կրոնական սկզբունքի վրա: Ըստ այդմ, ոչ մուսուլմանները բաժանված էին երեք դավանական համայնքների՝ հույն-ուղղափառ, հայ-առաքելական և հրեա:

Ժամանակակից թուրքերենում «միլլեթ» նշանակում է «ազգ, ազգություն», սակայն Օսմանյան կայսրությունում այն ուներ այլ իմաստ՝ մատնանշում էր մարդու դավանաբանական և ազգային պատկանելությունը¹⁸:

¹⁶ Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Երևան, 2009, էջ 44-46:

¹⁷ Տե՛ս Meşrep M. C., նշվ. աշխ., էջ 160:

¹⁸ Սահակյան Լ. Ս., Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, էջ 52:

Անդրադառնալով հայկական միլլեթի առաջացման պատմությանը՝ նշենք, որ Սուլթան Մեհմեդ 2-րդը 1461 թ. Կ. Պոլիս հրավիրելով Բուրսայի Հովակիմ եպիսկոպոսին, նրան շնորհել է պատրիարքի տիտղոս և կայսրության հայերի (այդ թվում՝ Սիրիայի հոգևոր և աշխարհիկ համայնքների) վրա հոգևոր և քաղաքական իշխանություն¹⁹։ Պոլսի պատրիարքին ենթակա էին բոլոր միաբնակ համայնքները՝ ասորի հակոբիկյան, դպտի և եթովպացի։ Պատրիարքների միջոցով կառավարությունը ղեկավարում էր միլլեթը և հավաքում էր համայնքների տարեկան տուրքը։ Պատրիարքը, միաժամանակ պատասխանատու և իրավասու էր իրեն ենթակա հոգևոր դասի, ինչպես նաև իր հավատակից քաղաքացիների ազգային, կրթական, բարեգործական կառույցների և իր ժողովրդի հետ առնչվող ցանկացած իրավիճակի համար։ Նրա իրավասության ասպարեզն ավելանում էր կայսրության ընդարձակմանը համաչափ²⁰։

Պատմական Սիրիայի մաս կազմող Երուսաղեմում ևս օսմանյան իշխանությունները Հայոց եկեղեցին ճանաչեցին որպես Երուսաղեմի երեք խոշոր եկեղեցիներից մեկը՝ հույն ուղղափառ և լատին եկեղեցիներից հետո։ Երուսաղեմի Հայոց պատրիարքի իշխանությունը նաև քաղաքական բնույթ էր կրում և տարածվում էր վերը նշված 3 միաբնակ համայնքների վրա²¹։

18-րդ դարի առաջին կեսին իրավիճակը փոքր ինչ փոխվում է այն առումով, որ պատրիարքի «միանձնյա իշխանությանը» զուգընթաց,

¹⁹ Sanjian A.K., *The Armenian Communities in Syria under Ottoman Dominion*, Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1965, p. 32, Մեմերճեան Է., Հայկական կյանքը արդի Հալեպի վաղ օսմանյան ժամանակաշրջանին, ուսումնասիրական փորձ մը՝ հայ ընկերային կյանքի պատմության կառուցման համար իսլամական աղբյուրներու օգտագործման առնչությամբ, «Տաթև» հայագիտական տարեգիրք, N 1, Հալեպ, 2008, էջ 268։

²⁰ Նրա իրավասությունը տարածվում էր նաև Սսի և Ադթամարի կաթողիկոսությունների և Երուսաղեմի պատրիարքության վրա (Sanjian A. K., նշվ. աշխ., էջ 33)։

²¹ Tsimhoni Daphne, *The Armenians and the Syrians: Ethno-Religious Communities in Jerusalem*, Middle Eastern Studies, Vol. 20, No. 3 (Jul., 1984), p. 352.

առաջ է գալիս հարուստ վերնախավ, որը սկսեց կարևոր դեր խաղալ միլլեթների հոգևոր և քաղաքացիական գործերի ղեկավարման մեջ: Դարակեսից նրանց կոչում էին ամիրաներ: Վերջիններս, որոնք հիմնականում սարաֆներ (բանկիրներ) և կառավարությունում բարձր պաշտոններ զբաղեցնող անհատներ էին, հոգում էին պատրիարքության, եկեղեցական և ազգային հաստատությունների ծախսերը, և դա իր հերթին նրանց իրավունք էր տալիս իրենց կամքը թելադրելու միլլեթին և դարձնում ավելի զորեղ, քան պաշտոնապես ընդունված պատրիարքը, ում արդեն իրենք էին առաջադրում²²:

Կարելի է եզրակացնել, որ Օսմանյան կայսրությունը Միրիայի հայությանը դիտում էր որպես հայկական միլլեթի անբաժան մաս, որը ենթարկվում էր միևնույն հրահանգներին և ուներ միևնույն սահմանափակումներն ու արտոնությունները, ինչ որ կայսրության մյուս հայերը: Սակայն Միրիայի հայության պարագայում պետք է հաշվի առնել այն առանձնահատկությունները, որը տալիս էր երկրի աշխարհագրական դիրքը և այն կարևորությունը, որ այն ուներ կայսրության համար: Այսինքն, ստեղծելով պայմաններ Միրիայի տնտեսական կյանքի բարելավման համար, կայսրությունը էթնո-կրոնական սահմաններ չէր գծում այդ բարենպաստ պայմաններից օգտվողների միջև: Իսկ երբ մի շարք բացառիկ արտոնություններ շնորհվեցին եվրոպացիներին, սահմանափակվեց Միրիայի ընդհանուր բնակչության զբաղվածությունն առևտրի ոլորտում: Այսինքն՝ այս պարագայում, փաստորեն, հայերի կարգավիճակն արդյունք էր Միրիայի ողջ բնակչության նկատմամբ օսմանյան իշխանությունների վարած քաղաքականության: Իսկ այն դեպքում, երբ Միրիայի վարչատարածքների թուրք կառավարիչներին տրվում էր արքունի գանձարանը լցնելու անխուսափելի հրամանը, հարկահավաքության ընթացքում քրիստոնյա բնակչության հետ միասին կեղեքումների և դաժանությունների զոհ էին դառնում

²² Sanjian A. K., նշվ. աշխ., էջ 36:

նան արաբները: Ահա սա արդեն արդյունք էր կոնկրետ բոլոր ռայաների նկատմամբ արքունիքի վարած քաղաքականության:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, կարելի է ենթադրել, որ 16-18-րդ դարերում, Օսմանյան կայսրությունը հատուկ քաղաքականություն չի վարել սիրիահայության նկատմամբ: Սակայն միևնույն ժամանակ ճիշտ է և այն, որ, թեև վերջիններիս հաջողվեց նվաճել որոշակի դիրքեր և բարեկեցություն, այնուամենայնիվ, նրանք երբեք չէին համարվում ավելին, քան «երկրորդ դասի» քաղաքացիներ, ռայաներ:

VENERA MAKARYAN

Matenadaran - Mashtots ancient manuscripts Institute, Yerevan

THE POLICY OF THE OTTOMAN AUTHORITIES
IN SYRIA AND LOCAL ARMENIAN COMMUNITY
(XVI-XVIII CC.)

SUMMARY

After the conquest of Syria in 1516, the Armenian community of Syria along with the Arab population passed under the rule of the Ottoman Empire.

In this article we consider the following issues referring to the history of Syria's population including Armenian community in the Ottoman period (16th-18th centuries): the importance of the conquest of Syria for the Ottoman Empire, the privileges and restrictions of the population of Syria, and whether the Armenian community bore the results of the conquest of Syria, or the Ottoman Empire considered the Armenian community as a part of the Armenian "millet" and pursued a separate policy.

فبينيرا ماكاريان

معهد ماشتوتس للمخطوطات القديمة بيريغان (الماتيناداران)

سياسة السلطات العثمانية في سورية و وضع الأرمن السوريين (من القرن 16 إلى 18)

ملخص

عندما احتلّ العثمانيون سورية عام 1516 وقع الأرمن السوريون مع أخوتهم العرب تحت نير الاحتلال العثماني.

نسلط الضوء في هذه المقالة على أوضاع سكان بلاد الشام أثناء الاحتلال العثماني خاصة في الفترة الواقعة بين القرنين السادس عشر والثامن عشر، ونطرح بعض الأسئلة المتعلقة بوضع هذه الجالية هناك.

كما نبحث في أهمية احتلال سوريا من قبل العثمانيين، بالإضافة إلى التعرف على الحقوق التي تمتّع بها سكان بلاد الشام والقيود التي فرضت عليهم، وهل تأثرت الجالية الأرمنية، كونها تشكل جزء من النسيج السوري، من سياسة الحكومة العثمانية ضد سورية أم تعاملت معهم السلطنة كجزء من نظام الملل معاملة إياهم معاملة خاصة.

ԱՐԱԲԵՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ

ԴԱՍԱԳԻՔԵՐԸ

(Գևորգ դպիր Պալատեցու «Քերականութիւն արաբացոց լեզուին» և Մարգար Խոջենցի «Գիրք քերականութեան արաբացոց» դասագրքերը)

Արամ Տեր-Ղևոնդյանը «Արաբ Մատենագիրներ. Թ-Ժ դարեր» ժողովածուի ներածության մեջ նշում է, որ հայ արևելագիտության և արաբագիտության հիմնադիր կարելի է համարել Գևորգ դպիր Պալատեցի Տեր-Հովհաննիսյանին (1737-1812)¹: Սույն եզրակացությունը բխում է այն հանգամանքից, որ Գևորգ դպիրը մի շարք արևելագիտական աշխատությունների հեղինակ է, այդ թվում՝ պարսկերեն-հայերեն և արաբերեն-հայերեն բառարանների, պարսկերենի և արաբերենի քերականություններին նվիրված գրքերի, ինչպես նաև օսմանյան պետության պատմության և այլն: Տեր-Ղևոնդյանը, հիմնվելով իր ձեռքի տակ եղած փաստերի վրա, Գևորգ դպիր Պալատեցուն արդարացիորեն ներկայացնում է որպես հայ իրականության մեջ արաբերենի առաջին քերականության՝ «Քերականութիւն արաբացոց լեզուին» հեղինակի: Այն գրվել է 1765 թ.:

Ղալաթիոյ ազգային Մատենադարանի ձեռագրերի ցուցակում նկարագրված թիվ 183 ձեռագիրը արաբերենի վերոհիշյալ քերականության կրկնօրինակն է՝ արտագրված 1865 թ. Կ. Պոլսում: Սույն աշխատության նկարագրությունը հետևյալն է՝ «...Քերականութիւնս է գրաբար լեզուով գրուած է և երկու մասի բաժանուած. Մասն առաջին

¹ Տեր-Ղևոնդյան Ա., Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, Երևան, 2005, էջ 67-68:

եր. 1-180, որ չէ խորագրուած: Մասն Բ. Յաղագս համաձայնութեան, եր. 181-221: Յաւելուած, հարկաւոր գիտելիք ի վերայ հոլովոց անտանց, եւայլն, եւայլն. եր. 222-236»²: Հիմնվելով այն փաստի վրա, որ 1815 թ. Գևորգ Պալատեցու ձեռագիրը կրկնօրինակվել է³, կարող ենք եզրակացնել, որ սույն քերականությունը գործածության մեջ է եղել և մի քանի տասնամյակ իր նպատակին ծառայել:

Գևորգ դպիրի այս գործը հիշատակել է նաև Աբրահամ Այվազյանն իր «Շար Հայ կենսագրութեանց» գրքում, որտեղ նա մասնավորապես նշում է. «սոյն Քերականութեան մէկ քանի բնագիր պրակները տեսայ Տաճկաբան Գրիգորեան Ռեթնոս Էֆէնտիին քով»⁴: Այս առումով հատկանշական է, որ 1892 թ. Կ. Պոլսում լույս է տեսել Ռեթնոս Գրիգորյանի հեղինակած «Նոր քերականութիւն արաբերէն լեզուի ի պետս վարժելոց և թերավարժից» խորագրով գիրքը: Արդյո՞ք Ռեթնոս Գրիգորյանը օգտվել է Գևորգ դպիրի դասագրքից և այդ պատճառով իր աշխատությունն անվանել «Նոր քերականություն»: Այս հարցը առայժմ մնում է անպատասխան: Ցավոք, ներկայումս մենք Գեվորգ դպիր Պալատեցու արաբերենի քերականությունն ուսումնասիրելու և վերոհիշյալ աշխատանքների հետ համեմատելու հնարավորություն չունենք, քանի որ ձեռագրի կամ նրա թվայնացված տարբերակի ձեռքբերման հարցում առկա են որոշ բարդություններ: Հուսով ենք, մոտ ապագայում մեզ կընձեռվի այդ հնարավորությունը և ուսումնասիրությունն ամբողջական պատկեր կունենա:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են Գևորգ դպիրի ժամանակակից Մարգար Խոջենցի մի քանի ձեռագրեր, որոնց թվում՝ «Գիրք քերականության արաբացոց» աշխատության (շարադրված 1766 թ.) երկու օրինակ (թիվ 2323, 6270): Սա արա-

² Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961, էջ 1061:

³ Նույն տեղում:

⁴ Այվազեան Ա., Շար Հայ կենսագրութեանց, Կ. Պոլիս, 1893, էջ 46-47:

բերենի ուսուցման ծավալուն ձեռնարկ է՝ նախատեսված հայալեզու ընթերցողի համար: Վերոհիշյալ ձեռագրերի ուսումնասիրության արդյունքում բացահայտվեցին մի շարք փաստեր, որոնք, մեր կարծիքով, գիտական հետաքրքրություն են ներկայացնում թե՛ հայագիտության և թե՛ արաբագիտության համար: Հատկանշական է, որ Մարգար Խոջենցիի անդրադարձած մեզ հայտնի հեղինակներից որևէ մեկը չի հիշատակում 1766 թ. նրա գրած «Գիրք քերականության արաբացոց»-ի մասին: Սա առիթ դարձավ այն մանրակրկիտ քննելու, ինչպես նաև հայ իրականության մեջ արաբերենի ուսումնասիրության ընդհանուր պատկերը վերհանելու համար:

Հայտնի է, որ Մարգար Խոջենցը ծնվել է Երևանում, երկար տարիներ ապրել է Ջուլոտնիայում, որտեղ Անգլիայի հյուպատոսությունում աշխատել է որպես թարգմանիչ: XVIII դ. վերջերին տեղափոխվել է Սանկտ Պետերբուրգ և արքունիքում զբաղեցրել «պանդիտաց» հարցերով խորհրդականի պաշտոն: Նա տիրապետել է մի քանի եվրոպական և արևելյան լեզուների, կատարել թարգմանություններ և հեղինակել սեփական երկեր:

Մի շարք հեղինակներ իրենց պատմաբանասիրական աշխատություններում անդրադարձել են Գեղամյան Մարգար Զաքարիա Խոջենց Երևանցու կյանքին և գործունեությանը, սակայն ներկայացված տեղեկությունները կցկտուր են, հաճախ իրարամերժ: Օրինակ՝ ըստ Գառնիկ Ստեփանյանի «Կենսագրական բառարանի»՝ Մարգար Խոջենցն ապրել է XVIII դ. երկրորդ կեսին⁵, այնինչ Կամսար Գրիգորյանի ուսումնասիրած արխիվային նյութերից պարզ է դառնում⁶, որ Մարգար Խոջենցը մահացել է 1819-1820 թթ.՝ 83 տարեկանում: Այստեղից հետևություն՝ նրա ապրած տարիներն են՝ 1736/37 - 1819/20: Միանշանակ չեն նաև Մարգար Խոջենցի որոշ ստեղծագործություն-

⁵ Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981, էջ 302:

⁶ Григорьян К., Армянская культурная колония в Петербурге в XVIII веке, «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ հասարակական գիտություններ», 1953, № 9, էջ 72-73:

ների մասին տեղեկությունները: Այսպես մի շարք աղբյուրներ, հիմք ընդունելով Մարգար Խոջենցի հիշատակարանը, նրան են վերագրում «Բլբուլ և Սոխակ» այլաբանական երկը⁷, որը նաև ֆրանսերեն է թարգմանվել: Սակայն դեռևս 1834 թ. հայտնի թուրքագետ Յոզեֆ ֆոն Համմերը պնդել է, որ «Բլբուլ և Սոխակ»-ի հեղինակն ամենևին էլ Մարգար Խոջենցը չէ, այլ Մեծն Սուլեյմանի (նկատի ունի Սուլեյման Կանունիին) ժամանակակից հայտնի պոետ Ֆազլը, ում գործը Մարգար Խոջենցն ընդամենը համառոտել և թարգմանել է հայերեն՝ առանց հղումների⁸:

Ներկայացնենք Մարգար Խոջենցի հեղինակած «Գիրք քերականութեան արաբացոց, մեկնեալ ի հայկական լեզու» ծավալուն դասագիրքը: Թիվ 2323 ձեռագիրը, ըստ գաղափար ժամանակի հիշատակարանի, գրվել է Սանկտ-Պետերբուրգում 1810 թ.: Իսկ թիվ 6270-ը նախորդի կրկնօրինակն է՝ արտագրված Թիֆլիսում 1823 թ., Նոր Զուղայեցի Բերդեհեմ Ավետիքյանի կողմից, Ներսես արքեպիսկոպոսի հրամանով: Երկու ձեռագրերում էլ գետեղված են Մարգար Խոջենցի հեղինակած նախաբանը՝ «Առ բանասեր ընթերցողս» և Ռուսաստանի կայսր Ալեքսանդր I-ին (1801-1825) հասցեագրված նվիրատվական «Ընծայում», որոնցից մի շարք հանգամանալի և օգտակար տեղեկություններ ենք քաղում, այդ թվում՝ «Գիրք քերականութեան արաբացոց»-ի ստեղծման դրդապատճառների և նպատակների, ինչպես նաև այդ ժամանակաշրջանում արաբերենի ուսումնասիրության վիճակի մասին:

«Ընծայումն»-ից տեղեկանում ենք, որ սույն օրինակը նույն ինքը՝ Մարգար Խոջենցը, արտագրել է 1810 թ. Սանկտ Պետերբուրգում՝

⁷ «Անահիտ» հանդես, Փարիզ, 1898, նաև՝ Ստեփանյան Գ., նշվ. աշխ., էջ 302:

⁸ Ղազիկյան Ա., Հայկական նոր մատենագրություն և հանրագիտարան հայ կյանքի, Վենետիկ, 1909-1912, էջ 1195-1198:

Ռուսաց կայսրին նվիրելու նպատակով: Նա ակնկալում է նաև կայսեր հրամանը, որպեսզի այն թարգմանվի ռուսերեն⁹:

Հեղինակը, սկսելով «Առ բանասեր ընթերցողս», նշում է, որ եվրոպացիների հաջողությունները գիտության և արհեստների բնագավառում պայմանավորված է «*ո՛չ այլով ... բայց եթե տեղեկությամբ, թարգմանությամբ եւ ընթերցմամբ գրեանց զանազան ազգացն լեզոււաց*»¹⁰: Այս հեղինակն իր մտահոգությունն է հայտնում, որ հայերը, սփռված լինելով աշխարհով մեկ, ընդ որում՝ մեծ մասամբ Արևելքում, թեև վարժ տիրապետում են եվրոպական լեզուների, սակայն արաբերենին չեն տիրապետում: Իսկ պատճառն այն է, որ գրեթե չկա արաբերենի քերականության որևէ գիրք, որը հայ ընթերցողին մատչելի կներկայացնի արաբերենի, հատկապես՝ բայի քերականական կարգերը. «*... որքան որ անթերի եւ անվրէպ փոխաբերեալ էին ի լեզուս իւրեանց, սակայն ի խոնարհմունս բայից հետեւեալ էին նոցունց դասակարգութեանց, որք են ըստ ամենայնի անհամաձայնք մերոց եւ իւրեանց եւրոպեացւոց քերականական ոճից, այսինքն՝ փատնափնթոր եւ շփոթեալ գոյով յեղանակս եւ ի ժամանակս, ի դէմս եւ ի սեռս արականաց եւ իգականաց, նաեւ յեզականս, յերկաւորականս եւ յորնականս, ի կրաւորականս եւ ի ներգործականս, եւ գրեթէ ի բոլոր խոնարհեցմունս նոցին (որպէս եւ տեսանելոց էք յառաջիկայս գրեցեալ յիւրում տեղոջ՝ հանդերձ պատճառաւն), որք եւ առբերէին կարի մեծ իմն դժուարութիւն եւ ժամանակի տեւողութիւն նորակիրթ ուսանողաց*»¹¹:

Այս ամենը, Խոջենցի խոսքով, քաջալերում և եռանդ է տալիս իրեն, որպեսզի 1766 թ. Ջմյոտնիայում ավարտին հասցնի իր աշխատանքը՝ որպես վայելում իր ազնվական ազգի ուսումնասեր հանճարների:

⁹ Մատենադարան, ձեռ. 2323, թ. 3ա:

¹⁰ Նույն տեղում, ձեռ. 6270, թ. 2ա:

¹¹ Նույն տեղում, թ. 2բ:

Խոջենցը նշում է նաև, որ օգտվել է մի գրքից. «*Եւ մինչ մեծաւ ճգամբք դեգերէի ի նոյնս, գրութիւն Տեառն ժամանեալ՝ զտի ի խորշս յանկեան ուրէք, ի վաղ ժամանակաց հետէ ի մէջ փոշոց մնացեալ վեր ի վերոյ համառօտ գրութիւն ինչ ումեմն անծանօթի՝ Յօհաննու վարդապետի Կոստ[ա]նդնուպօլսեցի կոչեցելոյ, որ թէւ կարի աղաւաղեալ յանհմտութենէ գրչաց, բայց գերագոյն հմտութիւն հեղինակին մեծապէս օգնութիւն եղւի ինձ ղիւրաւ համեմատելոյ հայկականին եւ յանկ հասոցանելոյ զսկստածս իմս՝ լցոցանելով զթերին եւ զսխալանս ի նոցունց իսկ արաբացոց»¹²: Թէն նա չի հիշատակում այդ աշխատության ո՛չ վերնագիրը և ո՛չ էլ հրատարակության վայրը, կարծում ենք, հավանաբար խոսքը Հովհաննէս վարդապետ Կոստանդնուպօլսեցու (Հովովի) «Զտութիւն հայկաբանութեան» խարագրով լատիներեն-հայերեն քերականության մասին է՝ տպագրված Հռոմում 1674 թ.¹³:*

Զեռագրի շարադրանքն ու ձևավորումը հուշում են, որ այն տպագրության համար պատրաստված օրինակ է, կամ էլ արտագրված է արդեն իսկ տպագիր գրքից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս աշխատությունը հայ տպագիր գրքի մատենագրությունում չի հիշատակվում, մեզ առայժմ անհայտ պատճառներով այն այդպէս էլ անտիպ է մնացել:

«Գիրք քերականութեան արաբացոց»-ը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ձևաբանությունն է՝ «*Յաղագս կանոնաւորմանց մասանց բանին*», իսկ երկրորդ մասը շարահյուսությունն է՝ «*Յաղագս շարամանութեանց մասանց բանի*»: Առաջին մասում հեղինակը մանրակրկիտ ներկայացնում է արաբերենի հնչյունային համակարգը, խոսքի մասերը և դրանց կիրառման յուրահատկությունները (ընդհա-

¹² Նոյն տեղում:

¹³ Յոհաննիս Կոստանդնուպօլսեցի, Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, M.D.C. LXXIV, 1674:

նուր առմամբ 89 ենթագլուխ), իսկ երկրորդ մասը (21 ենթագլխով) նվիրված է արաբերենի շարահյուսության կանոններին:

Ենթագլուխները սկսվում են արաբերեն սահմանումով, որին հետևում է հայատառ տարբերակը և հայերեն թարգմանությունը: Օրինակ՝ թիվ 2323 ձեռագրի 5բ թերթում կարդում ենք «*فی حروف - Ֆի հ[ու]րուֆի- Յադագս տառից*», 22ա թերթում՝ «*جنس الاسماء - Ֆի ճինս իլ էսմայի: Յադագս սեռի անունանց*» և այսպես շարունակ: Յուրաքանչյուր ենթագլխում բերված են նյութին համապատասխան օրինակներ, դարձյալ, նախ արաբերենով, ապա հայատառ և հայերեն թարգմանությամբ: Բուն նյութը շարադրված է գրաբարով, հստակ, կանոնակարգված, տրամաբանական գուգահեռներ են տարվում հայերենի և արաբերենի միջև: Այս ամենի շնորհիվ «*Գիրք քերականութեան արաբացոց*»-ը մատչելի է նաև արաբերենն ինքնուրույն ուսումնասիրողների համար:

Այսպիսով, հայ իրականության մեջ մեկ տարվա տարբերությամբ՝ 1765 և 1766 թվականներին երկու հայ մտավորականներ՝ Գևորգ դպիր Պալատեցի Տեր-Հովհաննիսյանը (Կ. Պոլիս) և Մարգար Զաքարիա Խոջենց Գեղամյանը (Զմյուռնիա) ստեղծեցին արաբերենի քերականության հայերեն դասագրքեր՝ ի նպաստ ազգի լուսավորման: Եթե հեղինակներից առաջինն արդեն իսկ հայտնի է որպես հայ արաբագիտության հիմնադիր, ապա երկրորդի անունը առաջին անգամ է շրջանառվում այս ոլորտում, շնորհիվ Մաշտոցյան Մատենադարանում պահվող նրա մինչև այժմ անտիպ «*Գիրք քերականության արաբացոց*»-ի երկու ձեռագրերի:

THE FIRST GRAMMAR TEXTBOOKS OF ARABIC IN ARMENIAN

("The Grammar of the Arabic Language" by Gevorg Ter-Hovhannisyan
and "A Book of the Grammar of Arabic" by Margar Khojents)

SUMMARY

In Armenian reality, almost simultaneously in 1765 and in 1766 two Armenian scholars Gevorg Palatetsi Ter-Hovhannisyan (Constantinople) and Margar Zaqaria Khojents Geghamyan (Smirna-Izmir) have created Arabic grammar textbooks in Armenian hence contributing to the education of Armenians. While the first of the authors is already known as a pioneer of Oriental Studies, particularly of Arabic studies, the name of the latter has emerged in this sphere for the first time thanks to his two unpublished manuscripts of "A Book of the Grammar of Arabic" from The Matenadaran Collection.

کناریک ساهاکیان

معهد ماشتوتس للمخطوطات القديمة في يريفان (الماتيناداران)

الكتب الاولى لتعليم اللغة العربية باللغة الأرمنية ("قواعد اللغة العربية"
لكيفورك بالادييتسي و"كتاب النحو العربي" لماركار خوجينتس)

ملخص

أبدع متفنان أرمنيان في وقت واحد وبفارق سنة في عامي 1765 و 1766 وهما كيفورك بالادييتسي دير هوفانيسيان (في القسطنطينية) وماركار زكريا خوجينتس كيغاميان (في زميورنيا) بتأليف كتب قواعد اللغة العربية باللغة الأرمنية لصالح نشر العلم. وإذا كان المؤلف الأول يبرز آنذاك كمؤسس الدراسات العربية باللغة الأرمنية فإن الاسم الثاني يتداول لأول مرة في هذا المجال بفضل مخطوطتين بعنوان "كتاب النحو العربي" اللذين لم يُنشرا بعد والموجودين في دار المخطوطات الأثرية الماتيناداران.

ԵԳԻՊՏՈՍԻ «ԱԼ-ՄՈՒԿԱՏՏԱՄ» ՕՐԱԹԵՐԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1889-1896 ԹԹ.)

XIX դարի վերջին քառորդը Եգիպտոսի հասարակական-քաղաքական մտքի զարթոնքի շրջան էր, որի արտահայտման և քաղաքական միակ ասպարեզը պարբերական մամուլն էր: Այդ պատճառով, Եգիպտոսի հայրենասիրական-ազգայնական շարժման պատմությունը պարբերացնելիս եգիպտացի պատմաբաններն այդ շրջանն անվանել են «Պարբերական մամուլի ժամանակափուլ»¹: Ժամանակի մամուլը և պատմագիտական միտքը վկայում են Օրաբիի ապստամբությունից² հետո՝ 1880-ականների սկզբին, մտավորական շրջանակներում տիրող հուսալքման ու անկումային տրամադրությունների մասին: Ազգային-հայրենասիրական մղումները վերստին ակտիվանում են Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի հաստատվելուց հետո: Եգիպտոսում 1882 թ. հաստատված բրիտանական ներկայությունը խթան էր ազգային գիտակցության, միասնական հայրենիք ունենալու գաղափարների

¹ Եգիպտոսի պարբերական մամուլի հետազոտող Աբդ Ալ-Լատիֆ Համգայի գնահատմամբ՝ ազգային գաղափարախոսության ձևավորման և մատուցման հարցում պարբերական մամուլի դերն անփոխարինելի էր. «Եգիպտոսի պարբերական մամուլը երկրի պատմության համար առավել կարևոր դերակատարություն ունեցավ, քան բանակը, իսկ Եգիպտոսի քաղաքական պատմության համար՝ ավելի մեծ նշանակություն, քան որևէ ներկայացուցչական խորհուրդ» (տե՛ս عبد اللطيف حمزة, أنبأ 'u, القاهرة, 1950, ج. 1, ص. 42-39). Աբդ Ալ-Լատիֆ Համգա, Լրագրողական հոդվածի էթիկա, Կահիրե, 1950, էջ 39-42):

² Օրաբիի ապստամբության մասին մանրամասն տե՛ս Cromer, Modern Egypt, London, 1908, pp. 175-193, Лудкий В. Г., Новая история арабских стран, Москва, 1963, с. 186-196.

ձևավորման համար, որոնք նախևառաջ միտված էին ձերբագատելու երկիրն օտարներից:

Ազգային քաղաքական ուղենիշների ձևավորման այդ փուլում եգիպտական հասարակական կարծիքը, ինչպես ժամանակի քաղաքական միջազգային այլ հիմնախնդիրների դեպքում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում հաստատված կացության մեկնաբանման և արժեվորման պարագայում, մեծապես պայմանավորված էր մեծ տերությունների քաղաքականությանը տված սեփական գնահատականով:

Օրաթերթի էջերում խնդրի արծարծումը մեկնաբանելու տեսանկյունից կարևոր է ներկայացնել դրա հիմնադրման պատմությունը և քաղաքական կեցվածքը. այն է՝ պարզել պարբերականի անմիջական կախվածության աստիճանը ժամանակի հասարակական-քաղաքական իրավիճակի թելադրած առաջնահերթություններից:

XIX դարավերջին եգիպտոսում հասարակական միտքն առաջնորդում էր «Ալ-Ահրամ» (Բուրգեր) օրաթերթը³: Հատկապես դրան հակակշռելու նպատակով էլ բրիտանական կառավարության հանձնարարականով և ֆինանսավորմամբ հիմնադրվեց բրիտանամետ «Ալ-Մուկատտամ» (Կահիրեում գտնվող բլրաշարքի անվանում, որի քարերով, ըստ ավանդության, կառուցված են երեք ամենամեծ բուրգերը)⁴ պարբերականը:

³ Պարբերականի գաղափարական ուղղվածության և հայերին վերաբերող հոդվածների մասին տե՛ս القاهرة، 1923-1878، القضية الأرمنية، محمد رفعت الإمام، الأهرام المصرية والقضية الأرمنية، 2006، ص. 9-7. Մուհամմեդ Ռիֆաաթ ալ-Իմամ, Հայկական հարցը և եգիպտական «Ալ-Ահրամը», Կահիրե, 2006, էջ 7-9, Երանոսյան Ն., Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի լուսաբանումը եգիպտական «Ալ-Ահրամ» օրաթերթում 1894-1896 թվականներին, «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», թիվ 13, Երևան, 2012, էջ 128-142:

⁴ Պարբերականի հիմնադրման մասին հետազայում հրատարակիչները գրել են, որ Շամից (Մեծ Միրիա) իրենց Եգիպտոս են հրավիրել՝ «Ալ-Մուկատտամֆի» հիմնադրման համար, այնուհետև առաջարկել հրատարակել ևս մեկ թերթ և այն

Բրիտանական կառավարությունն ուշիուշով հետևում էր Եգիպտոսում ընթացող խորքային գործընթացներին և, իհարկե, ժամանակին գիտակցեց այնտեղ սեփական քաղաքական շահերի խոսափողն ունենալու անհրաժեշտությունը: Դա մի գենք էր, որի միջոցով հնարավոր էր ազդել հանրության մտածողության վրա, յուրաքանչյուր մտահղացում ներշնչել հասարակությանը՝ արագորեն ստվարացնելով համակիրների շարքերը:

Կարճ ժամանակում հիմնադրվեցին բրիտանական կողմնորոշում ունեցող մի շարք պարբերականներ, որոնք կոչված էին եգիպտական ազգայնական գաղափարներն արծարծող, ֆրանսամետ կամ օսմանյան իշխանություններին հարող մամուլին իրենց իսկ գենքով հակադարձելու և սեփական առաջնությունները Մեծ Բրիտանիային հարմար գունեղանգով հանրությանը մատուցելու⁵ Մինչ այդ բրիտանական կառավարությունը Եգիպտոսի ընդդիմադիր մամուլի դեմ պայքարում առաջնորդվում էր ահաբեկմամբ ու պատժելով՝ գերադասելով գրաքննության օսմանյան տարբերակը:

«Ալ-Մուկատտամի» հիմնադրումը հանձնարարվեց Ֆարիս Նիմրին, Յակուբ Սառուֆին և Շահեն Մակարիուսին: Հիմնադիրների ընտրությունը պատահական չէր. նրանք մեծ փորձ ունեին գիտական ու գրական պարբերականների հրատարակման գործում (Եգիպտոսի առաջին գիտական «Ալ-Մուկթատաֆ»⁶ (Հատըն-

կոչել «Ալ-Իսլահ» (Բարեփոխում), սակայն ներքին գործերի նախարարությունը թույլ չի տվել, իսկ հետագայում որոշվել է թերթն անվանել Ալ-Մուկատտամ բլրաշարքի անունով:

⁵ Անգլիայի ջանքերով սկսեց արաբերենով լույս տեսնել «Թայմզ» պարբերականը, 1889 թ. Կահիրեում սկսեց հրատարակվել «Ալ-Աքլամ» (Լրատու) պարբերականը՝ Մուհամմեդ Բայրամ Թունիսցու խմբագրությամբ, որը Կ. Պոլիս էր գաղթել Թունիսում Ֆրանսիայի հաստատվելու ժամանակ, իսկ 1884 թ. տեղափոխվել էր Կահիրե, և ի դեմս որի, բրիտանացիները վստահելի հենարան էին տեսնում Եգիպտոսում ֆրանսիական կառավարության վարած քաղաքականությանը դիմակայելու խնդրում:

⁶ «Ալ-Մուկթատաֆը» նշված երեք լրագրողների կողմից հիմնադրվել էր Բեյրութում՝ 1876 թ., սակայն, երբ սաստկացան օսմանյան քաղաքական ճնշումները և

տիր) ամսագրի հրատարակիչները ևս նրանք էին): Երեքն էլ կրթություն էին ստացել Բեյրութում և հայտնի էին իրենց արևմտամետ հայացքներով:

«Ալ-Մուկատտամը» որպես շաբաթաթերթ սկսեց լույս տեսնել 1889 թ. փետրվարի 14-ից, սակայն վեց շաբաթ անց վերածվեց օրաթերթի: Սկզբում թերթը հազեցած էր քաղաքական, տնտեսական, ռազմական և առևտրական լրատվությամբ, երբեմն ուղղակիորեն սնվում էր Reuter և Havas լրատվական գործակալություններից, ինչպես նաև օգտագործում երկրի տարբեր մարզերից սեփական թղթակիցների ուղարկած հեռագրերը, օսմանյան կայսրության ու միջազգային մամուլը: Նրա հավելվածը տրամաբանական բնույթ ուներ, հետևողական էր վերնագրերի, ենթավերնագրերի և բաժինների համակցվածության հարցում: Թերթի առաջին համարներում մասնավոր և պաշտոնական գովազդներն ամբողջական սյունակներ էին զբաղեցնում, իսկ արդեն երրորդ ամսից դրանք անցան նաև հաջորդ էջ: 1892 թ. Եգիպտոս այցելած մի անգլիացի ճանապարհորդի վկայությամբ այդ պարբերականը նա տեսել է Ալեքսանդրիայից մինչև Սուդան իր այցելած բոլոր սրճարաններում⁷: Պարբերականը շուտով դարձավ ամրապնդող օղակն այն շրջայի, որը ստեղծված էր Եգիպտոսի հասարակական կարծիքի շուրջ:

Մեծ տերությունների միջև տեղի ունեցող պայքարում Օսմանյան կայսրության նկատմամբ ճնշում գործադրելու հիմնական լծակներից էր Արևմտյան Հայաստանում կայսրության կողմից բարենորոգումների իրականացման խնդիրը: Բեռլինի 1878 թ. վեհաժողովից (Հայկական հարցի միջազգայնացումից) հետո XIX դարի 70-ական թթ. վերջ - 80-ական թթ. այն առավել հմտորեն օգտագոր-

գրաքննությունը, նրանք գաղթեցին Եգիպտոս և այն վերահրատարակեցին Կահիրեում՝ 1884 թ. (տե՛ս Ami Ayalon, *The Press in The Arab Middle East*, New York, Oxford University Press, 1995, p. 53):

⁷ Ami Ayalon, նշվ., աշխ., էջ 57:

ծում էր Մեծ Բրիտանիան, որի հեռահար ծրագիրն էր Հայկական հարցի շահարկմամբ նվաճել Կիպրոսն ու Եգիպտոսը: Սակայն 1890-ական թթ., երբ Անգլիան Եգիպտոսում արդեն հաստատուն դիրքեր ուներ, իսկ Կիպրոսն իր գերիշխանության տակ էր, նրա եռանդն այդ հարցում նվազել էր: Օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II-ը սաքսափում էր Հայկական հարցի նշանակությունից մեծ քաղաքականության մեջ և որոշել էր բռնություններով վերջ տալ դրան՝ խնդրահարույց ազգային տարրը վերացնելու ուղին ընտրելով: Այդ որոշման գործնական իրականացումը 1894-1896 թթ. հայերի կոտորածներն էին⁸, որոնց հաջորդեց բարենորոգումներ պահանջող եվրոպական տերությունների միջամտության մեկ այլ ձև՝ այս անգամ 1895 թ. Մալիայան բարենորոգումների ծրագրի տեսքով: Օսմանյան կառավարության համար դա ևս խոչընդոտ չէր կոտորածները շարունակելու համար:

Համաշխարհային հասարակական-քաղաքական միտքը և պարբերական մամուլը անդրադարձել են նշված իրադարձություններին: Դրանից անմասն չի մնացել նաև «Ալ-Մուկատտամը»: Հատկապես արժեքավոր են թերթի այն հրապարակումները, որոնք առնչվում են արևմտահայերի կոտորածներին⁹:

Օսմանյան կառավարության կողմից հայերի նկատմամբ պարբերաբար իրականացվող կոտորածներն ու բռնությունները կրում էին կանխամտածված բնույթ: Այդ առնչությամբ պարբերականը հստակ դրսևորել է իր վերաբերմունքը՝ շեշտելով. «Օսմանյան կառավարությունը մասնակցել է հայերի կոտորածների դավադրությանը՝ հայերի դեմ կատարվող բռնություններին վերջ

⁸ Հայոց պատմություն, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 506-538:

⁹ Ցավոք, մեր ձեռքի տակ չկան պարբերականի 1894-1895 թթ. համարները, որոնցում, վստահաբար, ավելի շատ նյութեր կան: Այդ մասին են փաստում այլ արաբերեն պարբերականների կողմից «Ալ-Մուկատտամին» արված հղումները:

տալու և ջարդերն արգելելու փոխարեն»¹⁰։ Սակայն, հանցագործությունները դատապարտելու փոխարեն, գրել է. «Անկախ այն պարագայից՝ Թուրքիան այդպես է վարվել իր քաղաքական քմահաճույքից, թե թուլությունից դրդված, դա մի պետություն է, որը խոստմնազանց է եվրոպական տերությունների, հատկապես՝ Անգլիայի հանդեպ»¹¹։

Հատկանշական է, որ «Արտաքին իրադարձությունների ամփոփում» խորագրի տակ դեռևս 1889 թ. «Ալ-Մուկատտամը» Վանի շրջակա գյուղերում հայերի նկատմամբ իրականացված բռնությունները համարում է Օսմանյան կայսրության ասիական մասի¹² ողբերգական իրադարձություն։

Հողվածում նկարագրվում է ջարդերի ընթացքը, որոնք ուղեկցվել էին գյուղերի հրկիզմամբ և անմարդկային վայրագություններով. «Այրվել են մի քանի հայկական գյուղեր, պատվազրկվել են հայ աղջիկներ»¹³։ Հաջորդ տողերը հայտնում են քրդերին հայերի դեմ սադրելու և նրանց՝ հայությանը ոչնչացնելու միջոց դարձնելու սուլթանական իշխանության մտահոգման մասին։ Կատարվածի պատճառը, ըստ պարբերականի, քրդերի թշնամական վերաբերմունքն էր հայերի նկատմամբ։ Հաջորդիվ պարբերականը տեղեկացնում է, որ դրանից հետո հայերի շրջանում հուզումներ

¹⁰ «Ալ-Մուկատտամ», 22 հոկտեմբերի 1896։

¹¹ Նույն տեղում։

¹² Նկատենք, որ հողվածում նշված տարածքներն այդպես են կոչվում, չնայած համիդյան ժամանակաշրջանում համաթուրքականության քարոզչության ազդեցությամբ ձևավորվող պետականության գաղափարախոսության հիմքերից մեկի իսամաձայն, արդեն շրջանառվում էր «Արևելյան Անատոլիա» կեղծ եզրույթը։ Ընդունված «Փոքր Ասիա» եզրույթին համապատասխանող «Անատոլիա» անվանումը նենգափոխելով՝ սկսում են սխալ կերպով կիրառել նաև Արևմտյան Հայաստանի տարածքի առումով։ Այդպիսով կեղծված «Արևելյան Անատոլիան» ներկայացվում է որպես բացառապես թուրքերին պատկանող թուրքական «հայրենիքի» մի տարածաշրջան։ Մի շարք արաբերեն ազդեցիկ պարբերականներ, գիտակցաբար կամ անգիտատալով, կրկնում էին շրջանառվող թուրքական կեղծարարությունը։

¹³ «Ալ-Մուկատտամ», 15 մայիսի 1889։

են առաջացել, նրանք բողոք են ներկայացրել Բ. Դոանը՝ հայտնելով, որ կմիանան Ռուսաստանին, եթե չապահովվի իրենց պաշտպանությունը քրդերից: Արդյունքում կառավարությունը ձեռք բերեց և արդարացիորեն բողոքող հայերին և ոստիկաններ ուղարկել՝ խուզարկելու Վանի շրջակայքում գտնվող բնակավայրերն ու եկեղեցիները: Լուրեր են պատվել նաև այն մասին, որ քրդերը իբրև թե հատուցել են իրենց կողմից հայերին պատճառված նյութական վնասը¹⁴:

1896 թ. ընթացքում մեծ տերությունները դադարել էին բողոքի հայտադրեր ներկայացնել Բ. Դոանը: Այնուամենայնիվ, օսմանյան կառավարությունը ջարդերը վերսկսելու համար շուտով նոր առիթ է գտնում: Այդ ժամանակ Հ. Յ. Դաշնակցությունը որդեգրել էր «գուգակցված հարվածների» մարտավարությունը՝ Արևմտյան Հայաստանում կամ Կ. Պոլսում միաժամանակ կամ իրար հաջորդող խոշոր գործողությունների գործելաոճը: ՀՀԴ գործիչների կարծիքով դա հանգեցնելու էր արտաքին միջամտություն ապահովելուն: Այդ ծրագրի գործնական իրագործման փուլը դարձավ 1896 թ. օգոստոսի 14 (26)-ի առավոտյան Բաբեկեն Սյունիի գլխավորությամբ 26 հոգուց բաղկացած հայ զինյալների մի խմբի կողմից (հիմնականում ՀՀԴ անդամներ) Օսմանյան բանկի գրավումը: Նրանք սպառնում էին պայթեցնել շենքը, եթե սուլթանը միջոցներ չձեռնարկեր Արևմտյան Հայաստանում կոտորածները դադարեցնելու և բարենորոգումներ իրագործելու ուղղությամբ:

Այս իրադարձությունը, ինչպես և դրան հաջորդած ՀՀԴ կողմից տերությունների դեսպանություններին և օսմանյան իշխանություններին ներկայացրած շրջաբերականը բազմակողմ և շարունակական արծարծման առարկա է դարձել «Ալ-Մուկատտամի» էջերում: Տարբեր հրապարակումներում ամենայն մանրամաս-

¹⁴ Նույն տեղում:

նությամբ լուսաբանվել է բանկի գրավումը: Անդրադառնալով ՀՅԴ գործելաոճին՝ պարբերականը հայտնում է, որ ՀՅԴ-ն Կ. Պոլսում ունի տարբեր խմբեր, որոնց անդամները չեն ճանաչում մյուս խմբերի անդամներին, և ոչ էլ կենտրոնական խմբավորման անդամներին, որի կողմից ստանում են հիմնական հրահանգները¹⁵:

Օսմանյան բանկի վրա կատարված հարձակումը դարձավ այն առիթը, որն օգտագործվեց կոտորածների ու թալանի մի նոր ալիքի սանձազերծման համար:

«Մեղավորների դատավարությունը Կոստանդնուպոլսում» խորագրի տակ թերթում գետեղված է տեղեկություն թուրքական բոլոր դիվանագիտական կառույցներին հասցեագրված օսմանյան կառավարության որոշման մասին, ըստ որի, Կ. Պոլսի դեպքերին առնչություն ունեցող բոլոր ապստամբները, առանց բացառության, պետք է կրեն իրենց պատիժը: Հրապարակումն ավարտվում է մի փաստի շեշտադրմամբ. «Պատժվելու են նաև այն ոստիկանները, որոնք անփութություն են դրսևորել իրենց աշխատանքում և ոչինչ չեն կատարել դեպքերը կանխելու նպատակով»¹⁶:

Կարելի է ենթադրել, որ այս տողերը գալիս են ևս մեկ անգամ հաստատելու այն, որ թուրքական իշխանությունները, նախապես տեղեկացված լինելով կազմակերպվող հարձակման մասին, չեն միջամտել՝ հակահայկական տրամադրությունները սրելու նպատակով¹⁷: Ոստիկանների մի մասը, նախապես այդպիսի հրահանգ

¹⁵ Նույն տեղում, 2 հոկտեմբերի 1896:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Ֆրանսիացի պատմաբան Ա. Վանդալի կարծիքով 1896 թ. առթանք, Օսմանյան բանկի վրա մի խումբ դաշնակցականների կատարելիք հարձակման մասին տեղեկացված լինելով հանդերձ, սպասել է, որպեսզի այդ օգտագործի որպես պատրվակ՝ նոր ջարդեր կազմակերպելու համար: Հեղինակը սուլթանի այդ քայլը գնահատել է որպես միապետի՝ իր իսկ հպատակների մի սովոր գանգվածի դեմ նյութած դավադրություն (տե՛ս Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ), Երևան, 2011, էջ 68):

ստացած լինելով, չի խոչընդոտել հայերին, իսկ իշխանությունն ուղղակիորեն հրամայել էր չմիջամտել՝ այնուհետև քաղության նոխագ դարձնելով իր իսկ հանցակիցներին:

Մեծ տերությունների դեսպանները Կ. Պոլսում իրականացված ջարդերից հետո, հակառակ ընդունված սովորության և ի նշան բողոքի, հրաժարվել էին զարդարել իրենց դեսպանատները «իյդ ալ ջուլուսի» (զահակալման տոնի) կապակցությամբ¹⁸: «Ալ-Մուկատտամը» նշված փաստի մասին դրական շեշտադրությամբ է հիշատակում՝ հավելելով, որ դրանից զայրացած սուլթանը Թաուֆիկ փաշայի միջոցով դեսպաններին զգուշացրել է այդ մերժման հնարավոր հետևանքների մասին: Դեսպանների պատասխանը եղել է այն, որ վերջին սարսափելի ջարդերից հետո իրենց այլ բան չի մնում, քան ցավակցություն հայտնել, և իրենք չեն զարդարի դեսպանատներն ուրախության և տոնի խորհրդանիշներով¹⁹:

Ակնհայտորեն, Հայկական հարցի միջազգայնացումից ի վեր տերությունների ընտրած՝ մշտապես ցավակցողի քաղաքական կեցվածքն այս դեպքում ևս փոփոխության չէր ենթարկվել:

«Լուրեր Եվրոպայի փոստից» հոդվածում Պոլսի դեսպերի առնչությամբ պարբերականը նշում է, որ օսմանյան կառավարությունը հայերի մուտքը վիլայեթներից մայրաքաղաք արգելելու որոշում է կայացրել: Նաև համապատասխան միջոցներ են ձեռնարկվել՝ արգելելու դաշնակցական հայերի մուտքը կայսրություն տարածք²⁰:

¹⁸ Այս իրադարձությունը Ա. Կիրակոսյանն իր «Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը» (Երևան, 1999, էջ 357) աշխատության մեջ հիշատակում է որպես Աբդուլ Համիդի ծննդյան օր, սակայն «Ալ-Մուկատտամը» և մեր ձեռքի տակ եղած մյուս արաբերեն պարբերականներն այն միաձայն անվանում են «զահակալության տոն» (عيد الجلس):

¹⁹ «Ալ-Մուկատտամ», 11 սեպտեմբերի 1896:

²⁰ Նույն տեղում, 18 սեպտեմբերի 1896:

Հետաքրքիր է, որ պարբերականն անդրադարձել է Հռոմի պապին ուղղված՝ հայ կաթոլիկների պատրիարք Ագաթյանի զեկուցագրին՝ այն մասին, որ կաթոլիկ հայերն անցյալում չեն մասնակցել ապստամբությանը և մտադիր չեն ապստամբել նաև ապագայում, սակայն, չնայած դրան, նրանց ևս թալանել և կոտորել են՝ միայն իրենց հայ լինելու պատճառով: Այդ զեկուցումը կարդալուց հետո Պապը կաթոլիկ հայերին օգնություն է ուղարկել, իսկ Ագաթյանին հայտնել է իր գոհունակությունը և հորդորել մշտապես հետևել ընտրած «ճիշտ ուղուն»²¹:

«Տերությունները և Կ. Պոլսի իրադարձությունները» վերնագրի տակ պարբերականն իրավացիորեն տարակուսանք է հայտնում այն առնչությամբ, որ տերությունները չխոչընդոտեցին հայերի կոտորածների իրականացմանը: Սակայն, լինելով բրիտանական քաղաքականության ջատագով, դա պատճառաբանում է հետևյալով. եվրոպական երկրները դեմ են Մեծ Բրիտանիայի՝ Արևելքի քրիստոնյաներին աջակցելուն, ինչը, բխելով բրիտանական շահերից, խոչընդոտ է իրենց քաղաքական հաջողություններին: Միաժամանակ զարմանքով է նշում, որ Եվրոպան թույլ է տալիս Բրիտանիային իր ձեռքում պահել կովանը և բոլոր հնարավոր էժանագին և թանկ ջանքերը գործադրել իր նպատակին հասնելու համար, ինչպես կատարել էր Կրետեի դեպքում²²:

Շատ ավելի արժեքավոր են Ֆրանսիայի սենատում Հայկական հարցի քննարկման առնչությամբ պարբերականի հրապարակած նյութերը: 1896 թ. նոյեմբերի 3-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում առաջին անգամ քննարկվեց Հայկական հարցը: Պատգամավորներ Ժան Ժորեսը, Դենի Կոշենը և Ալբեր դը Մուներ խստագույնս դատապարտեցին ֆրանսիական կառավարության և, մասնավորապես, արտաքին գործերի նախարար Գաբրիել Հանոտոյի թուրքա-

²¹ Նույն տեղում, 29 սեպտեմբերի 1896:

²² Նույն տեղում, 24 սեպտեմբերի 1896:

մետ քաղաքականությունը, որի հետևանքով նախարարության արխիվներում պահվող Հայկական հարցին և 1890-ական թթ. կոտորածներին առնչվող փաստաթղթերը մինչ այդ մնացել էին փակի տակ, ու պահանջեցին դրանք լույս ընծայել²³:

«Ալ-Մուկատտամը» կարևորում է Ժան Ժորեսի հայտնի ելույթը Ֆրանսիայի սենատում, որտեղ նա հաստատել է, որ Հայկական հարցը վաղուց դարձել է Եվրոպայի մտահոգության առարկան: Նրա կարծիքով, չնայած սուլթանը նախ Սան-Ստեֆանոյի պայմանագրով խոստացավ հոգալ քրդերից հայերի պաշտպանության մասին, հետո նույնը հաստատվեց Բեռլինի պայմանագրում, այնուամենայնիվ, կայսրության հայ հպատակների վիճակը վատից դարձել է վատթարագույն:

Ըստ պատգամավորի՝ այդ հինավուրց ազգի տառապանքների ավարտը դեռ չի նշմարվում: Նա Սենատին ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է Ուտիայի (Ուրֆա) հայերի կոտորածը՝ այն բնորոշելով որպես ամենասարսափելին: Նա շեշտում է, որ եկեղեցում ապաստանել էին Ուրֆայի բնակիչներից հիմնականում կանայք, երեխաներն ու ծերերը: Օսմանյան զինվորները նրանց գտել և բոլոր դուրս եկողներին սպանել են, այնուհետև փակել եկեղեցու դռները և հրդեհել այն՝ ողջակիզելով ներսում գտնվողներին: Երկու ժամ անընդմեջ լսվող օգնության կանչող աղաղակները, ի վերջո, լռել են, եկեղեցին ու այնտեղ ապաստան գտածները մոխրի են վերածվել:

Ելույթ ունեցողն ավելացրել է, որ դա տեղի է ունեցել սուլթանի մասնակցությամբ, իսկ նրա խոսքը շարունակել է մեկ ուրիշ՝ սոցիալիստ պատգամավոր՝ ասելով. «...նաև՝ Եվրոպայի մասնակցությամբ...»²⁴: Այդ հայտարարությունը Սենատում մեծ վիճաբանության առիթ է դարձել: Պարբերականի ներկայացմամբ՝

²³ Մանրամասն տե՛ս Պողոսյան Վ., նշվ. աշխ., էջ 27–44:

²⁴ Նույն տեղում, 14 նոյեմբերի 1896:

պատգամավորները հաստատել են, որ ֆրանսիացի ժողովուրդը խորապես ցավում է այդ կոտորածների համար և տարակուսանք են հայտնել այդ խնդրում Եվրոպայի լուռ կեցվածքի կապակցությամբ, այն դեպքում, երբ նա հանդիսանում է հայերի խաղաղության երաշխավորը՝ համաձայն Բեռլինի պայմանագրի:

Քննարկման ավարտին հետաքրքիր զուգահեռ է անցկացվում Եգիպտոսում և Արևմտյան Հայաստանում հաստատված իրավիճակի վերաբերյալ: Հնչած կարծիքները վերլուծելով՝ պարբերականը մասնավորաբար կարևորում է արված հետևյալ դիտողությունը. «հարկավոր է զգուշանալ Անգլիայից, քանի որ այն Հայաստանն էլ կարող է գրավել, ինչպես դա կատարեց Եգիպտոսի դեպքում»²⁵:

«Ալ-Մուկատտամը» պարզորոշ ուրվագծում է ֆրանսիական պաշտոնական քաղաքականությունը և հասարակական մտքի դիրքորոշումը Հայկական խնդրում՝ մինչ Սենատում խնդրին անդրադառնալը: Ուշագրավ է հատկապես այն, որ պարբերականը «Հայկական հարցը» հռչակածաշարի մի հատվածում, վերստին կարևորելով խնդրի քննարկման իրողությունը, գերադասում է, սակայն, դրա ավելի վաղ կատարումը, ինչին, սակայն, խոչընդոտել են ֆրանսիական կառավարության ռազմավարությունը Օսմանյան Թուրքիայի հետ և ֆրանսիական մամուլի հետ սուլթանի ունեցած հաստատուն կապերը²⁶:

Հարկ է հիշատակել, որ հայերի կոտորածների լուսաբանման հարցում ֆրանսիական մամուլի դիրքորոշումը հանգում էր կատարյալ անտարբերության, և որը, ինչպես ֆրանսիացի հրապարակախոս Վիկտոր Բերարն է բնութագրում, «լռության դավադրություն» կարելի էր համարել, վճարվում էր թուրքական դեսպա-

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

նության կողմից. ֆրանսիական 17 թերթ ստանում էին դրամական նպաստներ²⁷:

Ասվածն ապացուցելու է գալիս նաև «Ալ-Մուկատտամի» հայտնած այն տեղեկությունը, թե Կ. Պոլսից հրահանգված էր արգելել կայսրության տարածք բերել այն բոլոր ֆրանսիական թերթերը, որոնք լույս էին տեսել նոյեմբերի 4-ին: Դրա նախորդ օրը Ֆրանսիայի սենատը քննարկել էր Հայկական հարցը²⁸:

Օսմանյան իշխանությունների կողմից Ֆրանսիայի հասարակական կարծիքը վերահսկելու իրողությունը կարևորելով՝ պարբերականը գոհունակությամբ արձանագրում է նաև, որ աստիճանաբար ֆրանսիական հանրությունը փոխում է իր նախկին կեցվածքը, ինչին համահունչ է նաև ֆրանսիական մամուլի խոսքը: Սուլթանի գործադրած ջանքերը և օսմանյան ֆինանսական ներդրումներն ապարդյուն են անցել:

Մերկացնելով Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի թուրքամետ քաղաքականությունը՝ «Ալ-Մուկատտամը» փաստում է, որ Ֆրանսիայի սենատի անդամները սկսել են պնդել իրականությունը՝ խոսելով իրենց կուսակցությունների անունից, մինչդեռ արտգործնախարար Գաբրիել Հանոտոն չի կարողանում սուլթանի օգտին որևէ բան ասել՝ նրան արդարացնելու կամ պաշտպանելու համար: Հայկական կոտորածների մասին ճշմարտությունը հաստատելուց բացի, նա այլ տարբերակ չունի: Ապա թերթն ընդգծում է, որ սոցիալիստների առաջնորդը Սենատում ելույթ է ունեցել այդ մասին ու բարձրաձայնել այն ճշմարտությունը, որը մինչ այդ որևէ մեկը չէր համարձակվում ասել. «Հայերի կոտորածների հարցում Ֆրանսիայի կառավարությունն ունի մեղքի իր բաժինը»²⁹:

²⁷ Մանրամասն տե՛ս Պողոսյան Վ., նշվ. աշխ., էջ 61:

²⁸ «Ալ-Մուկատտամ», 16 նոյեմբերի 1896:

²⁹ Նույն տեղում, 20 նոյեմբերի 1896:

«Ալ-Մուկատտամն» անդրադարձել է նաև Հանոտոյին ուղղված Ժորեսի պատասխանին, որտեղ նշված է, որ Ֆրանսիան Արևմտյան Հայաստանում հստակ քաղաքականություն չի վարում, նրա քաղաքականությունը Ռուսաստանի քաղաքականությունն է: Հարկ է շեշտել, որ պարբերականն ուշիուշով հետևում էր Ֆրանսիայի և Ռուսաստանի հարաբերությունների բարելավման ընթացքին և տպագրում էր նրանց փոխհարաբերությունների զարգացմանն առնչվող յուրաքանչյուր շշուկ: Ըստ պարբերականի՝ այդ երերուն քաղաքականությունն էր պատճառը, որ Ֆրանսիան վերածվեց հայերի կոտորածներին ծափահարողներից ու դրանց իրականացումը խրախուսողներից մեկի: Մենատի նախագահի զգուշացմանը, որ ֆրանսիական կառավարության հասցեին նման վիրավորանքներ հնչեցնել չի կարելի, Ժորեսը պատասխանել է, որ ինքը միշտ կարող է հետ վերցնել իր խոսքերը և ջնջել դրանք, սակայն հայկական կոտորածները կմնան պատմության մեջ և նրանց հետքերը երբեք չեն ջնջվի պատմության էջերից³⁰:

Ամբողջացնելով գնահատականը ֆրանսիական Մենատի քննարկումների առնչությամբ՝ պարբերականն ընդգծում է, որ եթե Ֆրանսիան որոշի միջամտել Օսմանյան կայսրության ներքին գործերին, դա որևէ ձևով չի վնասի կայսրության ամբողջականությանը և միջազգային պայմանագրերով հաստատված դրույթներին, քանի որ այն Եվրոպայի հավասարակշռության կարևորագույն պայմաններից մեկն է: Եվրոպական երկրները հավատարիմ են իրենց պարտականություններին և կմտահոգվեն Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի բարենորոգումների իրականացման խնդրով: Հոդվածագիրը նշում է, որ լավ կլիներ, եթե սուլթանն ի վերջո զիտակցեր բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունը՝ անկախ հպատակների դավանանքից: Նրա

³⁰ Նույն տեղում:

բոլոր հպատակների ցավը նույնն է, և Եվրոպան ցույց կտա սուլթանին այն չարիքը, որ բխում է նրա վարած քաղաքականությունից, ցույց կտա այն ճանապարհը, որ թույլ կտա բարելավել ստեղծված իրավիճակը: Նրա բոլոր հպատակներն ունեն անվտանգության, խաղաղության և կարգուկանոնի իրավունք³¹:

Ծանոթանալով «Ալ-Մուկատտամ» պարբերականի հրապարակումներում հայերին առնչվող նյութին՝ հարկ է փաստել, որ, հանդիսանալով Եգիպտոսում բրիտանական շահերի խոսափողը, պարբերականը ժամանակի խնդիրներն արտացոլել է բրիտանական քաղաքական առաջնությունների լույսի ներքո: Այնուհանդերձ, անհրաժեշտ է ընդգծել, որ հայերի մասին «Ալ-Մուկատտամի» էջերում տեղ գտած նյութն անկողմնակալ է, ինչը նշված պատմական ժամանակաշրջանում համահունչ էր բրիտանական ռազմավարությանը:

«Ալ-Մուկատտամի» հրապարակումները բարձրաձայնում են օսմանյան կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում ստեղծված ծանր կացության մասին: Արևմտյան Հայաստանում և կայսրության այլ տարածքներում հետևողականորեն իրականացված հայկական կոտորածները, դրանց հետևանքով իրենց հայրենիքից տեղահանված հայության խնդիրները, միջազգային հանրության կողմից դրանց տրված գնահատականները լայնորեն լուսաբանվել են պարբերականի էջերում՝ այդ մասին իրազեկելով իր ստվարաթիվ ընթերցողներին և համապատասխանաբար ձևավորելով եգիպտական հասարակության մի որոշակի զանգվածի ուրույն վերաբերմունքը:

³¹ Նույն տեղում:

PUBLICATIONS OF THE EGIPTIAN NEWSPAPER
"AL-MUQATTAM" ABOUT ARMENIAN MASSACRES
(1889-1896)

SUMMARY

The persecutions of Armenian population started from 1889 and the Armenian massacres of 1894-1896 were reflected on the pages of the Egyptian daily "Al-Mukattam", which was intended to represent the general interests of Britain in Egypt. It is repeatedly confirmed in the issues of "Al-Mukattam" that the Armenian massacres were organized and carried out by the Ottoman government. The newspaper represents the positions of Great Powers towards the Armenian Question. "Al-Mukattam" is an important source of those times, which reveals the core views of the particular circles of the Egyptian public opinion about the anti-Armenian policy of the Ottoman Empire to exterminate the Armenians in Western Armenia.

نارينا يرانوسيان
معهد التاريخ التابع لأكاديمية العلوم لجمهورية أرمينيا

نشرات الجريدة المصرية "المقطم" عن المذابح الأرمنية (1889-1896)

ملخص

تتطرق المقالة الى انعكاس المذابح الأرمنية لسني 1894-1896 في صفحات الجريدة المصرية "المقطم"، التي كانت تمثل المصالح الانكليزية في مصر. فقد أكدت الجريدة في نشراتها مرارا أن تنظيم وتحقيق المذابح الأرمنية قد تمت من قبل الحكومة العثمانية. كما اشارت الجريدة الى أهمية الدور التي لعبت الدول الكبرى في القضية الأرمنية. إن جريدة المقطم واحدة من أهم المصادر في زمنها التي تعرض الآراء الخاصة لجزء هام من المجتمع المصري.

ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՒՆՆԵՐԸ ԻՐԱՔԻՆ ՄԷՋ XX ԴԱՐՈՒՆ

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը, Իրաքը կը ներկայացնէր Օսմանեան Կայսրութեան հեռաւոր նահանգներէն մէկը: Դաշնակից պետութիւնները 1914 թ. պատերազմ յայտարարեցին Թուրքիոյ դէմ: Այնուհետեւ, հնդկական զօրաբաժին մը մտաւ Իրաք և 1916 թ. կնքուած Սայքս-Փիքոյի համաձայնագիրով՝ Իրաքը բաժին կ'իյնայ Բրիտանացիներուն: 1920 թ. Սեւրի դաշնագիրով անկախութիւն կը ստանայ, և 1921 թ. Էմիր Ֆայսալը, (Շըրիֆ Հուսէյնի որդին) Իրաքի գահին կը բարձրանայ: Այսպիսով, սկիզբ կը դրուի Իրաքի Հաշըմիյա թագաւորութեան, որուն միւս ճիւղը կը թագաւորէ Յորդանանին առ այսօր: 3 Հոկտեմբեր 1932ին բրիտանական պահանջով, Իրաք կ'ընդունուի Ազգերու Դաշնակցութեան մէջ, իբրեւ անկախ պետութիւն:

Օսմանեան կայսրութեան հայակոծման քաղաքականութեան հետեւանքով, Եղեռնէն մագապուրծ եղած, արեւմտահայ ժողովուրդի բեկորները, 1918-ի Օգոստոս ամսուն կը ժամանեն Իրաք՝ համալրելով այդ երկրի մէջ արդէն գոյութիւն ունեցող հայ գաղթօճախի շարքերը, և գտնելով այստեղ հիւրընկալ ժողովուրդ և պետութիւն, կը վերագտնեն իրենց բարոյական կորովն ու ֆիզիքական ուժերը և կը լծուին խաղաղ ու շինարար աշխատանքի:

Ուրեմն՝ Միջին դարերուն, Հայաստանը նուաճող, երբեմնիք արաբ իշխանութիւններու շառաւիղները, քսաներորդ դարու սկիզբին, սայաստան և խաղաղ երկինք պիտի պարգեւէին տառապած, փախստական հայ ժողովուրդին:

Հայրենիքէն դուրս, կտրուած կենսատու մայր հողէն, վտարանդի հայր Իրաքի մէջ և այլուր, հաւաքական կեանքով ապրելով իր իսկ ազգային դիմագիծը պահպանելու համար, կը հիմնէ նախ և առաջ իր եկեղեցին, որ դարերու ընթացքին եղած է միակ կապը, որ կը զօդէ իր բոլոր զաւակները անխտիր, և քրիստոնէական սիրով և ազգային ոգիով կը զօրացնէ զանոնք՝ դիմագրաւելու և հակազդելու օտար միջավայրին մէջ առկայ գայթակղիչ երեւոյթները: Իրաքի և այլ գաղութներու մէջ, եկեղեցիին կից անխուսափելիօրէն վեր կը խոյանան ազգային դպրոցներն ու այլ մշակոյթի օճախները, ուր մեր գեղեցիկ Ռուկեդինիկի բառն ու բանը կը ջամբուի մատաղ սերունդին, և կը կերտուի վաղուան հայը: Այնուհետեւ, կը կազմակերպուին հասարակական միութիւններ, որոնք օտարութեան մէջ աւելի կը խորացնեն ազգային պատկանելութեան գիտակցումը և հաստատ հիմերու վրայ կը դնեն Իրաքի հայ գաղթօճախը:

Այս առնչութեամբ, գաղթականութեան Իրաք ապաստանելէն ետք, պատմական արժէք ներկայացնող վաւերաթուղթ մըն է այն նամակը, որ գրուած է Առաջին Աշխարհամարտի ընթացքին, արաբական երկիրներու թագաւոր և Մէքքէի Շերիֆ ու Էմիր՝ Հուսէյն Բին Ալիի¹ կողմէն, որ ի տես և ի լուր պատերազմի ընթացքին Օսմանեան կառավարութեան հրամանով, բնաջնջման դատապարտուած տեղահանուած հայերու անսահման թշուառութեան, նամակ մը կ'ուղղէ իր որդիներուն և անոնց միջոցաւ բոլոր արաբ ցեղախումբերուն, կը յանձնարարէ իրենց պաշտպանութեան տակ առնել հայերը: Շերիֆ Հուսէյնի գրչին տակ, հայերը կոչուած են «Յակոբեան»։ անկասկած Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին կրօնապէս ենթակայ նկատելով զանոնք²:

¹ Հուսէյն Բին Ալին՝ Իրաքի Ֆէյսալ շրդ և Յորդանանի Հուսէյն թագաւորներու մեծ հայրն էր:

² Melkonian V., An Historical Glimpse of the Armenians in Iraq – From the Earliest Times to the Present Day, The Times Press, Basra, 1957, p. 15.

Ֆայսալ Ա. թագաւորը, Օգոստոս 1, 1921-ին, այցելելով Իրաքահայ թեմին պատկանող Ս. Երրորդութիւն եկեղեցին, խօսքը ուղղելով հայ ժողովուրդին այսպէս կ'արտայայտուի. «...Հայ ազգը առատ արիւն թափած է յանուն իր ազատութեան ու անկախութեան, և հսկայ նուաճումներ կատարած գիտական ու տնտեսական մարզերուն մէջ: Այս երկիրը ապաստան գտած հայ գաղթականներու վերաբերեալ, ձեր ներկայացուցիչի խօսքին առնչութեամբ, սիրով կ'ընդառաջեմ ու կ'արտօնեմ անոնց բնակիլ ուր որ փափաքին այս երկրի հողին վրայ, և վստահ եմ որ ողջ Իրաքը մասնակից է այս զգացումներու և սիրով կ'ընդունի գաղթականներուն, ոչ որպէս գաղթական, այլ որպէս այս երկրի զաւակներ, որոնք կ'աշխատին անոր բարեշինման և յառաջդիմութեան համար: Այդ հիւրը պատուելն ու յարգելը մեր երկրի իւրայատկութիւններէն մին է: Այս պատճառաւ սրտիս խորքէն կ'ըսեմ, որ հայ գաղթականները պիտի գտնեն ամեն աջակցութիւն Իրաքցիներուն կողմէ»³:

Հարկ է նշել, որ Իրաքի Պաքուքա, այնուհետեւ՝ Նահր Օմար վրանաւաններու մէջ պատասպարուած հայ գաղթականութիւնը, առանց յուսահատելու, անվերջ դիմումներ կը յղէր օրուայ պատկան իշխանութիւններուն՝ Հայրենիք վերադառնալու պահանջով: Եւ վերջապէս, 1921 թ. վերջաւորութեան, 8000 երջանիկ գաղթականներ, երեք շոգենաւերով, պարբերաբար ներգաղթեցին Հայաստան: Բրիտանական իշխանութիւններու հովանաւորութեան վերացումով (1921 թ. Յունիսին), 1200 Պարսկահայեր անցան Պարսկաստան, ուրիշ 500 հայեր 1922-ին անցան Ապադան՝ Անգլեւիրանեան նաւթային ընկերութեան մօտ աշխատելու համար: Հազարաւորներ ալ, ցրուեցան Իրաքի զանազան կողմերը՝ Պասրա, Հապպանիա, Քերքուք, Մուսուլ և մանաւանդ Պաղտատ:

³ Իրաքահայ Թեմի Համաժողով Պատմութիւն, Պաղտատ, 2005, էջ 380 (Անտիպ):

Գաղթականության Կոմիտեի նախագահ Լեւոն Շադոյեան⁴, դիմելով կառավարության, կարողացավ Նաիր Օմարի մէջ մնացած գաղթականները, որոնց մեծամասնութիւնը վասպուրականցի երկրագործներ էին, փոխադրել Մուսուլէն 40 մղոն դէպի հիւսիս գտնուող Հաւրէզքի հողագործական շրջանը: Այս շրջանը, զարգանալով, ունեցաւ դպրոց, եկեղեցի և ընթերցասրահ, դառնալով տարածաշրջանի ժողովուրդներու հիացմունքի առարկայ:

Այս վերջնական ցրումով է, որ Իրաքի վերանորոգ գաղութը ստացաւ իր ներկայ դիմագիծը և լծուեցաւ շինարար աշխատանքի, իր ապրուստը հոգալու և հասարակական ու մշակութային գործունեութեամբ սատարելու ազգապահպանման գործին:

Ինչպէս յայտնի է, գաղթաշխարհի ընդհանուր պատմութեան հիմնական առանձնայատկութիւնը՝ երկու հայրենիք ունենալու գաղափարի մարմնաւորումն է: Այո, Իրաքը եղաւ երկրորդ հայրենիք մը, տարահանուած գաղթականութեան համար հարկադրեալ հայրենիք, և Իրաքահայը իր ցեղին յատուկ ջանասիրութեամբ, կարողացաւ զարգանալ, յառաջադիմել և իր առանձնայատուկ տեղը գրաւել միւս բոլոր կրօնական փոքրամասնութեանց մէջ: Համայնքը իր հասարակական կազմակերպութիւններով «...Տիգրիսի ափերուն և արմաւենիներու հովանիին տակ աճեցաւ, խոր արմատներ ձգեց, գելուղէշ քարձրացաւ, եղաւ պտղալից ...»⁵:

Սկզբնական շրջանին կը թուէր թէ լեզուի չիմացութիւնը և նոր միջավայրը, լուրջ խոչընդոտներ պիտի հանդիսանային գաղթական ժողովուրդին ընտելանալու նոր կեանքի պայմաններուն և ներգրաւուելու «նոր հայրենիքի» շէնացման: Սակայն, հազիւ քանի մը տարի անց, կերպարանափոխուած և արդէ՛ն բոլորովին անճանաչելի դար-

⁴ Լեւոն Շադոյեան՝ 1915 թուականին Վասպուրականի՝ Փեսան Դաշուի հերոսամարտի ղեկավարն էր:

⁵ Ասողիկ Եպս. Առաջնորդ Հայոց Իրաքի, Յուշամատեն Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան 50-ամեակ (1926-1976), Պաղատատ, 1976, էջ 12:

ձած էր: Պետութեան կողմէ ամէն դիրքութիւն ընծայուեցաւ որպէսզի գաղթականութիւնը ունենայ իր ազգային դպրոցը, մայր եկեղեցին, միութիւնները և հասարակական կազմակերպութիւնները:

Ազգային դպրոցներ բացուեցան Պաղտատ, Պասրա, Մուսուլ, Քերքուկ և ուր որ հայ համայնք ձեւաւորուած էր: 1917 թուականին արդէ՛ն գոյութիւն ունեցող սղայոց Ս.Թարգմանչաց և աղջկանց Զապէեան դպրոցները, կը միացուին և հաստատութիւնը կը կոչուի «Թարգմանչաց Երկսեռ Վարժարան» և յետագային 1946 թուականին արդէն կը դառնայ լրիւ միջնակարգ դպրոց: Պասրայի մէջ նմանապէս, 1922 թուականին կը հիմնադրուի դպրոց մը եկեղեցւոյ շրջափակին մէջ, որը 1930 թուականին կը միանայ Սարգիլի (նաւահանգիստի շրջան) մէջ հիմնադրուած ազգային դպրոցին, կոչուելով Սարգիլի Հայ Ազգային Վարժարան: Մուսուլի մէջ 1922-ին ազգային բարերարի մը տան մէջ 110 աշակերտներով, դպրոց մը կը բացուի: Այնուհետեւ 1926-1934 թուականներուն դպրոցը կը փոխադրուի եկեղեցւոյ շրջափակէն ներս գտնուած քանի մը սենեակներու մէջ: 1934-ին դպրոցը արդէն կ'ունենայ իր սեփական շէնքը: Քերքուկ և միւս համայնքները նմանապէս կ'ունենան իրենց ազգային դպրոցները:

Սակայն, հետագային՝ 1974 թուականին, կառավարական հրամանագրով, կը փակուին բոլոր ոչ պետական, սեփական և համայնքային դպրոցները և կը նկատուին պետական դպրոցներ: Իրաքի օրուայ Յեղափոխական Ղեկավարութեան խորհուրդի որոշումով իբրեւ դպրոց ջնջուած՝ այլ յարանուանութեանց պատկանող դպրոցներու շարքին, համայնքի սեփականութիւնը եղող Պաղտատի, Պասրայի, Մուսուլի, Քերքուկի և Զախոյի դպրոցներու հողամասերը, ինչպէս նաեւ շէնքերը, արձանագրուեցան որպէս Ներքին Գործոց Նախարարութեան սեփականութիւն, առանց հատուցումի:

Այս դրութիւնը շարունակուեցաւ մինչեւ 1993 թուական: Բազմաթիւ դիմումներու հետեւանքով, ուղղուած երկրի նախագահին, դպրոցներու հողամասերն ու ազգապատկան կալուածները ետ կը

վերադարձուին օրինական տերերուն: Իսկ պետականացուած հայ ազգային դպրոցներու մէջ, կը շարունակուէր սահմանափակ ժամերով հայոց լեզուի և կրօնի դասաւանդումը (շաբաթական երկուական դասաժամ իւրաքանչիւր առարկային): Բնական է, որ դասաւանդման այս խղճուկ ժամերը պիտի չի գոհացնէին Ազգային Կեդրոնական Իշխանութիւնը և Առաջնորդ Սրբազան Հայրը: Ուստի միատեղ, կը ձեռնարկէն կիրակնօրեայ դպրոցներու բացման եկեղեցիներէն ներս, ուր կ'ուսուցանուէր և՛ հայերէն լեզու, և՛ կրօն, և՛ Հայոց պատմութիւն: Ներկայիս, ազգային դպրոցները վերաբացուած են, թէւ աշակերտական շատ նօսրացած շարքերով, այնուամենայնիւ: Իրաքի նոր Սահմանադրութեան (Յօդուած 4, Կետ Ա.) համաձայն և իշխանութիւններու թոյլտուութեամբ հայերէն լեզուի և կրօնագիտութեան դասաւանդութիւնը կը շարունակուի հայկական ազգային դպրոցներէն ներս: Պաղտատի ազգային դպրոցի վերաբացման առթիւ՝ Իրաքի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեան հարցազրոյցի մը ընթացքին այսպէս արտայայտուած է. «Կեանքիս ամենէն երջանիկ պահերէն մէկն էր, երբ հնչեցուցի հայոց դպրոցի վերաբացումը աւետող առաջին զանգը»⁶: Յիշատակութեան արժանի է, որ Սրբազան Հայրն ալ այս դպրոցի յարկին տակ ստացեր է իր նախնական կրթութիւնը:

Ցեղասպանութենէն յետոյ, երկրորդ սերունդը՝ իւրացուցած տեղական լեզուի բոլոր հմտութիւնները և հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացած, արդէն մասնակիցը կը դառնայ և՛ հայկական, և՛ տեղական բոլոր գործունէութեանց ինչպէս տնտեսական մշակութային, մարզական և այլ ոլորտներու մէջ: Այսպէս, 1947 թուականին, առաջին անգամ ըլլալով հայ մը՝ Իսքենդրը Ստեփան Մարգարեան, Իրաքի Խորհրդարանի անդամ կ'ընտրուի իբրեւ Իրաքի բոլոր քրիստոնէաներու ներկայացուցիչ: Մարգարեան ծնած էր Պաղտատ 1903-ին, քաջածանօթ էր արաբերէն լեզուին: Իբրեւ Իրաքեան պատուիրակու-

⁶ «Կանթեզ» Իրաքի Հայոց Առաջնորդարանի, 2008, թիւ 32, էջ 57:

թեան անդամ, 1939 թուականին մասնակցած է Իտալիոյ մէջ գումարու-
ւած առեւտրական միջազգային համաժողովին, իսկ 1946 թուականին
Նիու Էորքի մէջ գումարուած խորհրդածողովին՝ նոյն ոլորտին մէջ:

Յայտնի դէմքեր են նկարիչներ՝ Արտաշ Կաքաւեանը, Երջան Պո-
ղոսեանը, Անդրանիկ Թորգոմեանը, արաբագիր Բանաստեղծ՝ Զ. Գառ-
նիկը, «Իլ-Մըքաիթ Իլ-Իրակիյա»-ի⁷ հեղինակ և Իրաքի մտաւորա-
կանութեան մէջ իր ուրոյն տեղը գրաւած՝ Եակոբ Սըրքիսը, որը Իրա-
քի նորագոյն պատմագրութեան մէջ իր խոշորագոյն ներդրումը ունի:

Իրաքի տարբեր քաղաքներու մէջ գտնուող, պետական կամ
մասնաւոր համալսարաններու մէջ, հայ ուսանողութիւնը ունեցած է
և ունի իր ուրոյն կազմակերպութիւնները, որոնց անդամները իրենց
մասնագիտութիւններուն տիրապետելուն զուգահեռ, կը ծաւալեն
մշակութային գործունէութիւն՝ Հայոց պատմութիւնը և մշակոյթը Բա-
ւարար չափով ծանօթացնելու հայ և օտար համալսարանականնե-
րուն: Կը հրաւիրուին տարբեր մասնագիտութիւններ ունեցող հան-
րայայտ դէմքեր, դասախօսելու հայ ակումբներէն ներս: Յայտնի
քիւրտ պատմաբան Քամալ Մուրիքը Ահմէդը, դասախօսութեան մը
ընթացքին, Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան սրահէն ներս,

⁷ يعقوب بن نعيم بن اكوب جان بن مركيس - كتب وبحث ومؤرخ كبير كتابه "المباحث العراقية" بثلاثة اجزاء والذي
ضم مجموعة من مقالاته التي اراخ فيها للحياة العامة في العراق وخاصة في عصور العباسيين والفراتيين المظلمة
والشيعيين- الجزء الاول طبع سنة 1948 - الجزء الثاني سنة 1955 والجزء الثالث سنة 1984

(Եաքուբ իբն Նաւում իբն Ագոբ Զան իբն Մարգիս – գրող, հետազոտող: Նրա աշխատու-
թիւնը՝ «Էլ-Մըքաիթ Էլ-Իրակիյա» կը պարունակէ իր յօդուածները, որ կ'ընդգրկէ Իրա-
քի հասարակական կեանքը Աբբասեաններու, խաւար և Օսմանեան ժամանակա-
շրջաններուն: Աշխատութիւնը կը բաղկանայ երեք հատորէ: Առաջինը հրատարակուած
է 1948 թ., երկրորդը հատորը՝ 1955-ին և երրորդը՝ 1984-ին: Շնամ է Պաղտատ 1875-ին,
մահացած 23 Դեկտեմբերի 1959-ին: Ժամանակակիցներու վկայութեամբ իր սեփական
գրադարանը կը համարուէր ամենահարուստ և ամենաբովանդակալիցը Մերձատր
Արեւելքի մէջ: Իր մասնակցութիւնը բերած է տեղւոյն հասարակական կեանքին: Այս-
պէս՝ Իրաքի Կարմիր Մահիկ կազմակերպութեան և «Գրիչ» ակումբի հիմնադիրներէն
է՝ օժանդակ անդամ Իրաքի Գիտական Կաճառի, 1932-ին՝ Պաղտատ քաղաքի ճանա-
պարհներն անուանող յանձնախումբի անդամ եւ այլն):

հրապարակաւ ներողութիւն խնդրեց հայ ժողովուրդէն, քիւրտերու ձեռամբ գործադրուած ջարդերուն և տեղահանութեանց համար⁸:

Իրաքի Հայ գաղթավայրին մէջ գտնուած են այնպիսի անհատներ, որոնք իրենց ծաւալած իւրայատուկ գործունէութեամբ, նպաստած են երկու ժողովուրդներու մերձեցման և փոխհասկացողութեան իրենց դրոշմը դնելով Իրաքահայութեան և արաբ ազնիւ ժողովուրդի փոխ-յարաբերութեանց վրայ: Որքան տեղին և ճիշդ կը բնութագրէ Պարոն Վլադիմիր Բարխուդարեանը, երբ կը գրէ. «Հայկական գաղթավայրերի ընդհանուր բնութագիրը ներկայացնելիս երբ ասվում է, որ նրանց պատմությունը նաև աշխարհի տարբեր ժողովուրդների հետ հայ ժողովրդի պատմական կապերի պատմությունն է, սոսկ գեղեցիկ բանաձևում չէ: Այն բովանդակում է նրանց անցած երկարատև ճանապարհի փորձի ընդհանրացումը: Աշխարհի շատ ժողովուրդներ իրենց երկրներում հանգրվան գտած հայ զանգվածների միջոցով են ծանոթացել, գաղափար կազմել հայերի ու Հայաստանի մասին»⁹: Այս կապակցութեամբ Իրաքահայութեան կեանքին մէջ իր աշանձնայատուկ տեղը կը գրաւէ Տոքտ. Գրիգոր Ասթարճեան՝ իր ծաւալած համամարդկային, մշակութային և մասնագիտական գործունէութեամբ: Ծնած Մարաշի մէջ, ուսած Դամասկոսի և Պոլսոյ համալսարաններու բժշկական ճիւղին մէջ, 1912 թուականին մասնակցած է Պալքանեան պատերազմին՝ իբր բժիշկ սպայ, և յաջորդ տարին գործուղուած է Մուսուլ, ուր տեղւոյն կուսակալի անձնական բժիշկ ըլլալու հանգամանքը, զինք կը փրկէ տեղահանութենէն: Այնտեղ տեսնելով տարի կը ծառայէ Մուսուլի հայ և տեղացի ժողովուրդին իբրեւ

⁸ Քիւրտիստանը Ա. Պատերազմի ընթացքին: Տոք գլուխը կը նկարագրէ քիւրտերու մասնակցութիւնը հայերու կոտորածին և տեղահանութեան: Առաջին անգամ լոյս տեսած է 1975-ին քիւրտերէն լեզուով, թարգմանուած է արաբերէնի և հրատարակուած 1977-ին: Թարգմանուած է նաեւ անգլերէնի: – كرسئان في سنوات الحرب العالمية الاولى (الفصل الخامس) (الاكراد والدم الارمني المراق)

⁹ Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն, Երևան, 2010, էջ 163:

հմուտ բժիշկ: Մերոս կապեր հաստատած է արաբ մտաւորական շրջանակներու հետ: Հեղինակ է բազմաթիւ հատորներու: Իր հիմնական մտահոգութիւնը եղած է գաղթական հայը ծանօթացնել արաբներին՝ որպէս բարձր մշակոյթի ու փառապանծ անցեալի տէր ժողովուրդ մը: 1970 թուականին լոյս կը տեսնէ իր կոթողային գործը՝ «Պատմութիւն Արաբ. Գրականութեան և Մշակոյթի» հայերէն լեզուով, իսկ անելի առաջ 1951-ին, արաբերէն լեզուով գրած է «Հայոց Պատմութիւն» եւ «Հայոց Մշակութային և Գրական Պատմութիւն»ը 1954 թուականին: Նշան Խոշաֆեան՝ Ասթարճեանի գրական գործունեութիւնը այսպէս կը բնութագրէ. «.....ճանչնալ ու յարգել ա՛յն ժողովուրդը, որ իր գրկին մէջ ընդունեցաւ բազմահազար հայ տարագիրներ: Միեւլ արաբական լեզուն, ու զայն գործածել որպէս բարեկամութեան ու սրտակցութեան անքակտելի կապ մը»¹⁰:

1920 թուականին՝ Իրաքի անկախացումէն յետոյ, թրքո-իրաքեան սահմանային զիծը տակաւին մնացած էր առկախ՝ Սուսուլ նահանգին Թուրքիոյ, թէ Իրաքի սահմաններուն մէջ մնալու կամ չմնալու վէճին առթիւ: Ազգերու Լիկան այդ հարցին լուծման համար հանրաքուէ մը իրականացնելու համար, յանձնախումբ մը դրկած էր Սուսուլ: Իրաքի նորանկախ կառավարութիւնն ալ լծուած էր գործի՝ նահանգի բոլոր ժողովուրդներուն քուէն շահելու նպատակով: Այս գործին մեծապէս կ'օժանդակէ հայ ժողովուրդը և մանաւանդ Ասթարճեանը, որը տարիներու ընթացքին յայտնի մարդասէր բժիշկ ըլլալով և իր ունեցած ջերմ յարաբերութիւններու շնորհիւ արաբ, քիլոանի և, մանաւանդ, քիւրտ աշիրէրներու ղեկավարներու հետ, հանրաքուէն կ'անցնէի ի շահ Իրաքին¹¹:

Հաւատարիմ իրեն ապաստան տոռող երկրին և պետականութեան բոլոր օրէնքներուն, Իրաքահայը երկրի վերելքին նպաստող

¹⁰ «Սփիւռք» շաբաթաթերթ, Պէյրութ, 23.08.1970, էջ 3:

¹¹ Ասթարճեան Գր., Յետադարձ ակնարկ կեանքի մը պայքարի իննսուն տարիներու վրայ, Պէյրութ, 1975, էջ 45:

շինարար գործունեության գուգահեռ, եղած է նաեւ օրինակելի և քաջարի զինուոր: Երկրին վտանգ սպառնացող պահին, մասնակցած է անոր պաշտպանության և պարզեւատրուած պատերազմի հերոսի, ինչպէս նաեւ «նախագահի ընկեր» շքանշաններով: 1980-1988 թուականներուն Իրան-Իրաք պատերազմին, Իրաքահայութիւնը ունեցաւ 117 զոհ, որոնց անունները գետեղուած են Պաղտատի Ս. Գրիգոր առաջնորդանիստ եկեղեցոյ բակին մէջ կանգնեցուած խաչքար-յուշակոթողի երկու կողմերու պատերուն վրայ:

Այս ջերմ, բարեկամական հայ-արաբական յարաբերութիւնները, իշխանութիւններու, ինչպէս նաեւ տեղացի ժողովուրդին հետ, կը շարունակուին առ այսօր: Արժէ յիշել այստեղ, որ չի նայած երկրին մէջ տիրող վտանգալից և անապահով պայմաններուն, հայ զաւորը թէւ խիստ պակասած թուաքանակով, տակաւին կը պահէ իր կենսունակութիւնը ոչ միայն համայնքային գործունեութեամբ, այլեւ իր ներդրումը կը բերէ երկրի բարեշինման և քաղաքացիական գործունեության: Այսպէս, 2013 թուականին Իրաքի Քիւրտիստանի Խորհրդարանի անդամ ընտրուած է հայ մը՝ Երուանդ Նիսան Ամինեան անունով, իսկ Պասրա քաղաքին մէջ ապրող բոլոր քրիստոնէաներու կողմէն, աւագանիի անդամ ընտրուած է հայորդի՝ Նովաք Արամ Պետրոսեանը, որը կը վայելէ արաբ, իսլամ և քրիստոնէայ ժողովուրդներու սէրն ու յարգանքը:

2003 թուականը բեկումնային տարի եղաւ Իրաքի հողին վրայ ապրող բոլոր ժողովուրդներուն կեանքին մէջ: Բացառութիւն չէր նաեւ հայ համայնքը: Համայնքի զաւակներէն զոհուեցան 45 հայորդիներ և առեւանգուեցան 32 ուրիշներ, որոնց երկուքի ճակատագիրը ցարդ կը մնայ անյայտ: Մեծապէս տուժեցին երկրին մէջ գործող բոլոր ազգային կազմակերպութիւնները: Արտագաղթը ահաւոր թիւերու հասաւ: Պատերազմին յաջորդող առաջին տարիներուն անապահովութիւնը, ականապատ մեքենաները, առեւանգումները, ահաբեկչական անյայտ խմբաւորումներու կողմէ, արհեստական թանկացումները, պատճառեցին հասարակական գործունեության ժամա-

նակաւոր լճացման: Առ այդ, ծայր առաւ երբեմնի հայաշատ քաղաքներէն, ժողովուրդի տեղաշարժը դէպի համեմատաբար աւելի ապահով վայրեր՝ իմա, Իրաքի հիւսիսային կողմը գտնուող ինքնավար Քիւրտիստանի սահմաններուն մէջ: Այստեղ, նոր համայնքներ ստեղծուեցան կամ հիները վերակազմուեցան, կառուցուեցան նոր եկեղեցիներ և դպրոցներ: Սակայն, այստեղ ալ քիւրտերէնի չիմացութեան պատճառով, գործագուրկներու պակաս չի նկատուիր: Ամենէն ահաւորը հոգեորսութիւնն է, որուն տուած վնասը անջնջելի է և անդառնալի, որուն զոհ կ'երթան գլխաւորաբար՝ նիւթապէս տուժած ընտանիքներ: Արդէն քրիստոնէութիւնը, ոչ միայն Իրաքի, այլեւ Միջին Արեւելքի մէջ ընդհանրապէս, վտանգուած է և կը գտնուի շատ լուրջ մարտահրաւերներու առջեւ: Հարկ է նշել սակայն, որ հակառակ տիրող այս անառողջ քաղաքական պայմաններուն, պետութեան և տեղացի ժողովուրդին համակրանքը դէպի հայ ժողովուրդը կը մնայ անփոփոխ:

Այնուամենայնիւ, իրաքահայ համայնքը թէեւ խիստ նօսրացած (երբեմնի 24-25 հազարէն այժմ կը հաշուէ հազիւ 10-12 հազար), կը շարունակէ իր ազգային գործունէութիւնը: Կը նշուին բոլոր ազգային կրօնական տօները, եկեղեցիներու զանգակները կը շարունակեն դողանջել և աղօթքի կանչել հաւատացեալ ժողովուրդի զաւակները: Ակումբներէն ներս տեղի կ'ունենան տարաբնոյթ միջոցառումներ, օրինակի համար՝ զրական-գեղարուեստական երեկոներ՝ նուիրուած Հայաստանի Հանրապետութեան անկախութեան, Վանի և Մուսայ Լերան հերոսամարտերու ոգեկոչում, Ապրիլ 24, Մայիս 28, եռօրեայ շրջանային մարզահանդէս եւ այլն:

Վերջապէս, յուսով ենք որ մօտիկ ապագային, խելամտութիւնը պիտի յաղթէ միջնադարեան կրօնական մոլեռանդութեան և Իրաքի պետական այրերը, ինքնամաքրմամբ, առողջ ազգային մտածելակերպով, պիտի կարողանան վերատիրանալ երկրի անսպառ կարողութիւններուն, և արժանի ժառանգորդները դառնան իրենց ազգի անցեալի փառքը կերտող՝ արուեստի և մշակոյթի տիտաններուն:

ARMENIAN-ARAB RELATIONS IN IRAQ IN THE XX CENTURY

SUMMARY

Armenian-Arab relations are very old and are rooted deep into ancient times....Many Armenians in different times visited, settled down and considered the Arab countries as their second home.

However, during and after the First World War, Armenians came to these countries not as visitors, but as refugees, who were mercilessly driven out of their fatherland - namely various parts of Western Armenia and Cilicia because of the Armenian Genocide committed by Ottoman and Itihadist turks. They were welcomed in the Arab countries, including Mesopotamia (modern Iraq), and found there understanding, caring people and officials alike..

After a short period of time, the Armenian refugee settled down, integrated into the Iraqi society participating in the making of the new independent Iraqi Kingdom. They did everything in their power helping to develop and prosper this newly established country. The recent tragic events which happened and still are happening in Iraq, affected all the people living there, including the Armenian community.

Nevertheless, we are confident that the Iraqi people will once again come out of this ordeal, stronger and more determined to overcome all the difficulties and recapture the control over the endless natural resources of their country....

العلاقات الارمنية العربية في العراق في القرن العشرين

ملخص

ان العلاقات الأرمنية العربية عميقة جداً تمتد جذورها الى العهود التاريخية القديمة ، وان صلات الصداقة بين الشعبين وطيدة فقد استقرّ كثير من الارمن عبر الازمان في البلدان العربية واتخذوها كوطن ثان لهم:

فبعدما حطت الحرب العالمية الاولى اوزارها، اتوا اليها هذه المرة هرباً من المجازر الجماعية التي تعرضوا لها على يد الاتراك العثمانيين والاتحاديين، فاحتضنتهم الدول العربية ومنها بلد الحضارات - بلد ما بين النهرين - العراق حالياً، وبعد مرور وقت قصير جداً اصبحوا جزءاً لا يتجزأ من نسيج الشعب العراقي:

وقد شاركوا الارمن اخوانهم العرب العراقيين في كافة الميادين لبناء الدولة العراقية المستقلة حديثاً والتي تكونت سنة 1921 بتتويج الملك فيصل الاول ملكاً على العراق. وبذلوا ما بوسعهم في سبيل تقدّمها وازدهارها، فاشتهر منهم عدّة اطباء وصيادلة ومهندسين ومحامين ومدراء عامين وغيرهم وكانوا موضع ثقة الحكومات المتتالية وكافة طبقات الشعب العراقي:

ان الاحداث الاخيرة التي مرت ولا زالت تمر على العراق اثرت بشكل كبير على جميع فئات الشعب العراقي ومنهم الجالية الأرمنية... ولكن نحن على ثقة تامة بان العراق سيفيق من هذه المحنة اكثر قوة ، وبسواعد ابناءه سوف يستطيع التغلب على المصاعب ويستعيد سيطرته على جميع موارده الطبيعية ويرفع علم العراق عالياً شامخاً كنخيلها وليكونوا الخلف الصالح لاسلافهم العظماء.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

Մեծ Եղեռնից մազապուրծ գաղթական հայությունը 1920-1930-ական թթ. ջանք ու եռանդ չէր խնայում հայկական համայնքներում կրթամշակութային կյանքի կազմակերպման և հայապահպանության առաքելությունն իրագործելու համար: Այս գործընթացն առավել ակնառու էր Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում: Հայաշատ բնակավայրերում գործում էին եկեղեցիներ, դպրոցներ, հրատարակվում էին թերթեր: Կրթամշակութային կյանքի զարգացման գործն ամբողջանում էր նաև թատերական կյանքի գոյությամբ:

Գաղթական հայերը, իբրև նախնյաց ժառանգորդ, հայոց մշակութային ավանդույթները բերեցին այն երկրներ, որտեղ ապաստան գտան¹: Բացառություն չէին կազմում Սիրիան և Լիբանանը: Նորահաստատ գաղթականությանը հաջողվեց ոչ միայն պահպանել, այլև վերոհիշյալ ավանդույթների շնորհիվ զարգացնել հիշյալ երկրների կրթամշակութային կյանքը:

1920-1930-ական թթ. Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում թատերական կյանքի առանձնահատկություններից էր մասնագիտացված թատրոնի բացակայությունը: Թատրոնն առկա չէր որպես մշակութային-հասարակական կառույց²: Չէին գործում

¹ Тер-Мкртчян Л., Армяне в странах Арабского Востока на современном этапе, Москва, 1965, стр. 14.

² Ասատրյան Ա., Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Լիբանանահայ թատրոն, Երևան, 2011, էջ 22, Լեիեճեան Կ., 90 ամեակ Հալէպի «Անդրանիկ» թատերախումբի, Հալէպ, 2010, էջ 8, Հայ սփյուռք հանրագիտարան,

հայկական թատերասրահներ, դերասանների ու բեմադրիչների մասնագիտացման կենտրոններ: 1920-ական թթ. Բեյրութում հայտնի էին «Cristal» (500 տեղ), «Empire» (700 տեղ), «Grand Theatre» (մոտ 2000 տեղ) թատերասրահները, որոնք վարձակալվում էին հայերի կողմից³: Թատերական ներկայացումները շատ հաճախ ցուցադրվում էին վրաններում, թիթեղաշեն ու փայտաշեն կացարաններում, նույնիսկ՝ բացօթյա⁴: Առանձին թատերախմբեր կային նաև որբանոցներում: Անթիլիասի որբանոցում գործող թատերախումբը ղեկավարում էին չափահաս որբեր Հ. Յապուջյանը և իր ընկեր Արամը: Որբերը մասնակցում էին թատերախմբի գործունեությանը: Այս թատերախմբի կողմից ներկայացվել են «Օգսենը», «Հինգ սալորները», «Ես բայդուշ եմ», «Վարդալարբուբա դդումի վաճառականը» և այլ ստեղծագործություններ⁵: 1926 թ. մայիսի 15-ին Մերձավոր Արևելքի որբերի ընկերակցության թատերախումբը ներկայացրել է «Վահան Մամիկոնյան» դրաման⁶, իսկ 1933թ. Հայ երիտասարդաց ընկերակցության թատերախումբը Հալեպում ներկայացրել է Թլկատինցու «Կտակը»⁷:

Թատերական կյանքն աստիճանական զարգացում էր ապրում մի շարք սիրողական թատերախմբերի և հյուրեկ դերասանների շնորհիվ: 1920-1930-ական թթ. Հալեպում հանդես են եկել «Տիգրիս», «Պանդուխտ», «Հայ երիտասարդաց միություն», «Ուսումնասիրաց», «Զավարյան», «Ասպարեզ», ՄԴ Հնչակյան կուսակցության «Զանգ»-«Անդրանիկ»-«Դրամատիկ» թատերախմբերը, 1920-ական թթ. Բեյրութում՝ Կ. Խաչիկյանի «Դրամատիկ» և Գևորգու «Ուսանողական միություն», 1930-ական թթ.՝ Պ. Մենտիլյանի «Գաբրիել Սունդուկյան»

Երևան, 2003, էջ 314, Հովակիմյան Բ., Ցեղասպանության թեման հայ թատրոնում, Երևան, 1998, էջ 62-63, Պալեան Հ., Սուրիահայ տարեգիրք, Պեյրութ, 1929, էջ 293:

³ «Ցուսաբեր», 1929, մայիսի 3, թիվ 28:

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1967, էջ 597:

⁵ Անթոյեան Ս., Ինքնակերտումի ճամբով, Պեյրութ, 2006, էջ 51:

⁶ «Ցուսաբեր», 1926, մայիսի 22, թիվ 43:

⁷ Ոսկեմատենա. 1931-1981, Հալեպ, 1982, էջ 53:

թատերախմբերը⁸: 1924 թ. Հալեպում Ս. Քյուրքճյանի կողմից հիմնվում է «Վասպուրական» թատերախումբը⁹: Հյուրեկ դերասանները չունեին կանոնավոր թատերախմբեր: Նրանք իրենց շուրջն էին հավաքում տեղական ուժերը և ներկայացումներ կազմակերպում¹⁰:

Թատրոնի բնագավառում հայ-արաբական համագործակցության մասին վաղ էր խոսելը: Հ. Միքայելյանի հավաստիացմամբ՝ պատճառը «...հայերու ամփոփուածութիւնն էր հայկական շրջանակներէ ներս, հայկական ձեռնարկներու մէջ»¹¹: Ա. Շորվոլյանը, ներկայացնելով սիրիահայերի և լիբանանահայերի թատերական կյանքը, նշում է, որ տեղացի արաբները շատ ավելի ուշ անդրադարձան այս պահանջին: Այնուհետև իրենք էլ հետևեցին հայերին¹²: Հարկ է նշել, որ հետօսմանյան տիրապետության ժամանակաշրջանում արաբներն ունեցել են թատերախմբեր¹³: Թատերական ներկայացումներ ցուցադրելու արտոնագրերը տրամադրվում էին ֆրանսիական մանդատային իշխանությունները¹⁴:

Սիրիահայ և լիբանանահայ համայնքների աշխույժ թատերական կյանքը ևս նպաստեց մայրենի լեզվի պահպանմանը, էթնիկ հիշողության ամրապնդմանը և կրթության կազմակերպմանը: Հալեպի Կիլիկյան կրթական հաստատության հուշամատյանում նշված է, որ թատերական շարժման ծառայողների գլխավոր նպատակն է եղել զարկ տալ մայրենի լեզվի զարգացմանը, ուսանողության շրջանում

⁸ Ասատրյան Ա., նշվ. աշխ., էջ 22, Թորանեան Թ., Ակնարկ սուրիահայ թատերական պատմության եւ դերասան Բարսեղ Աբովեանի յուշերը, հ. Ա, Պէրյուք, 1973, էջ 27-33, 58-63, Լէվիճեան Կ., նշվ. աշխ., էջ 5-13, «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 314, 530:

⁹ Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 54:

¹⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 593-594, Սուրիահայ տարեգիրք, 1929, էջ 294-300, «Արեւ», 1923, մարտի 14, թիվ 78, «Յուսաբեր», 1928, հոկտեմբերի 8, թիվ 160:

¹¹ «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Զ գիրք, 2000, էջ 215:

¹² Նույն տեղում, Ա գիրք, 1975, էջ 398:

¹³ Նույն տեղում, Զ գիրք, 2000, էջ 216:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 1, գ. 55, թ. 1, ց. 2, գ. 71, թ. 1-2:

մշակել ճարտասանության արվեստը, և նրանց հոգիները լցնել բարոյական սկզբունքներով ու հայրենասիրական զգացումներով¹⁵:

Արևմտյան Հայաստանից և հատկապես Կիլիկիայից գաղթած հայությունը մեծամասամբ թրքախոս էր: Սկզբնական շրջանում թուրքերենով էին անցկացվում եկեղեցական արարողությունները, դպրոցական միջոցառումները, ինչպես նաև թատերական ներկայացումների մեծ մասը: 1930-ական թթ. սկսած՝ թրքախոսության դեմ պայքարն ավելի կազմակերպված բնույթ ստացավ: 1935 թ. Բեյրութի Սահակյան վարժարանում «Պանդուխտ» թատերախմբի կողմից ներկայացվող «Զեյթուն» պիեսի ազդագրի վրա հատուկ ծանուցված էր, որ ներկայացման թուրքական բաժինը պետք է կատարվի թուրքերեն լեզվով¹⁶: Հանդիսատեսին այս մասին նախապես զգուշացնելը ցույց է տալիս թուրքերենի հանդեպ ունեցած վերաբերմունքը: Հայերեն լեզվով ներկայացվող թատերական ներկայացումները մեծ նպաստ ունեցան մայրենի լեզվի պահպանման հարցում:

Ցեղասպանության հուշերը դեռ թարմ էին գաղթական հայության հիշողության մեջ: Ցեղասպանության թեման արդիական դարձավ հայ թատերական կյանքում: Էթնիկ հիշողության ամրապնդման տեսանկյունից առաջնահերթ էր, որ թե՛ մեծահասակները, թե՛ որբացած սերունդն օտար միջավայրում չմոռանան իրենց պատմությունն ու սեփական կենսագրությունը: 1920-ական թթ. այդ նկատառումներով Բեյրութի Ս. Նշան եկեղեցու բակում Պ. Մենտիլյանի ջանքերով ցուցադրվել են «Ժիրայր», «Քսան մահապարտներ», իսկ 1924 թ.՝ Ս. Տիբրունու «Երլտըզե Սասուն» պիեսը, 1930-ական թթ.՝ Ս. Շահենի «Թալաաթի անկումը», «Զեյթուն» պիեսները, «Կարկառուն կամարներ», «Անդրանիկ կամ Լրտեսը» դրամաները: 1930-ական թթ. Հալեպում ցուցադրվել են «Անդրանիկ», «Գևորգ Չաուշ», «Քսան կախա-

¹⁵ Ցուշմատեան Կիլիկեան կրթական հաստատութեան (1921-1996), Հալեպ, 1996, էջ 116:

¹⁶ Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 74-75:

դանները», «Մասունն այրվում է» պիեսները, «Մասուն» դյուցազներգությունը¹⁷:

Թատերական կյանքի դերը բացառիկ է կրթության կազմակերպման գործում: Առաջին հայացքից աղերսներ չունեցող թատրոնն ու դպրոցը մեծ փոխներգործություն ունեցան և զգալիորեն նպաստեցին միմյանց՝ որպես առանձին կառույցներ կայանալու և զարգանալու գործում: Թատերական գործունեությունը դպրոցին առաջին հերթին նյութապես էր օգուտ բերում:

Նշված ժամանակաշրջանում Միրիայի և Լիբանանի հայկական համայնքներում Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքո գործող ազգային վարժարանների, հայ ավետարանական և հայ կաթոլիկ դպրոցների բյուջեն ձևավորվում էր աշակերտների վարձավճարների, ինչպես նաև ՀԲԸՄ, հայրենակցական միությունների, միսիոներական կազմակերպությունների, անհատների կատարած նվիրատվությունների և դպրոցական հանդեսների շնորհիվ: Վերջիններս կազմակերպվում էին ոչ միայն տարեվերջյան հաշվետվությունները ներկայացնելիս, այլև ողջ տարվա ընթացքում: Դպրոցական հանդեսները շատ հաճախ ավարտվում էին երկու կամ երեք արարից բաղկացած թատերական ներկայացումներով, որից հետո ներկաները նվիրատվություններ էին կատարում դպրոցին: Արդյունքում դպրոցի բյուջեն զգալիորեն հավասարակշռվում էր:

Ավանդույթի ուժով Վարդանանց տոնի առթիվ ամեն տարի ցուցադրվում էր Ս. Բյուրատի «Վարդանանքը»¹⁸, իսկ 1929 թ. «Ասպարեզ» թատերախումբը ներկայացրել է «Խաղամուղի վախճանը»՝ «...ի նպաստ Ազգ. վարժարանի և «Կրթասիրաց» միութեան»¹⁹:

Թատերական ներկայացումների անցկացման գործում լուրջ ներդրում ունեին հայ ուսուցիչները: Թ. Թորանյանը նշում է. «Թատե-

¹⁷ Ասատրյան Ա., նշվ. աշխ., էջ 21, Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 62-77:

¹⁸ Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 25, Ոսկեմատեան. 1931-1981, էջ 53:

¹⁹ «Յուսաբեր», 1929, փետրվարի 20, թիվ 274:

րական կեանքի ստեղծումին մեջ առաջին դերը պատկանած է մեր ուսուցիչ – ուսուցչուհիներու, որոնք հակառակ իրենց նիւթական անձուկ վիճակին՝ շաքարներ ու ամիսներ կը տրամադրէին, ու կը շարունակէն տրամադրէլ՝ թատրոնի հանդէպ սէր արծարծելու համար հայ պատանիներու սիրտերէն ներս»²⁰։ Որոշ կրթական հաստատություններում գործում էին ուսուցչական թատերախմբեր։ Օրինակ՝ Ջիբելի (Բիբլոս) որբանոցն ուներ իր ուսուցչական թատերախումբը²¹։

Ի նպաստ դպրոցի՝ թատերական ներկայացումներ էին կազմակերպում տվյալ դպրոցի շրջանավարտների միությունների թատերախմբերը։ 1934 թ. Այնթապի կրթասիրաց վարժարանի շրջանավարտների միության վարչությունը դիմում է միության թատերական հանձնախմբին՝ «Ազահ» զավեշտը ներկայացնելու խնդրանքով՝ դպրոցի գրադարանին օգնելու համար²²։

Ինչպես կրթամշակութային կյանքի այլ բնագավառներ, թատերական շարժումը ևս Մերձավոր Արևելքի հայ համայնքներում հիմնականում զարգանում էր Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում։

1920-ական թթ. Հալեպում ի նպաստ Կիլիկյան գաղթականաց վարժարանի ելույթներով հանդես է եկել ՄԴ Հնչակյան կուսակցության «Անդրանիկ» թատերախումբը²³։ 1922 թ. հունիսի 25-ին նույն թատերախումբը «Լուսապարկի» ամառային թատրոնում ներկայացրել է «Ռումեո և Ջուլիետան»՝ «...Ազգ. երկսեռ վարժարանաց ի նպաստ»²⁴։ Հոգուտ Մարաշի ազգային Մեսրոպյան վարժարանի իր ներկայացումներով հանդես է եկել «Գերմանիկ Վասպուրական» թատերա-

²⁰ Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 15։

²¹ «Մուրիական մամուլ», 1923, ապրիլի 15, թիվ 123։

²² ՀԱԱ, ֆ. 1421, ց. 2, գ. 105, թ. 15։

²³ «Օշական», 1988, հունվար-հունիս, թիվ 1-2, էջ 36։

²⁴ «Մուրիական մամուլ», 1922, հուլիսի 2, թիվ 43։

խումբը²⁵: Բեյրութի Սահակյան վարժարանի հուշագրքում նշված է, որ 1934 թ. «Մարտ 10ին խումբ մը բարեկամներ Վարժ.ին ի նպաստ կը ներկայացնեն «Քսան Կախաղաններ»ը: Ապրիլ 29ին ուրիշ խումբի մը կողմէն՝ դեկավարութեամբ Պ. Էլօեանի կը տրուի «Բարև Տէր Պապա»-ն»²⁶:

1921 թ. Դամասկոսի Ազգային միությունը դեկավարում էր ազգային վարժարանը, լսարանը և պարբերական թատրոնը²⁷: 1924 թ. հիշատակվում է պարբերաբար ներկայացումներ տվող «Պանդուխտ» թատերախումբը: Այս թատերախմբի մասին նշված է. «...ընդունակ եւ սիրող տեղական լաւագոյն ուժերով կազմակերպուած, եւ որոնք իրենց տուած «ի նպաստ» ներկայացումներով լաւագոյն կերպով ծառայած են գաղթականական պէտքերուն»²⁸:

Այլ շրջաններում նույնպէս աշխույժ էր թատերական կյանքը: 1928 թ. դերասան Բ. Աբովյանը թատերական ներկայացումներ է կազմակերպել Սուեիայի Խղրբէկ և Քեբուսիե գյուղերում: Այս առիթով դերասանը մատնանշում է. «... կարծեմ բաւական հասոյթ եղաւ ի նպաստ դպրոցին»²⁹: Բ. Աբովյանն իր հուշերում գրում է, որ 1920-1930-ական թթ. ներկայացումներ է տվել նաև Արաբ-Բունարում, Բիթիասում, Կամիշլիում և այլ վայրերում³⁰: Ա. Գրաճյանի հիշատակումը վերաբերում է 1930-ական թթ.: «Ղարիբ» թատերախումբը Բիթիասի «Նապոլէոն» թատերասրահում ցուցադրել է «Չարշըլը Արթին աղա» կատակերգությունը՝ ի նպաստ «...տեղւոյն Հայ Ազգ. խեղճուկ

²⁵ Քէշիշեան Վ., Գոյապատում: Պատմութիւն Ս. Գեորգի եկեղեցւոյ եւ Մարաշի ազգ. Մեսրոպեան վարժարանի Հալէպ, Հալէպ, 2002, էջ 70, 81:

²⁶ Յուշագիրք հայ ազգ. Սահակեան բարձրագոյն վարժարանի: Արծաթեայ յորէկեան. 1923-1948, Պէյրութ, 1948, էջ 55:

²⁷ «Հայաստանի կոչնակ», թիվ 40, հոկտեմբերի 1, 1921, էջ 1214:

²⁸ Նույն տեղում, թիվ 27, հուլիսի 5, 1924, էջ 724:

²⁹ ԳԱԹ, Բ. Աբովյանի ֆ., գ. 11/1, թ. 1:

³⁰ Նույն տեղում, գ. 2/1, թ. 1-137:

վարժարանին»³¹: 1931 թ. Ջյունիում (Բեյրութի արվարձան) հայկական ազգային վարժարանին օգնելու նպատակով կազմակերպվում է թատերական ներկայացում, որին ներկա էր Ջյունիի երեսփոխան շեյխ Յուսուֆ Էլ Խազեն: Վերջինս հայ հանդիսականներին դիմել է կոչով. «Պարոններ, երբեք մի՛ թողուք դուք այն աւանդութիւններն ու յիշատակները, զորս դուք կը բերէք ձեզի հետ: Այդ յիշատակները, պատմական, թէ աւանդական, ունին իրենց գեղեցկութիւնն ու հիւպոյրը: Պահեցէք զանոնք հաւատարմօրէն, մշակեցէք զանոնք երկիւղածօրէն, եւ խառնեցէք անոնց հետ զորս կը գտնէք մեր քով»³²:

Փաստորեն, թատերական կյանքը, լինելով հայապահպանության կռիվներից մեկը, իր ուրույն դերակատարությունն ունեցավ նաև կրթության կազմակերպման ու կայացման գործում: Մի կողմից թատերական միջավայրն օժանդակում էր դպրոցին նյութապես, իսկ մյուս կողմից դպրոցականներն ու ուսուցիչներն էին իրենց մասնակցությունը բերում թատերական շարժման զարգացմանը: Միրողական թատերախմբերից դուրս եկան այն դերասանները, ովքեր տարիներ անց դառնալու էին սիրիահայ և լիբանանահայ համայնքի մասնագիտացված թատրոնի սերուցքը:

³¹ Գրաճեան Ա., Քանի մը օր Լիբանանի լեռներուն վրայ եւ լիբանանահայ կեանք, Պէյրութ, 1934, էջ 22:

³² «Հայաստանի կոչնակ», 1931, օգոստոսի 29, թիվ 35, էջ 1117:

THEATRICAL LIFE IN THE ARMENIAN COMMUNITIES OF SYRIA AND LEBANON IN THE 1920-1930s

SUMMARY

This article is dedicated to the theatrical life in the Armenian communities of Syria and Lebanon in 1920-1930s. The theatrical life was a component of the cultural life of the Armenian Diaspora. Before the Armenian Genocide in a series of Armenian communities theatrical traditions were established. From that point of view the Constantinople-Armenian community was of particular importance.

After the Genocide the main peculiarity of the theatrical life of the Armenian communities of Syria and Lebanon was the fact that there was no professional theater. The Armenians were organizing theatrical performances in rented halls, gymnasiums, orphanages, even in tents. The theatrical life was developing through a series of amateur theatrical groups and actors. They were gathering around them local forces and organizing performances. In the 1920-1930s in Aleppo and Beyrut a number of theatrical groups were functioning.

In the article the memoirs of Barsegh Abovyan, one of the famous actors of the mentioned time period were used which are preserved in the Museum of Literature and Art of Yeghishe Charents.

الحياة المسرحية في الجاليتين السورية واللبنانية في سنوات 1920-1930

ملخص

تتطرق المقالة الى الحيات المسرحية في الجاليتين الارمنيتين في لبنان وسوريا في سنوات 1920-1930. فان النشاطات المسرحية اصبحت جزءا لا يتجزأ من الحياة الثقافية لارمن الشتات. فلم تتميز المسارح بالتخصص بعد الابادة الأرمنية. ففي حلب وبيروت كانت تعمل عدد من الفرق المسرحية الهاوية في الفترة المذكورة. فان الحركة المسرحية ساهمت في الحفاظ على اللغة والذاكرة التاريخية .

**ԹՈՒՐԳԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԱՔԱԿԱՆ ՄԱՂՐԻԲՈՒՄ 1980-ԱԿԱՆ ԹԹ.
ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ 1990-ԱԿԱՆ ԹԹ.
ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ**

Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների միջև պատմականորեն ձևավորված հարաբերությունները 1989-1995 թթ. ընթացքում նպաստեցին Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը: Դրանցից առավել կարևորը կարելի է համարել ծագումով թուրք բավական մեծաթիվ բնակչության առկայությունը Մաղրիբի արաբական մի քանի երկրներում:

Դեռևս 16-րդ դարի սկզբին ստեղծվեց Մաղրիբի օսմանյան նահանգը, որի կենտրոնն Ալժիրն էր¹: Դրանից հետո Մաղրիբը երկար ժամանակ շարունակում էր մնալ որպես Օսմանյան կայսրության տարածք, իսկ կայսրությունն այն պահպանելու համար զորամասեր էր պահում այստեղ: Օսմանյան զինվորների և արաբների ամուսնության արդյունքում էլ Արաբական Մաղրիբում առաջացավ թուրքական ծագում ունեցող բնակչություն, որին ներկայումս անվանում են «քուլուղլի»-ներ (kouloughli² (կւլ («ծառա») and օղլւմ («որդի») բառերից), ինչը նշանակում է ծառաների որդիներ: Ժամանակակից Արաբական Մաղրիբի մի քանի երկրներում թուրքական արմատներ

¹ Shuval Tal, "The Ottoman Algerian Elite and Its Ideology", International Journal of Middle East Studies, Cambridge University Press 32 (3), Printed in the United States of America, 2000, p. 325.

² Stone Martin, The Agony of Algeria, London, C. Hurst & Co. Publishers, 1997, p. 29.

ունեցող բնակչությունը մեծաթիվ է: Նրանք Թուրքիայի հետ սերտորեն կապված են և թուրքամետ են:

Մադրիդի արաբական երկրներում թուրքական ծագում ունեցող բնակչության թվաքանակն անհավասար է բաժանված, ինչը պատմական գարգացումների արդյունք է: Այսպես՝ Մարոկկոյում և Մավրիտանիայում (որոնք չեն եղել օսմանյան տիրապետության տակ) չկա թուրքական ծագումով մեծաթիվ բնակչություն: Այնուամենայնիվ, մյուս երեք երկրներում առկա թուրքական ծագում ունեցող բնակչության վերաբերյալ որոշ հավաստի տվյալներ կան: Փորձենք որոշակի թվեր ներկայացնել Մադրիդի մյուս արաբական երկրներում ծագումով թուրք բնակչության կազմի վերաբերյալ: Չնայած այս թվերը ներկայացնում են թուրքական ծագում ունեցող բնակչության թվաքանակը ինչպես ուսումնասիրվող ժամանակահատվածից առաջ, այնպես էլ հետո, այնուամենայնիվ վստահաբար կարելի է պնդել, որ 20-րդ դարի կեսից մինչև 21-րդ դարի սկիզբը՝ մինչև «Արաբական գարունը» ընկած ժամանակահատվածը, Մադրիդի արաբական երկրներում առկա թուրքական ծագում ունեցող բնակչության թվաքանակն էական փոփոխություններ չի կրել: Մասնավորապես պրոֆեսոր Հիզմեթի Սաբրին 1953 թ. գրած իր աշխատության մեջ նշում է, որ Ալժիրի բնակչության 25 %-ը թուրքական արմատներ ունի, իսկ ժողովուրդը շարունակում է օգտագործել հազարավոր թուրքական բառեր³: 2008 թ. Ալժիրում թուրքական դեսպանատան հաշվետվության մեջ առկա է 600.000-700.000 թիվը, սակայն միաժամանակ նշվում է, որ, համաձայն ֆրանսիական դեսպանատան տվյալների՝ թուրքական ծագումաբաշխվածները 2 մլն են: «Zaman»⁴ պարբերականը 2007 թ. մի հոդվածում նշել է, որ Ալժիրի 33 մլն բնակ-

³ Hizmetli Sabri, "Osmanlı Yönetimi Döneminde Tunus ve Cezayir'in Eğitim ve Kültür Tarihine Genel Bir Bakış", Ankara 1953, Üniversitesi İlahiyat Fakültesi Dergisi 32 (0), s. 10.

⁴ Mukremin Albayrak, Cezayir, Türk'ün Cezayir'deki İlahiyatı: Hıyarınnas!, Zaman 21 Haziran 2007.

չության 10 %-ը (3.3 մլն) թուրքեր են: Թուրքական արմատներով բնակչությունը բավական մեծաթիվ էր նաև Թունիսում: Մասնավորապես 1993 թ. հրատարակված մի աշխատության մեջ նշվում է, որ նրանց թիվը կազմում է շուրջ 500.000⁵: Սակայն այս տվյալը զգալիորեն տարբերվում է «Zaman» պարբերականում 1998 թ. հրատարակված հոդվածի տվյալից, որտեղ նշվում է 2 մլն⁶: Այն շարունակեց մնալ շրջանառության մեջ: Լիբիայում ծագումով թուրքերի թիվը 1949 թ. հրատարակված մի աշխատության մեջ նշվում է 35.000⁷: Նրանք իրենց համարում էին Լիբիայի քաղաքացիներ, որոնք էթնիկ թուրքեր են: Այդ բնակչությունը նպաստում էր Արաբական Մադրիբում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը 1989-1995 թթ. ընթացքում և ստիպում էր Թուրքիային սերտացնել իր հարաբերությունները Մադրիբի արաբական երկրների հետ, քանի որ հակառակ պարագայում հնարավոր էր այս բնակչության մոտ առկա թուրքական գիտակցության կամ թուրքամետ տրամադրությունների վերացում և աստիճանական ձուլում:

Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը Արաբական Մադրիբում նպաստեցին նաև տարածաշրջանային որոշ զարգացումներ: Արդեն 1989 թ. պարզ էր, որ ԽՍՀՄ-ն ի վիճակի չէ և ապագայում էլ ի վիճակի չի լինելու օգնություն տրամադրել իր նախկին դաշնակիցներին: Սա իր ազդեցությունը թողեց Թուրքիա-Մադրիբի արաբական երկրներ հարաբերությունների վրա, քանի որ Արաբական Մադրիբի որոշ երկրներ (հատկապես Լիբիան և Ալժիրը) սոցիալիստական ճամբարին էին պատկանում, օգնություն էին ստանում ԽՍՀՄ-ից և այդ պատճառով որոշակի սառնություն կար նրանց և արևմտյան ճամբարին հարող Թուրքիայի միջև: Բացի այս, Թուրքիայի հետ հարաբե-

⁵Akar Metin, "Fas Arapçasında Osmanlı Türkçesinden Alınmış Kelimeler", Türklük Araştırmaları Dergisi 7, 1993, s. 95.

⁶Fikret Ertan, Tunus ve tarih, 6 Mayıs 1998, Zaman, <http://arsiv.zaman.com.tr//1998/05/06/yazarlar/11.html>

⁷ Pan Chia-Lin, "The Population of Libya", Population Studies 3 (1), 1949, p. 103.

րությունները սերտացնելու շնորհիվ, այդ երկրները կարող էին նրա միջոցով կարգավորել, ապա և սերտացնել հարաբերություններն Արևմուտքի հետ, քանի որ Թուրքիան Արևմուտքի ամենակարևոր դաշնակիցն էր տարածաշրջանում: Ուստի 1989-1995 թթ. ընթացքում արտագրված բազմաթիվ միջպետական պայմանագրերը, միջազգային ոլորտ հարցերում Թուրքիայի հետ համագործակցելը, Թուրքիա արտահանվող էներգակիրների ծավալների ավելացումը և հարաբերությունները սերտացնելուն ուղղված որոշ այլ քայլեր կախված էին նաև Լիբիայի և Ալժիրի՝ տարածաշրջանում իրենց նախկին հզոր դաշնակցին կորցնելու փաստով և նոր դաշնակիցներ գտնելու ու Արևմուտքի հետ հարաբերությունները կարգավորելու և սերտացնելու անհրաժեշտությամբ:

Այս ամենին զուգահեռ 1989-1995 թթ. ընթացքում տեղի ունեցան որոշ զարգացումներ, որոնք հնարավորություն տվեցին Թուրքիային ավելի ամրապնդել դիրքերը տարածաշրջանում: Մասնավորապես, 1991 թ. տեղի ունեցած «Փոթորիկ անապատում» գործողությունից հետո, օգտվելով Իրաքի թուլացումից, Թուրքիան իր ազդեցությունը տարածեց Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության վրա, ինչպես նաև Ադրբեջանի պարտությունը Ղարաբաղյան պատերազմում հնարավորություն տվեց Թուրքիային իր ազդեցությունը տարածել Ադրբեջանում: Տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը նպաստեց նաև այն, որ իրանա-իրաքյան պատերազմից հետո Իրանը բավական թուլացել էր և ուժեղ կերպով չէր դիմադրում տարածաշրջանում ամրապնդվելու Թուրքիայի քայլերին: Սրան ավելանում էր նաև դեռևս 1980-ական թթ. Իրանի վրա դրված տնտեսական պատժամիջոցների ազդեցությունը⁸: Ուստի, որոշակիորեն ամրապնդվելով նախկինում իրեն անհասանելի այդ տարածքներում, Թուրքիան հնարավորություն ուներ սերտացնել իր հարաբերու-

⁸ Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2006, էջ 732:

յունները Մադրիդի արաբական երկրների հետ և դրանով իսկ դառնալ կամուրջ՝ մի կողմից Ասիայի և Եվրոպայի և մյուս կողմից Ասիայի ու Աֆրիկայի միջև: Սրան հատկապես նպաստում էր այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիան, հենվելով ընդհանուր ինքնության և ընդհանուր կրոնի վրա, ձեռնամուխ եղավ սերտ հարաբերություններ հաստատելու անկախացած միջինասիական թյուրքախոս հանրապետությունների հետ: Վերջիններս կարող էին Թուրքիայի միջոցով ելք ունենալ դեպի Եվրոպա ու Աֆրիկա⁹:

Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը Արաբական Մադրիդում նպաստեց նաև Թուրքիայի արագ տնտեսական աճը Թուրգութ Օզալի օրոք, ինչպես նաև արաբական երկրների և Իրանի հետ տնտեսական համագործակցության սերտացումը: Բացի նշվածներից, կային նաև Թուրքիայի և Մադրիդի արաբական երկրների միջև հարաբերությունների սերտացմանը նպաստող մի շարք այլ հանգամանքներ, որոնցից առավել կարևոր էին իսլամական գործոնը, Եվրոպական միությանն անդամակցելու ձգտումները: Բանն այն է, որ, ինչպես Թուրքիան այնպես էլ Արաբական Մադրիդի երկրները նպատակ ունեին դառնալ Եվրոպական Միության անդամ: Սրա վկայությունն է այն հանգամանքը, որ երբ ստեղծվեց Եվրոպական միջերկրածովյան գործընկերությունը, նրա անդամ դարձան ինչպես Թուրքիան, այնպես էլ Մադրիդի արաբական երկրները և անգամ Արաբական Մադրիդի դաշինք կազմակերպությունը:

Արաբական Մադրիդում ամրապնդվելու համար Թուրքիան փորձում էր ընդարձակել իր քաղաքական, տնտեսական, մշակութային կապերը նշյալ երկրների հետ՝ գերադասելով սերտացնել հարաբերություններն այդ երկրներից յուրաքանչյուրի հետ առանձին: Ասվածի վկայությունն է այն փաստը, որ 1989 թ. Արաբական Մադրիդի

⁹ The new Central Asia, The Regional Impact of International Actors, Ed. Emilian Kavalski, World Scientific Publishing Co, University of Western Sydney, Australia, 2010, pp. 192-193.

միության ստեղծումից հետո Թուրքիան, որ ամեն ինչ անում էր Մադրիդի արաբական երկրների հետ սերտ հարաբերություններ ունենալու համար, այս կառույցի հետ առանձին հարաբերություններ չի հաստատել՝ նախընտրելով սերտացնել իր հարաբերությունները այդ երկրներից յուրաքանչյուրի հետ առանձին¹⁰։ Ակնհայտ է, որ այս հանգամանքը Թուրքիային հնարավորություն էր տալիս Արաբական Մադրիդում մեծ քաղաքական կշիռ ունենալ և Մադրիդի երկրներն ավելի սերտ ինտեգրել տնտեսության ոլորտում։ Վերոհիշյալ քաղաքականության արդյունավետությունը հատկապես նկատվում է Մարոկկոյի պարագայում, որտեղ Թուրքիան հասավ էական հաջողությունների։ Բանն այն է, որ Արևմտյան Սահարայի հարցի ծագումից ի վեր Մարոկկոյի համար շատ կարևոր էր այս հարցում Թուրքիայի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ վերջինը ճանաչում էր Մարոկկոյի տարածքային ամբողջականությունը և Թուրքիայի ԱԳՆ կայքում այս խնդրի վերաբերյալ նշվում է, որ կողմերի համար ընդունելի լուծման պետք է հասնել ՄԱԿ-ի շրջանակներում¹¹։ Թուրքիայի նման դիրքորոշումը բավական լուրջ պատճառ է, որպեսզի Մարոկկոն ամեն կերպ ընդառաջի Թուրքիայի՝ հարաբերությունները սերտացնելու ձգտումներին։ Ուստի 1992 թ.՝ Եվրոպական Միության ստեղծումից հետո, Մարոկկոյի միջերկրածովյան քաղաքականությունը կենսորոնացավ երեք հիմնական ուղղությունների վրա՝ Թուրքիա, Եվրոպական Միություն և արաբական երկրներ¹²։ Վստահ կարելի է ասել, որ նշված ժամանակաշրջանում Մարոկկոյի արտաքին քաղաքականության մեջ Մարոկկո-Թուրքիա հարաբերություններն առանցքային ուղղություններից էին։ Հատկանշական է, որ Թուրքիա-

¹⁰ Turkey's relations with the Arab Maghreb Union (AMU), <http://www.mfa.gov.tr/amu.en.mfa>

¹¹ Turkey's Political Relations with Morocco, http://eski.mfa.gov.tr/turkey_s-political-relations-with-morocco.en.mfa

¹² Relations between Turkey and Morocco, <http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-morocco.en.mfa>

յի՝ Մադրիդի արաբական երկրներում իր դիրքերն ամրապնդելու քաղաքականության մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում Մադրիդի և Արևմուտքի միջև որպես միջնորդ հանդես գալը: Մասնավորապես 1994 թ. հոկտեմբեր 30-ին Կասաբլանկայում սկսած Միջին Արևելքի տնտեսական եռօրյա խորհրդաժողովում Լիբիայի առաջնորդ Մուամար Կադաֆին Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլերին խնդրեց վերադարձի ժամանակ այցելել Լիբիա: Նոյեմբերի 1-ին Թանսու Չիլերը այցելեց Լիբիա, որի ընթացքում կայացած հանդիպման ժամանակ Կադաֆին խնդրեց փոխանցել Վաշինգտոնին իր պատրաստակամությունը՝ ընդունելու հաշտեցման գործընթացը և միջնորդելու երկու լիբիացիների համար, որոնք մեղադրվում էին ամերիկյան ինքնաթիռը պայթեցնելու մեջ¹³: Լիբիական կառավարությունը նաև խնդրեց հորդորել Միացյալ Նահանգներին՝ վերացնելու տնտեսական պատժամիջոցները և թույլ տալու երկու երկրներին առևտուր կատարել չեզոք երկրների միջոցով¹⁴:

Պետք է նաև նկատի ունենալ, որ, չնայած Թուրքիան Մադրիդի յուրաքանչյուր պետության հետ ուներ իր ուրույն հարաբերությունները, այնուամենայնիվ, այս հարաբերություններում առկա ընդհանուր գծերը մեծ չափով պայմանավորված էին Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ այդ ժամանակ գերիշխող սկզբունքներով: Մասնավորապես 1989-1993 թթ.՝ Թուրքիայի 8-րդ նախագահ Թուրքուզ Օզալի օրոք, Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ

¹³ 1988 թ. Ամերիկյան «Պանամ» ինքնաթիռը Լոկերբիի վրա՝ Շոտլանդիայի երկնքում, պայթում է, ինչի հետևանքով զոհվում է 270 մարդ: Այս պայթյունը ցնցում է ամբողջ աշխարհը՝ առաջացնելով դժգոհություն և բողոքի ուժեղ ալիք: Պայթյունը կազմակերպելու մեջ մեղադրվում էին Լիբիայի ազգային անվտանգության երկու աշխատակիցներ: Երկար բանակցելուց հետո, ի վերջո, Կադաֆին 1999 թ. երկու աշխատակիցներին հանձնեց ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին (մանրամասն տե՛ս Erica Pearson, The SAGA Encyclopedia of Terrorism, Second Edition, Editor C. Gus Martin, Los Angeles, SAGE Publications, 2011, pp. 465-466):

¹⁴ Waniss Otman, Erling Karlberg, The Libyan Economy: Economic Diversification and International Repositioning, Springer-Verlag- Berlin-Heidelberg, 2007, p. 38.

մեծ տեղ ունեւ Նոր օսմանականությունը¹⁵, ըստ որի Թուրքիան համարվում էր Օսմանյան կայսրության ժառանգորդ, որը պետք է հովանավորեր նախկինում Օսմանյան կայսրության մեջ եղած երկրներին: Նոր օսմանականությունը սկսեց լուրջ դեր կատարել Օսմանյան կայսրության մեջ մտած նախկին երկրների հետ Թուրքիայի հարաբերություններում: Միաժամանակ Օզալը զգալիորեն ձևափոխեց Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, ինչի հիմքում ընկած էր նրա այն համոզումը, որ իսլամը և զարգացումը չեն հակասում իրար, և հետևաբար Թուրքիան ստիպված չէ ընտրություն կատարել դրանց միջև¹⁶: Այս հանգամանքները հանգեցրին իսլամական երկրների, այդ թվում Մադրիդի հետ հարաբերությունների սերտացմանը: Ուսումնասիրելով Թուրքուր Օզալի օրոք Թուրքիայի և Մադրիդի երկրների ղեկավարների միջև տեղի ունեցած պաշտոնական այցելությունները և երկկողմ պայմանագրերը, տարբեր խնդիրների վերաբերյալ նրանց անցկացրած բանակցությունները և փոխհարաբերությունների այլ ոլորտները՝ կարելի է համոզվել, որ վերոհիշյալ քաղաքականությունը, նպաստել է Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը Արաբական Մադրիդում: Հատկանշական է, որ 1995 թ. Թուրքիայում իսլամիստական կուսակցության հաղթանակը ևս որոշ չափով կապված էր նավթ արդյունահանող այնպիսի երկրների հետ հարաբերությունների սերտացմամբ, որոնցում իսլամը բավական ազդեցիկ դեր ուներ: Այդ երկրներն էին՝ Իրանը, Սաուդյան Արաբիան և Լիբիան: Այսպիսի երկիր կարելի է համարել նաև Ալժիրը, որտեղ իսլամական ուժերը բավական ակտիվ էին և իշխանության էին ձգտում, և որը դեռևս 1994 թ. սկսել էր գազ մատակարարել Թուրքիային:

¹⁵ Շաքարյան Ա., Արարատից այն կողմ //Հավելված, Հատվածներ Ահմեդ Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» գրքից, Երևան, 2011, էջ 196:

¹⁶ USAK Yearbook of international politics and law, Vol. 3, published by USAK (International Strategic Research Organization), Ankara, 2010, p. 434.

Մադրիդում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը նպաստեցին նաև տնտեսական գործոնները, ինչպես նաև այս նպատակով իրականացրած Թուրքիայի հատուկ տնտեսական քաղաքականությունը: Դեռևս Օզալի վարչապետ եղած ժամանակ (1983-1989 թթ.) Թուրքիայի տնտեսությունը կտրուկ աճ արձանագրեց, ինչի արդյունքում արդեն 1990-ական թթ. սկզբին արտաքին առևտրի ցուցանիշները զգալի չափով ավելացան 1980-ական թթ. սկզբի համեմատ: Ավելի ստույգ՝ այդ ժամանակ տեղի էր ունենում Թուրքիայի տնտեսության ազատականացում և զլոբալացում, ինչն իր ազդեցությունը թողեց Թուրքիա-Մադրիդի արաբական երկրներ տնտեսական հարաբերությունների վրա: Դեռևս 1980-ական թթ., երբ մեծացան թուրքական արտադրանքի եվրոպական շուկաներում ունեցած խնդիրները, թուրք գործարարները կենտրոնացան Մերձավոր Արևելքի երկրների վրա: Նրանց գործունեությունը հատկապես ակտիվ էր Իրանում, Իրաքում և Լիբիայում: Թուրգուի Օզալը ձգտում էր ընդլայնել համագործակցությունը արաբական երկրների հետ՝ արաբական կապիտալը դեպի Թուրքիա գրավելու համար և խրախուսում էր Թուրքիայի առևտրային ներգրավվածությունը ամբողջ տարածաշրջանում¹⁷: Օզալի օրոք իրականացված այս ձևափոխությունները ստեղծեցին այն հիմքը, որի վրա հենվելով Թուրքիան հետագայում սկսեց շարունակաբար սերտացնել իր տնտեսական կապերը Մերձավոր Արևելքի և Մադրիդի արաբական երկրների հետ:

Նշված ժամանակաշրջանում Մադրիդում Թուրքիայի տնտեսական քաղաքականությանը բնորոշ են մի քանի առանձնահատկություններ: Թեև Թուրքիայի և Մադրիդի երկրների միջև առևտրաշրջանառությունը նշված ժամանակահատվածում դինամիկ բնույթ չուներ, և երբեմն տեղի էր ունենում առևտրաշրջանառության ցուցանիշների անկում նախորդ տարիների համեմատ, սակայն եթե հաշ-

¹⁷ F. Stephen Larrabee, Lan O. Lesser, *Turkish Foreign Policy in an Age of Uncertainty*, Santa Monica, RAND National Security Research Division, 2003, p. 128.

վենք 1989 թ. Թուրքիայի արտահանում-ներմուծումը և 1994-1995 թթ. արտահանում-ներմուծումը նշյալ երկրներ, ապա առևտրաշրջանառության աճը նկատելի է: Սա տեղի էր ունենում արդեն եղած կապերի ամրապնդման և նոր կապերի ձևավորման շնորհիվ:

Թուրքիան Մադրիդի արաբական երկրների հետ կնքեց մի շարք երկկողմ պայմանագրեր, որը հնարավորություն ստեղծեց աշխատուժի տեղաշարժի համար: Սրանից առավելապես օգտվում էր Թուրքիան: Դեռևս 1980-ական թթ. վերջերին թուրք աշխատավորները Լիբիայում բավականին մեծ թիվ էին կազմում: Վերջիններիս դեպի Լիբիա հոսքը պայմանավորված էր նաև ավելի վաղ կնքված պայմանագրերով, որոնք երաշխավորում էին նրանց համար նույն իրավունքները, ինչը որ ունեին լիբիացի աշխատավորները¹⁸: Այս ամենի արդյունքում 1990 թ. թուրք աշխատավորների թիվը Լիբիայում հասավ 50.000-ի¹⁹:

Տնտեսական հարաբերություններում հաջորդ կարևոր կողմը Թուրքիայի՝ Մադրիդի արաբական երկրներում իրականացրած մի շարք ծրագրերն էին, ինչը վկայում էր այս տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի ամրապնդման մասին: Դա վերջինիս հնարավորություն էր տալիս նաև մուտք ունենալ աֆրիկյան այլ շուկաներ:

1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. առաջին կեսին Արաբական Մադրիդում Թուրքիայի դիրքերի ամրապնդումը տեղի էր ունենում նաև այն բանի շնորհիվ, որ մի շարք էական հարցերում Մադրիդի երկրները զգում էին Թուրքիայի աջակցության կարիքը, ինչի պատճառով ընդառաջում էին Թուրքիայի ձգտումներին: Նաև սրանով է պայմանավորված, որ տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի ամրապնդումը շարունակվեց նաև հետագայում:

¹⁸ Nermin Abadan-Unat, *Turks in Europe. From guest workers to transnational citizen*, Berlin, Editions Parabolis, 2005, p. 45.

¹⁹ Alon Liel, *Turkey in the Middle East: Oil, Islam and Politics*, trans. Emanuel Lottem, London Lynne Rienner, 2001, p. 118.

THE POLICY OF TURKEY IN THE ARAB MAGHREB IN THE LATE 1980'S AND IN THE FIRST HALF OF THE 1990'S.

SUMMARY

The current article presents the strengthening of Turkey's position in the Arab Maghreb in the late 80's and in the first half of the 90's of the 20th century. The contributing factors are particularly discussed, as well as the policy conducted by Turkey towards that goal. The article concludes that during that period the countries of the Arab Maghreb were in great need of Turkey's assistance in some vital issues, and therefore they were responsive to Turkey's endeavors to strengthen its position, and that this can be regarded as the key cause for strengthening Turkey's position in the Arab Maghreb.

أرمين جامهاريان
معهد الاستشراق التابع لأكاديمية العلوم في جمهورية أرمينيا

تقوية مواقف تركيا في المغرب العربي في اواخر 1980 وبداية 1990

ملخص

تعرض المقالة تاريخ عملية تقوية مواقف تركيا في المغرب العربي في اواخر 1980 وبداية 1990. وتتطرق الى الظروف التي ساعدت لتقوية مواقف تركيا في المنطقة. كما تناولت المقالة السياسة التي قامت بها تركيا لتحقيق اهدافها. تستنتج من المقالة أن الدول في المغرب العربي في الفترة المذكورة كانت في حاجة للدعم من قبل تركيا في بعض القضايا الهامة. وكانت الاخيرة تلمي مساعي هذه الدول للحصول على مساعدتها والتي ساهمت في تقوية مواقف تركيا في المغرب العربي .

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ
(ՀԱՄԱՍ) ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Պաղեստինի Ազատագրության Կազմակերպությունը (ՊԱԿ) ստեղծվեց Արաբական Պետությունների Լիգայի խորհրդակցություններից մեկի ժամանակ 1964 թ.¹: ՊԱԿ-ի ստեղծման նպատակը 2 մլն պաղեստինցի արաբների շահերի պաշտպանությունն իրականացնելն էր, որոնք վտարվել էին Իսրայելի կողմից ՄԱԿ-ի 1947 թ. նոյեմբերին ընդունված բանաձևով իրենց հատկացված տարածքներից: ՊԱԿ-ը բաղկացած էր մի շարք կառույցներից, որոնց մեջ գլխավորը ՖԱԹՀ-ն էր, որը 1969 թ. գլխավորում էր Յասեր Արաֆաթը²: Իսլամական դիմադրության շարժումը (ՀԱՄԱՍ) ստեղծվեց 1987 թ. դեկտեմբերի 14-ին շեյխ Ահմեդ Յասինի կողմից՝ «Մուսուլման եղբայրներ» և «Իսլամական ջիհադ» կազմակերպությունների հիմքի վրա:

ՀԱՄԱՍ-ի և ՊԱԿ-ի փոխհարաբերությունները հակամարտությունների, փոխզիջումների, զինադադարների բարդ թնջուկ է, որոնք պայմանավորված են եղել տարբեր ժամանակահատվածներում կողմերի ունեցած մարտավարական շահերով³:

¹ Ланда Р.Г., Освободительная борьба народов Палестины, "Народы Азии и Африки", 1976, № 1, с. 25.

² Примаков Е.М., Проблема Палестины в XX в.: истоки, эволюция, перспективы, "Палестинский сборник", Вып. 27, Ленинград, 1981, с. 18.

³ Афанасьев Н.Н., Идеология терроризма, "Социально-гуманитарное знание", 2004, № 6, с. 205-218.

1994 թ. հոկտեմբերի 20-ին ՀԱՄԱՍ-ի առաջնորդներից Ի. Ֆալու-
ջին հայտարարեց, որ իրենք շարունակելու են պայքարն այնքան ժա-
մանակ, քանի դեռ Իսրայելը չի հեռացել Արևմտյան ափից և Ղազայի
հատվածից: Սակայն մի քանի օր անց Պաղեստինի Ազգային վարչա-
կազմի ճնշման տակ ՀԱՄԱՍ-ը հաշտություն առաջարկեց Իսրայել-
ին: Ժամանակավոր հաշտությունը կախված էր ՊԱԿ-ՀԱՄԱՍ հա-
րաբերություններից, որոնք սրվեցին 1995 թ., երբ ՀԱՄԱՍ-ի առաջ-
նորդն «անողորմ պայքար» հայտարարեց Արաֆաթին, իսկ Պաղես-
տինյան վարչակազմին անվանեց «հրեական հետախուզության
ձեռք»: Նա նույնիսկ հայտարարեց, որ Իսրայելի հետ խաղաղության
պայմանագրի կնքման փորձերը «հանցագործություն են իսլամի
դեմ»: 1995 թ. փետրվարին Իսրայելը ձեռնարկեց պատժիչ գործողու-
թյուններ և ձերբակալեց ՀԱՄԱՍ-ի առաջնորդներից մեկին՝ շեյխ Հա-
մամիին⁴: ՀԱՄԱՍ-ն Իսրայելին առաջարկեց իրական խաղաղութ-
յուն կնքել, եթե վերջինս հեռանա Արևմտյան ափից, Ղազայի հատ-
վածից և Արևելյան Երուսաղեմից, բայց երկու շաբաթ անց հարձա-
կում իրականացրեց հրեական բնակավայրերի վրա:

Այս դեպքերից հետո Կահիրեում հանդիպեցին ՀԱՄԱՍ-ի և ՊԱԿ-
ի ներկայացուցիչները, որը ձևական առումով համագործակցության
սկիզբ դնելու առաջին փորձն էր: ՀԱՄԱՍ-ը հրաժարվեց ճանաչել
ՊԱԿ-ին որպես պաղեստինյան ժողովրդի շահերը ներկայացնող լի-
իրավ կառույց, որը ներկայացնում է պաղեստինյան կողմին արաբա-
իսրայելական խաղաղության բանակցային գործընթացում: Միակ
դրական ձեռքբերումն այն էր, որ ՀԱՄԱՍ-ի ներկայացուցիչ ազ-Ջա-
բարին հայտարարեց, որ դադարեցնում է Իսրայելի վրա հարձակում-
ները, որպեսզի տեսնեն արդյո՞ք ՊԱԿ-ը կարող է արդյունքի հասնել
Իսրայելի հետ բանակցություններում: Միաժամանակ ՀԱՄԱՍ-ը հայ-

⁴ Аль-Ахрам, 1995, № 234.

տարաբեց ՊԱԿ-ի վերահսկողության տակ գտնվող տարածքներում ընտրություններին մասնակցելու իր մտադրության մասին:

1996 թ. հունվարի 5-ին ՊԱԿ-ի և ՀԱՄԱՍ-ի միջև զինադադարն ընդհատվեց վերջինիս անդամ Այաշայի սպանության պատճառով, որն Իսրայելի դեմ իրականացված մի շարք ահաբեկչական ակտերի կազմակերպիչն էր: Չի բացառվում այն տարբերակը, ըստ որի դեպքերի վերոհիշյալ զարգացումը ձեռնտու էր հատկապես Իսրայելին, որը հնարավորություն էր ստանում հերթական անգամ պառակտել պաղեստինյան ուժերը, չնայած, Այաշայի սպանությունից հետո տեղի ունեցան մի շարք ահաբեկչական գործողություններ, սպանվեցին տասնյակ և վիրավորվեցին հարյուրավոր մարդիկ⁵: ԱՄՆ-ի և Իսրայելի ճնշման տակ Արաֆաթը ստիպված էր ՀԱՄԱՍ-ի հարյուրավոր գրոհայինների ձերբակալման համաձայնություն տալ: 1996 թ. մարտի 1-ին ՀԱՄԱՍ-ն առաջարկեց հաշտության դիմաց բաց թողնել ձերբակալվածներին և դադարեցնել կազմակերպության նկատմամբ «ահաբեկչությունը», որը, բնականաբար, մերժվեց Իսրայելի կողմից: Ի պատասխան՝ ՀԱՄԱՍ-ի ահաբեկիչը պայթեցրեց իրեն մարդաշատ ավտոբուսում: 1996 թ. հունիսի 20-ին ՀԱՄԱՍ-ը երկրորդ անգամ առաջարկեց Իսրայելին դադարեցնել «սիոնիստական ահաբեկչություն»-ը՝ այդ պահանջը հիմնավորելով ՊԱԿ-ի և ՀԱՄԱՍ-ի միջև միասնություն և հաշտություն հաստատելու փաստով: Իսրայելն այս անգամ ևս մերժեց՝ կարծես հաստատելով այն վարկածը, որ իրեն ձեռնտու չէ պաղեստինյան ուժերի միջև հաշտության կայացումը:

1997 թ. հոկտեմբերի 7-ին իսրայելական բանտից ազատ արձակվեց շեյխ Ահմեդ Յասինը, որը գրավական կարող էր հանդիսանալ հաշտության հաստատման համար, եթե Իսրայելը կատարեր ՀԱՄԱՍ-ի վերոհիշյալ պահանջները⁶: Միաժամանակ ՀԱՄԱՍ-ի ռազմական թևի ներկայացուցիչները չթուլացրեցին ռազմական հռե-

⁵ Кожушко Е., Современный терроризм. Анализ основных направлений, Минск, 2000.

⁶ Аль-Кудс, 10.10.1997.

տորաբանությունը, քանի որ մեկ ամիս անց Իսրայելը ՀԱՄԱՍ-ի անդամների ձերբակալությունների նոր շարք սկսեց: 1999 թ. մայիսին՝ Իսրայելում ընտրությունների նախօրեին, ՀԱՄԱՍ-ը կրկնեց հաշտության իր առաջարկը՝ պահանջելով իսրայելական զորքերը դուրս բերել մինչև 1967 թ. սահմանները: Այս առաջարկը մերժվեց իսրայելական կողմից և սկսվեց երկրորդ ինթիֆադան կամ «Ալ-Աքսան», որին 2001 թ. հունիսին հաջորդեց պաղեստինցի մահապարտի ահաբեկչությունը Թել-Ավիվի «Դելֆինարիում» դիսկոտեկում: Միջազգային հանրության և հատկապես Ռուսաստանի ու ԱՄՆ-ի ճնշման տակ Արաֆաթը ստիպված էր հայտարարել Իսրայելի հետ զինադադարի մասին, որին իր համաձայնությունը հայտնեց նաև շեյխ Յասինը: ՀԱՄԱՍ-ի կողմից արված զինադադարի բոլոր առաջարկները մեկ նպատակ էին հետապնդում՝ վերականգնել ուժերը Իսրայելի և ՊԱԿ-ի հետ հակամարտությունը շարունակելու համար և այդ իսկ պատճառով մերժվում էին Իսրայելի կողմից, որն էլ, իր հերթին, առիթը բաց չէր թողնում այդ երկու ուժերին իրար դեմ հանելու համար: Այդ ամենով հանդերձ, իր ոչ մի առաջարկության մեջ ՀԱՄԱՍ-ը չէր հրաժարվում Պաղեստինի ամբողջական ազատագրումից և այստեղ իսլամական պետության ստեղծելուց⁷:

ՊԱԿ-ի և ՀԱՄԱՍ-ի միջև տարիներ շարունակվող կոշտ դիմակայությունը կարելի է բացատրել ներքին և արտաքին գործոններով: Ներքին գործոնը Պաղեստինի ներքաղաքական կյանքում դերակատարման և ազդեցության աճի շուրջ բացահայտ մրցակցությունն է, իսկ արտաքին գործոնը՝ Պաղեստինի արաբ ժողովրդի շահերի ներկայացման և Իսրայելի դեմ պայքարի մեթոդաբանության շուրջ եղած տարաձայնությունները. ՀԱՄԱՍ-ը ջիհադի կամ սրբազան պատերազմի միջոցով (որը նրանց պայքարի միակ ձևն է) պայքարում է ամբողջ Պաղեստինի ազատագրման և իսլամական պետության ստեղծ-

⁷ Свищев А., О терроризме //Еврейский обозреватель, № 4/95. февраль 2005 (цит по jewukr /observer/ co2003/page_show_ru.php?id=985).

ման համար⁸, իսկ ՊԱԿ-ը՝ անկախ Պաղեստինյան պետության ստեղծման համար, որի կողքին կարող է գոյություն ունենալ նաև Իսրայելը: ՊԱԿ-ը, որը տարիներ շարունակ նույնպես պայքարի միակ ուղին համարում էր զինված ուղին, 1993 թ. Օսլոյի համաձայնագրից հետո փոխեց իր ռազմավարությունը և նույնիսկ հանդես եկավ բռնության ու ահաբեկչության դեմ: Դա հստակ երևաց Ալ-Աքսայի ինթիֆադայի ժամանակ, երբ Արաֆաթը քննադատեց ՀԱՄԱՍ-ի կողմից «Կասամ» տեսակի հրթիռներով Իսրայելի հրթիռակոծումը՝ դա որակելով ոչ միայն սխալ, այլև ժամանակավրեպ: Իր հերթին ՀԱՄԱՍ-ը քննադատեց Պաղեստինյան Հրատարակչական գործակալությանը, որը հրաժարվում էր տեղեկություններ տպագրել շահիդների գործողությունների մասին և նույնիսկ փակել էր «Ար-Ռիսալ» թերթը, որը նման տեղեկատվություն էր հրապարակում⁹: 2003 թ. հունվարին Կահիրեում Եգիպտոսի նախաձեռնությամբ նոր փորձեր կատարվեցին հաշտեցնելու ՀԱՄԱՍ-ին և ՊԱԿ-ին, սակայն ՀԱՄԱՍ-ի ներկայացուցիչ Նազալը հայտարարեց, որ իրենք չեն դադարեցնում զինված պայքարը, իսկ առաջնորդներից Ռանտիսին նույնիսկ քննադատեց Եգիպտոսի դիրքորոշումը¹⁰: Եվս մեկ անգամ ՀԱՄԱՍ-ը ցույց տվեց, որ չի ընդունում ՊԱԿ-ին որպես պաղեստինյան ժողովրդի միակ ներկայացուցիչ:

Նշենք, որ դեռևս 1993 թ. Սուդանում ՀԱՄԱՍ-ը ՊԱԿ-ին առաջարկել էր երեք պայմաններ, որոնց կատարման դեպքում կդառնար ՊԱԿ-ի մաս.

1. ՊԱԿ-ը չի ճանաչելու ՄԱԿ-ի 1967 թ. 242-րդ բանաձևը,
2. Պաղեստինի Ազգային Խորհրդի 40 տոկոսը տրվելու է ՀԱՄԱՍ-ին,

⁸ Сельцовский П.А., Разновидности и формы терроризма в современных условиях, "Социально-гуманитарное знание", 2006, № 4, с. 301-307.

⁹ Аль-Хаят, 16.10.2002.

¹⁰ Ар-Рисаля, 20.02.2003.

3. ՊԱԿ-ում իրականացվելու են կառուցվածքային փոփոխություններ:

ՊԱԿ-ի ղեկավարությունը, բնականաբար, մերժեց այս առաջարկները, քանի որ Օսլոյի համաձայնագիրը հնարավորություն էր ստեղծում խաղաղ ճանապարհով Պաղեստինյան պետության կայացման համար, իսկ ՀԱՄԱՍ-ն այդ համաձայնագիրը համարում էր անօրինական, քանի որ այն օրինականացնում էր Պաղեստինի տարածքի 80 տոկոսի պատկանելությունն Իսրայելին: Չնայած Խաբտումի հանդիպումից հետո համագործակցության և դիմակայության դադարեցման մասին երկուստեք հնչեցրած հայտարարություններին, պարզ էր, որ միջազգային հանրության առջև ՊԱԿ-ի ստանձնած պարտավորությունները՝ դադարեցնել ահաբեկչությունը, ուղղակի հակասության մեջ է մտնելու ՀԱՄԱՍ-ի մերողաբանության և Իսրայելի դեմ տարվող սրբազան պատերազմի գաղափարախոսության հետ: Բացի այդ, Իսրայելի հետ ձգձգվող անարդյունավետ բանակցությունները ՊԱԿ-ի ներսում կոռուպցիոն բացահայտումները, Ղազայի հատվածում պաղեստինյան փախստականների առկայությունը բնակչության շրջանում ավելի ու ավելի էին բարձրացնում ՀԱՄԱՍ-ի հեղինակությունը:

Քաղաքական և գաղափարական դիմակայությունը ՀԱՄԱՍ-ի և ՊԱԿ-ի միջև ավելի խորացավ, երբ Պաղեստինյան վարչակազմի վարչապետ նշանակվեց Մահմուդ Աբբասը (Աբու Մազեն): Ի պատասխան՝ ՀԱՄԱՍ-ը ակտիվացրեց ահաբեկչական գործողությունները: 2003 թ. սեպտեմբերի 19-ին Ղազայի հատվածում նույնիսկ բախումներ տեղի ունեցան ՀԱՄԱՍ-ի և Պաղեստինի անվտանգության ուժերի աշխատակիցների միջև, որին հաջորդեց Աբբասի կառավարության հրաժարականը¹¹:

¹¹ Ам-Шарк аль-Аусат, 23.02.2003.

Այդուհանդերձ, 2008 թ. ՊԱԿ-ը Աբբասին ընտրեց Պաղեստինյան ինքնավարության կամ պետության ղեկավար: Էականորեն փոխվեց Աբբասի վերաբերմունքը ՀԱՄԱՍ-ի նկատմամբ և նա սկսեց պարզևստրել վերջինիս գրոհայիններին¹²: Դա պայմանավորված էր ՀԱՄԱՍ-ի իրական դերի գնահատմամբ և Ղազայի հատվածի ընտրություններում նրա տարած հաղթանակի հանգամանքով:

ARTAK HOVHANNISYAN

ASUE Gyumri branch

ON THE ISSUE OF CONFRONTATION BETWEEN THE ISLAMIC RESISTANCE MOVEMENT (HAMAS) AND PLO

SUMMARY

Over the years, Hamas and the PLO were in fierce confrontation. Differences that characterize the conflict between the 2 organizations involve not only the scope of the internal political existence in Palestine and their position as equal representatives of the interests of the Palestinian people, but also the methods of warfare with Israel. PLO supports the establishment of an independent Palestinian state, allowing its coexistence alongside the state of Israel. HAMAS insists that there is no other solution to the Palestinian problem except jihad". Since its inception, Hamas has refused to recognize the PLO as the sole representative of the Palestinian people and was pushing itself as an alternative authoritative body. During the meeting held in Khartoum on January 4, 1993, representatives of the Hamas delegation expressed their desire to join the movement to the PLO under three conditions:

¹² A Palestinian 'gift' for Passover - Official Palestinian promotion of terrorism, 8 Apr. 2011, МИД Израиля.

1) The PLO should refuse to recognize the United Nations Security Council Resolution 242.

2) Members of the Hamas constitute 40 % of the Palestine National Council.

3) There will be structural changes in the PLO.

أرتاك دوفهانيسيان

جامعة الاقتصاد الحكومية الارمنية (فرع كيومري)

حول قضية الصراع بين حماس ومنظمة تحرير فلسطين

ملخص

إن جوهر الصدام المستمر لسنوات طويلة بين منظمة تحرير فلسطين وحماس يكمن في عوامل داخلية وخارجية. العامل الخارجي هو عرض المصالح العربية والخلاف في نهج النضال ضد إسرائيل.

والعامل الداخلي يتمثل في التنافس بين القوتين في الحياة السياسية الداخلية حيث إن حركة حماس ترفض كون منظمة تحرير فلسطين كالممثل الوحيد للشعب الفلسطيني. وقد اقترحت في السودان سنة 1993 ثلاثة شروط والتي في حالة قبولها تكون حركة حماس جزءا من حركة تحرير فلسطين.

ففي سنة 2008 بعد انتخاب محمود عباس رئيسا لفلسطين لوحظ بعض التفاهم المشترك والذي من الممكن ان يؤدي في المستقبل الى تحسين العلاقات والتعاون بين الحركتين.

ԷԶԵՐ ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԻՋԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատմության հոլովություն Հայաստանը հոգևոր-մշակութային, գիտակրթական, առևտրատնտեսական և քաղաքական տարաբնույթ շփումներ է ունեցել հաքևան և հեռավոր երկրների և ժողովուրդների հետ: Այդ փոխհարաբերություններում կամրջի դեր են կատարել աշխարհի զանազան երկրներում ձևավորված հայկական գաղթավայրերը: Նորագույն ժամանակաշրջանում այդ առաքելությունն իրականացնում է հայկական Սփյուռքը: Սփյուռքահայերը կարևոր ներդրում ունեն հյուրընկալ երկրների հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային, պետական կառավարման, առևտրատնտեսական ոլորտներում:

Հայաստանի և Եգիպտոսի միջև ձևավորված բարեկամական փոխհարաբերությունները շարունակվում են ընդհուպ մինչև մեր օրերը: 2003 թ. տվյալներով՝ Եգիպտոսում բնակվում էր շուրջ 6 հազար հայ՝ Կահիրեում (5000) և Ալեքսանդրիայում (1000): Գործում է հայկական 6 եկեղեցի, ազգային 3 վարժարան, մշակութային, բարեգործական և մարզական 10 միություն: Լույս է տեսնում 3 պարբերական¹:

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումից հետո բարեկամական հարաբերություններ են հաստատվել Եգիպտոսի Արաբական Հանրապետության հետ: Առհասարակ երկկողմ փոխհարաբերությունների համատեքստում ուրույն դերակատարությունն ունի մշակութային երկխոսությունն ու փոխգոր-

¹ «Հայ Սփյուռք» հանրագիտարան, գլխ. խմբ.՝ Հ. Այվազյան, Երևան, 2003, էջ 153-154:

ծակցությունը: Այս տեսակետից կարևոր է հայ-եզիպատական միջ-գրադարանային համագործակցությունը, որտեղ առանցքային է Հայաստանի Ազգային գրադարանի դերակատարությունը:

Ազգային գրադարանը գրադարանագիտական, մատենագիտական, մեթոդական և տեղեկատվական-գիտահետազոտական կենտրոն է: Համագործակցում է աշխարհի 40 երկրների 160 կազմակերպությունների, գրադարանների և անհատների, ինչպես նաև Հայաստանում գործող 21 դեսպանատների և միջազգային կազմակերպությունների գրասենյակների հետ²: Այսօր Ազգային գրադարանն ընթանում է գրադարանային գործի ինքնուրույն վերաիմաստավորման ուղիով՝ նոր պայմաններում կարևորելով գրադարանների դերի բարձրացումը³:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում միջգրադարանային համագործակցությունը և առհասարակ գրադարանային գործը բարձրացնել որակական մի նոր աստիճանի: Ինչպես նշում է Տ. Զարգարյանը, «Համակարգիչների մուտքը հեղաշրջում կատարեց տեղեկատվության պահոցներում՝ առաջադրելով գրադարանների, արխիվների, թանգարանների աշխատանքը կազմակերպել նորովի: Եվ պատահական չէ, որ ներկայումս գնալով մեծ թափ է ստանում այդ կառույցների թվայնացումը»⁴:

1997 թ. մայիսի 10-ին Երևանում Հայաստանի Հանրապետության կառավարության և Եզիպոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև ստորագրվեց համաձայնագիր կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում համագործակցության մասին⁵:

² <http://www.nla.am>.

³ Հայաստանի Ազգային գրադարան, ուղեցույց, Երևան, 2000, էջ 2:

⁴ Զարգարյան Տ., Թվային գրադարաններ, Երևան, 2002, էջ 7:

⁵ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու, 1999-2001, էջ 7:

Արդեն 2003 թ. հանրապետության գրադարանավարների մի մեծ խումբ՝ 16 հոգուց բաղկացած (ազգային գրադարանի տնօրեն Դ. Սարգսյան, փոխտնօրեն Ռ. Ղազարյան և այլք), որից չորսը մարզերից (Սյունիք, Լոռի, Շիրակ, Արմավիր), մեկնեց Եգիպտոս: Հայ գրադարանավարների խումբը Եգիպտոսում հյուրընկալվեց 21 օր: Հրավերի նպատակն էր ուսումնասիրել գրադարանային գործընթացների ավտոմատացումը և բարձրագույն տեխնոլոգիաների կիրառումը գրադարաններում:

Գրադարանային գործը Եգիպտոսում այդ ժամանակ գտնվում էր բարձրագույն տեխնոլոգիաների կիրառման և գործընթացների ավտոմատացված համակարգերին անցնելու փուլում: Գրեթե լրիվ թվայնացված էին երկրի խոշորագույն՝ Կահիրեի Ազգային և Մուբարակի անվան գրադարանները (բացառություն էր Ալեքսանդրիայի գրադարանը, որն աշխարհի մակարդակով ցուցադրական գրադարան է թե՛ ճարտարապետական, թե՛ հատկապես բարձրագույն տեխնոլոգիաների կիրառման իմաստով):

Դասընթացների ծրագրի մաս էր կազմում նաև աշխարհի հրաշալիքներից մեկի՝ Ալեքսանդրիայի գրադարան այցելությունը: Ալեքսանդրիայի գրադարանի ամենաաչքի ընկնող տեղում ներկայացված է նաև Մեսրոպյան գեղազիի այբուբենը⁶:

2005 թ. դեկտեմբերի 5-ին պաշտոնական այցով Եգիպտոս մեկնեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորած պատվիրակությունը: Դեկտեմբերի 7-ին Եգիպտոսի նախագահ Հուսնի Մուբարակի և ՀՀ վարչապետի զրույցի ընթացքում կողմերն ընդգծեցին Հայաստանի և Եգիպտոսի միջև քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական կապերի խորացման ահրաժեշտությունը⁷:

⁶ Հայկական գրադարան, տարեգիրք, տպագրության պատրաստեցին՝ Ն. Հայրապետյանը և Ռ. Ղազարյանը, Երևան, 2004, էջ 92-93, 95:

⁷ <http://armenpress.am/arm/print/110785/>.

Երկկողմ պայմանավորվածության համաձայն՝ 2006 թ. փետրվարի 7-ին Ալեքսանդրիայի գրադարանում տեղի ունեցավ Երևանի Մատենադարանում պահվող հայկական ձեռագրերի ցուցահանդես, որը մեծ արձագանք գտավ եգիպտական հասարակության մեջ: Փետրվարի 9-ին գրադարանում կայացավ գիտաժողով՝ «Հայ-եգիպտական պատմամշակութային հարաբերությունները» թեմայով, որտեղ զեկույցներով հանդես եկան հայկական պատվիրակության անդամները՝ ՀՀ ԳԱԱ Հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Վ. Բ. Բարխուդարյանը, Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Ս. Ս. Արեշադյանը և ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆ. Ն. Հ. Հովհաննիսյանը⁸:

Հաջորդ այցելությունը Եգիպտոս տեղի ունեցավ 2009թ. ամռանը: Հունիսի 26-ից հուլիսի 11-ը Հայաստանի Ազգային գրադարանի 15 աշխատակիցներ մասնակցեցին Եգիպտոսի «Տեխնիկական համագործակցության հիմնադրամի» կազմակերպած գրադարանային գործի դասընթացներին: Դասընթացները կազմակերպվել էր ԱՊՀ երկրների մասնագետների համար՝ եգիպտական գիտության և տնտեսության ամենատարբեր բնագավառներում ձեռքբերումներին նրանց հաղորդակից դարձնելու նպատակով: Դասընթացներն անցկացվեցին Եգիպտոսի կրթության նախարարության «Ազգային ռեսուրս կենտրոնում»⁹:

Դասընթացների մեկնարկից առաջ խումբը եղավ Ալեքսանդրիայի նոր գրադարանում, որի հիմնաքարը դրվել էր 1988 թ.: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոչով գրադարանի կառուցմանը մասնակցել են տարբեր երկրներ և միջազգային կազմակերպություններ: Գրադարանը հանդիսավոր քաղվեց 2002 թ. աշնանը:

⁸ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հտ. III, Երևան, 2006, էջ 322-323:

⁹ Ղազարյան Հ., Գրադարանային դասընթացներ Եգիպտոսում, «Հոգևոր հայրենիք» ամսաթերթ, Երևան, 2009, հուլիս, էջ 9:

Դասախոսությունները վարում էին կենտրոնի գրադարանի աշխատակիցները: Մեկ տասնյակից ավելի գեկուցումների թեմաները բազմազան էին՝ էլեկտրոնային, թվային գրադարանները, հեռակա ուսուցման առանձնահատկությունները և ձևերը, եզիպտական հին գրավոր հուշարձանների «կրիչները» (կադիդ, պապիրուս, ուղտի ոսկոր և կաշի, բրդյա և բամբակյա կտորներ) և նրանց վնասվելու պատճառները, պահպանման ձևերն ու վերականգնման միջոցները, համացանցում և միջազգային տվյալների բազայում որոնման ռազմավարությունը, Եզիպտոսում գործածական որոնողական ծրագրերը, մասնագիտական և մասնավոր կայքէջերը, դրանցում որոնման առանձնահատկությունները, էլեկտրոնային կրիչների դասիչավորումը, վարչական-տեղեկատվական համակարգերը, տեղեկատվական համակարգերի գնահատման չափանիշները և օգտվողին իրազեկելու համար կիրառելի մեթոդները, գրադարանի կառավարումը, տեսալսողական նյութերի կիրառումը, գիտելիքի փոխանցման միջոցների և տեղեկատվության կրիչների պատմությունը, ատենախոսությունների մշակումը, պահպանումը և այլն¹⁰:

Նման դասընթացներին մասնակցելը, արտերկրում գրադարաններ այցելելը, նրանց փորձին առնչվելը, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններին տիրապետելը գրադարանային մասնագետների վերապատրաստման համար կարևոր գործոններ են: Հանրահայտ իրողություն է, որ միջգրադարանային համագործակցությունը մշակութային երկխոսության կարևոր գրավականներից է:

¹⁰ Նույն տեղում, էջ 9: Նշենք, որ Եզիպտոսում հրատարակվող «Արև» պարբերականի 1915-2000 թթ. թվայնացված տարբերակները 2010 թ. հուլիսին Կահիրեի ՀԲԸՄ-ի վարչության կողմից հանձնվել է Հայաստանի ազգային գրադարանին:

PAGES FROM THE HISTORY OF ARMENIAN-EGYPTIAN INTERLIBRARY COOPERATION

SUMMARY

Armenian-Egyptian bilateral friendly relations continue until the present. In 2003 and 2009 a group of Armenian librarians from the National and other libraries of the Republic of Armenia visited the Arab Republic of Egypt. During those visits Armenian librarians went to famous Egyptian libraries, such as the National Library of Cairo, the Library named after Hosni Mubarak, the Library of Alexandria, as well as the public and university libraries. The letters of the Armenian alphabet are carved on the wall of the library of Alexandria.

Usually the interlibrary cooperation is the important guarantee of cultural dialogue.

مهير غازينيان
مكتبة أرمينيا الوطنية

صفحات من تاريخ التعاون بين المكتبات الأرمنية والمصرية

ملخص

تمثل المقالة زيارة مجموعة من الموظفين للمكتبة الوطنية في جمهورية أرمينيا إلى جمهورية مصر العربية في سنتي 2003 و 2009. وتجدر الإشارة أن موظفي المكتبات المحافظات الأرمنية الأربعة (سيونيك، لوري، شيراك وأرمافير) اشترك في زيارة إلى مصر سنة 2003. فقد زارت الموظفون خلال الزيارتين المذكورتين المكتبة الوطنية في القاهرة والمكتبة المسمى باسم حسني مبارك ومكتبة الاسكندرية وعدة مكتبات التابعة للجامعات والمكتبات العامة. والجدير بالذكر ان الزيارات المذكورة الى مصر وتبادل الخبرة حظيت بأهمية كبيرة في الوقت الراهن من حيث أن التعاون على مستوى المكتبات وسيلة مهمة في مجال التعاون المتبادل والحوار الثقافي بين البلدين.

**«ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ». ԱՐԳԵԼՎԱԾ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՏԱՊԱԼՎԱԾ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ**

«Մուսուլման եղբայրներ» (جماعة الإخوان المسلمين) կամ ուղղակի՝ الإخوان المسلمون) խմբավորումը ստեղծվել է 1928 թ. Եգիպտոսի Իսմայիլիա քաղաքում: Եգիպտոսն այդ ժամանակ գտնվում էր Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատի ներքո: Կազմակերպության հիմնադիրն էր շեյխ Հասան Ալ-Բաննան: Կահիրեում մուսուլմանական ոգուն հակասող արևմտյան սովորույթների ու բարքերի տարածումն Ալ-Բաննայի վրա սարսափելի տպավորություն էր թողել: Հենց այս ընթացքում էլ նա որոշել է մուսուլմաններին Մուհամմադ մարգարեի և բարեպաշտ խալիֆաների օրոք ձևավորված «մաքրամաքուր իսլամին» վերադարձնել: Նորաստեղծ կազմակերպության կարգախոսն էր՝ «Ալլահը մեր նպատակն է, մարգարեն՝ առաջնորդը, Ղուրանը՝ սահմանադրությունը, ջիհադը՝ մեր ուղին, հանուն Ալլահի մահը՝ մեր բարձրագույն իդըլ, իսկ իսլամը՝ մեր լուծումը»¹:

Կազմակերպության վարդապետությունը մշակվել է հիմնականում Հասան Ալ-Բաննայի կողմից, իսկ հետագա զարգացումը ստացել Սայիդ Քուբբի աշխատություններում: Նրանք կոչ էին անում ընդհիմանալ «Արևմուտքի գաղութարարական ներխուժմանը»: Մերժելով արևմտյան քաղաքական համակարգը՝ Ալ-Բաննան ենթադրում

¹ The Muslim Brotherhood - in its own words, PMW translation of Jihad is the Way by Mustafa Mashhur Leader of the Muslim Brotherhood in Egypt, from 1996 - 2002 [http://palwaich.org/STORAGE/special/%20reports/Jihad_is_the_way_by_Mustafa_Mashhur.pdf]

էր, որ ապագա մահմեդական հասարակությունը պետք է մշակի իր սեփական՝ շարիաթի վրա հիմնված քաղաքական համակարգը:

Թեև ժամանակին «Մուսուլման եղբայրներն» աջակցեցին «Ազատ սպաների» 1952 թ. հուլիսի 23-ի հեղափոխությանը², այնուամենայնիվ 1954 թ. սկսած Եգիպտոսում այն արգելված կազմակերպություն էր: 1970-ականներին՝ Անվար Սադաթի իշխանության առաջին տարիներին, կազմակերպությունը գործունեության ազատություն ստացավ, սակայն երբ նախագահը ստորագրեց 1979 թ. Քեմպ-Դևիդյան համաձայնագրերը, «Մուսուլման եղբայրները» երես թեքեցին Սադաթից, իսկ 1981 թ. Ա. Սադաթի սպանությունից հետո, որը, ըստ եգիպտական պաշտոնական վարկածի, իրականացրել էին «Մուսուլման եղբայրներ»-ի ծայրահեղական խմբավորումներից մեկի անդամները³, կազմակերպության գործունեությունը Եգիպտոսում կրկին արգելվեց:

1977 թ. կազմակերպությունը սկսեց փոփոխություններ կատարել իր գործելակերպում. այն վերածվեց քաղաքական կուսակցության, հրաժարվեց ահաբեկչությունից: 1981 թ. Եգիպտոսի նախագահ դարձավ Հոսնի Մուբարաքը, ում կառավարման շրջանում ևս «Մուսուլման եղբայրները» շարունակեց մնալ արգելված կազմակերպություն:

Արդեն 2005 թ. ընտրություններում նրանց անկախ թեկնածուները 454 տեղից՝ ստացան 88-ը խորհրդարանի ստորին պալատում (համաձայն եգիպտական սահմանադրության՝ երկրում արգելված էին կրոնական հիմքով կուսակցությունները): Այս փաստը որոշ չափով ազդեց իշխող կուսակցության դիրքերի վրա:

² Հեղափոխության հետևանքով տապալվեց միապետությունը, հաստատվեց հանրապետություն:

³ 1970-1980-ական թթ. Եգիպտոսում ՄԵ կազմակերպության երեք խմբավորումներ կային՝ ծայրահեղական, չափավոր, իսլամական դեմոկրատներ:

2010 թ. վերջին Եգիպտոսում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, իսկ արդեն 2011 թ., ինչպես հայտնի է, «Արաբական գարունը»⁴ տարածվեց ամբողջ Եգիպտոսում:

Չանդրադառնալով հեղափոխության մանրամասներին՝ նշենք, որ շատ հետաքրքիր է Եգիպտոսի արդեն նախկին իշխանության՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության պետական իշխանության գալու գործընթացը, հատկապես որ հեղափոխության կազմակերպման գործում նրանք առանձնակի ներդրում չունեին:

Սկզբնական շրջանում վախենալով, որ ստեղծված հեղափոխական իրավիճակի համար իշխանությունները կարող էին իրենց մեղադրել, «Մուսուլման եղբայրները» շատ զգույշ էին արձագանքում իրադարձությունների զարգացմանը և չէին ցանկանում մասնակցել ցույցերին: Հետագայում նույնպես նրանք մեծ դերակատարում չունեցան արաբական աշխարհը ցնցած դրամատիկ իրադարձություններում: Սակայն մի շարք փոփոխությունների արդյունքում «Մուսուլման եղբայրները» լավագույն դրության մեջ հայտնվեցին: Այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ «Մուսուլման եղբայրները» ու նրանց տարաբնույթ ճյուղերն օգտվեցին պատմական պահից՝ իրենց հասարակական ուժը քաղաքականի վերափոխելու համար՝ մնալով ստվերում: Նրանց ռազմավարությունը շատ զգուշավոր էր. թաքցնում էին իրենց ծայրահեղական գաղափարախոսությունը՝ Արևմուտքին ցույց տալով իրենց ծրագրի առավել չափավոր կողմերը, ԶԼՄ-ների հետ քաղաքականապես հարգալից էին շփվում և միաժամանակ էին այնպիսի բողոքի ցույցերի, որոնց իրենց սկզբունքներն առանձնապես չէին համապատասխանում:

2012 թվականը շրջադարձային եղավ կազմակերպության համար: Տարվա սկզբին նրանց «Ազատություն և արդարություն» կուսակցությունը ստացավ Եգիպտոսի նոր կազմավորված խորհրդա-

⁴ Քաղաքական այս տեսությունն առաջադրվել է ԱՄՆ պետքարտուղար Ջոն Դալեսի կողմից, որի հիմքում ընկած է շղթայաձև արձագանքի սկզբունքը:

րանի տեղերի մեծամասնությունը: Տարվա երկրորդ կեսին արդեն նրանց թեկնածու Մուհամմադ Մուրսին դարձավ Եգիպտոսի՝ քիչ թե շատ ժողովրդավարական ընտրությունների միջոցով ընտրված առաջին նախագահը: Նա առաջին նախագահն էր, ով պատկանում էր մահմեդական ուղղության և չունեի զինվորական անցյալ: Հունիսի 30-ին Զինվորական ուժերի բարձրագույն խորհուրդը մոտ մեկ ու կես տարի իշխանությունն իր ձեռքում պահելուց հետո այն հանձնեց նախագահ Մուհամմադ Մուրսիին: Մուրսիի ընտրությունից հետո շատերը սկսեցին համարել, որ Եգիպտոսը թևակոխել է իր պատմության «երկրորդ հանրապետության» շրջան: Դեկտեմբերին Եգիպտոսում տեղի ունեցավ երկրի Սահմանադրության հանրաքվե, որի արդյունքում նոր սահմանադրության օգտին քվեարկեց եգիպտացիների մեծամասնությունը (մոտ 64 %):

2011 թ. հեղափոխական դեպքերի ընթացքում հիմնական ուժերը երիտասարդներն էին, «հեղափոխական» միավորումներն ու լիբերալները, որոնք հասան Մուբարաքի իշխանության տապալմանը: Եգիպտական երիտասարդությունը միլիոններով դուրս էր գալիս փողոց այն հույսով, որ նախկին վարչակարգի տապալմանն անմիջապես սոցիալական ոլորտում փոփոխություններ կհետևեն: Սակայն երկար ժամանակ այդ «հեղափոխական ջոկատները» չունեին ո՛չ որևէ հստակ միավորող կազմավորում, ո՛չ էլ մեկ ընդհանուր հարթակ կամ գաղափարախոսություն: Առանձին հասարակական-քաղաքական հայտնի գործիչների կողմից այդպիսի շարժումները դեկավարելու փորձերն էական արդյունքի չէին հանգեցնում:

Դեպքերի այսպիսի ընթացք ստանալու և հեղափոխության ազդակ հանդիսացող ուժերի՝ այդ շրջանում իշխանությունից դուրս մնալու շրջանառվող պատճառն այն էր, որ «Մուսուլման եղբայրներն» արդեն 80 տարուց ավելի գոյություն ունեին Եգիպտոսում:

Նրանք, լինելով ամենափին իսլամական քաղաքական կազմակերպություններից մեկը, բազմիցս եղել էին արգելված ուժ Եգիպտոսում՝ պատմության ողջ ընթացքում սովորելով ճիշտ մարտավարություն ընտրել այդպիսի հակասական իրավիճակներում: Բացի այդ, կազմակերպությունն այն ուժն էր, որը, ի տարբերություն վերը նշված «հեղափոխականների», ուներ հստակ կառուցվածք, գաղափարախոսություն, քաղաքական ծրագիր: Դրանց առկայության պարագայում կարողացավ ճկուն գտնվել և իշխանության գալ:

Ինչպես արդեն նշվել է, «Մուսուլման եղբայրները» երկար ժամանակ գործել էր կառավարող վարչակարգի ընթացքում: Այդ շրջանում կազմակերպությունը չէր կարող շարունակել իր՝ թեկուզ անօրինական գործունեությունը, եթե այս կամ այն կերպ չհամագործակցեր Մուբարաքի և զինվորական իշխանության հետ: Դա է պատճառը, որ երբ երկիրը հեղափոխությունից հետո ամիսներ շարունակ գտնվում էր անցումային փուլում՝ զինվորական ուժերի Գերագույն խորհուրդի ղեկավարության տակ, «Եղբայրները» կարողացան այնպես տանել իրենց քարոզչությունը, որ արդյունքում Եգիպտոսի խորհրդարանում մեծամասնություն կազմեն:

Եվ, վերջապես, չպետք է մոռանալ նախքան հեղափոխությունը ձևավորված ամերիկա-եգիպտական լարված հարաբերությունների մասին: Թեև Եգիպտոսում կատարված հեղափոխությունը ներքին ցասման արդյունք էր, այդուհանդերձ Մուբարաքը գուցե երկար ժամանակ շարունակեր «ճնշել» ժողովրդին, եթե տարածաշրջանում չներմուծվեր «Մերձավոր Արևելքի դեմոկրատացման ծրագիրը», չգործադրվեին կառավարելի քառսի⁶ մեխանիզմներից մի քանիսը և

⁶ Հասկացությունը ենթադրում է, որ քառսի է վերածվել այն երկրների տնտեսական և սոցիալական կյանքը, որոնք դառնում են այդ պատերազմի զոհերը: Իսկ նրանք, ովքեր կանգնած են այդ գեների ղեկավարման վահանակի մոտ, հակառակորդի երկրում պահում են քառսը հսկողության տակ. նրանց համար դա նպատակայնորեն ստեղծված հատուկ կարգ է: Որպես «քառսի ստեղծման» մեխանիզմներ՝ հակառակորդի մոտ այն անվանում են «ժողովրդավարության և շուկայական բարեփո-

շատ այլ գործոններ: Դեռևս հեղափոխության օրերին էլ լուրեր էին շրջանառվում (ոչ պաշտոնական), որ Բարաք Օբամայի վարչակազմը «Մուսուլման եղբայրներին» համարում է այն ուժը, որի հետ Արևմուտքը կարող էր գործ ունենալ հետագայում: Մա է փաստում նաև այն, որ դեռևս 1950-ականներին ԱՄՆ-ը գաղտնի համագործակցում էր «Մուսուլման եղբայրների» և նրանց ճյուղավորումների հետ այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք էին կոմունիզմի դեմ պայքարը, Եվրոպայի մահամեղականների միջև լարվածության կրճատումը և այլն: Ամերիկյան ղեկավարները կարծում էին, որ եղբայրները կարող էին օգտակար լինել և ձգտում էին վերջիններիս օգտագործել իրենց նպատակներին հասնելու համար: Եվ ամեն անգամ այդ իրավիճակից օգուտ ստացող միակ կողմը «Եղբայրներն» էին⁷: Հատկանշական է նաև, որ կազմակերպության՝ իր շարքերը համալրելու մեթոդն ունի միջազգային մոտեցում, քանի որ նրանց ղեկավարներից շատերը (ներառյալ Մուրսին) երկար տարիներ սովորել են Միացյալ Նահանգներում:

«Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամները մերժում էին բռնությունը՝ որպես քաղաքական պայքարի մեթոդ. հակված էին ցուցադրել որոշակի հանդուրժողականություն հասարակության այն համակարգերի նկատմամբ, որոնք ստեղծվել են գլոբալ գործընթացների արդյունքում: Նրանք անգամ հաշտվեցին աշխարհիկ բնույթ ունեցող պետությունների հետ ու շարունակեցին համագործակցել նրանց հետ: Եվ ահա այս կազմակերպությունը շատ արագ ձեռք բերեց Արևմուտքի աջակցությունը: Ամերիկացիները, ով-

խումների խթանում»: Փաստորեն, «Ժողովրդավարության» անվան տակ կառավարելի քաոսի տեխնոլոգիաները ներկայումս ծառայում են այն կիրառող կողմի շահերի համար:

⁷ Johnson Ian, "Washington's Secret History with the Muslim Brotherhood", 5.02.2011, <http://www.nybooks.com/blogs/nyrblog/2011/feb/05/washingtons-secret-history-muslim-brotherhood/>

քեր Մերձավոր Արևելքում Մուքաբաթին դիտարկում էին որպես իրենց համախոհի, շատ շուտ «դավաճանեցին» նրան:

«Մուսուլման եղբայրները» շարունակում էին ամեն գնով ամրապնդել իրենց իշխանությունը, բազմաթիվ լիազորություններ էին իրենց ձեռքը վերցնում՝ գրեթե բոլոր պետական կառույցներում նշանակելով իրենց համախոհ անձանց:

Եգիպտոսում գործընթացների արդյունքում քաղաքական իսլամը փոխարինելու էր եկել նախկին ազգային հիմքեր ունեցող պետություններին: Այսպիսի պայմաններում, ինչպես շատ ավելի վաղ էին կանխատեսում որոշ հետազոտողներ, իսլամիստական վարչակարգի՝ իշխանության գալու հավանականությունը, թեկուզ խաղաղ ճանապարհով, բավականին մեծ էր⁸:

«Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունն արդեն շուրջ 85 տարվա պատմություն ունի: Սա բավական մեծ ժամանակ է կազմակերպության կայացման, կազմակերպման, վերակազմակերպվելու և հստակ քաղաքական ուղղություն վերցնելու համար: Քաղաքական գործունեության գրեթե ողջ ընթացքում կազմակերպության նպատակն իշխանության գալն էր և մուսուլմանական համայնքը բարեպաշտ խալիֆների ժամանակաշրջանի մաքուր իսլամին համապատասխանող ումմայի օրինակով վերակառուցելը: 2011 թ. հունվարի 25-ի եգիպտական հեղափոխությունից հետո ՄԵԿ-ի համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին իշխանության լծակներն իրենց ձեռքը վերցնելու համար, մանավանդ, որ նրանց հակառակորդ ազգայնականության գաղափարակիր առաջնորդները տապալված էին:

Դեպքերը կազմակերպության օգտին ծավալվեցին, և նրանց հաջողվեց մեծամասնություն կազմել խորհրդարանում, այնուհետև հաղթել նախագահական ընտրություններում: «Մուսուլման եղբայրների»՝ հեղափոխության շարժիչ ուժերին ետևում թողնելու և իշխա-

⁸ Graham E. Fuller, "The future of political islam", New York, "Macmillan", 2003, p. 187.

նության գալուն մեծապես նպաստեցին կազմակերպության կառուցվածքը, հստակ ծրագիր ունենալը և արգելված շրջանում իշխանության հետ համագործակցելու կարողությունը, ինչը նպաստեց, թեկուզ կարճ ժամանակով, իշխանություն դառնալուն: Դրան որոշակիորեն նպաստեցին նաև դեռևս 2000-ականների սկզբից սկսված ԱՄՆ-ի՝ մերձավորարևելյան վերակառուցման ծրագիրը, որը «կառավարելի քառույթ» մեխանիզմների գործարկմամբ նպաստեց «Արաբական գարնան» տարածմանը Եգիպտոսում: Ստեղծված հետհեղափոխական իրավիճակում իսլամիստական ուժերի իշխանության գալն ամենահավանականն էր:

Կազմակերպությունը հրաժարվել էր նախքան իշխանության գալն իր հնչեցրած ծայրահեղական գաղափարներից, բայց ասել, թե այն այլևս դարձել էր չափավոր, նույնպես սխալ կլինի:

«Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը ժամանակի պահանջներին հարմարվելու երկար տարիների փորձ ուներ և իշխանության գալուց հետո էլ փորձում էր կիրառել այն: Թեև իշխանության գալուց հետո թույլ տվեցին մի շարք սխալներ, այնուամենայնիվ, սկզբնական շրջանում ինչ-որ առումով նրանք շարունակում էին արդի աշխարհի պահանջներին համապատասխան վերափոխման գործընթացը: Ումանց կարծիքով՝ դրա համար պարզապես ժամանակ էր պետք, որպեսզի իշխանությունը կարողանար կիրառել իր ծրագիրն ու լուծեր Եգիպտոսի առջև ծառացած ֆինանսական, տնտեսական ու քաղաքական խնդիրները: Ընդհանուր առմամբ՝ կարելի է ասել, որ կազմակերպությունը ժամանակի ընթացքում բավականին ճկուն էր դարձել, ինչն էլ նրանց կարճատև հաջողության հիմնական պատճառն էր:

DIANA EGHIAZARYAN

Yerevan State University

FROM THE PROHIBITED ORGANIZATION OF «MUSLIM BROTHERHOOD» UP TO THE FALLEN POWER

SUMMARY

The Muslim Brotherhood organization was founded in 1928 in Ismailia, Egypt. From its inception, Muslim Brotherhood's activities have been mostly outlawed in the interior policy of Egypt. Throughout its political activity the goal of the organization has been to come to power and to reform the Muslim society according to ummah of the era of rightly guided caliphs – the era of pure Islam. Only in January 2011, after a long period of repression, did the 80-year-old Muslim Brotherhood reach success as a result of a revolution.

In this paper the author tried to describe the process of coming to power of the Islamist organization, taking into account the fact that it had little contribution in the revolution itself. A number of circumstances led to the incumbency of Islamists, yet for a short period. These are represented and explained in the context of the US Middle East reconstruction policy started in the early 2000s, mechanisms of 'controlled chaos' and a number of other factors. The author tried to present the activity of the Muslim Brotherhood as neutrally as possible basing her analysis on purely factual material.

"الاخوان المسلمين" من المنظمة الممنوعة الى السلطة المنهارة

ملخص

تأسست جماعة إخوان المسلمين سنة 1928، في مدينة الاسماعلية في مصر. فمنذ ذلك الزمان كانت ممنوعة من مزاوله الاعمال السياسية في مصر. خلال نشاطها السياسي السري كان هدفها الحصول على السلطة واعادة الاسلام الى عصورها الذهبية في عهد الخلفاء الراشدين. فبعد 80 سنة من الاضطهاد والمطاردة من قبل السلطات فانها نجحت، في الوصول الى السلطة في سنة 2011 بعد نضال مرير.

تحاول صاحبة المقالة القاء الضوء على مراحل وصول الحركة الى السلطة خاصة وان مساهمتها في انجاح الثورة كانت ضئيلة. فان عوامل عديدة قد ساعدت إخوان المسلمين للوصول الى السلطة ولكن لوقت قصير فقط. فقد حاولت صاحبة المقالة عرض أنشطة إخوان المسلمين بشكل حيادي معتمدتا خلال تحليلها على وثائق حقيقية.

ՀԱՅ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2000-2010 ԹԹ.

Հայ-սիրիական հարաբերություններն ունեն դարերի պատմություն: Սիրիայում հնուց եղել են հայկական գաղթօջախներ, իսկ 1915 թ. Մեծ Եղեռնից հետո ցեղասպանությունից մազապուրծ հայ ժողովուրդը ապաստան գտավ սիրիական հողում, ուր հայերի թիվը զգալիորեն աճեց: Սիրիայի հայկական գաղթօջախը հետագայում դարձավ Մերձավոր Արևելքի ամենակազմակերպված հայկական համայնքներից մեկը:

Հայերի և սիրիացիների՝ բարեկամ ժողովուրդներ լինելու ավանդույթը շարունակվեց նաև Խորհրդային Միության տարիներին, որի վառ ապացույցն է 1979 թ. Սիրիայի նախագահ Հաֆեզ ալ-Ասադի այցելությունը Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևան¹:

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո Սիրիայի Արաբական Հանրապետությունը (ՍԱՀ) առաջին պետություններից էր, որ ճանաչեց ՀՀ անկախությունը: 1992 թ. մարտին Սիրիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին², իսկ արդեն 1993 թ. ապրիլին, Դամասկոսում հայկական դեսպանատուն բացվեց: Մինչ այդ՝ 1993 թ. ապրիլին Հալե-

¹ Տես «Նոր Կեսնք», Գլենդել, 10.08.2000 թ., մեջբերումը՝ Հովհաննիսյան Ա., Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության դիվանագիտական հարաբերությունների շուրջ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2013, թիվ 1, էջ 138:

² ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, գ. 142, թ. 2:

սյում բացվել էր ՀՀ հյուսիսատեսական³: Թեպետ սիրիական կողմը որոշ հանգամանքներից ելնելով⁴ չէր շտապում իր դեսպանատունը բացել Երևանում: Սակայն 1997 թ., այնուամենայնիվ, այն բացվեց:

1990-ական թվականները երկու երկրների հարաբերություններում նշանավորվեցին ամենաբարձր մակարդակի այցերով և միջպետական պայմանագրերով: Նոր դարում աշխարհաքաղաքական պատկերը փոխվեց և սա, բնականաբար, իր ազդեցությունն ունեցավ նաև հայ-սիրիական հարաբերությունների վրա:

2000 թ. մահացավ Հաֆեզ ալ-Ասադը, ով, հանդիսանալով իշխանության գլուխ կանգնած Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության (արաբերեն հապավումը՝ ԲԱԱՍ) առաջնորդը, 1963 թ. ի վեր կառավարում էր երկիրը: ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, ով պաշտոնական այցով Ժամանեց Սիրիա, ի թիվս շատ երկրների առաջնորդների, նույնպես մասնակցեց նախագահի հուղարկավորությանը⁵ և հայկական այսչափ բարձրաստիճան ներկայությունը խոսում էր հայ-սիրիական հարաբերությունների կարևորության մասին:

2000 թ. հունիսի 27-ին սիրիական խորհրդարանը նախագահի միակ թեկնածու առաջադրված Բաշար ալ-Ասադին՝ Հաֆեզ ալ-Ասադի որդուն, միաձայն ընտրեց երկրի նախագահ⁶:

21-րդ դարասկզբին հայ-սիրիական հարաբերություններում նշանակալի դեր ունեցող երկու երկրների խորհրդարանների միջև եղած համագործակցությունը: Մասնավորապես, 2001 թ. հունիսին Սիրիայի Ժողովրդական ժողովի նախագահ Աբդ ալ-Կադեր Կուտուրան սիրիացի պատգամավորների պատվիրակության ուղեկցությամբ

³ ՄԱՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի հարցազրույցը, հունվարի 26, 2012 թ., <http://al-belad.net/d/modules.php?name=News&file=article&sid=2059>

⁴ Սիրիան դեսպանատան բացման երկարաձգումը հիմնավորում էր ֆինանսական դժվարություններով, սակայն առկա էին նաև քաղաքական դրդապատճառներ, մասնավորապես՝ թուրք-սիրիական հարաբերությունների լարված բնույթը և Ղաթաթայան հիմնախնդիրը:

⁵ ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, գ. 112, թ. 145:

⁶ Ахмедов В. М., Сирия на рубеже столетий, власть, политика. Москва, 2003, с. 92.

յամբ ժամանեց Հայաստան: Երկու կողմերի միջև տեղի ունեցած հանդիպումներից հետո սիրիական պատվիրակությունն այցելեց Հայոց ցեղասպանության թանգարան⁷: Նույն թվականին Սիրիայի և Հայաստանի միջև ստորագրվեցին գիտական, ռազմատեխնիկական համագործակցության և զբոսաշրջության ոլորտին վերաբերվող համաձայնագրեր, մայիսին կայացավ հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողովի երկրորդ, իսկ օգոստոսին՝ հանձնաժողովի երրորդ նիստը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի այցը Սիրիա⁸ և ռազմատեխնիկական համագործակցության համաձայնագրի ստորագրումը ռուսական «Վրեմյա Նովոստեյ» թերթին առիթ տվեց պնդելու, որ «հայ-սիրիական հանդիպումը դուրս է գալիս երկկողմ հարաբերությունների շրջանակից և տարածաշրջանային քաղաքականության գործոն է դառնում»: Թերթը գրում էր նաև, որ «Թուրքիայի կողմից Ադրբեջանին աջակցելն ավելացնում է Իրանի, Հայաստանի և Սիրիայի համագործակցության մակարդակը: Մերտ ռազմական և ռազմավարական թուրք-իսրայելական համագործակցությունը և իսրայելա-ադրբեջանական հարաբերությունների հնարավոր ակտիվացումն անխուսափելիորեն դեպի միմյանց են մղում Հայաստանը և արաբական երկրները, որոնք նույնպես մտահոգ են Թել-Ավիվի և Անկարայի մերձեցմամբ»⁹: Չնայած ռուսական հեղինակավոր թերթի այս կանխատեսմանը՝ հայ-սիրիական ռազմական համագործակցությունը չտվեց սպասված արդյունքը, քանի որ կողմերն այս խնդրին այլևս չանդրադարձան:

⁷ Արիսյան Ն., Հայ պատգամավորները սիրիական խորհրդարաններում (1928-2011 թթ.), Դամասկոս, 2011, էջ 291:

⁸ ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, գ. 113, թ. 7:

⁹ Ասադը, Սիրիան և Հայաստանը. 12 տարիների համառոտ դիտարկումը, հուլիսի 24, 2012 թ., <http://www.mediamax.am/printpage.php?lang=am&nid=5482>.

Խորհրդարանական կապերի բարձր մակարդակի մասին է վկայում նաև 2001 թ. ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանի այցը Դամասկոս:

2002 թ. Միրիան Հայաստանում իր երկրի արտակարգ և լիազոր դեսպանության կարգավիճակը իջեցրեց՝ այն դարձնելով գործերի ժամանակավոր հավատարմատարի պաշտոն: Միրիան իր այդ որոշումը բացատրեց դիվանագիտական կադրերի սակավությամբ, սակայն, հարկ է նշել, որ հետագայում՝ 2003-2005 թթ., ՀՀ-ում ՄԱՀ դեսպանատունը ղեկավարվում էր գործերի ժամանակավոր հավատարմատարի մակարդակով՝ արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան ունեցող Հասան Ռապանի կողմից: Այսպիսով, հասկանալի է դառնում, որ խնդիրն ավելի խորքային էր: 2004 թ. համարժեք քայլի գնաց նաև Հայաստանը¹⁰, երբ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Լևոն Սարգսյանն ավարտեց իր դիվանագիտական առաքելությունը և նրա փոխարեն գործերի ժամակավոր հավատարմատար նշանակվեց Յուրի Բաբախանյանը: Նշվածը հասկանալի կդառնա, եթե այն դիտարկենք թուրք-սիրիական հարաբերությունների սերտացման համատեքստում:

Թուրք-սիրիական հարաբերությունների զարգացումն ու հայ-սիրիական հարաբերությունների հետագա ընթացքը վերլուծելու համար կարևոր է հաշվի առնել, թե ինչ քաղաքական իրավիճակում էր գտնվում այս պետությունը՝ նախքան նորանշանակ նախագահի պաշտոնավարումը: Միրիան, որը սառը պատերազմի տարիներին համարվում էր ԽՍՀՄ-ի ճամբարի երկիր, վերջինիս փլուզումից հետո, փաստորեն, կորցրեց իր ռազմավարական հզոր դաշնակցին, իսկ Ռուսաստանը դեռ չէր կարող ամուր հենարան լինել: Թուրքիան, մի կողմից ձգտելով հակակշռել Միրիային, որն իր հարաբերությունները զարգացնում էր Հայաստանի, Հունաստանի և Իրանի հետ, մյուս

¹⁰ К Официальному визиту президента Сирии Башара Асада в Армению, 21 июня 2009 г., <http://www.iimes.ru/?p=8868>

կողմից, լինելով ամերիկյան ռազմաքաղաքական ճամբարի ներկայացուցիչ¹¹, 1990-ականների սկզբից սերտացրեց հարաբերություններն Իսրայելի և Հորդանանի հետ, ինչը շրջափակման վտանգ էր ստեղծում Սիրիայի համար: Գալով իշխանության՝ Բաշար ալ-Ասադը ձեռնամուխ եղավ այս շրջափակումից դուրս գալու և երկրի քաղաքական ու տնտեսական կայունությունն ապահովելու գործին, որի ճանապարհին թուրք-սիրիական բնականոն հարաբերությունների հաստատումը կարևոր նշանակություն ուներ:

2004 թ. հունվարին Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը պատմության մեջ առաջին անգամ պաշտոնական այցով Ժամանեց Անկարա¹²: Լրատվամիջոցներն այս այցը որակեցին որպես թուրք-սիրիական օրեցօր ջերմացող հարաբերությունների հետագա զարգացման գրավական: Երկու երկրների հարաբերությունների այսչափ սերտացումը պայմանավորված էր մի շարք քաղաքական գործոններով, մասնավորապես՝ Թուրքիայում իշխանության եկած «Արդարություն և զարգացում» կուսակցության՝ իսլամական աշխարհում Թուրքիայի առաջնորդ դեր ստանձնելուն ուղղված քաղաքականությամբ, թուրք-ամերիկյան հարաբերությունների որոշակի վատթարացմամբ՝ կապված Իրաքում ԱՄՆ-ի վարած քաղաքականության հետ, ինչպես նաև Սիրիայի համար Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությունը՝ պայմանավորված վերը նշված շրջափակման վտանգով և տնտեսական գործոններով¹³:

Ինչպես և կանխատեսելի էր, թուրք-սիրիական հարաբերությունների բարելավումը չէր կարող որոշակի բացասական ազդեցություն չունենալ Հայաստանի հետ նրա հարաբերությունների վրա: Դեսպանատան կարգավիճակին առնչվող խնդիրները, ռազմատեխ-

¹¹ Թուրքիան 1952 թ. ՆԱՏՕ-ի անդամ է:

¹² О турецко-сирийских отношениях, 17 мая, 2005 г., <http://www.iimes.ru/?p=3651>

¹³ Թուրքիան վերահսկում է Տիգրիս և Եփրատ գետերի վերին հոսանքը՝ ազդեցության լծակ ունենալով Սիրիայի տնտեսության վրա:

նիկական ոլորտում համագործակցության շարունակական չլինելը, Միրիայում Հայոց ցեղասպանությանը նվիրված արարողությունների հանդեպ իշխանությունների որոշակի զսպված վերաբերմունքը կարելի է պայմանավորել հենց այս նոր աշխարհաքաղաքական իրողությամբ: Այդ շրջանում Հայոց ցեղասպանության հարցում սիրիական կառավարության վերաբերմունքը ցույց տալու համար բավական է նշել, որ, չնայած այն հանգամանքին, որ սիրիահայերն իրավասու էին ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված արարողություններ անցկացնել, երկրի կառավարության անդամները որևէ հայտարարությամբ հանդես չէին գալիս և չէին մասնակցում դրանց, ինչպես նաև այս թեման արձագանք չէր ստանում սիրիական մամուլում: Բացի այդ, երբեմն արգելվում էր 1915 թ. դեպքերին նվիրված հայազգի հեղինակների գրքերի հրատարակումն ու վաճառքը: Այդպիսի օրինակ է 2002 թ. սիրիահայ Նորա Արիսյանի Բեյրութում հրատարակված «Հայոց արհավիրքը սիրիական մոքում (սիրիացի արաբ մտավորականների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ)» գիրքը, որի վաճառքը 2003 թ. ապրիլին արգելվեց, իսկ գրքերը հավաքվեցին գրախանութներից: Այս դեպքը Բաշար ալ-Ասադի կառավարման շրջանում եզակի չէ:

Հայ-թուրքական հարաբերությունների լարված բնույթն ու փակ սահմանները բացասաբար էին անդրադառնում նաև Հայաստանի և Միրիայի միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման վրա: Երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը շատ փոքր էր, և դրա գլխավոր պատճառներից մեկը ցամաքային և ծովային անմիջական ճանապարհի բացակայությունն է, իսկ օդային փոխադրումներն իրենց չէին արդարացնում: Միրիայից ներմուծվող հիմնական ապրանքատեսակներն են՝ պլաստմասե իրերը, դեղորայքը, հագուստը և տեքստիլը, արտահանվում են ներկանյութեր,

ոգելից և ոչ ոգելից խմիչքներ¹⁴: 2004 թ. Երևանում կայացավ Հայաստանի և Սիրիայի միջև ստեղծված միջկառավարական տնտեսական համատեղ հանձնաժողովի երրորդ նիստը, հետագայում այս ձևաչափով ևս երկու նիստեր տեղի ունեցան, ստեղծվեց Հայ-սիրիական գործարար խորհուրդ: Չնայած այս ոլորտը զարգացնելու բոլոր ջանքերին՝ այն մնում է հայ-սիրիական համագործակցության ամենաթույլ կետերից մեկը¹⁵:

Մյուս կողմից՝ պետք է նշել, որ Սիրիայում հայկական համայնքի ասկայությունը մեծ դրական դերակատարում է ունեցել երկու երկրների հարաբերությունների համար: 2006 թ. ապրիլի 7-ին Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հրավերով ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանն աշխատանքային այցով ժամանեց Սիրիա¹⁶: Հալեպում Վ. Օսկանյանը մասնակցեց ՀԲԸՄ հիմնադրման 100-ամյակի և Հայ երիտասարդական ընկերակցության (ՀԵԸ) 75-ամյակի տոնակատարություններին, ինչպես նաև Գյուլբենկյան կենտրոնի բացման արարողությանը: ՀՀ արտգործնախարարը հանդիպեց նաև Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի և ԱԳ նախարար Ուալիդ ալ-Մուալլիմի, ինչպես նաև Դամասկոսի հայկական կրոնական և աշխարհիկ կառույցների ղեկավարների հետ¹⁷:

2007 թ. ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան նշանակեց Արշակ Փոլադյանին՝ ցանկանալով

¹⁴ ՀՀ արտգործնախարարության պաշտոնական կայք, Հայաստան-Սիրիա երկկողմ հարաբերություններ, <http://www.mfa.am/hy/country-by-country/sy/>

¹⁵ Հարցազրույց Սիրիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի հետ, սեպտեմբերի 25, 2008 թ., http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2346

¹⁶ Վարդան Օսկանյանը կայցելի ԱՄՆ, Ռուսաստան և Սիրիա, մարտի 26, 2006 թ., <http://panarmenian.net/m/arm/news/16986>

¹⁷ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը քառօրյա աշխատանքային այցով կմեկնի Սիրիա և Լիբանան, ապրիլի 7, 2006 թ., <http://armenpress.am/arm/news/429304/hh-ag-nakharar-varadan-oskanyany-qarorya-ashkhatanqayin-aycov.html>

այս քայլով նոր ազդակ հաղորդել հայ-սիրիական հարաբերությունների զարգացմանը:

2009 թ. կարևոր տարի էր հայ-սիրիական հարաբերությունների համար: Փետրվարին ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական այցով մեկնեց Սիրիա, որտեղ քննարկած հարցերից մեկը ՀՀ դեսպանատանը նոր շենք տրամադրելու խնդիրն էր, ինչը շուտով իրականացվեց¹⁸: Պայմանագիր ստորագրվեց նաև դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցողների համար մուտքի արտոնագիր ստանալու պահանջի վերացման մասին¹⁹:

Նույն թվականի հունիսին աշխատանքային այցով Հայաստան ժամանեց ՄԱՀ ԱԳ նախարար Ուալիդ ալ-Մուալլիմը: Նա ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ քննարկեց երկու երկրների միջև պատմականորեն ձևավորված հարաբերություններն ու դրանց հեռանկարը: Տարածաշրջանի անվտանգության ամրապնդման ու կայունության ապահովման հարցերը, ինչպես նաև Մերձավոր Արևելքում առկա խնդիրների կարգավորման գործընթացը: Կողմերն ընդգծեցին հակամարտությունների խաղաղ, բանակցային ճանապարհով լուծման կարևորությունը: Մասնավորապես Սիրիայի ԱԳ նախարարը շեշտեց, որ Սիրիան ողջունում է հայ-թուրքական հարաբերությունների ջերմացումը: Ուալիդ ալ-Մուալլիմի այս հայտարարությունը արժանի է ուշադրության, մանավանդ եթե հաշվի առնենք, որ երկու շաբաթ անց նախատեսվում էր Բաշար ալ-Ասադի այցը Հայաստան:

Սիրիան, որի հարաբերությունները Թուրքիայի հետ այդ շրջանում բավականին ջերմ էին դարձել, ոգևորված էր հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր կարգավորմամբ: Թուրքիայի և Հա-

¹⁸ Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը Սիրիայի Արաբական Հանրապետության ԱԳ նախարար Ուալիդ ալ-Մուալլամի հետ, հունիսի 2, 2009 թ., <http://www.aysor.am/am/news/2009/06/02/haysiria/>

¹⁹ Նախագահ Բաշար ալ-Ասադը Հայաստանի արտգործնախարարի հետ քննարկում է Հայաստան և Սիրիա երկկողմ հարաբերությունների ամրապնդումը, փետրվարի 27, 2009 թ., <http://www.dp-news.com/pages/detail.aspx?articleid=5382>

յաստանի միջև հարաբերությունների կարգավորումը կարող էր շահավետ լինել Սիրիայի համար: Ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ Բաշար ալ-Ասադի Հայաստան այցելությունը խնդիրներ չէր առաջացնի հարևան թուրքական պետության հետ: Հունիս ամսին Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար ալ-Ասադը տիկնոջ՝ Ամմա ալ-Ասադի հետ, պաշտոնական այցով ժամանեց Երևան²⁰: Հայաստանում գտնվելու ընթացքում Սիրիայի նախագահը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ:

Հանդիպումների ընթացքում շեշտվում էր հայ-սիրիական դաշինքի հարաբերությունների կարևոր նշանակությունն ու կողմերի՝ դրանք շարունակելու և զարգացնելու պատրաստակամությունը: Հատուկ ուշադրության արժանացավ երկու երկրների միջև տնտեսական համագործակցության հարցը: Սերժ Սարգսյանի և Բաշար ալ-Ասադի համատեղ մամուլ ասուլիսի ժամանակ վերջինս նշեց, որ իր երկիրը պատրաստ է միջնորդի դեր ստանձնել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում և գնահատում է այն քայլերը, որոնք արվում են այդ ուղղությամբ: Նախագահների հանդիպման ընթացքում քննարկվեց նաև Սիրիայի և Իսրայելի միջև հարաբերությունների հարցը: Ասադը շեշտեց, որ, ի դեմս Իսրայելի, առայժմ այնպիսի գործընկեր չի տեսնում, որի հետ կարելի է բանակցել: Նշենք, որ Թուրքիան պատրաստակամություն էր հայտնել Սիրիայի և Իսրայելի միջև հարաբերությունների կարգավորման գործում միջնորդի դեր ստանձնել, սակայն 2009 թ. Դավոսում կայացած Համաշխարհային տնտեսական գագաթնաժողովի ընթացքում էրդո-

²⁰ Սիրիայի ԲԱԱՍ կուսակցության պաշտոնական կայք, Նախագահ Բաշար ալ-Ասադի Հայաստան կատարած այցի ծավալներն ու արդյունքները, հունիսի 21, 2009 թ. http://www.baathparty.org/index.php?option=com_content&view=article&id=4480:4480&catid=85&Itemid=119&lang=ar

ղան-Պերես բացահայտ առճակատում տեղի ունեցավ: Սա կասեցրեց բանակցությունների հետագա ընթացքը²¹: Սիրիայի նախագահի՝ տարածաշրջան կատարած այցի նպատակներից էր կանխել այստեղ Իսրայելի ազդեցության տարածումը (մասնավորապես, հաշվի առնելով Ադրբեջանի և Իսրայելի հարաբերությունների սերտացումը):

Բաշար ալ-Ասադի՝ Հայաստան կատարած այցի ուշագրավ կողմերից մեկն այն էր, որ օրակարգում չկար Հայոց ցեղասպանության հուշահամալիր այցելություն: Սա արվել էր թուրքական կողմի հետ խնդիրներից խուսափելու նպատակով: Մյուս կողմից, պետք է նշել, որ Ասադը Հայաստան կատարած այցից հետո՝ հուլիսին, նախատեսում էր նաև Ադրբեջան մեկնել²²: Դիվանագիտական շրջանակներում քննարկվում էր, որ Բաշար ալ-Ասադը հրաժարվել է նաև Ադրբեջանում Ղարաբաղյան պատերազմի և «սև հունվարի» զոհերին նվիրված Շահիդների հովիտ այցելությունից, և Ծիծեռնակաբերդ չայցելելը պաշմանվորված էր նաև հավասարակշռություն պահպանելու քաղաքականությամբ: Ասվածի մյուս ապացույցը Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ Սիրիայի չեզոք դիրքորոշումն է:

Սիրիայի նախագահի այցը Հայաստանի Հանրապետություն կարելի է պատմական որակել, քանի որ այն ապացուցեց, որ Հայաստանի ու Սիրիայի միջև եղած ջերմ հարաբերությունները երկուստեք կարևոր են և շարունակական են լինելու: Հայ-սիրիական հարաբերությունների զարգացման համար խթան հանդիսացավ նաև 2010 թ. Դեյր Ջորում ՀՀ պատվո իշուպատության բացումը²³:

Սիրիայի նախագահի այցից հետո, վերջինիս հրավերով, 2010 թ. մարտի 22-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը տիկնոջ հետ պաշտոնա-

²¹ Շաքարյան Ա., Արարատից այն կողմ, Երևան, 2011, էջ 79:

²² Սիրիայի նախագահի այցը Ադրբեջան. երկարաժամկետ ամուր հիմք պատմական հարաբերություններն ամրապնդելու համար, հուլիսի 9, 2009 թ., http://thawra.alwehda.gov.sy/_print_veiw.asp?FileName=65212057020090708220853

²³ Դեր Ջորում ՀՀ իշուպատության նշանակման դիմում ներկայացվել էր դեռ 2002 թ. հունվարին, սակայն սիրիական կողմն այն ձգձգում էր:

կան այցով ժամանեց Դամասկոս²⁴։ Երկու պետությունների նախագահները քննարկեցին Բաշար ալ-Ասադի՝ Հայաստան կատարած այցի ժամանակ ձեռք բերված համաձայնությունների կատարման ընթացքը, ինչպես նաև Հայաստանի ու Սիրիայի միջև առևտրատնտեսական կապերի խորացման հեռանկարները։ Հանդիպման ժամանակ Սիրիայի նախագահը կրկին շեշտեց հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ճանապարհին իր երկրի՝ միջնորդ պետություն լինելու պատրաստակամությունը²⁵։ Սիրիայում գտնվելու ընթացքում ՀՀ նախագահը հանդիպեց Սիրիայի նախագահի, Ժողովրդական ժողովի նախագահի, վարչապետի, Հալեպի նահանգապետի և հայ համայնքի ներակայացուցիչների հետ²⁶։

Երկու երկրների նախագահների փոխադարձ այցերը Սիրիայի և Հայաստանի միջև հարաբերությունները բարձրացրեցին նոր մակարդակի։

21-րդ դարասկզբում շարունակվեցին բարեկամական հարաբերությունները։ Դրանց որոշակի սառեցումը 2000-ականների սկզբում ուներ իր օբյեկտիվ պատճառները, սակայն քաղաքական դրության փոփոխման պայմաններում դրանք կրկին սկսեցին զարգանալ վերընթաց ուղով՝ չնայած Հայաստանի արտաքին քաղաքականության գերակա երկու հարցերի՝ Ցեղասպանության ճանաչման և Ղարաբաղյան հարցում Սիրիայի զգուշավոր դիրքորոշմանը։

Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու նպատակով Սիրիան դադարեց աջակցել Թուրքիայի քրդերին, իսկ Հայաստանի հետ ունեցած ջերմ հարաբերությունները որոշակիորեն սառեցրեց, որն արտահայտվեց միջպետական եզակի այցերով, Հայոց

²⁴ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով մեկնել է Սիրիայի Արաբական Հանրապետություն, մարտի 23, 2010 թ., <http://7or.am/am/news/view/15663/>

²⁵ Սիրիան պատրաստ է միջնորդի դեր ստանձնել հայ-թուրքական հարաբերություններում, մարտի 23, 2010 թ., <http://www.akhbaralalam.net/?aType=haber&ArticleID=35808>

²⁶ ՀՀ նախագահի պաշտոնական կայք, Արտերկրյա այցեր, <http://www.president.am/hy/foreign-visits/item/2010/03/22/news-94/>

ցեղասպանության հարցում զսպողական կեցվածքով: Այս վիճակը փոխվեց 2008 թ. հետո, երբ Բարայելի հետ հաշտեցման բանակցություններն ընդհատվեցին, և վերջինս սկսեց Անդրկովկասյան տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելու հայտ ներկայացնել, հայթորքական հարաբերություններում կարծես տեղաշարժեր սկսվեցին, իսկ մյուս կողմից՝ ԱՄՆ-ի հետ լարված հարաբերություններում Սիրիային Ռուսաստանի աջակցության անհրաժեշտությամբ ուժեղացան Մոսկվայի դիրքերը: Այս ամենը հանգեցրեց հայ-սիրիական հարաբերությունների վերաջերմացմանը, որի լավագույն ապացույցը Բարձրագույն մակարդակի միջպետական այցերն էին:

«Արաբական գարուն» բնորոշված գործընթացները չշրջանցեցին նաև Սիրիան, ուր քաղաքացիական պատերազմ սկսվեց Բաշար ալ-Ասադի վարչակարգի և ընդդիմության միջև: Հայաստանի Հանրապետությունը Սիրիայում ընթացող զարգացումների նկատմամբ չեզոք դիրքորոշում է հայտնել: Վերջինիս հետ հարաբերությունների բնույթը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե այս երկրում քաղաքացիական պատերազմն ինչպիսի էլք կունենա:

ANGELA KZHDRIAN

Yerevan State University

ARMENIAN-SYRIAN RELATIONS IN 2000 – 2010

SUMMARY

The history of Armenian-Syrian relations is rooted in ancient times. These relations have also continued to develop after the proclamation of independence of Armenia. The development of relations between the two countries were somewhat

influenced by the formed geopolitical situation when Syria established relations with Turkey, which has closed borders with the Republic of Armenia. Despite these changes and cautious approaches of the Syrian side to the issues of the Armenian Genocide and Karabakh conflict, the coincidence of interests of Armenia and Syria as well as the shift in the Armenian-Turkish relations drew again to a closer relationship between two friendly countries.

أنجيلا كجديان
جامعة بريغان الحكومية

العلاقات الارمنية السورية بين 2000-2010

ملخص

يرجع تاريخ العلاقات الارمنية السورية الى العصور القديمة وانها مستمرة في التطور بعد استقلال أرمينيا. فان تطور العلاقات بين البلدين كانت متأثرة بالوضع السياسي عندما اقامت سوريا علاقات مع تركيا التي لها حدود مغلقة مع أرمينيا. وبالرغم من الموقف الحذر لسوريا بالنسبة الى موضوع مذبحه الارمن ومسالة قراباغ فان مطابقة مصالح ارمينيا وسوريا والتحول في العلاقات الارمنية التركية قد قربت العلاقات بين البلدين الصديقين من جديد.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՈՍ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ, ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՂՅԱՆ (ծննդյան 85-ամյակի առթիվ)	5
ԱԼԻՍԱ ԴՈՒՄԻԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԼԵՈԱՆ ՄԱՍԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ XIX ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	12
ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՏԱԽԳԱՆՎԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ	25
ԼԻԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ, «ՏԱՅՔ» ԵՐԿՐԱՆՈՒՆՆ ԸՍՏ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ	36
ՄՈՎՍԵՍ ԽԵՉՈ, ԱՐԱԲԵՐԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԶԵՆԱԳՐԵՐԻ ՆՍՈՒՇՆԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ	43
ԱՇԽԵՆ ԴԱՎԹՅԱՆ-ՖԻՔՍՈՎԱ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՐԲԱՎԱՅՐԸ ԴՎԻՆՈՒՄ VII-IX ԴԴ.	51
ՀՈՎԻԿ ԱՎԱՆԵՍՈՎ, ՀԱՍՇԵՆԻ ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԾՆՈՒՆԴ	66
ԳԱԳԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ, ՄԼԵՀ ԻՇԽԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԲ-ԺԵ ԴԱՐԵՐԻ ԱՐԱԲ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻ ԳԼԱՀԱՏՄԱՄԲ	74
ԶՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՉԱՓԻ ՈՒ ԿՇՈՒ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (XIII-XIV ԴԴ.)	94
ՎԵՆԵՐԱ ՄԱԿԱՐՅԱՆ, ՕՍՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ՏԵՂԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ (XVI-XVIII ԴԴ.)	104

ՔՆԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ, ԱՐԱՔԵՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԴԱՍՍԱԳՐՔԵՐԸ (Գևորգ դպիր Պալատեցու «Քերականութիւն արաբացոց լեզուին» և Մարգար Խոջենցի «Գիրք քերականու- թեան արաբացոց» դասագրքերը)	115
ՆԱՐԻՆԵ ԵՐԱՆՈՍՅԱՆ, ԵԳԻՊՏՈՍԻ «ԱԼ-ՍՈՒԿԱՏՏԱՄ» ՕՐԱԹԵՐԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1889-1896 թթ.)	123
ՍԵՂԱ ՕԶԱՆԵԱՆ, ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՐԱՔԻՆ ՄԷՋ XX ԴԱՐՈՒՆ	139
ԿԱՐՈ ժԱՄԽԱՐՅԱՆ, ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 1920-1930- ԱԿԱՆ ԹԹ.	152
ԱՐՄԵՆ ԺԱՄՀԱՐՅԱՆ, ԹՈՒՐԳԵՒՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՂՐԻԲՈՒՄ 1980-ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ 1990-ԱԿԱՆ ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ	162
ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԻՍԼԱՄԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ (ՀԱՄԱՍ) ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	173
ՍՀԵՐ ՂԱԶԻՆՅԱՆ, ԷՋԵՐ ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԻՋԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	181
ԴԻԱՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, «ՍՈՒՍՈՒԼՄԱՆ ԵՂՔԱՅՐՆԵՐ». ԱՐԳԵԼՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՏԱՊԱԼՎԱԾ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ	187
ԱՆԺԵԼԱ ԿԺԴՐՅԱՆ, ՀԱՅ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2000-2010 թթ.	197

CONTENTS

HAMO SUKIASYAN, A FEW WORDS	3
ARTAK MAGHALYAN, ARAM TER-GHEVONDIAN	5
ALISA DUMIKYAN, THE ANALYSIS OF THE ARAB INTERPRETATIONS OF THE BIBLE INFORMATION ABOUT THE MOUNTAIN ARARAT IN THE 19th CENTURY FRENCH AND MODERN ARMENOLOGICAL STUDIES	12
HAYKAZ GEVORGYAN, SEMANTICS OF THE WORD TĀČĪK IN THE ARMENIAN HISTORICAL SOURCES	25
LIANA NAZARYAN, THE NAME "TAK" ACCORDING TO ARABIC SOURCES	36
MOVSES KHECHO, ARABIC CHRISTIAN MANUSCRIPTS IN THE MASHTOTS ANCIENT MANUSCRIPTS INSTITUTE MATENADARAN, YEREVAN	43
ASHKHEN DAVTYAN-FIXOVA, THE SACRED SPACE OF DVIN IN 7-10 TH CENTURY	51
HOVIK AVANESOV, THE ARMENIAN PRINCIPALITY OF HAMSHEN THE OFFSPRING OF THE LIBERATION STRUGGLE AGAINST THE ARAB KHALIPHATE	66
GAGIK DANIELYAN, MALĪH IBN LĀWUN: THE CAREER OF THE ARMENIAN PRINCE OF CILICIA IN THE ARABIC HISTORIOGRAPHY OF THE 12TH-15TH CENTURIES	74
ZOHRAB GEVORGYAN, MEASURE AND WEIGHT UNITS IN THE INTERNATIONAL TRADE RELATIONS OF CILICIAN ARMENIA (XIII-XIV CENTURIES)	94
VENERA MAKARYAN, THE POLICY OF THE OTTOMAN AUTHORITIES IN SYRIA AND LOCAL ARMENIANS (XVI- XVIII CC.)	104

KNARIK SAHAKYAN, THE FIRST GRAMMAR TEXTBOOKS OF ARABIC IN ARMENIAN ("The Grammar of the Arabic Language" by Gevorg Ter-Hovhannisyan and "A Book of the Grammar of Arabic" by Margar Khojents)	115
NARINE YERANOSYAN, PUBLICATIONS OF THE EGIPTIAN NEWSPAPER "AL-MUQATTAM" ABOUT ARMENIAN MASSACRES (1889-1896)	123
SEDA OHANIAN, ARMENIAN-ARAB RELATIONS IN IRAQ IN THE XX CENTURY	139
KARO JAMKHARYAN, THEATRICAL LIFE IN THE ARMENIAN COMMUNITIES OF SYRIA AND LEBANON IN THE 1920-1930s	152
ARMEN ZHAMHARYAN, THE POLICY OF TURKEY IN THE ARAB MAGHREB IN THE LATE 1980'S AND IN THE FIRST HALF OF THE 1990'S.	162
ARTAK HOVHANNISYAN, ON THE ISSUE OF CONFRONTATION BETWEEN THE ISLAMIC RESISTANCE MOVEMENT (HAMAS) AND PLO	173
MHER GHAZINYAN, PAGES FROM THE HISTORY OF ARMENIAN-EGYPTIAN INTERLIBRARY COOPERATION	181
DIANA EGHIAZARYAN, FROM THE PROHIBITED ORGANIZATION OF «MUSLIM BROTHERHOOD» UP TO THE FALLEN POWER	187
ANGELA KZHDYAN, ARMENIAN-SYRIAN RELATIONS IN 2000 – 2010	197

الفهرس

3	 كلمة التحرير
5	 أرثوذكس ماغاليان يمنامية عبد ميلاد الخامس والثمانين لارام دير غيفونديان
12	 اليمسا دوميكيان تحليل تفاسير عربية لتسمية جبل أراارات في الكتاب المقدس في دراسات الباحثين الفرنسيين في القرن التاسع عشر وفي الدراسات الأرمنية الحديثة
25	 هايكاز كيفوركيان معاني مصطلح Tārik في المذونات التاريخية الأرمنية
36	 ليانا نازاريان اسم بلدة "طايك" وفقا للمصادر العربية مؤلفيس خيتشو
43	 المخطوطات العربية المسيحية في معهد ماثنوتس للمخطوطات القديمة بيريغان (الماتيناداران)..... أشخين دافتيان فيكموشا
51	 المعبد العام في مدينة دبيل في قرون 7-10..... هوفيك أفانيسوف
66	 مملكة هامشبن الارمنية - ولادة الحركات التحررية الأرمنية ضد الخلافة العربية... كاكيك دانييليان
74	 نشاط مليح ابن لاون أمير أرمينيا الصغرى في ضوء المصادر التاريخية العربية (من القرن الثاني عشر وحتى القرن الخامس عشر الميلادي)..... زوهراب كيفوركيان
94	 مقاييس الوزن والحجم في العلاقات التجارية الدولية لأرمينيا القبلية خلال القرنين 14-13.....
104	 فينيرا مكاريان سياسة السلطات العثمانية في سورية و وضع الأرمن السوريين (من القرن 16 إلى 18).....
115	 كناريك ساهاكيان الكتب الاولى لتعليم اللغة العربية باللغة الارمنية ("قواعد اللغة العربية" لكيفورك بالاديتسي و"كتاب النحو العربي" لماركار خوجينتس).....

- 123 نشرات الجريدة المصرية "المقطم" عن المذابح الارمنية (1889-1896).....
- سيدا اوهانبيان
- 139 العلاقات الارمنية العربية في العراق في القرن العشرين.....
- كارو جامخاريان
- 152 الحياة المسرحية في الجاليتين السورية واللبنانية في سنوات 1920-1930.....
- ارمين جامهاريان
- 162 تقوية مواقف تركيا في المغرب العربي في اواخر 1980 وبداية 1990.....
- ارتاك هوفهانيسيان
- 173 حول قضية الصراع بين حماس ومنظمة تحرير فلسطين.....
- مهير غازيان
- 181 صفحات من تاريخ التعاون بين المكتبات الارمنية والمصرية.....
- ديانا يغيازاريان
- 187 "الاخوان المسلمين" من المنظمة الممنوعة الى السلطة المنهارة.....
- انجيله كجديريان
- 197 العلاقات الارمنية السورية بين 2000-2010.....

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ
(ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱՍԾՈՒ)**

**ARMENIA AND THE ARAB WORLD: HISTORY AND
CONTEMPORARY ISSUES
(A COLLECTION OF THE REPORTS OF THE INTERNATIONAL
YOUTH CONFERENCE)**

أرمينيا والعالم العربي - تاريخ والقضايا المعاصرة
مجموعة أوراق بحثية من الندوة الدولية للشباب

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 24.07.2014 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

ԳՍԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0613622

105502